

891.99

7-3.4



УП

З. у. м. 1/3

ՀԱԿՈՔ ՊԱՐՈՆՅԱՆ

ՅԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԶՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ~ 1934

891.99

7-34

այ.

ՀԱԿՈՔ ՊԱՐՈՆՅԱՆ

ՅԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԶՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Կ Ս Մ Ի Թ Ն Ե Ր
ՀՈՍՀՈՍԻ ԶԵՌԱՏԵՏՐԸ
ՊՏՈՒՅՏ ՄԸ ՊՈԼՍՈ ԹԱՂԵՐՈՒ ՄԵՋ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ~ 1934

36 NOV 2011

18.07.2013

Պատ. խմբագիր՝ Յն. Հարենց
Տեխ. խմբագիր՝ Տաճատ Խաչվանյան
Սրբագրիչ՝ Ս. Մանուկյան

Պետհրատի տպարան
Գլավլիտ № 8209(բ)
Հրատար. № 2639
Պատվեր № 1996
Տիրամ 4000



Ն-2454-52

99987

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հակոբ Պարոնյանի յերկերի լիակատար ժողովածուի (6 հատոր) խմբագրական հանձնաժողովը սույն 4-րդ հատորը խմբագրելիս ունեցել է նույն կազմը ինչ նախորդ հատորի խմբագրության ժամանակ, այն է՝ Մ. Արեղյան (նախագահ), Յ. Խանդաղյան (Փ. նախագահ), Գ. Լևոնյան (քարտուղար), Ս. Մանուկյան և Ա. Տերտերյան:

Այս հատորում տեղ են գտել հեղինակի հետևյալ աշխատությունները՝ Կոսիքներ, Հոսիսի ձեռքերը լեվ պոլսո մը պոլսո քաղերու մեջ. առաջինը վերցված Կ. Պոլսի, մյուսները Թիֆլիսի տպագրություններից:

Նյութերի համեմատությամբ ստուգումը, ծանոթությունները և բառարանի կազմումը պատկանում է հանձն. անդամ Ս. Մանուկյանին: Բոլոր աշխատանքները քննության են առնվել հանձնաժողովի կողմից և գտել նրա հավանությունը:

ԽՄԲ. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1933 թ. փետրվար
Ցերեան

(Քաղված 1878-ի «Մասիս»-ներեն)

Ժամանակավ իմաստասերին մեկը ըսած է. «Քիչ խոսե ու շատ մտիկ ըրե»:

Թեպետ և վորոշ հգիտցվիր, թե իմաստասերն վճի պարագայի մեջ ըսած է այդ խոսքը, բայց կը կարծվի, թե տասը կանգուն չերկայնությամբ հոգւածներ գրող խմբագիրներեն մեկուն ըսած ըլլա. հավանական է նաև, վոր պարտատերն իրմե ստակ ուղելու գացած ըլլա և անոր ըսած ըլլա. կրնա ըլլալ, վոր... բայց ի՞նչ փուշթ մեզ, վորու ուղե, թող անոր ըսած ըլլա, բավական է, վոր այդ խոսքը շատ իրավացի խոսք մըն է, վորովհետև շատ խոսողներն ամենն քիչ խոսողներն են. ասիկա այնչափ հայտնի ճշմարտություն մ'է, վոր դեսպան մ'անգամ չկրնար ուրանալ:

Ուրիշ իմաստասեր մը մեր իմաստասերին այս խոսքին շատ համընկով՝ քաջ մ'ալ ինք առավ և ըսավ.

«Բնավ մի խոսիր ու շարունակ մտիկ ըրե»¹⁾:

Յեւ թատրոնին վարագույնը զոցվեցավ:

Վեցամսյա լուսթյամբ ազգին և կառավարութեան մեծ ծառայութեաններ մատուցանելի չեանով՝ չեթե այսոր ընթերցողաց կը ներկայանամ՝ չկարծվի թե խնդալու դիտավորությամբ է. վորովհետև խնդալն արգելւած է՝ իբրև փաստակար հասարակաց բարոյականութեան. այլ կամ թելու ու միմիայն տեսածներս պատմելու նպատակով Մասիսի ստորոտը կիջնամ այսոր,²⁾ աղաչելով մեր ընթերցողները, վոր խնդալի զգուշանան և զավեշտ բառը բնավ չարտասանեն:

Այս հայտարարութեանն ընելի չեանով պզտիկ դեպք մը պատմելով կը կնքենք մեր հառաջաբանն, վոր կնքված գինադադարին³⁾ պես անհասկնալի բան մ'եղավ:

Յերկու բարեկամ ճաշարանի մը մեջ կը ճաշելին անցյալ շաբթու:

- Մանչուկ, հոռապ մը բեր, ըսավ մին:
- Հոշապը հայերեն չունի՞, հարցուց մյուսը:
- Զավեշտաջուր, պատասխանեց ընկերը:
- Անանկ ե նե՛ մի խմեր, հասարակաց բարոյականության ֆլասակար ե չեղեր, ըսավ բարեկամը:

Ահա այսպես ֆլասակար ճանչցված են այն ամեն բաները, վոր քիչ մը զավեշտով խառնված են:

Ընթերցող, դիպվածը անանկ բերավ, վոր յես ալ, շատ մը վառվռուն հայ չերիտասարդաց պես, քրիստոնյաներեն զինվոր առնվելու ⁴⁾ խոսքին վրա հիվանդանամ ե չերկու ամիսի չափ տունես դուրս չելլամ. բայց չերբ անցյալ շաբթու իմացա, վոր Բ. Դոնեն ⁵⁾ Պատրիարքարան ⁶⁾ գրվեր ե այդ զինվորագրության առաջժ չետ ֆնացած ըլլալը, դիպվածը անանկ բերավ, վոր վրաս քաջություն մը դա ե քիչ մը դուրս չելլամ:

Աստված իմ, մայրաքաղաքս վորչափ փոփոխություն կրած ե:

Վոչ թե բան մը ծախելու, ալ բարեկամներես մին տեսնելու համար, առջի որ վոսկերիչներուն շուկայեն անցնիլ հարկ չեղավ:

Բարեկամս փնտռելու միջոցին՝ յերկայնահասակ մարդուն մեկը յերկայնահասակ խաչ մ'ի ձեռին առչես չելավ. իսկույն գլուխս բացի ե ինչպես վոր որեն ե, յերեսս խաչակնքեցի: Հազիվ թե յերկու քայլ առի, յերկու կարճահասակ մարդ ձեռվրնին մե, մեկ բուրվառ բռնած դիմավորեցին զիս. խաչ մ'ալ հանելով յերկըրպագություն ըրի ե ճամբաս շարունակելու չֆնաց, քոցներով յերկու յերեք հոգի դեմս չելան: Մեկ կողմ քաշվելով Հայր մեր մը կարդացի, վրան ալ աղվոր մը «Տեր, յեթե զըթուես իմ բանաս» մը ավելցուցի ե սկսա ինքնիրմես մտածել, թե՛ վոսկերչաց շուկային մեջ չերբ ե վորո՞ւ արդյամբ շինվեր են շարժական մատուռները: Ժամ մը յետքը հարցունելով տեղեկացա, վոր այս մատուռները Սլավության հակառակ ըլլալով ⁷⁾ թշնամությն մոտենալը տեսնելուն պես՝ Պոլիս գաղթեր են:

Ճամբաս շարունակեցի դեպի Սիրքեճի ⁸⁾: Աստված իմ, այս վորչափ ավանակ, վորչափ կով, վորչափ ձի... մարդս ինքզինքն ախոռի մեջ կը կարծե... գաղթականեն ավելի անասուն... ե վորչափ աժան... քսաննոց թուղթի ⁹⁾ պզտիկ եջ մը, մինչդեռ Ֆիմո

մը կամ Վանա կատու մը գնել ուզես՝ վեց հարյուրնոց թուղթեն պակաս չես կրնար առնել:

Շիտակը խոսելով, աժանությանը չկրցի դիմանալ, կատվի տեղ պզտիկ եջ մը առի ե տուն տանելով, սենյակս դրի: Հետևյալ որը մեծ վարմանոք տեսա, վոր մուկ մը ե կատու մը բռներ ե. ուստի ե տուներու մեջ պահվելու արժանի խոնարհ անասուն մ'ե: Միայն մեկ հանցանք մ'ունի, բաղմոցներու ե բարձերու մեջ խոտ չձգեր, կուտե կոր... այնչափ անոթի չե խեղճը ¹⁰⁾: Իր ընթացքեն չկրցի գուշակել, թե՛ սլավության հակառակ ե, թե՛ համամիտ: Ուստի վորոշեցի վոր Նիկողոս մարգարեյին ¹¹⁾ դիմեմ որ մը ե սանկ պզտիկ գուշակություն մ'ընել տամ:

Ընթերցող, առիթեն ոգուտ քաղե. ասանկ աժանություն քսան տարին անգամ մը կը պատահի ¹²⁾: Յես ոգուտ քաղեցի ե պարճանոք կրնամ ըսել, թե Արևելյան խնդիրեն ¹³⁾ ուրիշները ինքնորինություն, անկախություն ¹⁴⁾ ե... թյուն վերջավորությամբ ուրիշ բաներ վաստկեցուն, յես ալ գոնե իշու մը տեր չեղա. ե կարծեմ թե պատմությունն ալ քիչ մը կարեւորություն կուտա այս բանին:

Խաղաղության հրեշտակը վերջապես յեկավ Զորլույեն ¹⁵⁾ ... շոգեկառքով:

Ամեն մարդ կուրախանա, բայց յես չեմ ուրախանար, վորովհետեւ հրեշտակներու վրա համակրություն չունիմ. վորովհետեւ անոնք անոր ասոր հոգին առնելու համար կուզան, կերթան:

— Այս անգամվան հրեշտակը հոգի չը պիտի առնե, դրամ պիտի առնե յեղեր:

— Գոնե սա հրեշտակը համոզելինք ու թղթադրամ քշեյինք:

Թայմ ¹⁶⁾ կըսե.

«Ռուսիա իր հապաղումներովը մեծ սխալ կը գործե»:

Յես կ'ըսեմ.

«Անգղիո՞ հապաղմամբ գործած սխալին հետ մրցելու համար ե»:

Թադուհին սոնակապի պատվանշանը տալ ուղեր ե կորտ Պիքոնսֆիրտի ¹⁷⁾, բայց նա չե ընդուներ:

Յեթե յես ըլլայի Լորտ Պիքոնսֆիրտի տեղ՝ կառնելի սոնակապն ու բալանեսը կը կապեյի:

Ձեզի բան մը ըսեմ. հրապարակի վրա պիտիք ներքին ավելի սուտ կը պատի կոր, բայց բարեբաղդաբար այս սուտերեն մեկ քանին թերահանելի¹⁸⁾ պիտիք ներքին պես մարդ չընդունիր կոր:

Կը հիշե՞ք, անցյալները յերկերկու քսաննոց թուղթ տվինք Ձեքմեծելի մոտերը շինված թամբութանց համար. արդ հիմա կըսեն թե՝ Ռուսիա առաջարկած է յեղեր, վոր այդ թամբութունները տվրվին, և մենք ալ նորեն յերկերկու քսաննոց թուղթ պիտի տանք քեզի անոնց տվրվելու ծախուցը համար:

Յես այս զրույցին հաւատացի, մանավանդ անոր համար հաւատացի, վոր Ռուսիա այս առաջարկութունը չըրած՝ անձերենը զանոնք տվրեցին:

Ըսելիքս սա չե, վոր ամեն խոսքի հաւատք ընծայելու չե:

31 Հոնվար 1878

Աչվընիս լույս... ինչպես վոր սովորութիւն յեղած է, կըսվին հաշտութիւն պիտի հաջորդե, ինչպես վոր հաշտութիւն ալ նորեն կուրծ պիտի հաջորդե:

Յերկու հոգի մեր կողմեն, յերկու հոգի ալ մեր բարեկամ Ռուսիո կողմեն քիչ որեն Ագրիանուպոլսո մեջ հաշտութիւն նախնական սկզբունք պիտի պատրաստեն յեղեր:

Նախնական սկզբունք... դեռ ինչե՞ր պիտի լսենք, աստուծ իմ... ընագիտութիւն, քիմիարանութիւն նախնական սկզբունքը լսած ելինք, բայց հաշտութիւնը լսած չեյինք:

Դասագիրք պիտի շինեն այս մարդիկը, ինչ պիտի ընեն. արդո՞ք Դեր. Սորեն յեպիսկոպոսի¹⁹⁾ հրատարակած քրիստոնեականներուն պես նախ Նախնական հաշտութիւն ու վերջն ալ Կրթական հաշտութիւն մը պիտի հրատարակեն²⁰⁾:

Իմ խելքս չհասնիր, միայն սա կը տեսնամ, թե համառոտ հաշտութիւն մը պիտի հրատարակենք առաջժմ, և յեթե ժողովը ըրդէան կողմեն լավ ընդունելութիւն գտնե, այն ատեն ընդարձակ հաշտութիւն մը պիտի հրատարակվի:

Սպասենք:

Վայրկյանի վայրկյան հյուրերու կը սպասենք, թե ցամաքեն ու թե ծովեն... պալոնով գալիք հյուր չունինք:

Մեկ յերկու որե ի վեր գրույց կը պատի, թե՝ Անգղիո նաւատորմիդը նեղուցն²¹⁾ մտեր է, թե նորեն յեղեր է, թե յետքը դարձյալ մտեր է, թե վերջը նորեն յեղեր է: Յեթե այս գրույցներուն ամենն ալ իրավ են, ըսել կըլլա, թե Անգղիո նաւատորմիդին հրամանատարը հրահանգ ընդունած է իր կառավարութիւնեն, վոր պարապ չնստի ու նեղուցն մեյ մը մտնե մեյ մը յեղն:

Տար աստուծ, վոր սա նաւատորմիդին սպասելու տեղ մը վորոշվեր ու մենք ալ գլխու ցավին խախելինք:

Ընթերցող, տարիչ մը ի վեր է այս նաւատորմիդին խնդիրը գլուխնիս ուռեցուց:

Նաւատորմիդը նախ և առաջ Պեշիքա յեկավ: Իր գալուն հետեւալ որը Սորհրդարանին մեջ հարցում մ'եղավ.— նաւատորմիդը ինչո՞ւ Պեշիքա գնաց:

Լորտ Տերպի²²⁾ կարծելով, թե նաւատորմիդին Պեշիքա սպասելը աղեկ տալովորութիւն չըրավ ժողովրդէան, հրաման ըրավ, վոր Մալթա²³⁾ յերթա, և գնաց:

Հետեւալ որը ան քեզի հարցապնդում մ'ալ.

— Նաւատորմիդը ինչո՞ւ Մալթա գնաց:

Լորտ Տերպին այս հարցապնդումին վրա նորեն Պեշիքա զրկել տվավ նաւատորմիդը:

Նորեն հարցում մը.

— Ինչո՞ւ նաւատորմիդը Պեշիքա գնաց:

Ալ մարդուս համբերութիւնը կը համնի. մարդիկ, ըսես իրենց, սա նաւատորմիդը ձերն է, նաւատորմիդ ըսածդ ալ մարդազետնի մեջ չպահվիր, այլ ծովու վրա. տեղ մը վորոշեցե ու հոն մնա: Այս չըրին, ալ միայն հարցապնդումով մարդը շվարեցուցին մինչև հիմա:

Շատ հաւանական է, վոր այս անգամ ալ հարցապնդումներ յեղած ըլլան, թե ինչո՞ւ նեղուցն մտեր է, թե ինչո՞ւ նեղուցն յեղեր է. Լորտ Տերպիդի ալ ճարը հատնելով, իրեն ուղղված հարցապնդումին համեմատ՝ նաւատորմիդին մեյ մը նեղուցն յեղնու, մեյ մը մտնելու հրաման զրկած ըլլա, և այս է պատճառը:

վոր նախատորմիդը մեյ մը ներս կը մտնե, մեյ մը դուրս կենե
կոր:

Տեսնենք, սա կատակերգութեան վերջը ուր պիտի լինի:

Չմոռնանք ըսելու, վոր Անգղիո նախատորմիդին պես մենք
ալ Չերքեզներն ²⁴⁾ ունինք, վորոնց համար չենք կրնար կոր
բնակելու տեղ մը գտնել:

Յեւրոպայի կողմեն դուրս յենեն անոնք, կըսեն: Կառավա-
րութիւնը Յեւրոպայի կողմեն բերել կուտա և Ասիո կողմը կը
դրկի:

Ասիո կողմն ալ չենք ուզեր, կըսեն:

Ո՞ւր դրկենք:

— Յեւրոպայի և Ասիայի կողմերը մի դրկեք տե, ուրիշ վոր
կողմ կուզեք նե՛ դրկեցեք: Փառք աստուծո, տեղ չկա չե՛ յա:

Չարմախալին հոն ե, վոր Ոսմ. Յերեսփոխանական ժողովն ²⁵⁾
ալ չկրցաւ յուր վերջին նիստերեն մեկուն մեջ վորոշում մը
ուալ այս մասին:

Լսածնուս նայելով՝ մեր ազգեն ալ քանի մը կրոնավորներ
Ամեն. Ս. Պատրիարքին ²⁶⁾ լերթալով, աղաչեր են աղաչել Բ. Դուռը
վոր հայարնակ գլուղերն ալ չդրկվին:

Ըստ մեզ՝ այս առաջարկութիւնը պարապ բան ե:

Կառավարութիւնն իսկ չեթե դրկել ուզէ՝ Չերքեզները չեն
լերթար, ինչու վոր հայարնակ գլուղերուն մեջ գողնալու բան
չմնայ: Իսկ յեթե կա՝ այն ատեն ալ քլուրդերը չեն թողուր,
վոր Չերքեզները մոտենան, վորովհետեւ իրենց շահուն կը դժի...

Դիվանագետներ, թագավորներ, կախարեր, ամենքը միաբե-
րան «Գրիստոնեյից վիճակին բարվոքում» կըսեն, ի վերա այսը
ամենայնի չիս իմ վիճակիս մեջ բարվոքում մը չեմ կրնար կոր
տեսնել: Արդոք ինձի՞ այնպես կուզա կոր, վորովհետեւ կըսեն՝
թե մարդս վորչափ ալ չերջանիկ ըլլա, դարձաւ իր վիճակեն
դժգոհ կըլլա. արդոք նախանձիկի վիճակ մ'ունիմ, կըսեմ կոր
չերբեմն ինքնիրմես, սա մտածութեամբ՝ թե դիվանագետները իմաս-
տուն մարդիկ են, և հարկաւ, իմ վիճակս ինձմե աղեկ գիտեն:

Բայց վորչ, սկեպտիկութիւնը մեկդի, իմ վիճակս Պուլդարի
մը վիճակեն աղեկ չե:

— Յեթե այդպես ե, քրիստոնեյա չես: Դանի վոր քրիստո-
նեյից վիճակի բարվոքում կըսեն և քու վիճակդ չեն բարվոքեր,
ըսել կրլա թե՛ կամ վիճակդ բարվոքելու պետք չունի, կամ քրիս-
տոնեյա չես:

Իմ վախս ալ ան ե. վիճակիս բարվոքումը իրենց ըլլա,
քրիստոնեյութիւն մը ունեյի՛ դոնե ան մեջ չխաղա. թերեւ ապա-
գային պետք կըլլա... Ռուսիո:

— Տոքթոր Ա...ը կը տեսնեք կոր:

— Բնավ տեսած չունիմ, կերեվա վոր պահվտած ե:

— Ինչո՞ւ:

— Վախեն:

— Չերքեզ ե, վոր վախեն պահվտի:

— Չերքեզ չե, բայց Չերքեզներեն ավելի մարդ մեռուց այս
ձմեռ:

Մեծ. Համբարձում եֆ. Ալաճաճյան ²⁷⁾.

Տիրաւոր բառը, վոր հայոց համար հաճախ կը գործածես,
սահմանադրութեան և ազատութեան դարուս մեջ խիստ անախորժ
կը հնչի կոր ականջիս, վորովհետեւ գերիներու, ստրուկներու և
շուներու համար կը գործածվի ընդհանրապես այդ քու սիրած բառը:

Ներեցեք համարձակութեանս, բայց կը խնդրեմ, վոր, չեթե
կարելի չե, պղտիկ զոհողութիւն մը ընելով՝ այդ բառը չգոր-
ծածեք այսուհետեւ հայոց ազգին համար:

Վորով մնամ առաջվան պես

Հ. Հ. ՊԱՐՈՆՅԱՆ

2 Փետրվար 1878

Յեթե դիվանագիտութիւնը սիրուն կողմ մ'ունի՝ այն ալ չուր
լեզուն ե:

Իր անուշ ու քաղաքավարական լեզուն մշուս բոլոր թերու-
թիւնները կը գոցե:

Որինակի համար՝ Սերվիան²⁸⁾ աչսոր մեղի կոշտությամբ
բան մ'ըսած չունի. չըսեր մեղի

— Շըշթ... ինծի նայե, սա առած տեղերս տես՜մը, անոնց
աճենն ալ իմ պիտի ըլլան, հասկցա՜մը:

Այլ քաղաքավարությամբ կըսե.

— Սահմանս պիտի շտկեմ քիչ մը:

Վորպես թե մեղի բնավ քնաս մը չունի:

Նույնպես՝ Սեվ Լեռը²⁹⁾ չըսեր.

— Իմ տիրած տեղերուն՝ վորոց դու կը հրամայելիր, ասկից
յետքը չես պիտի հրամայեմ. հասկցա՜մը ըսածս:

Այլ կըսե.

— Տեղս շատ նեղ ե:

Լեզուն սիրեմ, չեթե Պողազիչիչի շոգենաքնիւրուն³⁰⁾ մեկուն
մեջ ինձի ըսեր ասանկ խոսք մը, տեղիս կելնելի և իրեն տեղ
կը բանայի:

Նմանապես մեր բարեկամ Ռուսը չըսեր.

— Դեռ կայնէր եք հոս... գացե՛ք սրկի:

Այլ կըսե.

— Սահմանս պիտի ընդարձակեմ:

Սահման, սահման և դարձյալ սահման:

Մեյ մը կանանց մազ շտկելը, մեյ մ'ալ մեր բարեկամ Ռուսի
սահման շտկելը վերջանալի բան չէ:

Այսչափ տարիներն ի վեր մեր բարեկամ Ռուսը սահման կը
շտկե և դարձյալ շտկելու տեղ մը կը գտնե: Հիմա շտկելիք սահ-
մանը առաջինն ավելի ծուռ պիտի ըլլա, և քանի մը տարիցն
յետքը նորեն սահման շտկելու պիտի սկսինք:

Տաքալուչս չկա, վոր նորընծա Սերվիան, Սեվ Լեռը ու Րու-
մանիան ալ իրմե սորվեցան սահման շտկելու արվեստը:

Արդյոք, ընթերցող, մեր սահմանադրությունը³¹⁾ չըլլա՞ վոր
ասոնք սխալ հասկնալով, կարծած ըլլան, թե՛ իրենց սահման-
ները շտկելու համար հրատարակեցինք այդ սահմանադրությունը:

Յիթե այդպես հասկցած են՝ իմացնելու չե իրենց, վոր սահ-
մանադրությունը առաջիմ գործադրության մեջ չէ:

— Ի՞նչ ե, ի՞նչ կա, ի՞նչ կըլլանք կոր, ի՞նչ ե չեղեր:

— Բան մը չե, Պուլլար աղջիկ մը:

— Ո՞ւսկից առիք:

— Աճի Չոշմիլի մահալլեպիճիլին խանութեն:

— Մահալլեպիճին աղջիկ ալ կը ծախե կոր:

— Վոչ, Չերքեզ մը հափշտակեր ե չեղեր ու...

— Անկարիլի չե:

— Տանիմ ըսելի...

— Սուտ ե:

— Ըսելիքն քա...

— Սխալ ե:

— Քանի մը Պուլլարներ տես...

— Ջրպարտություն ե:

— Տեսեր ու առեր են:

— Չեմ հավատար:

— Ինչո՞ւ:

— Մեղա ըսե, իսլամ մը անանկ բան կընե՞, տղա՛ չես:

— Ինչո՞ւ:

— Քաթթանպուլույի չերեսփոխան Մուսթաֆա եֆենտին ան-
ցալ նիստին մեջ ըսեր ե, թե Չերքեզները իսլամ ըլլալով, վոճ-
ըադործութուններ չեն կրնար ըրած ըլլալ, հետևաբար իրենց
վրայոք պատած զրույցները զրպարտություն են:

— Յեթե այդպես ե, չեմ պնդեր, թերևս աղջիկը գողցած ե
զՉերքեզն:

Միտքս բան մը կա, չմոռցած հարցունեմ:

— Ո՞վ դուք, վոր դրամանիշ կառնեք, վերջը ի՞նչ կընեք
այդ դրամանիշները. չես առածներս կը պահեմ կոր, վրովհետև
մարդ չառնիր կոր:

Յիրեկ Թերսահանլի դրամանիշը³²⁾ չեր անցներ. — Ինչո՞ւ. — Վո-
րովհետև կեղծն ե հրատարակվեր չեղեր: Աչսոր ալ Թաթալայինը
չեն ընդունիր. — Պատճառ. — Վորովհետև կեղծն ե տպվեր: Վաղն ալ
Շիրքեթի³³⁾ և կամ ուրիշ տեղի մը դրամանիշը չպիտի քալե. —
Ինչո՞ւ. — Վորովհետև կեղծը պիտի չիլնե:

Ճաթելու կետը այն ե, վոր կեղծը յիշած ըլլալուն համար

իսկն ալ չեն ընդունիր. չընդունեն զատ կեղծն իսկն կամ իսկը կեղծեն զանազանելու համար դժուրութիւն մ'ալ չեն ցցուներ, վոր յես ալ քովս գտնվածներուն կեղծ ըլլալը կամ չըլլալը հասկընամ: Սատանան առնե մեղքերնին, բայց ինձ աչնպես կը թվի, թե՛ դիտմամբ չեն ցցուներ կեղծին ու իսկին մեջի տարբերութիւնը, վոր իրենց հանածներն ալ չընդունին:

Յեթե այս ընթացքը հաջողի, վաղը յես ալ հանուն Մասիսի տպարանի 50.000 դուրուշի դրամանիշ պիտի հանեմ շրջաբերութիւն. և ամենքը քշելեն յետքը՝ «եֆենտիւմ, ատոնց կեղծն են շիներ» ըսելով, մեկն ալ չպիտի ընդունիմ:

Յեզ մինչև հիմա չընելս կարծեմ քիչ մը անխոհեմութիւն ե:

Հիմա հարցուր ինծի թե՛ մինչև հիմա ինչ ըրեր և ինչ կընես: Առաքյալին³⁴ ըսածը կընեմ կոր. «Լալ ընդ լացողս, խընդալ ընդ խնդացողս»:

Ըսենք թե՛ Մուստաֆա եֆենտին կը տեսնեմ, վոր տխուր նստեր ու կը մտմտա, յես ալ դիմացը կը նստիմ տրտում տխուր ու կսկսիմ մտմտալ: Անդին կերթամ, կը տեսնեմ, վոր Յանչո աղան Բեթքոյին հետ ձեռք ձեռքի տված կը պարեն, կամացուկ մը Բեթքոյին քովը կերթամ ու «ձեռքդ ինծի տուր» կըսեմ, ձեռքն կը բռնեմ ու կսկսիմ պարել:

Իսկ յեթե մեկը տեսնե զիս՝ և հարցունե, թե ինչո՞ւ կուրախանաս, կը պատասխանեմ.— ուրախանալու բան մը չունիմ, խնդացողներու հետ խնդացած ըլլալու համար ե, վոր կուրախանամ:

Տեսնենք, առաքյալը ինչ վարձատրութիւն պիտի ընե ինձ՝ յուր խոսքը կետ առ կետ գործադրած ըլլալու համար³⁵),

Լրագրաց մեջ նախատորմիլի վերաբերյալ ծանուցում մը կարդացի՞ր, ընթերցող. Պեշիքայի ու Կ. Պոլսո մեջ տեղ նախատորմիլ մը կորսված ե, գտնողին մեծ պարգև պիտի տան յեղեր:

Մինչև այսօր այդ նախատորմիլին ո՞ւր ըլլալը չգիտնալուն վրա կը դարձանամ կոր. յես ծանուցումը կարդալուս պես ուր ըլլալը իսկուչն գտա:

Ըսեմ ձեզի, թե ուր ե այդ կորսված նախատորմիլը, պարգևը առնել կուտո՞՞ք ինծի:

— Այո, ըսե, և շուտ ըսե:

— Ձերքեզներուն քովն ե:

5 Փետրվար 1878

Անգղիական նախատորմիլը վերջապես գտնվեցավ:

Կղզիներուն³⁶) առջևը յեկեր նստեր ե... առաջ գալու կամ չընա կոր:

Ինչո՞ւ յեկավ այս նախատորմիլը:

Հանգիստ չեղի՞ք, չարութիւն ընելու համար յեկած չե, բարութիւն ընելու համար ալ յեկած չե, միմիայն Արեւելքի մեջ յուր պատիվը կոտրել չտալու համար յեկած ե յեղեր:

Անգղիո կառավարութիւն ըսեր են յեղեր թե՛ յեթե քու նախատորմիլդ Պոլիս չկարենաս մտցնել, մեծ պղտիկութիւն կը հրավիրես վրադ:

Ե՛հ, ընթերցող, մեկը քեզի ասանկ խոսք մը ըսեր նե՛ հարկավ դուն ալ պղտիկ մնալ չեցիր ուզեր ա:

Կըսվի թե Գաղղիո և Իտալիո կառավարութեանց ալ նախատորմիլները քիչ որին պիտի գան, վորպեսզի անոնք ալ պղտիկ չմնան...

Ի՞նչ հարկ կա աս ու ան պղտիկ ձգելու... Թույլ տալու չե վոր մեծնան:

Գոնե Բուլմանիան, Սերվիան ու Սեվ Լեոն ալ՝ պղտիկ չմնալու համար՝ նախատորմիլի տեղ տասնական կտոր կառք ղրկեն:

Ռուսիան ալ ըսած ե յեղեր, թե՛ ինչ նպատակով վոր Անգղիո նախատորմիլը ներս մտավ, նույն նպատակով յես ալ պիտի մտնամ:

Դուն ալ հրամմե:

Ով դուք, վոր ուրիշի քով յերբեմն պղտիկ մնացած եք, և վոր կյանքերնուդ մեջ բնավ մեկու մը քով պղտիկ իյնալ չեք ուզեր, յեկեք ամենքնիդ ալ հոս յեկեք:

Ըսելիք մնաց:

Ոսմ. Յերեսփոխանական ժողովո առժամանակյա կերպով դադարելուն վրա ի՞նչ կարծիք ունիք:

Յես շատոնց ի վեր, ատոր բացված որեն ի վեր, կը գուշակելի, վոր ալս ժողովն որ մը կամ չերեք ամսվան համար պիտի գոցվի և կամ բոլորովին պիտի խափանի:

Հարցուր հիմա ինձի թե ի՞նչպես կը գուշակելի:

— Ի՞նչպես կը գուշակելի:

— Վորովհետև, կըսելի ինքնիրմես, քաթոնիս մեջ վոչ թե նախարարի մը՝ այլ ոսանիյի մը դեմ յեթե յերկու խոսք ընելի՝ իսկուչն ամիս մը կը դադրեցնելին քաթոնը. իսկ յեթե քիչ մը ծանր կոխելի՝ կը խափանելին դաչն: Ասոնք ինքնիրենա ըսելես չետքը սա յեղրակացութունը կը հանելի, թե՛ քանի վոր այս յերեսփոխաններն վոմանք չերքեզներուն դեմ, նախարարներուն դեմ ծանր ու յերկար ճառեր կը խոսին, անպատճառ լրագիրնին պիտի գոցվի որ մը: Մինչև անգամ կըսելի մտոքս, թե ասոնց տարեկան յերկու հարյուր թուղթ ալ տրվիլու չե, վորպեսզի հաջորդ յերեսփոխաններն ազատախոսության յեռանդնին քիչ մը չափավորեն՝ մեղնե որինակ առնելով:

Մինչդեռ կառավարութունք գորք, նավատորմիդ և ալլն կը ղրկեն հոս իրենց շահն ու պատիվը պաշտպանելու համար, Չամուրճյան³⁷⁾ մեծիմաստ պատվելին ալ բառատորմիդ մը կը ղրկե Փուլզին³⁸⁾ Գեր. Նար-Պելի նախնական և Կրթական Բրիստոնեականները վորպես թե պաշտպանելու համար:

Չամուրճյան պատվելին վորչափ ալ կեղծե թե Գեր. Նար-Պելի Բրիստոնեականներուն պաշտպան հանդիսացած ե, զինք ճանչցողները չեն խաբվիր, և գիտեն թե այդ Բրիստոնեականներուն ֆլասելու նպատակով ե, վոր մեծիմաստ պատվելին դաշտն կը պաշտպանե ըստ առածին թե՛ Պատվելիյն պաշտպանված գրքերը դպրոցներն կը մերժվին:

Կըսեն թե Պատվելին շատոնց ի վեր առիթի կը սպասե յեղեր Գեր. Նար-Պելի չարիք հասցնելու համար. սատանան ներկայացուց առիթը, Պատվելին ալ չփախցուց զայն:

Կըսվի նաև թե Գեր. Նար-Պել միտք ունի դատ բանալ և իր Բրիստոնեականներուն տպագրության ծախքը Պատվելիյն պահանջել:

Յերկու տող ալ բժշկական:

Ավետիս անոնց, վորոց վորովայնը խիստ պինդ ըլլալով, գորավոր լուծողական դեղերու կարոտութուն ունին:

Այս որերս անանկ գորավոր լուծողական դեղ մը գտնվեր ե, վոր ծայրահեղ վորովայնապինդ մարդոց անգամ ազդեցութուն կընե կոր: Այս դեղը հակառակ իր գորության, շատ ալ աժան ե, այնքան աժան, վոր պետք չունեցողն ալ կրնա առնել:

Արդ, այս դեղը ուրիշ բան չե, յեթե վոչ կովու միս, վոր այս որերս ոխան ի դին 100 փարայի կը ծախվի գրավաճառներու քով... մասվաճառներու քով պիտի ըսելի:

100 փարա տալով մարդ կրնա տաս քսան հոգիլի լուծում տալ, մինչդեռ յեթե դեղագործի յերթաս՝ 8—10 դրուշ պիտի տաս մեկ հոգվի համար, և այն դեղն ալ շատ անգամ ոգուտ չընիր: Իմ ըսած դեղս անանկ յերկու յերեք անգամ լուծում տվողներն չե, այլ շարաթներով, ամիսներով և յեթե առաջը չառնես՝ տաքիներով կը քչե...

Աղքատաց համար աղվոր առիթ... ձեռքե փախցունելու չգար:

Տեսարանն ե Եմին-Եոնյու³⁹⁾:

Հուլինն մեկը բազմության մեջ լուր ձեռքը սխալմամբ քովինին բաճկոնին գրպանը տանելով՝ ժամացույց մը առնելու միջոցին կը բռնվի:

Իսկուչն վոստիկան մը կը հասնի:

— Ինչո՞ւ կը բռնեք կոր, ի՞նչ ըրի չես, կը պոռա Հուլինը:

— Առանց ամչնալու կը պոռամ կոր ալ:

— Ինչո՞ւ չպիտի պոռամ, թող տվեք ոձիքս, ի՞նչ ըրի չես...

— Ի՞նչ պիտի ընես, սա մարդուն ժամացույցը կը գողնայիր կոր, անոր համար բռնեցինք:

— Անանկ ե նե՛ տսոնք ինչո՞ւ չեք բռնիր կոր, ըսավ գողը, շուրջը գտնված Ձերքեզներն ու Պաշտպանութունը ցուցնելով:

— Լռե՛:

— Թող տվեք ոձիքս, ճանը՛մ, չես ալ կամավոր եմ:

— Բալե՛:

— Աս ի՞նչ անիրավություն ե... հավասարություն կըսեն և խտրությունը չեն վերցըներ:

Անգղիական նավատորմի ղեկավար Ռուսական բանակին հետ *fourth* խաղալ սկսած ըլլալով, առջի որը չեկավ ռեվերանսը ըրավ ու չետ քաշվեցավ:

Թերեկս այս խաղին քատրիլ անունը տալս ձեղի քիչ մը տալ-
րորինակ չերեկա. ի՞նչ ընեն, ուրիշ ավելի հարմար անուն մը
չկրցի գտնել. չեթե դուք գտած եք, ըսեք ինձի, ի՞նչ խաղ ե այս
խաղը:

Յեթե նավատորմի ղեկավարն դուրս չեն, Ռուսիան ալ
յուր գործը Պոլսին պիտի հեռացունեն չեղի. չեթե Ռուսիան իր
բանակը քիչ մը չետ քաշե, Անգլիան ալ նավատորմի ղեկավար յետ
պիտի քաշե չեղի. հետևապես չեթե չերկուքեն մեկը յուր գործը-
թյունը յետ չքաշե, չերկուքն ալ Պոլսի պիտի մտնեն չեղի:

Շատ լավ, բայց Անգլիա նեղուցին չմտած՝ ըսելու չեր յուր
վիզավիին, վոր չեթե Պոլսի մոտենաս՝ չես ալ ներս պիտի մըտ-
նեմ, և վոր չեթե Պոլսի մոտենան չետքը:

Հիմա հանցանքը վորո՞ւն քով ե:

— Թուրքիային քովն ե, պիտի ըսեն հիմա ամենքը, վորով-
հետեւ բերանին անանկ վարժվեցավ անգամ մը: Իսկ չես կըսեմ
թե՛ այս կետին մեջ հանցանք չունինք մենք:

Յեթե անգլիական Ռուսիո հետ խոսիլ տաս՝ հանցանքն իրարու
վրա կը ձգեն:

— Դուք մոտեցած չըլլալիս նե՛ չես ալ նավատորմի ղեկավար նե-
ղուցին ներս չեյի մտցուներ, կըսե Անգլիան:

— Դու նավատորմի ղեկավարն բերանը պատրաստ գտնված
չըլլալ նե՛ չես ալ բանակս Պոլսի առջև չեյի բերեր, կըսե Ռու-
սիան:

— Դուք ալ չետ քաշվե, չես ալ:

— Շատ աղեկ, առաջ դուք քաշվե:

— Վոչ, առաջ դուք, յես քու խոսքիդ հավատարմութուն
չեմ ընե:

— Յես ալ քեզի վստահութուն չունիմ...

— Տեր վորդորմյա, ատ ի՞նչ պայադի խոսքեր են: Յես քիչ
մը չետ կը քաշվիմ, դուք ալ քիչ մը քաշվե:

— Ալ չես քաշվիլ կոր, գիտես:

Չարմանալի բան... ճաթեկո՞ւ բան... անոթի մնալու բան...
առաջ Կ. Պոլսի մոտենալու համար կոլով կընեյին, հիմա ալ լեյնե-
լու համար:

Ինչ վոր ե, չերեկ իմացվեցավ թե՛ նավատորմի ղեկավարին
նավահանգիստը քաշվե ե, և թե Ռուսիան ալ գործերը մալա-
քաղաքս չպիտի մտցունեն չեղի. բայց Լազար⁴⁰⁾ կըսե թե չերեկ
40 խաղախ ձիավորներ տեսեր ե Ղալաթիա⁴¹⁾:

Չորքերը չետ քաշելն աս ե նե՛ շատ աղեկ բան մը չե կար-
ծեմ. իսկ չեթե Նիքոլա մեծ դուքսը գործերը յետ դարձունելն
յետքը Նիկողոս եֆենտին զանոնք ներս մտցուց, այն ատեն
Լորտ Տերպի կը պարտավորի ուղղակի Նիկողոս եֆենտինի հետ
բանակցիլ. ինչպե՞ս վոր մենք ալ կը պարտավորինք աս խաղին
վախճանին սպասել:

Վոչ վո՞ւ կարե յերկուց տեղաց ծառայել:

Մենք շատ ժիր մարդիկ ըլլալու չենք, վոր այսորման որս
չերկու տերերու կը ծառայենք, և անանկ տերերու, վորոնց բնա-
վորութունն իրարու անջան ներհակ են, վորքան վոր Զուրը
կըսելին կամ վորքան վոր Արեւելյան Մալուլը⁴²⁾ Չամուրձյան
պատվելիյին: Որինակի համար, չեթե մին հոս չեկուր ըսե՛ մյու-
սը՝ անդին դնա, կըսե. չեթե անդին չեկ ըսե, ասդին չըն-
տե, կըսե: Ասոնց վորին հրամանը կատարել, վորին չկատարել,
վորն ընդունիլ, վորն մերժել...

Ծառայել կըսեմ նե՛ անոնց սպասավորութուն կընենք ըսել
չեմ ուղեր, սխալ չհասկցվի. — ըսել կուզեմ, թե և վոր մեկուն
սիրտը կոտրելու համար՝ հետեւին անուշութամբ կը վարվինք,
ինչպե՞ս վոր քաղաքավարութունն ալ այսպես կը պահանջե:

Մին ինձի կըսե.

— Գնա սա մարդուն ըսե, վոր հոս գա:

Հաղիվ թե կերթամ ըսելու՝ մյուսը յետեւս կը կանչե ու կը
հրամայե.

— Գնա, ըսե սա մարդուն, վոր հոս չգա:

Հիմա դուք իմ տեղս չեղիլ ու գործ տես նայիմ:

Ի՞նչ ընեմ, յես ալ չերկուքին ալ խոսքը հավատարմութամբ
տեղը տանելու համար կերթամ այդ մարդուն կըսեմ.

— Եֆենտիմ, նախ յեկուր, հետո մի գար, ու նոր հրահանգի պատահ.

— Յես ալ քու տեղդ ըլլամ նե՝ վորը քեզի ավելի շահավոր ե՛ ան կընդունիմ, մյուսը կը մերժեմ:

— Ահա դժվարությունն ալ հոտ ե: Յեթե յերկուքեն վորին ավելի շահավոր ըլլալը գիտնայի, ըսածդ մինչև հիմա կընեցի. առայժմ յերկուքեն ալ ֆլասե ուրիշ բան մը տեսած չունինք:

Ի վերա այսր ամենայնի, ինձի աչնպես կը թվի, թե՛ քանի մը տեր ալ ավելի ըլլա նե, պիտի կարենամ ծառայել:

Ձեզի ինչպես կը թվի:

Պարոն Կլատսթընին ⁴³⁾ պես յես ալ ամեն ոք մեյ մեկ հարցում պիտի ընեմ:

Պատասխան տվեք...

Մայրաքաղաքիս բոլոր կառավարները աղգային քաղաքապահ զինվոր գրված են, թե քաղաքապահ զինվորները կառավար չեղած են:

Բանի մը որ առաջ հիսունի չափ կառք տեսա իրարու յետեմ, վորոց վարիչներն ելին քաղաքապահ զինվորները:

Մեկեն ի մեկ ապշեցա մնացի, քանզի, թեպետ և ձիավոր զորք տեսած եյի, բայց կառավար զորք տեսած չունեցի: Թերևս, կըսեցի ինքնիրենս, այս խումբերը նոր կազմված ըլլան:

Ի՞նչ ընելու համար:

Պատերազմական հմտություն չունենալովս հանդերձ՝ վերջապես վորոշում տվի, թե կառքով պատերազմի չերթցվիր, անպատճառ ուրիշ բան մը ըլլալու չե, և կառքին յետեն գացող մեկու մը հարցուցի.

— Ո՞ւր կերթան այս կառքերը:

— Չգիտեմ:

— Ինչո՞ւ չգիտես:

— Անդին գնա, պե մարդ:

— Ինչո՞ւ անդին չերթամ:

— Յես ցավ չունիմ տե, յերկու սահաթ կայնիմ քեզի խոսք հասկցնեմ:

— Ինչո՞ւ ցավ ունիս:

— Յերկար ըրիր:

— Ինչո՞ւ չերկար ըրի... Ըսեք կողաչեմ, այս կառքերը ո՞ւր կերթան կոր:

— Եֆենտիմ, Մուհաճիր կը կրեն կոր:

Մուհաճիր կուգա, մեր կառքերը կառնեն, մուհաճիր կերթա, մեր կառքերը կը գործածվին, վիրավոր կուգա, մեր կառքերը կուզեն, վիրավոր կերթա, մեր կառքերը կը տանին. հաց կուգա, մեր կառքերը կուգան կառնեն, հաց կերթա՝ դարձյալ մենք կը տանինք. հասկցա՞ր հիմա:

— Հասկցա, շնորհակալ եմ. ադեկ ան, առուտուր բացված ե ձեզի... ձրի չեք աշխատիր կոր ան... ձրի ալ ըլլա նե՝ ի՞նչ ֆլաս ունի յեղեր... նեղ որերու մեջ ամենքնիս ալ հայրենյաց ողնելու յենք:

— Անանկ ե լս...

— Դուն ո՞ւր կը նստիս կոր. կառքը ո՞ւր պիտի տանիս վերջը:

— Պեյողլու ⁴⁴⁾:

— Կառքը անանկ ալ պարապ պիտի յերթա անանկ ալ, յես ալ նստիմ մեջը ու Բերա յելլամ նե, վնաս մը ունի՞ քեզի:

— Աս վորչափ լաղը մյուշտերիներու հանդիպեցանք այսոր:

— Հայրենյաց ողնելու չե, տղաս:

Ըսելու չմնաց, մարդը ծուռ ծուռ յերեսս նայելով գնաց:

Վերջապես անձնվիրություն ու զոհողություն չկա սա առապանքներուն քով:

13 Փետրվար 1878

— Բարև:

— Բարի չեկար, պարոն Խիկար, այսոր գործի չգացիր:

— Չգացի, յերթալիք ալ չունիմ:

— Ինչո՞ւ:

— Դործ չմնաց վոր յերթամ, վարպետս ճամբա տվավ:

— Ի՞նչ պատճառի համար:

— Ադեկ ծառայած ըլլալուս համար, ինչու վոր ճամբա տված որն ըսավ, թե՛ քու մատուցած ծառայություններեդ մեծապես շնորհակալ եմ: Ուստի փափաքելով, վոր քեզի մեծ վարձատրություն մը ընեմ, վորոշեցի վոր քովես հեռանաս և աչքս չտեսնա քեզի:

— Հիմա ինչո՞վ կզբաղիս:

— Որվան խնդիրներով:

— Խոսե՛:

— Յեթե քիչ մը համարձակ խոսելու ըլլամ՝ չես վռնտեր ա՛:

— Մի՛ վախճար:

— Ըստ իմ խոնարհ կարծյաց՝ որվան կարեւորագույն խընդիրներն են մեկն ալ առ ե, թե քանի վոր առանց պարտքեր դիզելու ապրիլը անկարելի չե մեզ, գոնե իմաստությամբ վարվելով պարտք չի վճարելու գիտությունը սորվեցնենք մեր զավակաց:

— Աս ալ գիտություն է, պարտք չես տար, կը լմնա կերթա:

— Այնպէս չե, վարժարանի հոգաբարձութիւններն ալ ձեզի պես կարեւորութիւն չեն տված այս գիտության և շատ սխալած են:

— Ինչո՞ւ:

— Անոր համար վոր չեթե Ծրանսերենի կամ Անգղիկներենի տեղ այս գիտութիւնը սորվելին մեր չերիտասարդները՝ իրենց պարտատերերը տեսնալուն պես չեյին շվարեր մնար, չեյին սկսեր թոթովել, այլ համոզիչ խոսքերով գոհ կընէին իրենց պարտատերերը:

— Բայց պարտք չվճարելու գիտութիւնը սորվեցնելու տեղ չեթե պարտք չդիզելու արհեստը սորվեցնենք՝ ավելի աղեկ ըրած չենք ըլլար:

— Վոչ, պարտք չվճարելը ավելի շահավոր է... այս պարտք չվճարելը նոր բան մը չե, Քրիստոսն իբր չորս հարյուր տարի առաջ է. Քրիստոսնեութենն շատ հին է... բայց ինչ ոգուտ, վոր Քրիստոսնեութիւնն այսօր կը պաշտպանվի և պարտքերին չվճարողները չերեսի վրա կը ձգվին... Ով վոր ամպերուն ⁴⁵⁾ վրային անցած է, տեսած է հարկավ Սթրեբսիատը՝ ⁴⁶⁾ վոր կաղաչե Սոկրատա, ⁴⁷⁾ վոր պարտքը չհատուցանելու արհեստը իրեն ուսուցանե:

— Թող այդ Սթրեբսիատը ափսոսն հաներ:

— Ըսել է թե՛ շատ հին ատեններու մեջ ալ պարտք չվճարել կա յեղեր, մինչդեռ մեր խմբագիրներեն վոմանք կը պնդեն թե իրենց միջոցովը տարածվեցավ այդ գիտութիւնը:

— Ասանկ ալ գիտութիւն լսած չունեյի:

— Սոկրատի պես մարդու մը դիմելով անկե խորհուրդ հալցունելը կը հաստատե, թե այդ գիտութիւնը կարծվածին չափ գյուրին բան մը չե:

— Իմ խելքս չի հասնիր դրամական դործերու, Մալիցեն ⁴⁸⁾ գնահ, անկեց կատարյալ տեղեկութիւն կառնես:

— Ուրիշ ի՞նչ ունիս:

— Սա ցավալի լուրն ունիմ, վոր Երզրումի մեջ քանի մ'ամիսն մարդ չպիտի մնա:

— Ո՞ւր կերթան կոր:

— Լեվենթի թղթակցին հաշիւու վոր ըլլաս, ամիսը բնակչներն տասը հազար հոգի թիֆոցն կը մեռնին յեղեր: Քաղքին մեջ ութսուն հազար հաշիւով, ըսել կըլլա թե ութ ամսլան մեջ կարինը բոլորովին պիտի պարպվի:

— Լեվենթի գրածին մեջ սուտ չկա:

— Կարելի՞ չե վոր չըլլա, բայց վնդափ կա, խնդիրը հոն է:

— Յերկու դերո զեղչենք:

— Գեշ չըլլար, վորոհետե Լեվենթիին ըրածը քիչ մը անգթութիւն է կարծեմ. գրիչը ձեռքը առնել և ամիսը տասը հազար հոգի ջարդել:

— Մեզի վերաբերյալ ի՞նչ լուր ունիս:

— Ձեզի վերաբերյալ մի... գարին գինը բարձրանալու վրա չե:

— Գարին ի՞նչ վերաբերութիւն ունի մեզի, թող Ավստրիացիները մտմտան. վոր գարեջուր կը խմեն. թող ձիերը մտմտան...

— Մենք ալ մտմտանք, վորովհետե խանվելի տեղ գարի կը գործածելինք, հիմա ի՞նչ պիտի ընենք:

— Աստված վողորմած է:

— Ուրիշ ի՞նչ ունիս:

— Քսակ մը լեցուն թերսխանելի կեղծ պիլեթ ունիմ:

— Քաղաքակա՛ն...

— Քաղաքակա՛ն... քաղաքական սա ունիմ, վոր սա կռիվը լմնալին վերջը դիվանագետներուն յուրաքանչյուրին մեյմեկ մեհյան պիտի կառուցանեմ, ամենուն արձաններն այդ մեհյաններուն մեջ պիտի կանգնեմ, և գլուխս բացած, անոնց յերկրպագութիւն պիտի ընեմ: Ասոնք մեր գիտցած ու ճանչցած չաստվածներն շատ վեր են: Աստվածներուն կենդանիներ կը գոհեյին:

ասոնց մարդ կը զոհենք ու հարյուր հազարներով կը զոհենք: Յեւ
ասոնցմէ վախցաւ: Մնաք բարով:
— Ի տեսութիւնս:

15 փետրվար 1878

Դեսպանախորհուրդն ⁴⁹) ռւր պիտի գումարի:
Լորտերուն ժողովին մեջ Լորտ Տերպի ըսեր է, թէ այս խըն-
դիրը քալլ մ'առաջ գնացած չէ:

— Թուրքիոյ պէս, կըսեն հիմա մեր թշնամիները:
Բայց ինչու ալս խնդիրը քալլ մ'առաջ գնացած չէ մինչեւ
այսօր կամ ինքե գնացած չէ, գոնէ քալլ մը չետ ալ գնացած չէ.
ուր վոր եր' հոն կեցած է, խնդիրը ինչ հանցանք ունի. անդա-
մալուծեցին խեղճը. ինչպէս կընա շարժիլ:

Ըստ մեզ՝ խնդիրը ուր վոր է, Դեսպանախորհուրդը հոն գու-
մարելու չէ:

— Վոչ, Ռուսիան կառաջարկէ չեղեր գումարել այնպիսի
ցերկրի մը մեջ, վոր Արեւելան խնդիրեն բնավ շահ չունենա:

— Յեզ չէ՞ն կըցած մինչեւ հիմա անանկ չերկրի մը գտնել:

— Վոչ:

— Հայաստանի մեջ գումարեն թող, վոր առաջժմ բնավ շահ
մը չունենալեն զատ բավական վնաս ալ տեսալ:

Շաբաթս աքսորանաց շաբաթ է:

Արտահանա հրամանատար Հյուսիսին Սապրի փաշան մշտըն-
ջենավոր բերդարգելութեան դատապարտուի ե:

Վորչափ աղեկ կըլլար չեթէ սա մարդը Արտահանա հրամա-
նատար չըրած բերդարգելութեան զրկուի... Իր յերեսնն ուսչափ
փնաս չեյինք տեսներ:

Անգամ մը խաբւեցանք, և փնասվեցանք, յերկրորդ անգամ
չփնասվելու համար հիմակվընէ խոհեմութիւնն ձեռք առնելով,
ապսպրելու չենք բանտապահներուն, վոր աղեկ հակողութիւնն ընեն
վրան, վորպէսզի մի գուցէ Արտահանա պէս այս բերդն ալ
պարպելով մեկնի...

Բերդերու մեջ պահվելու վորչափ մարդիկ բերդեր պաշտպա-
նելու զրկեցինք...

Անգղիական նաւատորմիդին կղզիներուն առջեւին չեղնելուն
ու Իզմիտի ծովածոցը չերթալուն պատճառը իմացաք:

— Անցյալ որ գրած էլինք ա, Ռուսիո բանակը քիչ մը չետ
քաշել տալու համար չհեռացաւ:

— Առջի որը անանկ էր, բայց այսօր անանկ չէ: Իզմիտի
ծովածոցը կղզիներեն ավելի հարմարութիւնն ունի յեղեր նաւա-
տորմիդը պահելու...

Ով Անգղիա, հպատակներդ պաշտպանելու համար ձամբա-
հանեցիր նաւատորմիդդ, թէ նաւատորմիդդ հարմար տեղ մը
փնտռելու համար:

Յեթի այս վերջինին համար է, Անգղիոյ հպատակներն այ-
սօրվն Իզմիտ չերթալու չեն, վորովհետեւ հոն ավելի հարմարու-
թիւնն ունի պաշտպանվելու: Ա' նաւատորմիդին իրենց չետենե
չպիտի դա, ալ իրենք նաւատորմիդին յետեւին պիտի չերթան:

«Նախ և առաջ պետք է գիտնալ, թէ Դարդանելն ⁵⁰) վորո՞ւ
ձեռք պիտի մնա»:

Այսպէս կը խոսի Պիսմարք ⁵¹) իշխանը. այսինքն վորո՞ւ
ձեռքը Դարդանելի վրա պիտի մնա:

Այս խնդիրն ալ նոր չերեւան չեւալ:

Մենք՝ ներկա պատերազմը Քրիստոնայից վիճակին բարե-
լավութեանը համար կարծելով, ինչպէս վոր դարձյալ այնպէս կը
կարծենք, և Դարդանելին ալ Քրիստոնայա ըլլալու մեր մտքեն
անցած չըլլալով, ասանկ հարցումի մը բնավ չեյինք սպասիր, և
այնպէս համոզված եյինք, թէ անոր ձեռքը պիտի մնա՝ վորո՞ւ
ձեռք վոր մնացած էր մինչեւ այսօր:

Մեր կարծիքը ծուռ, մեր համոզումը սխալ է յեղի: Պիս-
մարք իշխանին խոսքեն աս կը հասկցվի, վոր Դարդանելն ալ
այս որերս կնքվի ու քրիստոնայա չե չեղիր...

Զրուց կը պտըտի, թէ մեր նաւատորմիդն ալ կը համոզեն
չեղիր, վոր քրիստոնայա ըլլա:

Թեպետ և այս զրուցն անհավատալի չէ, բայց այնպիսի
դարու մը մեջ, ուր ամեն մարդ կրօնի ազատութիւնն կը վայելի,
անհուսալի բան մ'ալ չէ:

— Մարդ աստուծո, բերանդ բաց ու չերկու խոսք ալ ինծի հետ ըրն:

— Քեզի հետ ի՞նչ խոսիմ, կնիկ:

— Ի՞նչ պիտի խոսիս. Թագուկ տուտուլին երկը ամեն որ իր կնկանը նոր լուրեր կը բերե, կը նստի հետը կը խոսի բոլի-թիքայի վրա, դուն բան մը չես ըսեր. հաղար ու մեկ խոսքեր կը պալտին կոր... Մոսկովը չեկեր ե չեղեր, նորեն գացեր ե չեղեր, Խնկիլիզին տոնանման ատաներուն առջին ե չեղեր...

— Եքմեքճին այսօր ալ հաց չբերավ:

— Վերջին Իզմիտ գացեր ե չեղեր...

— Եքմեքճի՞ն...

— Չե ճանրմ, տոնանման, հիմա ալ Պուրսայի շուրերը պիտի չերթա չեղեր:

— Միսն ալ քսանչերկուքի չելեր ե...

— Մոսկովն ալ նորեն պիտի մտնա չեղեր...

— Ինչո՞ւ պետք քուկին, կնիկ, դուն տանդ գործերը նայե:

— Ինչո՞ւ չպիտի խառնվիմ չեղեր... Ինկիլիզը մեզի խաբեր ե չեղեր... կըսեք թե կնիկները խաբող կըլլան. տէս...

— Դարձյալ անանկ ե չա...

— Ճանրմ, ի՞նչ կուզեն կոր ասոնք:

— Ճանրմ, սեպե քի տուններնիս միսաֆիր մը չեկալ տե, խահվի մը հրամցուցինք, խահվեն խմելն չետք՝ գինի ալ բերեք կըսե: Գինին կուտանք, խնձոր ալ բերեք կըսե: Խնձորը կուտանք, կե-րակուր հանեցեք կըսե: Կերակուր կը հանենք, կը նստի կուտե, ատկե վերջը՝ սոֆրային թախըմը ինծի տվեք, կըսե:

— Դա տեր վողորմյա, աս ի՞նչ տեսակ միսաֆիր ե. չես ըլլամ նե՛ չեմ տար, թող չեղնե չերթա:

— Վո՛չ կեղնե, վո՛չ ալ կերթա, քիչ մը ատեն ձեր տանը մեջ պիտի մնամ կըսե:

— Չեմ ընդունիր, մեջ մ'ալ տունս մի գար կըսեմ ու հետը չեմ տեսնվիր: Աս ի՞նչ ե, ամեն մարդ միսաֆիրության կերթա:

— Ամեն միսաֆիր մեկ չըլլարա:

— Հիմա աս Մոսկովը սոֆրայի թախըմ չունի՞ չեղեր:

— Ունի ամա, կուզե կոր. չես մինչև վոր ձեր տունը միսաֆիրության չեկա նե՛ շատ ծախս ըրի կըսե կոր:

— Թող չի գար, մե՞նք տավեթ ըրինք:

— Կնիկ, խեղդ չհասնիր ըսի չա, կարճ կը կապեն:

— Սա ֆիստանցուս վաղը չմոռնաս, նայե՛ վոր խումաշը աղեկ ըլլա:

— Մյուս ֆիստանդ ի՞նչ չեղավ:

— Մյուս ֆիստանս պատառ պատառ չեղած ե, բռնվելու տեղ չունի, շատ գեշ վիճակի մեջ ե... ֆիստանիս վիճակը քիչ մը բարվոքելու չե վոր...

— Պարապ տեղը ծախս մի ըներ հիմա, անոր ալ վիճակը կը բարվոքի... գումարվելիք քոնկրեյին մեջ:

Սրամիտ տղայք միշտ կը սիրվին:

Հայր մը առջի գիշեր իր վեց տարու տղան դեմն առնելով, Քրիստոնեական մը սկսավ հարցումներ ընել անոր:

Շատ մը բաներ հարցնելն ու պատասխաններն առնելն չեսքը՝ հայրը հարցուց.

— Ըսե նայիմ, տղաս, Քրիստոսը սպաննողները վորո՞նք ելին: Քրիստոսը սպաննողները մի:

Այո:

— Քրիստոնեականիս մեջ անանկ բան չըկա, հայրիկ:

Թող չըլլա, քրիստոնյա մը այսչափ բանը չգիտնա՝ կըլլա մի:

— Քյուրդերն սպաննած ըլլալու չեն, հայրիկ, Չերքեզներն ալ անոր հագուստները կողոպտած ըլլալու չեն:

Ապրիս, տղաս, սըկե ողի մը բեր, ըսավ հայրը, և Քրիս-տոնեականը գոցեց:

17 Փետրվար 1878

Ի՞նչ մեղքս պահեմ, չես այս հաշտության պայմաններն ալ բան մը չեմ հասկնար կոր:

Հաշտության պայմանները՝ վորք նախ Քրդանլըք պիտի վո-րոշվելին, քիչ մը յետքը Անդրիանուպոլիս պիտի ստորագրվելին, քիչ մ'ալ չետքը Այ—Ստեֆանո ⁵²⁾ պիտի կնքվելին, մինչև այ-սոր վո՛չ կնքված են վո՛չ ալ միջոտված:

Արդե՞րք Քրդանլըքի, Անդրիանուպոլսո ու Այ—Ստեֆանոյի ողը կավրե՞ կոր հաշտության պայմանները, արդե՞րք հիմա քաղաք մ'ալ հաշտության պայմաններուն համար փնտռելու պիտի ստիպ-վինք:

Ի՞նչ դժվար սակարկութիւնն է այս, աստիճան իմ: Իմ գիտ-
ցածս ու տեսածս՝ սակարկութիւնն մը լերկու խոսքով լմնալու լե:

Որինակի համար.

— Տուր ձեռքդ ինձի:

— Առ:

— Գարատաղի անկախութիւնն:

— Շատ աղեկ:

— Սերվից ալ անկախութիւնն:

— Ատոր ալ բան մը չեմ ըսեր:

— Ռուսներու ալ անկախութիւնն:

— Ձեր ըսածը ըլլա:

— Պուլիտարներու ինքնորինութիւնն:

— Դեմ կեցած ունի՞նք:

— Ձերքերներու և Բիւրդերու ալ հաշութիւնն:

— Ատոր ալ բան չենք ըսեր:

— Մնաք բարով:

— Յերթաք բարով:

Լմնցա՛վ, դնաց:

Քրդանլըքն մինչև Այ—Սթեֆանո հաշտութեան պայման-
ներ...

Իմ կարծիքս, հաշտութեան պայմաններուն վրա հաշտու-
թենքն յետքը պիտի բանակցին, և այս բանակցութիւնը մեր
կարծածն ալիւի լերկար պիտի տեղի, և այն ատեն միայն պիտի
վերջանա՝ լերք մեկ հացը հարկունոց թուղթի մը առնուլ սկսինք:

Քանի մ'որե վեր պտըտած զրուցները:

— Կնիկ, Ստրաղթուլթե:

— Ի՞նչ ըսիր:

— Ստրաղթուլթե, Ստրաղթուլթե:

— Ատ ի՞նչ է, ատ ալ նոր հանցիր:

— Բարի լեկար ըսել ե... քաք բաժիվայեթի... քաք բաժի-
վայեթի...

Ա՛ս ի՞նչ ըսել ե...

— Քնիքդ աղեկ է. քաք բաժիվայեթի, քնիքդ աղեկ է, քաք
բաժիվայեթի...

— Բա՛շա պիտի առնելիր յերեկ:

— Տենկի լեկաթի, տենկի լեկաթի, տենկի լեկաթի...

— Ինչո՞ւ չառիր բա՛շան:

— Քազտա բահոթ, քազտա բահոթ...

— Շանըմ խենթեցար, ի՞նչ յեղար:

— Ստրաղթուլթե, ստրաղթուլթե:

— Այս գիշեր ուտելիք չունինք...

— Թող չունենանք, բավական է վոր... տենկի լեկաթի,
քազտա բահոթ... ստրաղթուլթե:

— Տա տենկի լեկաթին ձգե՛ ու դնա՛ բան մը առ ուտենք:

— Կնիկ, կեցի սըվոնք սորվիմ, վոր վաղը մշուս որ բարե-
կամները հոս գալու ըլլան նե՛ քանի մը փարա վաստկինք: Քաք
բաժիվայեթի, բարի լեկաք, քաք բաժիվայեթի, բարի լեկաք:

— Մինչև հիմա խելքդ հէր եր...

— Աճեկցի լեկա՛վ, կնիկ, այսչափ շուտ գալիքը մտքես չեր
անցներ:

— Ասկից վերջը սորվիս ու ստակ պիտի վաստկիս հե՛հ...
վայ գլխուդ...

Մի՛ վախնար դուն, անոնք շուտ չեն լերթար:

Պիսմարք բարեկամնիս կը պնդե, վոր Դարդանիկ խնդիրը
խիստ մեծ ու ծանրակշիռ ե...

Գերմանիո գործին չգար լեղեր, վոր Դարդանիկ բանալին Ռու-
սիո ձեռքը անցնի և ուղածին պես բանա ու գոցե անոր դռները:

Աղեկ ա, ասոր դուրին ճամբան կա, բանալին թող դարձալ
մեր ձեռքը մնա, և առաջվան պես, ձեր ուղածին պես բանանք
գոցենք, կամ վո՛չ բանանք վո՛չ ալ գոցենք:

Ամուսնութեանց թիվն որ քան գոր նվազեցու վրա ըլլա-
լով Քարթալցիներն ⁵³) ասոր առաջն առնելու համար դուրին
ճամբա մը գտեր են. լիտասարդները ծեծելով կամուսնացնեն կոր

Յերտասարդին մեկը Քարթալ տան մը մեջ սենյակ մը վարձեր
կը բնակի չեղիր: Այս տանը տիրուհին կուգե չեղեր աղջկը այս
լերիտասարդին տալ: Յերկու շարաթ առաջ կիրակի գիշեր մը հիշ-
յալ տունը հուրերով կը լեցվի:

— Ճանըմ, թաղավոր աղան հէր է, ինչո՞ւ չի գար, փեսա ըլ-
լալիք մարդը այսչափ ուշ մնալու չե մի:

— Ուր ե նե հարկավ հիմա կուգա:
 Ժամը յերկու կըլլա, յերիտասարդը տուն կուգա պառկելու:
 — Ո՛հ, հրամմեցեք, թագավոր աղա, սանկ նստեցեք, ուր
 քնացիք, չեղբայր:
 — Ի՞նչ մը գործ ունեցի այսօր, ներեցեք. հիմա ալ սենյակս
 պիտի քաշվիմ, վորովհետև մինչև ժամը չեմ գիր ունիմ:
 — Ի՞նչ կըսեք, թագավոր աղա, մեզի կը ծաղրե՞ք կոր:
 — Ծաղրելու ի՞նչ կա:
 — Բազմութենե չես ախորժիւր նե, մենք կերթանք:
 — Բազմութիւնը ի՞նչ վնաս ունի իմ գիր գրելուս:
 ... Բահանան հիմա պիտի գա:
 ... Բահանան ի՞նչ գործ ունի...
 — Տեր վորդորմյա, պսակը հիւ պիտի ընե:
 — Ի՞նչպես պսակ... հարսնի՞ք ունիք:
 — Զանըմ, ի՞նչու ասանկ կը խոսիք, դուք չե՞ք կարգվիր կոր:
 — Յե՛ս մի... խապար չունիմ:
 — Սապար չունի՞ս մի:
 — Ամենեվին:
 Զնթ, բաթ...
 — Սապար չունի՞ս մի...
 — Ինչո՞ւ կը զարնեք կոր...
 — Զաթ... բաթ...
 — Այ, այ, այ...
 — Սապար չունի՞ս հե...
 — Ծո՛ւ Կարապետ, ինչո՞ւ կեցեր ես, դուն ա, չգործեա...
 Մարկոս, Թորոս, զարկե՛ք...
 — Այ, այ, այ, այ... Թող տվեք, պիտի մեռցնե՞ք զիս...
 Խապար ունիմ, ունիմ, փեսա պիտի ըլլամ, մոռցեր ելի...
 — Հարսին ձեռքեն բռնե՛ նայիմ:
 — Բռնեցի:
 — Սանկ չեկուր նայիմ:
 — Յեկա:
 — Առջիկո՞ նայե:
 — Նայեցա... ո՞ք... ո՞ք... վոսկորներս ջարգվեցան...
 — Մինչև ցմահ տե՛ր ես, կը հարցնե քահանան:
 — Զեմ, չեմ, կը պոռա փեսան:

— Զե՛ս մի...
 Բաթ... քնեթ... բաթ...
 — Սաման կը տեսնամ կոր...
 — Տեր հմ, տեր հմ, մինչև ցմահ տեր հմ... մահվընես
 չետքն ալ տեր հմ, դեռ ըսելիք ունի՞ք:
 — Ապրիս տղաս... ճանըմ, փեսանիս հում տղա չե ամա,
 զինքը գլխե հանողներ կան:
 — Պսակի արարողութիւնը կամ լավ կա ծեծի արարողու-
 թիւնը կը լսնա: Սքանարել⁵¹) ալ կայնելու կարողութիւն չու-
 նենալով, բազմոցի մը վրա կիչնա, կը պառկի: Հետեւալ ուր կա-
 նուխ կեղնե բողոք մը կը գրե ու կրոն. Ժողովո՞⁵⁵) կը ներկայա-
 ցունե խնդրելով, վոր սա ծեծի պսակը լուծեն:
 Քարթալի քահանան պատվովոր կրոնական մ'ե, և մինչև
 հիմա ալ ապրինալոր գործի մը մեջ գտնված չըլլալով, կը հու-
 սացվի, վոր այս պսակի պատասխանատվութիւնը ուրիշի մը վրա
 ծանրանա:
 Տեսնեսք, Կրոն.Ժողովնիս քանի տարի պիտի զբաղի այս
 խնդրով:

18 Փետրվար 1878

Արեւելան խնդիրը կարծես յուր քաղաքական կերպարանքը
 մերկացաւ ու ճաշակի վերաբերյալ խնդիր մը դարձաւ. յուրա-
 քանչյուր կառավարութիւն յուր ճաշակին համեմատ կուզե ձե-
 վել, կտրիլ զայն. միայն մեր ճաշակը ձայն չունի...
 Առակով խոսինք:
 Ինչպես վոր յիս իմ բալթոս լաչն կուզեմ, դուն քուկինդ
 նեղ կուզես, ուրիշ մը չերկար կուզե, ուրիշ մը կարճ, այնպես
 ալ կառավարութիւնք կուզեն, վոր այս Արեւելան բալթոն լաչն,
 նեղ, կարճ և միանգամայն չերկար ըլլա:
 Վորո՞ւ ճաշակը պիտի գոհացնենք:
 Ամենուն ալ:
 Յեւ վիտե՛ք, հազար հոգիլի ճաշակը կրող բալթո մը ձեւելը
 վորչաի դժվար ե...
 Գիտեմ վոր գիտեք, հաշտութեան պայմանները կնքելու չափ
 դժվար ե.

Յեւ զարձալ, գիտե՞ք, հազար հոգիքի ճաշակով ձեւած բալթո մը ինչ ալլա՞ղակ և խելքե մտքե չանցած հագուստ մը կըլլա:

Մենք հոս հաշտութիւն պայմանները կնքելու զբաղած ատեննիս, մեր պաշտպան Անգղիան ալ քար մը կը գլտորեն:

Կը փափաքե՞ք, կըսե, վոր սա Արեւելեան խնդիրը միանգամ ընդմիշտ լուծվի:

Այո, կը փափաքինք:

Յեթի կը փափաքե՞ք՝ Կիրիտն ու Միտիլին ինծի ավելք. Մակեդոնիան, Թեսալիան ու Եպիրոսն ալ Հունաստանի ավելք. Յեգիպտոսն ու Թունուզը անկախ հրատարակեցեք, լմնա յերթա:

Ահա Անգղիո ճաշակը:

Մյուս կառավարութեանց ճաշակներուն վրա յերկար բարակ խոսելու հարկ չկա:

Վերջապէս, ընթերցող, սեպե թե աս Արեւելեան խնդիրն առաջ բաշտի լե, Հիմա աս բաշտն անանկ վարպետութեամբ յեփեղու լե, վոր, քերպիյեով սիրողն ալ ուտե, քերպիյեսիզ սիրողն ալ ուտե, քացախով սխտորով ուզողն ալ ուտե, քացախով սխտորով չուզողն ալ ուտե, իմնուով սիրողն ալ ուտե, իմնուով չսիրողն ալ ուտե:

Ատ ըլլալով բան և:

Յեթե այսպէս և, հաշտութեան պայմաններն ալ կնքվելու բան չե, ալ և, թե մեկ մարդու քմացը համեմատ յեփի բաշտ:

Իրավ և, վոր խղճմտանքը վերցած և աշխարհես...

Սա Սիրվիո ու Գարատաղին լինել՝ պատերազմական ծախք ուղեւուն ինչ կըսեք:

Շիտակը խոսելով, յեթե յես ըլլալի, յերեսս չեր բռներ:

Սիրվիան ու Գարատաղ զրիթե մեր կառավարութեան զավակներն ելին. մենք իրենց հետ այնպէս վարվեցանք՝ ինչպէս վոր կը վարվի հայր մը իր զավակաց հետ: Մեզի դեմ վտաք չենելն ու ձեռք վերցնելն հերիք չեր, հիմա ալ յեկեր ստակ կուզեն, մտքերնեն ըսելով:

— Հայր, մենք քու խոսքդ մտիկ չըրինք, քեզի դեմ ապրա-

տամբեցանք, սուտ ըսինք, խոսքերնիս չընեցինք, ծեծեցինք, ծեծվեցանք, վերջապէս քու կոկորդդ սկսեցինք, ուստի քու պարտքդ և հիմա մեզի ստակ տալ:

Ասոնք պարզապէս ստակ վաստկելու յեկեր են, յեղբայր:

Իսկ մենք չենք կարծեր, վոր կառավարութեանն ստակ տա ասոնց. վորովհետեւ յեթե ունենար, ավելի իր հնազանդ հպատակացը կուտար, քան թե անհնազանդ զավակացը:

Մենք հոս անութութենե մեռնինք, անդին Սերվիան ու Գարատաղն վոսկիներով խաղան:

Պարտ անձին կը համարիմ ընթերցողացս ծանուցանել, վոր հանգիստ ըլլան, և մտքերնեն բան մը չանցունեն Ռուսիո բանակին ու Անգղիո տորմիդին Պոլսո առջեւ՝ գտնվելուն վրա, ասոնք բարեկամաբար յեկած են:

Կընամ ըսել, վոր մեր մտքեն չարութեան կանցնի, անոնց մտքեն չանցնիր:

Այս տողերը զրելու հարկ ալ չկա, վորովհետեւ յեթե Դարդանելի նեղուցը վեց անգղիական զրահավոր չկլներ, Ռուսիա մայրաքաղաքիս այսչափ չեր մոտենար, ինչպէս վոր Անգլիան ալ իր վեց զրահավորները Դարդանելեն չեր անցուներ՝ յեթե Ռուսիան մեզի ալսչափ չմոտենար: Յեւ վորովհետեւ մին բարեկամութեամբ մոտեցավ մեզի, մյուսը չեր կրնար իր բարեկամութեանը չհայտնել ու մեղմե հեռու մնալ: Ինչ կուզեք, այսորման որս բարեկամներու մեջ մնացինք:

Աստված զմեզ իրարմե չբաժնե, բարեկամութեաննիս հաստատ և անսասան պահե. մեր բարեկամաց յերկար որեր պարզեվե. անոնց մեկ որը հազար ընե. մեկտեղ աղեկ որեր անցունենք... Աստված Ալստրիալի ալ ասանկ բարեկամներ շնորհե...

Աղեքսանդրիային կը գրեն թե՝ Յեգիպտական արժեթուղթ ունեցողները ժողով մ'ընելով, պատվիրակներ ընտրեցին, վորպեսզի Յեգիպտոսի յերմտական վիճակը դեսպանախորհրդին ներկայեն:

Նախ և առաջ՝ Յեգիպտոսի յերմտական վիճակը դեսպանական խորհրդին ներկայանալու բան չե... վորովհետեւ Յեգիպտոսի յերմտական վիճակը քրիստոնյա չե, վոր բարվոքմանը աշխատի:

Յերկրորդ՝ դեպքանախորհուրդը գլխավորաբար Փարիզի դաշնադրութեան⁶⁶⁾ վերաբերյալ խոսքով զբաղելու պաշտոն ունենալով՝ և Յեզիպոսի յեկեմական վիճակը Փարիզի դաշնադրութեան մեջ նշանակված չըլլալով, Յեզիպոսի յեկեմական վիճակը դեպքանախորհրդին ներկայանալու իրավունք չունի:

Յերրորդ՝ Յեզիպոսի յեկեմական վիճակը յեթե աղեկ չէ, իբրև հազվագույն մեկ վիճակ մը՝ ավելի Փարիզի արվեստահան-դեսին ներկայանալու չէ, քան թե Պատենի դեպքանախորհրդին:

Չորրորդ՝ յեթե որ մը դեպքանախորհրդո մ'առջև յեկեմական վիճակ մը ներկայանալ հարկ ըլլա, Յեզիպոսի յեկեմական վիճակը թող տեղը հանգիստ նստի. մեր յեկեմական վիճակը նախ և առաջ պիտի ներկայանա հոն՝ իբրև մեծ չեղբայր Յեզիպոսի յեկեմական վիճակին...

Աղեկ միտքս ինկավ:

Վարդուլյան Եփեսոսի⁶⁷⁾ և Որթագյուղի⁶⁸⁾ Թատրոնի խրմբին յեկեմական վիճակները չեմ կարծեր, Վոր Յեզիպոսի յեկեմական վիճակին աղեկ ըլլան:

Պատիվ ունեցա գիշեր մը Որթագյուղի Թատրոնը յերթալու: Ներկայացումը Քաթերին Հովարտ Էր⁶⁹⁾ Դերասանաց թիվը հանդիսականաց թիվին ավելի չէր. հետեվաբար դերասանները կը քաջալիրիչին զհանդիսականս, մինչդեռ ասոնց պարտքն էր դանոնք քաջալիրել:

Դերասանաց ընթացքին կռահելի, Վոր դժգոհ էլին, և սակայն հաստատամտութեամբ կը շարունակեն իրենց ներկայացումներն ու փնասները:

Կերեվա, Վոր ներկայացված խաղերը գլուղացվոց ճաշակին չեն համապատասխաներ. յեթե վիսքի կամ բրեժայի վերաբերյալ ներկայացումներ տրվին, թե դերասանները կը վատկին, թե հանդիսականները և թե դպրոցը:

Վերջին խմբանք, Վոր Որթագյուղի Թաղ. Խորհուրդն⁶⁰⁾ առաջարկեր ե թուղթ խաղացողներուն, Վոր գոնե շաքար շաքար մ'ալ ի նպաստ գլուղի վարժարանին վիսք խաղան:

Յեթե ալս առաջարկութեանն ընդունվի, Թատրոնին դռները կը գոցվին և գեղացիք ալ հակամայս Թատրոն յերթալի կը խալսին:

ՀՈՍՀՈՍԻ ԶԵՌԱՏԵՏՐԸ

Ի Մ Ձ Ե Ռ Ա Տ Ե Տ Ր Ս

Պարոններ, այս վերնագիրը կարդալով չը կարծեք թե սնանկացած վաճառական մ'եմ և կուգամ հաշիվներս հասարակության ներկայացնելու: Պատիվ ունիմ հայտարարելու, վոր կյանքիս մեջ վաճառական լեղած չեմ յերբեք և լինելու ալ տրամադրություն չունիմ, վասն զի խիղճս չներբեր մեկուկեա վոսկիւ ուրիշի վաճառել այն ապրանքը, զոր յես մեկ վոսկիւ գնած եմ:

Առանց վաճառական լինելու՝ վորոշեցի սակայն ձեռատետր մ'ունենալ, անոր մեջ նշանակել որվան դեպքեր և, յերբեմն այս դեպքերուն առթիւ՝ մահկանացուներու թերություններու վրա ծիծաղել: Թող Հերակլիտի⁶¹⁾ աչերեն հոսած արտասուքով գետեր ձեռնան, թող ազգային բանաստեղծներ Յփրատն ու Տիգրիսն Հայաստանի չերկու աչիւ ներկայացնեն և լան, թող պ. Չուխաճյանին⁶²⁾ ալ լեղանակներ հորինել տան և յեղանակով լան: Ես, պարոններ, լես կը ծիծաղիմ և ծիծաղելու համար վոչ յեղանակի կարոտություն ունիմ և վոչ դաշնակիւ թերություններու վրա լալն թերություններու մեծագույնն ե. խեղճության վրա արտասուք թափելն ապացուցանել ե թե արյուն չունինք թափելու: Արտասուքը մանուկներու և կիներու (մեծ մանուկներու) բաժին ե. կաղաչեմ, մի դպիք ատոնց բաժինին:

Յեւ չեք կարող լերկակալել, թե վորչափ բերկրություն պիտի դգամ՝ յեթե հաջողիմ ձեզմե ծիծաղներ կթիւ այն դեպքերու, իրերու և անձերու վրա, վորոնց պիտի հանդիպիք ձեռատետրիս մեջ: Մոլություններու վրա ծիծաղելն առաքինության ճամբուն մեջ գտնվիլ կենթադրե և, այս հաշիւով, վորչափ շատ ծիծաղ քաղեմ՝ ալնքան նվազ մոլություն պիտի գտնեմ: Պետք չե մոռնալ սակայն այն դաս մը մարդերն, վորք ուխտ և չերդում ըրած են ընավ չխնդալու: Այդպիսիներու հետ գործ չունիմ, վասն զի ատոնց յերեսեն ժպիտ քաղելն ավելի դժվար ե, քան թուրք կառավարութենե բարենորոգում հուսալն, մանավանդ չերը նկատողու-

թյան առնեք, վոր ճնշում բանեցնելու համար չունիմ չես վե՛չ ծանուցագիր, վե՛չ դեսպանաժողով և վե՛չ նավատորմիդ:

Անկողմնակալությանս վրա վստահացնելու համար կը հայտնեմ՝ թե աջակիսի կացությունն մ'ունիմ, վոր չստիպեր դիս աշառություն ընելու: Փառք նախախնամության, բարեկամ չունիմ, վոր աշառություն ընեմ: Բայց մի՛ կարծեք թե կիրքով պիտի խոսիմ, քանի լիցի... Փառք սատանային, թշնամի ալ չունիմ: Մի՛ զարմանաք, պարոններ, աշխարհիս յերևոյր աշակես կապրիմ, ինչպես դուք կապրիք յերբեմն թատրոնի մեջ. միայն հանդիսատես կը լինիմ ներկայացման առանց դերասաններու գործունէն խառնվելու: Ընկերություններն ընդհանրապես հեռի կապրիմ, և այս եմիակ պատճառ իմ յերջանկությանս:

Կ. Պոլիս, 1 Հունիս 1880

Ո՞վ կ'ըսե թե մեր ազգին մեջ միություն չկա:

Այսոր միացան Արարատյան,⁶³⁾ Դպրոցասիրաց-Արեւելւան⁶⁴⁾ և Կիլիկյան⁶⁵⁾ ընկերությունները: Այս միությունը չորս ամիս առաջ պիտի կատարվեր, բայց հարմար անուն մը գտնելու դժվարությունը չորս ամիս ուշացուց զայն: Արդէն հարմար դաստուռ մը գտնելու համար քանի՞ տարի պիտի աշխատի ընկերությունը... Միացալ Ընկերություն⁶⁶⁾ տիտղոսին տակ ալ ընկերություններն յերեք անձինք և մի բնություն կը կազմեն այսոր, պարզապես ընկերության յերրորդություն մը, վորու մեջ Հայր և Արարատյանը, Վորդի ի Դպրոցասիրացն և Հոգի ի Կիլիկյանը: Այսուհետև վորեւն նվեր պիտի հավաքվի վոչ թե հանուն Արարատյանի, այլ հանուն Հոր և Վորդի և Հոգի և Սրբոյ, ամեն: Անհավատները չեն հավատար աս յերրորդության, և միությունն, վոր աչսոր կատարված ե... անվամբ՝ անկարելի կը կարծեն: Յես տակավին չեմ կարող վճիռ արձակել և կը փափաքիմ կարծել, վոր ամեն հավախոսին մեյմեկ դպրոց բանալու փառասիրությունը պիտի չունենա Միացալ Ընկերությանց Գործադիր Ժողովն:

Գործադիր Ժողովոյ ատենապետ ընտրված ե պ. Գեվորգ Ալտուլահ,⁶⁷⁾ չափազանց հայրենասեր, չափազանց աշխույժ և չափազանց յեռանդոտ յերիտասարդը: Այս անձն մեծ փառք և պա-

տիվ կստանար, ինքն ատենապետ ընտրվեր աջակիսի գործադիր Ժողովոյ մը, վորուն պաշտոնն լիներ շենքեր կառուցանել... ողբ մեջ:

(Վարժարանի սր մեջ)

— Վարժապետ, աստված դրախտը Հայաստանի մեջ չդրած:

— Այո, Հայաստանի մեջ դրավ:

— Բայց հիմա Հայաստանի մեջ ատանկ բան չկա... Ի՞նչ ե յեղեր...

— Շատ հավանական ե վոր... վոր...

Վարժապետը աշակերտին հարցման գոհացուցիչ պատասխանմը չըկարենալով գտնել՝ մաղ մնաց վոր անոր առջև պիտի խաչտառակվեր, ինքն նույն պահուն դիպվածով ալ վարժարանը չերթայի և աշակերտին չըսելի:

— Շատ հավանական ե, վոր քյուրդերը ավերակած լինին, տղաս:

Մայրաքաղաքիս մեջ գիշեր ատեն քիթով պտըտիլը վտանգավոր ե: Այս գիշեր թուրք մը հրեայի մը վրա հարձակելով՝ կողոպտել ուզեց զայն, բայց խեղճին վրա փող չգտնելուն վրա թուրքը բարկացավ և աղեկ մը ծեծեկն չեաքը խեղճ հրեային քիթը կտրեց ու փախավ:

Յեղեկությունն վոստիկանության իմաց տրվելուն պես մի վոստիկան չարագործը ձերբակալեց:

Գիթն յուր տիրոջն տրվեցավ:

Այս արդար դատաստանին ըսելիք ունիք. ինքն գողցվածն դրամ ըլլար՝ հրեան չեր կրնար դրամն վերստին ձեռք բերել: Թող աղոթք ընե, վոր քիթն եր գողցվածը:

2 Հունիս

Յես ալ այսոր համոզվեցա, վոր թատրոնը մեծ մարդերու դպրոց մ'ի:

Բայց մեծ մարդիկ ի՞նչ կուսանին ալ դպրոցի մեջ. Խնդիրը հոս ե:

Թող ուրիշները պնդեն թե բարոյականութիւնն կուսանին հոն, իսկ կը պնդեն, և յեթե հարկ լինի՝ յերկու տաճիկ վկա ալ կը բերեմ—վորովհետեւ քրիստոնայի վկայութիւնը ընդունելի չե՞նք⁶⁸).—վոր թեպետ և բարոյականութիւնն դաս կը տրվի հոն, բայց աշակերտները մարմնակազմութեան դաս կառնեն, վասնզի հանդիսատեսները դերասանունս մը ավելի թեվերուն, պարանոցին, սրունքներուն կը դարձունեն իրենց ուշն քան թե անոր արտասանած խոսքերուն. և յեթե դերասանունս վր թեվերն գեղեցիկ գտնեն՝ կըսեն.

— Շատ սքանչելի ներկայացում մ'եր:

Խեղճ հեղինակներ... կը կարծեն թե իրենց դործը կը ծափահարվի... մինչդեռ շատ անգամ դերասանունս վր հեղինակն ե, վոր կը ծափահարվի...

Խափանված «Լրագիր»⁶⁹) որագրո խմբագիրն այսոր Տպագրական Տեսչութեան ներկայացաւ և հրաման խնդրեց, վոր թերթը վերստին հրատարակէ: Տեսուչն աղոթք ընելու գնացած եր:

Հունաստանի, Գարատաղի⁷⁰) և Հայաստանի նկատմամբ վեց տերութիւններն տվին իրենց համիմաստ ծանուցագիրն Բ. Դրան: Մեր ազգայիններն իրենց խառնութենին դոցած՝ տրվելիք պատասխանին կսպասեն:

Ընդհանուր կարծիքն այն ե, վոր տերութիւնները կարելի չեղածին չափ պիտի աշխատին Հայաստանը քուրդերու ձեռքեն ազատելու:

Թուրքիո մեջ բան մը ընել անկարելի յե... Թուրքիո մեջ ամեն բան կարելի յե:

Վերահրատարակման հրաման տրվեցաւ այսոր «Թերճեմանը Եֆքըար»⁷¹) որագրին, վոր բոլորովին խափանված եր՝ անգլիական լրագրե մը Հայոց նպաստավոր հոգոված մը քաղելով հրատարակած լինելուն համար:

— Հայրիկ, առաջի որը կըսելի, թե կարմրնալն ամոթխածութեան նշան ե:

— Այո, յերբ վոր մեկն յուր ըրածին վրա կը խպնի և յերեսը կը կարմրի ըսել և թե պարկեշտ ե:

— Ըսել ե թե մայրիկս՝ շատ պարկեշտ ե:

— Ինչո՞ւ:

— Վասնզի ամեն առտու յուր յերեսը կը կարմրեցուն:

Ո՞վ գուցենք, միթե դուք ալ այսչափ կը փոխեք յեղեր ձեր նշանակութիւնը:

3 Հոնիս

Բ. Դուռն բողոքել վորոշեց Բերլինի դեսպանախորհրդո⁷²) դեմ:

Քանի մը տարիներե հետե Բ. Դուռն այնչափ կը բողոքե, վոր դիվանագիտութեան մեջ կատարյալ բողոքական մը յեղաւ:

Պ. Մեղավորյան⁷³) մանկավարժական սրահ մը հաստատեց, ուր պիտի յերթան մանկավարժներն և ուսուցման յեղանակներուն վրա պիտի խոսին:

Լաւ կը լիներ, յեթե պ. Սպանդարյան⁷⁴) խոսեր ուսուցման այն յեղանակի վրա, վորով աշակերտ մը չկարողանար վոչինչ ուսանի:

Այս յեղանակը գտնվիլուն պես՝ մյուս յեղանակները փրնառելու հարկ չմնար:

Լեվանթ—Հեռալս-ի Տնորեն՝ Տպագրական Տեսչութեան ներկայացաւ յուր խափանյալ թերթին նորեն հրատարակման հրամանն ուղելու:

Տեսուչը քննադատ գնացած եր:

4 Հոնիս

Լրագիրները մեծ գովեստով խոսած եյին Ս. Պատրիարքին յերկու արձաններուն վրա, զորս յերկու ազգային գեղարվեստագետ յերիտասարդներ շինելով ի տես հասարակութեան դրած են Ապտուլլահ յեղբայրներու գործարանը⁷⁵):

Հետաքրքրութեան համար այսոր գնացի այդ արձանները տեսա և բարկացա, վասնզի լրագիրների խաբված ըլլալն անմիջապէս զգացի:

Այս արձաններն մին, վոր Իտալիա ուսում առած յերիտա-

սարգի մը գործն ե՛ր բնավ չնմանիր Պատրիարքին. Նորին Սրբ-
բազմութեան յեղբայրներուն ալ չնմանիր:

Չկրցի համբերել, մոտեցա արձանին և անոր ականջն ի վար
փսփսացի:

Պարոն արձան, զվարթերես,

Համակրական և աղվոր ես.

Այլ ի՛նչ ոգուտ, չունիս լեզու,

Վոր ըսեցիր ինձ ո՛վ ես դու:

Մլուսն, վոր հոս ինքնիրմե ուսած յերկտասարգի մը զլուխ
գործոցն ե՛ր քիչ մը արձանի իսկականին նմանութիւնը կը բերե
թեպետե, բայց աչնչափ տձև կերպով շինված ե վոր,

Թե լրագիր մ'այսպես գծեր

Պատրիարքին ներքին պատկեր՝

Անմիջապես լուր խափանման

Կընդունեիր նա Դռնեն հրաման:

Այսպես են մեր թատրոնի հեղինակներն շատերն ալ, իրենց
ուզածին պես կը ներկայացունեն անձերը և կարծես թե մեծ գործ
տեսած են: Արշակ մը,⁷⁶⁾ Հակէ մը,⁷⁷⁾ Սանդուխտ մը⁷⁸⁾ պիտք է
այնպես ներկայացվի՝ ինչպես վոր ե, և վոչ թե ինչպես վոր կը
փափաքին արգո հեղինակները:

Դեսպանախորհուրդն ալսոր բացվեցավ Բերլին: Այս գիշեր
Պիսմարք իշխանին տունը գինի պիտի խմվի:

Թուրք կառավարութիւնն ալ անշուշտ այս յերեկո հեռագը-
րով անուշ հրամանեցիք պիտի ըսե գինի խմողներուն, վորք գինիին
վրա պիտի կլլեն անշուշտ... Յանիսն⁷⁹⁾:

5 Հոնիս

Ինչպես «Մեղու»-ի⁸⁰⁾, «Մեակ»-ի⁸¹⁾ «Փորձ»-ի⁸²⁾ արդիւլված
ե Պոլիս մտնելն՝ նույնպես նաև արգելված ե Խալիլի Հաբեմ⁸³⁾-ին:

Միթե այս Հաբեմն ալ Թուրք քաղաքականութեան վնասա-
կար հողվածներ'ի լույս ընծայած ե, վոր Պոլսո մուտքն արգի-
ված ե իրեն: Հայտնի չե: Խալիլի վորդին կը մերժե իր մարերը,
Բ Դռնն չուզեր ընդունել զանոնք և կիններով բռնուի: Ի վս ծ Նա
վը քաղաք մը կը փնտռե՝ ապրանքը դուրս հանելու համար:

Նկատողութեան արժանի չե, վոր այս Հաբեմին Պեշիքայի
առջև սպասելը Հնդկաստանի ճամբուն դպած չե. յիթե դպած լի-
ներ՝ Անգղիո խորհրդարանի մեջ հարցումներն իրարու կը հա-
ջորդեցին. —

— Խալիլի Հաբեմն Նարոլիկն⁸⁴⁾ ինչո՞ւ մեկնեցավ:

— Ինչո՞ւ համար Պեշիքա գնաց:

— Իտալիո կառավարութիւնն ինչո՞ւ թող չտվավ, վոր այդ
կիներն իր յերկրին մեջ բնակին: Իտալիո կառավարութեան այս
ընթացքն Անգղիո թագուհիուլէն աշխարհավարութեան վնաս մը
չի՞ բերել:

Յեւ կառավարութիւնն այս հարցումներուն պատասխանե-
լով՝ խնդրուէն վրա լույս կը սփռեր և ամենուն հետաքրքրութիւ-
նը կը փարատեր:

Իսկ մեք, վոր ասանկ հարցումներ ընելու համարձակու-
թիւն չունինք, կը շատանանք ըսելով, վոր Խալիլի հաբեմն Անգ-
ղիո նախատորմիդեն ավելի իրարանցում պատճառեց հոս:

Այսոր մայրաքաղաքս հասավ Պ. Արգար Հովնանիսյանց,
խմբագիր-տնօրէն Փօքձ լրագրո և Լյուքսենպուրկի ոթեանն իջավ:

6 Հոնիս

Մայրաքաղաքիս մեջ այսոր սպանութիւն տեղի չունեցավ.
կը կարծիլ թե վոստիկանութեան նախարարին պատվանշան
մը տրվի վաղը:

Անունով Միացիալ Ընկերութիւնի դեռ զատ-զատ կը գործեն,
յուրաքանչիւրն չուր սենյակին մեջ:

Մարդուն մեկը լրագրի մը հրաման առնելու համար Տպագը-
րական Տեսչութեան գրասենյակը գնաց:

Տեսուչը կերակուր ուտելու գնացած եր:

Մայրաքաղաքիս մեջ բժշկներուն թիվն որըստորե ավել-
նալու վրա չե. նույնիսկ այսոր մեկ մարդու յերկու բժշկ կիսնա:
Իրավ ե, վոր շատ աղքատներ առանց բժշկի կը մեռնին:

բայց վերջապէս բժիշկներ ալ կան, վոր առանց հիվանդի կը մեռնին:

7 Հոնիս

Անատոլուլի⁸⁵⁾ սովելոց համար մեծ վիճակահանութիւն մը պիտի լինի... գալ տարի:

Հիշալ վիճակահանութեան գործադիր ժողովն շրջաբերական պիտի ղրկէ գովառները, հորդորելու համար սովյալները, վոր համբերեն և անոթութենէն չմեռնին մինչև վոր իրենց հաց ղրկվի:

Կը հուսանք, վոր մեր աղգայիններն կը համակերպին այս շրջաբերականին: Քաջ դիտեն արդեն նոքա, վոր այս սովն լիթե Յելլըոպա լինելը՝ շատ ավելի զո՞հ կը տաներ յուր հետ. փառք տալու լենք, վոր Թուրք բարեխնամ կառավարութիւնը շատ տարիներէ հետե նախատեսած լինելով այս սովն՝ աղգու միջոցներ ձեռք առած եր յուր հավատարիմ հպատակներն անոթութեան վարժեցնելու:

Փուկ լրագիրն քանի մը ժամանակէ հետե անասուններու հիվանդութիւններու վրա հոգովածներ հրատարակելով՝ ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրավիրէ:

Արդեօք Փուկի խմբագիրն յուր ընթերցողներն անասուն կը կարծե...

8 Հոնիս

Զրուց կը պտըտի թե Տփղիսի աղգայիններն իրենց առաջնորդ պիտի ընտրեն Գեր. Խորեն⁸⁶⁾ Արշակունյան—Լուսինյան—Բազրատունյան—Քանթարյան—Հակոբանց—Գալֆայան—Ռուբինյան—Նարպեյ-Խորխոռունի արքեպիսկոպոսը:

Սովյալներուն ոգնելու համար ճանքա մ'ալ չիս կառաջարկեմ, այն ե սովյալ գովառներէ հեռացնել այն մարդերը, վոր շատ կուտեն:

Հետևապէս կառաջարկեմ, վոր Վանահայրները Պոլիս կանչվին, մանավանդ Մամբրե յեպիսկոպոսը, վոր Մշո վանքը ամբողջ կերպով:

9 Հոնիս

Տպագրութիւն տեսուչը դեռ ճաշը չլմնցուց:

Այսոր կը տեսնեմ վոր կերակուրները մեծ աղքեցութիւն ունին մարդուս կարծիքներուն վրա: Կը ճանաչեմ մեկն, վոր տարի մը առաջ յուր կջանքը պանիր հացով կանցներ, և ամեն որ աղգային գործներուն վրա կը խոսեր, իսկ հիմա վոր կովու միսով կապրի՝ աղգային խնդիրներու վրա խոսողները կը ծաղրեն:

Վեց տերութիւնները կըսեն Բ. Դրան:

— Յանիան Հունաստանի տուր:

Բ. Դուրը կը պատասխանէ Հուններուն այն լեզվով՝ վորով ասոնք պատասխանեցին ժամանակով Քսերքսեսին⁸⁷⁾—

— Յեկուր, անձամբ առ:

10 Հոնիս

Լրագրի մը մեջ հետեյալը կարդացի.

«Նախընթաց որն Իւսկիւտարի⁸⁸⁾ Պուրչուրլու գլուղը տան մը վրա կայծակ իջնալով՝ մեջը գտնվող յիւրու կանանց ականջները խուլցուց»:

Ինձ կը թվի թե կայծակ մ'ալ ուսումնական խորհրդոց⁸⁹⁾ սենյակին մեջ ինկած և՛ վասն զի աս ալ խուլցած ե և չլսեր թաղային վարժարաններուն վիճակին վրա խոսված խոսքերը:

Այսոր ատաղձագործ մը կանչեցի և փայտե գլուխ մը շինել տվի ինձի համար. յեթե մտնանք ին ⁹⁰⁾ մեկը հանկարծ գլուխս կտրէ, բնավ հոգ չեմ ըներ. անմիջապէս փայտե գլուխը կանցունեմ:

Առանց գլուխի պտըտելն շատ աղեկ ե փայտյա գլուխ մ'ունենալ:

Սեմաֆոր լրագիրն կը ծանուցանէ, թե յուր ցրվիչն ոսմ. պանքայեն գումար մը առնելու դրկված լինելով՝ հիշյալ պանքային գնացիր, դրամն առեր և անհայտ չեղիր և. ուստի ով վոր այս ցրվիչին ուր ըլլալը գիտե՞ թող Սեմաֆորին գրասենյակն իմացունէ և վարձատրութիւնն ընդունի:

Մենք խրատ կուտանք Սեմաֆորին, վոր գանձու պաշտոնեյության մեջ անգամ մը փնտռել տա ցրվիչը...

Քահանային մեկը... չեկեղեցվուն մեջ գանձանակէն մեծի-սիե մը սխալմամբ դրպանը նետած պահուն ընկերը տեսաւ: Կես ժամ վիճաբանութենի չեղքը մեծիտիեն իրենց մեջ բաժնեցին:

Միացյալ ընկերութիւնը դեռ վոչ—միացյալի պես կը գործեն. Հալըր՝ Վորդվուլն և Հոգվուլն հետ համաձայն չերկիր:

Պ. Սոսրով Տեմիրճիպաշյան անուն մեկը Մասիսի մեջ Վոլ-նելի Ալիբալի ⁹¹⁾ թարգմանելով կըսէ.

«Նույն միջոցով արդի անորոշ ու անկանոն աշխարհաբարի նկատմամբ՝ գրաբարին նման մի կանոնավոր ու կրթյալ լեզվի տիպար ներկայելով՝ Հայ ժողովրդյան մի փոքր ծառայութիւն մատուցանել...»

Որհնյալ և աստված, աշխարհաբարի խնդիրն ալ լուծվեցավ շնորհիւ պ. Ս. Տեմիրճիպաշյանի, վոր բարեհաճեցավ կրթյալ լեզվի տիպար ներկայել:

Յեւ արդարեւ, լեզուն բավական կրթյալ տեսանք, հեղինակին հետ բաղդատելով:

Ո՞ն անդր հառաջ, պ. Սոսրով. կրթյալ լեզվիդ քերականութիւնը հրատարակե վոր տեսնենք:

Կես ուր: Պատրիարքարանի պաշտոնյաները հիմա պատրիարքարան չեկան. խահվի խմելուն պես իրենց պաշտոնին գլուխը պիտի անցնին:

Աշխարհիս վրա ժամանակն է, վոր կընե ամեն բան: Քսան տարի առաջ ժամանակն ուղից, վոր պ. Թերզյան ⁹²⁾ Սանդուխտ կույս անվամբ վորդերգութիւն մը գրե ժողովրդյան, վոր շատ բաներու կարոտ էր, բացի Սանդուխտի Քանի մը տարի չեղքը այս ժամանակն ուղից, վոր Սանդուխտի հեղինակն վոտանավորներ գրե ժողովրդյան՝ վոր արձակը դժվար կը հասկնար: Այսոր ժամանակն կուղե, վոր Ապոգոնի ⁹³⁾ աշակերտն արհեստից և գիտութեանց ծաղկափառ մը հրատարակե, բաց մեծ հոգ և խնամք տանի, վոր լեզուն անհասկնալի լինի անոնց, վորոնց համար կը հրատարակվին ընդհանրապես նման որինակ հանդեսներ: Շատ հավանական է, վոր ժամանակը տարի մը յետքը ուղի, վոր պ. Թովմաս Թերզյան գրե միայն այն ճշուղին վրա, վոր իրեն հատուկ լինել կը կարծվի:

Խնդիրն այսոր ծաղկափառի վրա չէ:

Տեսա այս հանդեսին առաջին թիւն, վորու մեջ կարդացի, ի մեջ այլոց, մանիշակագուլն լուսո ազդեցութիւնն բույսերու և կենդանիներու վրա: Սոցա բախու թե վոտանավոր խմբագրված չե թերթը:—Փորձված է, կրսե ծաղկափառ, վոր փորձած չե՝ վոր մանիշակագուլն ապակիներով ծածկված ջերմոցներու մեջ բույսերը շուտ կաճին և արդունավոր կը լինին, ինչպես նաեւ կենդանիները շուտ կը մեծնան և կաշտառ կը լինին:

Ծաղկափառի անկեղծութեանը վստահ լինելով՝ կը հավատամ չուր խոսքին, և մինչև իսկ կը պաշտպանեմ չուր կարծիքն, հայտնելով վոր մարդն ալ, իրրե բույս և կենդանի, չեթե մանիշակագուլն ապակիներով ծածկված սենյակներու մեջ պահվի՝ ավելի շուտ կը ծլի և կաճի. մեկ տարվան մեջ... տասը տարեկան կը լինի. նույնպես ալ կին մը տարին չորս անգամ զավակ կը բերե և չուր մազերն և ըղունդներն մեկ ու կես քիլոմետրո յերկայնութիւն կունենան: Կարծեմ ծաղկափառն գոհ պիտի լինի այս հետեւութենա: Արդեն այլ և այլ գուլներուն մարդուս վրա տարբեր ազդեցութիւններն ամենուս ծանոթ են. որինակի համար, ով կարող է ուրանալ կապույտ գուլնին ազդեցութիւնն՝ չերը աղջկան մը աչերուն մեջ չիրևի այդ գուլնը. ով չե կրած այն ազդեցութիւնն, զոր կը ներգործե վարդն՝ չերը կուսի մը շուրթերուն վրա բացվի,

միլ չտեսներ չերբեմն աշնախիսի կիներ, վոր չերեք ամիսն զա-
վակ բերած են, անշուշտ մանիշակագուշն ապակիներու տակ սըն-
ված լինելուն պատճառով: Այս ամենը լավ, բայց խնդիրը հոս
չէ, տեր խմբագրապետ:

Ի՞նչ հասկնա խեղճ գալառացին քո մանիշակագուշն ապա-
կիներեդ՝ չերբ նա շերմոցի վրա դեռ գաղափար չունի. ի՞նչ
պտուղ քաղեքու պտուղ չորցնելու համար տված քարոզիդ՝ չերբ
նա ծառերու մշակության վրա չէ կարգացած վոչինչ. ի՞նչ պար-
տականություն ունի չորս — հինգ տարի աշխատելու քու առողջա-
պահական հոգւածդ հասկնալու համար: Կը փափաքեցի վոր Բո-
բովիյի Արհեստ յերկայնակեցութեան ⁹⁴) անուն գիրքին լեզուն և վոճն
որինակ ունենային իրենց այն անձերն, վոր ժողովրդացն խոսելու
կը պատրաստվին: Բայց այս վոճ թերդյանի գործ է, վոճ Սա-
քըզլյանի ⁹⁵) և վոճ Ապտուլլահյանի, այլ այն անձերու գործն է
վորք հմտություն և փորձառություն ունին այն գիտություններու
և արհեստներու մեջ, վորոնց վրա պիտի խոսին ժողովրդացն:
Այս գործը դժվար է, խիստ դժվար է և վերջապես այնչափ դժ-
վար է, վորչափ դուրին է ֆրանսերենե արհեստական կամ գիտ-
նական հոգւած մը թարգմանելով հրատարակելն, ինչպես վոր
կընէ Մաղկաբաղն: Յերկրագործը կարող է գիտնալ, թե ինչ
պետք է մշակվիլ Վանա մեջ և ինչ պետք չէ մշակվիլ Կարնո մեջ.
այսպես իմացիր ամեն ճշգրտութեան համար:

Յեթե վոճ վողբալի՝ գոնե ծիծաղելի չէ տեսնել, վոր ազգի
մեջ գիտություն և արհեստ գիտցող քանի մարդ վոր կա՝
ամենն ալ դուրս ձգված են այս Մաղկաբաղն, վորու խմբագրա-
պետն է մի բանաստեղծ: Բայց հոսսալի չէ, վոր սլ. թերդյան
ուշագրության կառնե մեր անկեղծ գիտողություններն և ամեն
ջանք ի գործ կը դնեն յուր հաջորդ Մաղկաբաղնի մանիշակա-
գուշն ապակիներով ծածկված սենյակի մը մեջ խմբագրել տալու,
վորպես զի քիչ ժամանակի մեջ աճին ու պտղատու լինին Հայաս-
տանի մեջ:

16 Հունիս

Յերեկ ըսած ելի.

«Աշխարհիս վրա ժամանակն է, վոր կընեն ամեն բան»:
Այսոր կըսեմ.

«Աշխարհիս վրա մեր ազգ. Վարչությունն է, ⁹⁶) վոր բան
մը չընեն»:

Դաստիարակության խնդիրն, սնդուկի խնդիրը, վանորեյից
խնդիրը, ամենը հոն է՝ ուր վոր եր քսան տարի առաջ և ուր
պիտի լինի քսան տարի յետքը:

Ժամանակով չերբ իմաստասեր մը Դիոգինեսի ⁹⁷) հետ վի-
ճարանություն կընեն համոզելու համար շնականը, թե շարժում
չկա՝ կարասաքնակն քալելի սկսով և յուր ընդդիմաբանին ըսով.

«Բու փաստերդ կը հերքեմ»:

Յեթե Անտիսթենեսի ⁹⁸) անառկագուշն աշակերտին պես
ընդդիմախոս մ'ունենայի՝ ազգային Վարչությունը կը նետեցի նորա
առջև և կըսեցի.

«Բու փաստերդ ալ չես կը հերքեմ»:

Դեսպանախորհուրդն յուր վորոշումն տվավ Հունաստանի
խնդրույն մասին:

Վոչ միայն վորոշում տվավ, այլ Յանիան ալ տվավ Հունաս-
տանի:

Հիմա Հունաստանի կը մնա առնել Յանիան, վոր իրեն տըր-
ված է:

Յեթե թուրք կառավարությունն հակառակի այս վորոշման՝
վեց տերությունները պիտի ողնեն Հունաստանի: Այն... ուրիշ
դեսպանախորհուրդով մը...

Յես ալ այսոր իմ վորոշումն տվի Հայաստանի նկատմամբ.
Ինքնորինություն տվի Հայաստանին:

Գնա առ, յեթե կարող ես:

17 Հունիս

Ոտար լրագիրներե հոգւածներ քաղած լինելուն պատճառով,
Սքամպուլ լրագիրն տասնհինգ որ դադարման հրաման ստացավ
տպագրական տեսչութենեն:

Վոճչափ լավ կը լինեն, յեթե տպագրական տեսչությունն
ալ գոնե տասն որվան համար դադարման հրաման առնեն...

Այսոր տասը գողութիւն տեղի ունեցաւ և մեկ ձեր-
բակալութիւն տեղի չունեցաւ, մինչդեռ ուրիշ որեւէ քառասուն
ձերբակալութիւն կը լինի և մեկ գողութիւն չլինիր:

Ընդհանրապես անոնք միայն կը պատժվին, վոր գողութիւն
չեն ընիր. վասն զի մայրաքաղաքիս մեջ մեծամասնութիւնը գո-
ղերու քովն է, և սահմանադրական կառավարութիւններն, ինչ-
պես հայտնի յե՛ մեծամասնութեամբ կորոշեն ամեն բան:

Սպարտաքի որինսդիրն⁹⁹⁾ աչն գողերն միայն կը պատժեր, վո-
րոնք վարպետութեամբ չեյին կատարեր իրենց արհեստը: Այ՛մ
նույն որոնքը մայրաքաղաքիս մեջ գործադրվելու վրա չե... Յե
րանի անոնց վոր բան չունին տալու գողերու...

Հայաստանի խնդրուէն նկատմամբ դեռ պատասխան չտալ
Բ. Դուռն վեց տերութիւններու համիմաստ ծանուցադրին:

Կերեկի թե պատասխան չունի տալիք:

18 Հոնիս

Գաւառական թղթակիցներն գեր. Մաղաքիս վարդապետ Որ-
մանյանի¹⁰⁰⁾ մեծ հանդեսով Թրապզոն և անտի Կարին մտնելը
կը նկարագրեն: Այդ նկարագրութիւններուն մեջ ճարտասանա-
կան ամեն ձևեր գործածված են. ավանակ մը միայն կը պակսի
հոն՝ Տյառն մերո չիսուսի Քրիստոսի Յերուսաղեմ մտնելը մեզի
հիշեցնելու համար:

Չափազանցութիւններն սիրտս կը խառնվի. աչս մասին շատ
փափուկ ստամոքս մ'ունիմ:

Հալը Որմանյանն յիս ալ կը սիրեմ և կը հարգեմ, վասն զի
նորին գերապատուութիւնն վեց ատենադատութիւն ըրալ ազգին
հոգվուէն և մարմնուէն վրա. և այսուհետեւ ալ կարող է լերելու
հարցուր հիսուն ատենախոսութիւն ընել ազգին մարմնակազմու-
թեան վրա. ուստի միշտ քաջալերութեան արժանի է, մանավանդ
չերբ առաջնորդութիւնն կը ստանձնե աշխարհի քաղաքի մը, ուր ըն-
դարձակ ասպարեզ մը կը բացվի լուր առջև գործելու համար: Սո-
կայն չերբ կը տեսնեմ, վոր գաւառացին չափազանցութեան կը
դիմե՛ իմ նվիրական պարտքս և չափավորութեան հրավիրել զայն:

Նա, վոր ինքզինքը մարդկութեան համար զոհեց, Որմանյանի
շատ մեծ է անշուշտ. արդ չերբ նա ավանակի վրա նստած կը

մտնե Յերուսաղեմ, յուր աշակերտը ինչպես մտնելու չեր Կարին:
Բայց վորովհետեւ մեր չեկեղեցականներն չունին իրենց վարդա-
պետին խոնարհութիւնն՝ զոհն պարզութեան մեջ մնալու ուխտ
ընելու չեն:

Բայց Որմանյան ինչ հանցանք ունի, չերբ լուր ժողովուրդն
չափին ավելի կը հարգե զայն: Նորին գերապատուութիւնը զրու-
ցելու չե, թե ինք աչնչափ հարգանաց արժանի չե:

Նորին գերապատուութիւնը թող ներե մեզ աչս տողերը գրել-
նուս համար, վորովհետեւ Կարնո թղթակիցին նամակը հոս հրա-
տարակված որն՝ շատերն ըսին:

«Կերեկի վոր կարնեցիները մարդ տեսած չունին մինչև հիմա»:
Յես չեմ ուզեր, վոր կարնեցիները աչսպես զրպարտվին...

19 Հոնիս

Միացյալ Ընկերությունն անուն ընկերութիւնը ի գուր աշխա-
տեցաւ չորս ամիս՝ իրեն հարմար անուն մը գտնելու համար.
վասն զի հիմակվան անունն ընալ չհամապատասխաներ յուր
բռնած ընթացքին: Յեթե իմ կարծիքս հարցվեր յես կառավար-
կեյի վոր Վոչ – Միանալիք Ընկերությունն անունով կնքվեր այդ
ընկերութիւնը:

Մինչև այսոր պաշտոնական հայտարարութեամբ չծանուցվե-
ցալ հասարակութեան, վոր Արարատյան, Դարոցասիրաց – Արեւել-
յան և Կիլիկիան ընկերութիւնները լուծված են:

Կը զրուցվի թե հայրը դժվարութիւններ կը հարուցանե և
հաշիւները տալու կը դժկամակի, առարկելով թե անկաժրման
ունի: Յեթե Վորդին և Հոգին ալ անկաժրման ունին՝ ժողո-
վուրդը յուր տված վոսկիներուն հաշիւն առնելիք չունի:

Դեռ ամիս մը առաջ Արարատյան ընկերութեան պատվակա-
նաբուէն անդամներն մին անդամակցութեան կը հրաժարեր
հետևյալ նամակը գրելով.

«... Կաղաչեմ ջնջեցեք իմ անունս Արարատյան ընկերութեան
ցանկին, վորով զիս չերախտապարտ կը կացուցանեք և աչն...»

Ինչ պատիվ Արարատյան ընկերութեան... մարդս ավազակ-
ներու խումբն մը փրկված ժամանակ չերախտագիտութիւն կը
հայտնե. բայց ընկերութեան մը դուրս չեմնելու համար աղաչել
և չերախտապարտ մնալ՝ կարծեմ քիչ մը զարմանալի չե...

Տոսնեհինգ որվան համար դադարված Սթամբուլ լրագիրն չուր պայմանաժամն լրացնելով չերկու որվան մեջ՝ այսոր վերստին հրատարակվիլ սկսավ:

Արևելյան Րուսիայի ¹⁰¹) ընդհանուր կառավարիչ Ալեքս փաշան չուր ամուսնուէն հետ մայրաքաղաքս չեկավ: Կը զրուցվի թե Արևելյան Րուսիայի Պոլիդարիո հետ պիտի միանա և Պոլիդարիո իշխանը Ֆիլիպե պիտի փոխադրե չուր աթոռ:

Աղոթենք, վոր այս միացումը մեր ընկերութիւններուն միացման պես դժվարութիւններու չհանդիպի...

20 Հունիս

Լիփսապոն յեւ լիփսապոն

Մայրաքաղաքիս մեջ չկա մի փողոց, ուր խանութի մը ճակատը ճերմակ լաթ մը քաշված չլինի և վրան Լիփսապոն գրված չլինի...

Ժամանակավ ճերմակ լաթերու վրա Ազատութիւն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն ¹⁰²) կը տեսնելինք, իսկ հիմա Լիփսապոն... ամեն մարդ գործը մաքրելու կաշխատի, 60% ղեղձով ապրանքները ծախել խոստանալով. վոմանք 90% ղեղձ կընեն, և յետեւ թվաբանական ճշմարտութիւնը խաբէութիւն չափ դրած չլինի՝ 110% ղեղձ ալ պիտի ընեյին մեղ մեր պատվաւոր վաճառականները:

Յեւ գիտե՞ք թնչ են այս Լիփսապոնցիներու պատճառները:

Կը ճանաչեմ մին, վոր ճամբորդութիւն պատճառով Լիփսապոն կընե տասը տարեյե ի վեր:

Ուրիշ մը գործեն քաշվելու միտք ունենալուն համար՝ չուր վաճառատան ճակատը Լիփսապոն գրած և քսան տարեյե ի վեր:

Ուրիշներն ալ մեյմեկ պատճառ գտած են ժողովուրդը խաբելու:

Կարող եմ ըսել, թե միայն Բ. Դրան վրա Լիփսապոն չե գրված: Լավագուէն չե՞ր լիներ, յետեւ քաղաքապետութիւնն այդ լաթերը ժողովել տար և մի մեծ լաթ կարել տալով՝ նորա վրա վոսկեղոծ տառերով Լիփսապոն դենը և այդ լաթն իբրեւ դրոշակ մայրաքաղաքիս դռներուն վրա պարզեր:

Ստիլի խեղճ Հարեմն արտոնութիւն ստացավ թերթ մը հրատարակելու... արտոնութիւն բառը սխալեցուց զիս, ներեցե՞ք... արտոնութիւն ստացավ... Զմիւռնիա բնակելու:

«Փորձ»-ի խմբագիր պ. Արգար Հովհաննիսյան այսոր մեկնեցավ մայրաքաղաքէս Վառնայի շոգնաւով:

21 Հունիս

Վաթրք, կես պաշտոնական թուրք լրագիրն, կամ լավ ևս 1/15 պաշտոնական լրագիրն, մեծ ցավ կը հայտնե այսոր, ծանուցանելով թե պետութիւնները Հայաստանի համար հատուկ կանոնադրութիւն կը պահանջեն:

Թուրքերը մեծ ցավ կըզան՝ չերը հայերը հարստահարութիւն և փրկվին:

Կոստանդուպոլս մը կիներու բաղանիքին մեջ

— Սա որիորդը հիւսիս, տիկին:

— Չեմ ճանչնար, մեր դրացին ե, Լուսիկն ե:

— Լուսիկն ե... սխալ ե, տիկին. Լուսիկը ճերմակ ե. այս սևի մոտ բան մ'ե...

— Բաղանիքեն չե՞նելուն պես դարձյալ կը ճերմկնա:

Դիտողութիւն.— Ամուսնական շատ մը կոիքներ կը վերնային՝ չերը խոսկապը բաղանիքի մեջ տրվեր:

22 Հունիս

Կիրակի. — Պ. Նորայր Բյուզանդացի ¹⁰³) միշտ կաշխատի չուր դաղղիներն-հայերին բառարանին, վոր մեծ առավելութիւններ ունի չուր նախորդներու վրա:

Ահա մարդ՝ վորուն ամեն քաջալերութիւն արժանի չե. ահա գործ՝ վորուն ամեն բարի ընդունելութիւն կը վայել:

Տասը հարուստ վաճառական այսոր միանալով ընկերութիւն մը կազմեցին՝ Նորայրի բառարանին մեկ բաժանորդ գրվելու համար...

Հայաստանի խնդրույն նկատմամբ Բ. Դուռն աչտոր պատասխան տվավ վեց տերութիւններու ծանուցագրին:

Հիշյալ պատասխանին մեջ Բ. Դուռն կըսէ, թե շատ բարենորոգումներ ըրած եւ Հայաստանի մեջ, թե իրաց վիճակը քննելու համար քննիչներ ղրկած եւ — քննիչ ղրկելը մեծ բարենորոգում մ'եւ մեղի համար — թե ժանտարիքի կազմած եւ, եւ յիշե ժանտարիքի չե՛ք տեսներ աչտոր՝ պատճառն այն եւ, վոր Բ. Դուռն փառասեր չլինելով՝ միշտ դադարէր բարիք կը գործէր ըստ ավետարանին, թե աջ ձեռքին տվածը ձախը տեսնելու չէ, թե միտք ունի հայաբնակ գավառները նահիքներու բաժնել եւ անոնց բայմախալ ընտրել այն մասն, վոր մեծամասնութիւն կը կազմէ. (թուլլ պիտի տան արդոյք, վոր հայերը մեծամասնութիւն կազմեն). թե տուրքերու տասներորդ մասը նահիքներուն բարոյական եւ նշույթական հառաջագիւծութիւնը պիտի հատկացվի — խոստովանիմ եւ հավատամ — թե շարժուն գատական խորհուրդներ պիտի կազմվին՝ դիմաւոր քաղաքներ յերթալով անիրավ վորոշումները վերաքննելու համար — անիրավ խորհուրդներուն անիրավութիւններն իմ պիտի քննեմ: Ասոնք ըսելն հետո Բ. Դուռն հետեւյալ վիճակագրութեամբ կը կնքէ յուր պատասխանը:

79⁰/₀ Մուսուլման

17⁰/₀ Հայ

4⁰/₀ ալիալ հասարակութիւններ:

Յեթեւեմ վանա, Կարնո, Տիարպեքիքի եւ այլն կողմերու մեջ հայերը 17⁰/₀-ը կը կազմեն՝ ըսել եւ թե 53⁰/₀-ը վերջերս կամ քուրդներն սպանված են եւ կամ այդ վիճակագրութիւնն ընող պաշտոնյաներն:

Մինչեւ վոր Զմլուռնիո մեջ բնակարան մը հաստատվի՝ խտրվի նաեւ Նարոլի պիտի բնակի:

Դարատաղի եւ Բ. Դրան միջեւ պաշտոնական հարաբերութիւնները խզվեցան: Դարադաղի դեսպանը պիտի մեկնի: Բոն-

սուլիսներն ինկան: Յեթեւեմ Հուսսամանի դեսպանն ալ մեկնի՝ քոնսուլներն ալ « վիլի պիտի իշխան: Իսկ յեթե քանի մը դեսպան մեկնեն մեկնելու լինին՝ քոնսուլսը բոլորովին կը վերնա...

Ապետին փաշա առ կախ մնացած խնդիրներու համար բանակցութեան մտով Դարադաղի դեսպանին հետ, վոր հետ ձգեց իր մեկնելը:

Սուրիո¹⁰⁴) կուսակալ Միտհատ¹⁰⁵) փաշա հիշյալ նահանգին համար բարենորոգմանց ծրագիր ղրկած եւ կայս. կառավարութեան:

Ամեն կողմէ ծրագիր... Ապետին փաշան, վոր կողմ վոր դառնա՝ յուր դիմը ծրագիր մը կ'ենեւ. դիվանագիտութեան Բուրսոն-յա¹⁰⁶) դարձավ:

— Առ սա ծրագիրն, աղեկ եւ:

— Առ սա ծրագիրն, շատ լավ եւ:

— Տուր սա Յանիան, վոր քեզի շատ աղեկութիւններ պիտի բերէ:

Տուր սա Տուլչինիոն,¹⁰⁷) վոր խալըսիս:

Մեզի ամեն կողմէ խրատ, հորդոր եւ ծանուցագիր կը ղրկեն՝ մինչդեռ մենք դրամի միայն պետք ունինք:

Պ. Կոչեն¹⁰⁸) կայսեր հետ տեսակցութիւն մ'ունեցավ:

Մեծ կարևորութիւն կը տրվի այս տեսակցութեան: Պաշտոնելից փոփոխութեան խոսքեր կը լսվին ականջեւ ականջ:

Յերթըղի պալատեն¹⁰⁹) հարձ մը Անգլիո դեսպանատունը յիշխելով՝ անոր պաշտպանութիւնը խնդրած եւ Ի՞նչ բանի. հայտնի չէ: Արդոյք այս հարձն ալ ինքնորինութիւն կը պահանջէ:

Ամենակարևոր հայտարարութիւն մը...

Կրոնական պատկառելի ժողովն¹¹⁰), պաշտոնական հայտարար-

ընթացումը կը ծանուցանե բարեպաշտ ժողովրդյան՝ վոր յուր և պատրիարքին միջև բնավ անհամաձայնութիւն չկա:

Մեր պաշտոնական շնորհակալութիւնները կը հայտնենք այս պաշտոնական հայտարարութիւնս:

28 Հունիս

Պատերազմական գործոց նախարար Ոսման փաշա¹¹¹), վոր Պիեմուշի¹¹²) մեջ քառասուն հազար զորքով ռուսաց ձեռքը գերի իյնալուն ի վարձատրութիւն այս պաշտոնին բարձրացած եր, պաշտոնե ինկավ, և նմա հաջորդեց Հյուսիսի փաշան, վոր ժողովրդյան ծանոթ է յուր անձանքով քյումբը:

Կըսեն թե Ոսման փաշան պատերազմ ուղեւուն համար ինկավ. յուր հաջորդն ալ անշուշտ պատերազմ չուղեւուն համար պիտի ինկա:

Մենք ալ շվարեցանք մնացինք, թե ի՞նչ ուղենք և ի՞նչ չուղենք:

29 Հունիս

Այսոր կիրակի չե և պաշտոնական կիրակի—շաբթիւն միւս օրերն ալ ժողովուրդը գործի չերթար, վասն զի թուրքի մեջ գործ չկա. սարսափելի տաք կընէ, միայն թուրք լրագիրներն իրենց պաղ հոգիածներովն ողբ կը բարեխօսեն:

Թեքնեմանը հախիւքն¹¹³) ամենն պաղն է:

Վիքտոր Հյուկոն¹¹⁴), կըսե, քյուրդերեն դաս առնելու կարոտ է դեռ... քյուրդերն աշխարհիս ամենն ավելի լուսավորչալ ազգերեն մին կը կազմեն յեղեր: Լաթակազմ թե թղթակազմ:

Ջղաչին հիվանդութեան յենթակա մին՝ յեթե ՏՈՒՇ ընելու տեղ գլխեն վար քանի մը Թեքնիման Հախիւքի թերթերն թափե՛ կարծենք մեծ ոգուտ կը գտնե:

30 Հունիս

Քաղաքապետութիւնն թատերական ընկերութիւններէ ամիսը հինգ վոսկի տուրք պիտի առնե: Այդ ընկերութիւնները թուրք-

քիտ մեջ վոչնչացնելու համար լավագուշն ճամբա մը չեր կարող գտնել քաղաքապետութիւնը:

Տուրք մ'ալ թատրոն գնացողներէն առնելու չե՛ վոր թատրոն չերթան:

Գերմանական դեսպան Հացֆելտ կոմսն այսոր Բ. Դրան պիտի ներկայացնե դեսպանախորհրդին ծանուցագիրն:

Քաղաքապետութիւնն ծանուցագիրներուն վրա տուրք մը դնելու չե՛ վոր խալսինք անոնց ձեռքեն...

1 Հուլիս

Անաքսաքորաս¹¹⁵) կըսե, թե բնութեան մեջ դատարկութիւն չկա:

Յես կըսեմ, թե բնութեան մեջ դատարկութիւն կա:

Մի՛ կարծեք թե հակառակ խոսած ըլլալու համար Անաքսաքորասի կարծիքը չեմ ընդունիր. չերեսփոխան չեմ, փառք աստծո:

Այո, պարոններ, Անաքսաքորասի կարծիքն չեմ... և Անաքսաքորաս ալ վշտանալու չե. վասնզի Անաքսաքորաս գիտնալու չե, թե Անաքսաքորասի դարն անցած է, թե Անաքսաքորասին մտիկ ընող չկա և թե ամեն մարդ Անաքսաքորասի պես իրավունք ունի յուր կարծիքը հայտնելու: Կարծիքներն շատ ազատ են ալժմ, և յուրաքանչյուր վոք իրավունք ունի այսոր առանց կարմրելու սեկն ձերմակ և ձերմակին սե ըսելու: Յես ալ կը վայեմ այդ իրավունքը, բայց խղճմտանքի տեր ըլլալով՝ կը կոչեմ անձերն և իրերն այնպէս՝ ինչպիսի վոր կերկին ինձ. և յեթե այս անձերն և իրերն չեն չերկիր ինձ այնպէս ինչպիսի վոր են՝ հանցանքն իմս չե:

Ի՞նչ փաստ ունի Անաքսաքորասը պնդելու համար, թե բնութեան մեջ դատարկութիւն չկա. ինչո՞ւ անգամ մը աչքե չե անցուցած մեր չերեսփոխանական ժողովո՞ւ¹¹⁶) ատենագրութիւններն՝ համոզվիլու համար թե բնութեան մեջ վորչափ դատարկ խոսքեր կան: Թողունք զայս: Պ. Անաքսաքորաս կը հաճի՞ արդո՞ք քիչ մը գլուխն չերկնցնել և մեր կառավարութեան գաճին մեջ նայել տեսնելու համար թե բնութեան մեջ վորչափ դատարկ սնդուկներ

կան, սնդուկներ մանավանդ, վոր լեցվելու նպատակով միայն շինված են:

Ձեռն կարծեր, թե Անաքսաքորաս չոր կարծիքն փոխե. բայց չես ալ կը հարցնեմ իրեն. չեթե մեր կառավարութեան սնդուկը դատարկ չեր՝ ինչո՞ւ այսոր գերմանացի չեմտագետ մը չեկավ ինքնին՝ մեր գանձին վիճակը կանոնավորելու համար:

Անուրանալի ճշմարտութիւն մե, վոր մեր գանձն այսոր շատ խեղճ վիճակի մեջ ե. անոթի ժողովուրդն անոր բարեկարգ-վելուն կը սպասե անհամբեր, վոր շնորհակալութեան գիր մը գրե-լով հիշալ չեմտագետին դիմե և ներկայացնե անոր յուր... գըր-պանները:

Սակայն կետ մը կա, վոր իմ զարմանքս կը գրաւե, և այն կետն ալ սա չե, վոր չեթե այս գերմանացին դատարկ գանձերը լեցնելու մասին աչնչափ վարպետ ե՝ Գերմանիան ինչո՞ւ այդ գըր-պանցին իրեն գանձին համար չպահիր:

Բայց պ. Անաքսաքորաս միշտ կը պնդե կրկնելով.

«Բնութեան մեջ դատարկութիւն չկա, ամեն բան լի չե»:

Այո, լի չե... բայց դատարկութեամբ...

Պոլսո մեջ մարդս կամ քիչ մը հավատք ունենալու չե կամ քիչ մը դժուր... Վնչ անոր, վոր վնչ հավատք ունի և վնչ դժուր. այնպիսին տգետ ե, անպիտան ե, աշխարհիս ծաղրն յուր վրա շարժելու համար ստեղծված եյակ մ'ե:

Ընթերցողը դուշակեց անշուշտ, վոր ծովու լողարաններու վրա պիտի խոսիմ:

Հին հույներու մեջ լողացն աչնքան սովորական եր, վոր մե-կու մը տգետ ըլլալն հասկցնելու համար կըսեին. Ահա մարդ մը, վոր վոյ կարդալ գիտե յեվ վոյ լողալ, ինչպես վոր թուրքերն ալ այդ իմաստով հետեւալ առածը կը գործածեն. ահա պաեսոնյա մը, վոր վոյ գրել գիտե յեվ վոյ կառուց ուտել. սակայն մտքես չեր անցներ բնավ, վոր լուսավորյալ դարուս մեջ ալ լողալու արհես-տը չգիտնալը մոլութիւն համարվեր և իրը այն՝ ժողովուրդան ծաղու նշովակ ըլլար:

Դիտվածով գտնվեցա այսոր լողարան մը՝ ուր բազմաթիվ հանդիսականներ ավազանին շուրջն աթոռակներու վրա բազմած՝

ավազանի մեջ նետվողները կը դիտեին: Մեծն Վարդան¹¹⁷⁾ վող-բերգութիւնն աչնչափ հանդիսական տեսած չուներ: Այս բազ-մութիւնը տեսնելով՝ ինքնիրենս կըսեի. «մեր ազգայնները թատրոնի վարժեցնելու համար հարկ անհրաժեշտ ե, վոր թատե-րաբեմերու վրա լողարաններ շինվին և դերասաններն ու դերա-սանուհիները լողարաններու մեջ մտնեն և հոն կատարեն իրենց դերերը»:

Անոնք, վոր Պետրոս Առաքյալի պես հավատք ունեցին՝ մեծ հաջողութեամբ կը սողային ջուրին վրա և բուռն ծափահարու-թիւններ կրնդունէին, ինչպես նաև անոնք, վոր դժուր ունեցին իրենց թևերն վրա՝ ջուրին չերեսը կ'մնային և հանդիսականնե-րու կողմէ կը քաջալերվէին. իսկ անոնք, վոր վնչ հավատք ու-նեցին և վնչ դժուր՝ ջուրն տակը կերթային և մեծ դժվարու-թեամբ դուրս կը հանեին իրենց գլուխն... հանդիսականներու քահանայաձայն ծաղու ունկնդիր ըլլալու համար...

Յղճիս դալով այս տեսարանն և դուրս չեկա. սակայն քանի-քալ առնելիս յետքը համոզվեցա, թե միայն լողարաններու մեջ տեղի չուներնար այս ծաղրն և թե լողարանն դուրս ալ ամեն անհատ, ամեն տնորենութիւն, ամեն կառավարութիւն իրեն ասպարեզ ընտրած ծովու մեջ՝ ջուրին չերեսը մնալու համար՝ դժուր պիտք ունի: Այս համոզումի մղված՝ վորոշեցի դժուր կապել.

Ա. Ապետին փաշայի թևերուն,

Բ. Մեր թաղային վարժարաններուն,

Գ. Միացալ ընկերութեան գործադիր ժողովուն,

Դ. Մասիսի¹¹⁸⁾ մեջ Վոյնեյի Ավետակ-ի թարգմանչին,

Ե. Յերեանու Պապին.¹¹⁹⁾

Զ. Թուրքիոյ դրահավոր նավերուն,

Է. Ծաղկախաղ արհեստից յեվ գիտութեան անուն հանդեսին.

Բայց ինչ կընեմ յիս. այսպես մի առ մի թվելով՝ տասը հա-տոր Փորձ կը լեցունեմ. համառոտեմ խոսքս և ըսեմ.

Մեր յիշկրին չորս կողմը դժուր եր կապելու չե, վոր կարողանա ջուրին չերեսը մնալ, ոտարներու ծիծաղեն խախլ և ապ-րիլ չուր պարունակած այլ և այլ ժողովուրդներով...

Մայրաքաղաքի մեջ ամեն ուր գողութեան դեպքեր կը պատահին: Յերեկ հուլիս մը և վոստիկան մը աճապարանոք վոստիկանութեան դռներն ներս կը մտնէին:

Սուսն բազմութիւն մը կեցած էր դրան առջև. ամեն մարդ գիտեր, թե գողութեան դեպք մը տեղի ունեցած էր, բայց վոչ վոչ գիտեր, թե վոստիկանն ձերբակալած էր հուլիսն թե հուլիսը ձերբակալած էր վոստիկանը:

Այսօր ստուգվեցաւ, վոր գողութեան հեղինակն վոստիկանն է չեղեր... Ինչ փոփոխութիւն... ատեն մը վոստիկանները կը ձերբակալէին գողերը, իսկ այժմ գողեր կը ձերբակալեն վոստիկանները:

Քյուրդերու պաշտոնական լրագիր Թեքնետանը Հաֆիաթ, վոր լուր քաղաքական տասնևից բունթո հոգւածներով մեծ ծառայութիւն կը մատուցանէ քյուրդերու՝ կը հայտնէ թե Հայաստանի մեջ ըլլալիք բարենորոգումներն մեծ հուզում պատճառած են քյուրդերու և թե կառավարութիւնը հեռագրով անոնց սիրտը հանգարտեցուցած է:

Ապագա բարենորոգումներու զրուցն յեթե այսչափ հուզում պատճառէ՝ չեթե բարենորոգումները գործադրվիլ սկսին՝ վերջապէս հուզում պիտի պատճառեն արդիւնք:

Թեքնետան քաջած հեռագրին պատճենը չհրատարակեր, վոր մենք ալ կարգալինք, բայց հավանականաբար հետեյալն ըլլալու չէ.

«Քյուրդեր, հանգիստ չեղեք, սղատ եք, ինչպէս և չեր վոր ուզեք՝ հայերու ստացվածքն, կյանքն և պատիւը բռնաբարելու. բարենորոգում չպիտի ըլլա հոս. չեթե չերբեմն յերբեմն մեր բերնին բարեկարգում բառը լսեք՝ մի հավատաք. Յեվրոպան խաբելու համար կը գործածենք զայն: Դուք ձեր գործին նաչեցեք և ընով հոգ մի ընեք. ոսմանյան բարեխնամ կառավարութիւնը զձեզ չզրկիր և վոչ մեկ բան մը»:

Այս իմաստով հեռագիր մը միայն կարող է քյուրդերը հանգարտեցնել:

Բայց իրոք քյուրդերը հուզված են և կառավարութիւնը հեռագիր զարկած է:

Մենք չենք հավատար. Թեքնետանը կը ստեղծէ այս լուրերը, առանց սակայն խորհելու, թե չեր ոսմ. կառավարութիւնն ինչ լինի 61-րդ հոգվածն¹²⁰ ընդունեց՝ հարկ չտեսալ հոգված մ'ալ քյուրդերու հուզմունքին համար ավելցնել:

Չորս ամիսէ ի վեր հանձնաժողով մը կա Պոլսո մեջ, վորու պաշտոնն է Յերուսաղեմի պարտքերը բառնալ:

Այս հանձնաժողովը չորս ամիսէ ի վեր չորս գրագիր փոխեց. ահա այն միակ գործն, զոր տեսալ չորս ամսու մեջ. չեթե ութ գրագիր փոխը՝ ավելի մեծ գործ մը տեսած կըլլար:

Սուլէն հանձնաժողովո տեսնապետն է այնպիսի մարդ մը, վոր վոչ ինքզինքը կը ճանաչէ և վոչ դիմացիներ...

Կը կարծիլ թե հանձնաժողով մ'ալ պիտի կազմվի այժմ հիշյալ հանձնաժողովը բառնալու համար:

Իսկ մենք կառաջարկենք, վոր հանձնաժողով մ'ալ կազմվի Յերուսաղեմի վանքը բառնալու համար, վասն զի քանի վոր վանքը մնա, պարտքն ալ պիտի մնա, և ազգն ալ ժամանակ չունի վանքերու պարտքը համար ահապի գումարներ վճարելու. յերեսուն հազար վոսկիով ազգը մեծ գործեր կարող է տեսնել:

Միացյալ Ընկերութեան գործադիր ժողովո անդամներու մեջ անհամաձայնութիւնն յերթալով կաճի:

Ընկերութեան աղվոր անուն մը դ'ելու համար այսչափ վեճ ըլլալիքն չեթե առաջուց գիտնայինք, կառաջարկելինք, վոր Ընկերութեան անունն Արա գեղեցիկ¹²¹ դրվիր...

Յերբեմն այնպիսի պարագաներ կըլլան, ուր մարդս չերանի կը կարգա անասուններուն:

Շատ մը խնդիրներ կան, վոր անասուններու մեջ լուծված են և մարդերու մեջ դեռ վիճաբանութեան տակ են:

Լեզվի խնդիրը, որինակի համար:

Չպիտի քննեմ, թե վոչխարը գրաբար կը խոսի թե աշխարհաբար, թե գալառարարառներ ունի թե վոչ, թե վոչխարի լեզուն Հնդկի-յիվրոպականն է թե վոչ. ասոնք քննելու բնավ պետք չունիմ. վասն զի Բաղդի մեջ ծնած վոչխարին լեզուն շատ աղեկ կը հասկնա այն վոչխարը, վորու հայրենիքն է Սալահիան. մինչդեռ Մշեցիի մը հայերենը չհասկնար Պոլսո հայն, վորու լեզուն չհասկնար Վանեցի հայն, վորու լեզուն չհասկնար և այլն և այլն և այլն:

Այս խառնաշփոթ լեզուներուն վրա ավելցողը նուե այն հայերեն լեզուներն, վորք ամեն որ կը շինվին և ամեն որ կը կործանվին, այն ատեն դու ալ ինձի պես չերջանիկ պիտի գտնես գրականութունն անասուններու, վորոց չուրաքանչյուր տեսակն չուր տեսակի լեզուն կը հասկնա:

Այս տողերուն պատճառ տվալ այն առիթն, զոր այսոր ունեցա Վանա գլուղիներն նոր չեկած ճամբորդի մը հետ ահանվելու: Սովու վրա տեղեկութուն հարցուցի իրեն, և ան ալ պատասխանեց ինձի շատ մը բառերով, վորոնց և վոչ մին հասկեցա, բացի մաշալա բառեն...

5 Հուլիս

Առատ-առատ նոթաներ, բայց մուգիֆային ձայնը չլսիցալ դեռ... Դեսպաններն ամեն որ նոթաներ կը խմբագրեն և Բ. Դրան կը զրկեն: Բ. պատուհանեն ալ այդ նոթաներուն նոթաներով կը պատասխանվի:

Բ. Դուռն այսոր դեսպաններուն նոթա մ'ալ զրկեց, վորով կը ծանուցանի, թե անհնարին է իրեն Տուլչինիոն Դարատաղի հանձնել:

Վեց տերութունները կը ստիպեն զմեզ, վոր բոլոր սահմանակից տերութուններուն կամ իշխանութուններուն մեյմեկ կտոր չերկիր տանք: «Տվեք այդ չերկիրներն, վոր, կըսեն, Թուրքիո ամբողջութունը պահպանենք... ձեզի համար մեծ բարիք է, վոր այդ չերկիրները ձեռքի հանեք... Բերլինի դաշնագրության առջև մոմ վառելու չեք, վոր ձեր իրավունքները հզորապես պաշտպանեց»:

Կեցցեն պաշտպանք Թուրքիո...

Դեսպաններն այսոր նոր ժողովք ըրին հայկական խնդրույն համար:

Անգլիո և Ֆրանսիայի դեսպանները մեյմեկ ծրագիր պիտի պատրաստեն:

Ժողովրդեան մեջ վոմանք կը պնդեն, թե Ֆրանսիայի դեսպանին ծրագիրն պիտի ընդունվի, վոմանք ալ կը պնդեն, թե Անգլիո դեսպանին ծրագիրը պիտի ընդունվի. էս կը պնդեմ, թե և վոչ մին պիտի ընդունվի: Հայ կուսակալ մը դնելու գրույցն յերթալով հաստատութուն կը գտնի:

6 Հուլիս

Ամենապատիվ սրբազան պատրիարքն այսոր պատարագ ըրալ Ղալաթիա, վորու լեկիզեցվույն տոնախմբութան որն էր:

Շատ մը գողեր ուխտավորներն ստակ գողցան:

Գողերն մին, վոր հալ էր, ձերբակալվեցալ: Քանի մը ագլայիներ հարց ու փորձ ըրին զինքն.

— Ուսկից առիւր աս չերկու մեկիսին:

— Գանձանակն առի:

— Ինչո՞ւ առիւր:

— Ի՞նչ կըլլա չեղեր առնելով:

— Գողութուն յեղած կըլլա:

— Յես գող չեմ:

— Ինչո՞ւ առիւր և գրպանդ դրիր:

— Նախորդ թաղական խորհրդո անդամներն եմ յես:

— Սուտ կը խոսիս, դուքնալ թաղական խորհրդո անդամ չեղած չես. բայց լենթազրելով թե յեղած ես, Բնչ ըսել կուզես:

— Սա ըսել կուզեմ, վոր թաղական խորհրդո անդամ մը կարող է այդպիսի բան մը ընել՝ առանց գող ըսվելու:

Պատասխանը գոհացուցիչ լինելով, մարդուն ճամբա տըրվեցալ:

7 Հուլիս

Ամեն մարդ հետաքրքիր է գիտնալ, թե տերութուններն Բնչ ընթացք պիտի բռնեն, լեթե Թուրք կառավարութունը դրժկամակի Բերլինի դեսպանախորհրդո վորոշումները գործադրելու:

Ժողովուրդն յերբեմն խստապահանջ կըլլաւ և զիտնալ կուզէ տերութուններու բռնակիք ընթացքն, զոր տերութուններն իսկ չեն գիտեր...

8 Հուլիս

Յեթե պատմանշանի վաճառականութուն ընել սովորութիւնն չեղած ըլլար՝ ամեն ասին ասեմ ձեզ՝ տարւան մը մեջ Ռոշիլաի¹²²⁾ չափ հարուստ կը լինելի:

Ի՞նչպիսի:

— Թուրքիային աժան գնով պատմանշան կառնելի, նաւերով Յեվրոպա կը զրկելի, և միլիոնավոր վոսկիներ կը քաշելի:

Վերջին որերս շատերը հոս պատմանշան ափին և շատ աժան գիներով. կարծեմ շատ առնողին տիրութիւնը պատարաստ ե հաւրյորին զեղչ մը ընել... ափսոս վոր մեր պատմանշաններն ալ մեր արժեթուղթերուն պէս հարգ չունին Յեվրոպիո մեջ ..

Շարժուս արտաքին բերքն ժեզվիքներն¹²³⁾ են... շոգենաւներն այս ապրանքին կը բերեն մեզի առատութեամբ:

Յեթե մաքսատան տնօրին ըլլայի՝ ծանր աուրք մը կառաջարկելի ասոնց, վոր մեր յերկիրը չմտնեն:

Բայց այս մարդերը զրամ կուտան... ապրանքին տեսակներ հարյուրին տասը առնելու իրավունք ունին, կըսեն և տաս տասնը հինգ ժեզվիք կը թողուն մաքսատուն և կը հեռանան:

Մաքսատան տնօրենութունն վորո՞ւ ծախս ասոնք. թաշկինակ, գուլպա կամ գավաթ չեն, վոր վաճառականներու ծախս:

Ահա այնպիսի ապրանք մը. վոր վոչ կառնվի և վոչ կը ծախվի... գոնե իրենց մականունը փոխելին թշվառականները... Հիսուսյան...¹²⁴⁾ Ի՞նչ անպատվութիւն Հիսուսի...

9 Հուլիս

Թնդանութ նետեցեք...

Վերջապէս ազգային յերեսփոխանական ժողովո բացումը տեղի պիտի ունենա հառաջիկա ուրբաթ որը, հուլիսի 11-ին: Բոլոր յերեսփոխաններն հրավիրված են, ինչպէս վոր սովորութիւնն

ե, ներկա գտնվիլ, ունայն խոսքեր ընել և իրենց ազգասիրական պարտքը կատարիլ:

Ս. Պատրիարքն պիտի բանա ժողովն և բացման առթիւ պիտի խոսի հաջ քաղաքականութեան վրա:

Ազգայիներն անամբիւ հուլիս 11-ին կսպասեն՝ Պատրիարքին բիրեն ավտիս առնելու համար:

Յես ալ սպասեմ ուրեմն:

10 Հուլիս

Վերջին ռուս-թուրքական պատերազմը¹²⁵⁾ չհրատարակված՝ Միդհատ փաշան ընդհ. ժողով գումարեց հոս և ամեն ազգի զըլուխները հրավիրելով իրենց հարցուց:

— Թող կուտամք, վոր մեր կառավարութեան անկախութեան ֆլասն:

— Թող չենք տար, Թող չենք տար, պատասխանեցին իրեն:

— Ռուսիո դեմ կուզեք պատերազմիլ:

— Այո, պատերազմիլ կուզենք, կուրծքեն դարնվիլով մեռնել կուզենք, քան թե մեր անկախութիւնը ֆլասված տեսնել... Ո՛հ, մեր անկախութեան մատ չենք դպցուներ, այդ չըլլար:

— Բայց մեծ զոհողութիւններ պիտք ե, կարճի եր դիմանալ:

— Կարող ենք, անոթի կֆանք և կը պատերազմինք, առաջ աստված:

Այս պատասխանները տվին գրեթե բոլոր ազգին զըլուխներն, վորք ուրիշ կերպով չեյին կարող պատասխանել. կը քարկոծվիլ, չեթի հանդգներ մեկն ըսել չպատերազմինք:

Այս որերս զրույց կը պտըտե, թե նմանորինակ ընդհ. ժողով մը պիտի գումարվի և կարծիք պիտի հարցվի չեղեր, թե Հունաստանի դեմ պատերազմելու յի թե չե:

Յեթե հաղթող չլինենք, ի՞նչ պիտի շահինք.

Խնդիրը հոս ե:

Յեվրոպան մեզի պիտի ըսե:

«Մեծ քաջութեամբ կովեցաք և Հունաստանին հաղթեցիք, ապրիք. բայց վորովհետեւ Հունաստանը մեծ ֆլաս ըրավ՝ ուստի պիտք ե, վոր դեսպանախորհրդո վորոշած տեղերն վատ ուրիշ քանի մը մեծ քաղաքներ ալ տանք խեղճին, վոր ֆլասը գոցվի»:

Վորչափ շատ հաղթինք՝ անչափ շատ տեղ կը կորսնցնենք և միշտ պատերազմել կուզենք...

11 Հուլիս

Աղգային չերեսփոխանական ժողովը¹²⁶) բացվեցավ:

Ամեն. ս. Պատրիարքը ներկա չէր:

Ո՞վ բացավ ուրեմն ժողովը:

— Վոչ վոք... ինքնիրմե բացվեցավ:

Ս. Պատրիարքն նամակ մը գրելով Իզմիրլյանի¹²⁷) հայտնած եր թե տկարության պատճառով չի կարողացած ժողովուհն ներկա գտնվիլ, թե աստծո վողորմությամբը հայկական խնդրեն հոսսահատ չի, թե տկարության պատճառով ամիսե մի ի վեր պատրիարքարան գնացած չի և ասկի չիտքն ալ յիրթալու ժամանակ չունի և վերջապես հրաժարական տալով կը կնքեր նամակն:

Իզմիրլյան այս նամակն կարդաց, և ասոյանը... գոցվեցավ դիւանի ընտրութենե չիտքը:

Հայկական խնդրեն չհոսահատիլն ամենուն ուրախութուն պատճառեց, բայց ասուծո վողորմութիւնը քիչ մը տրամեցուց ժողովուրդը:

12 Հուլիս

Կարնո մեջ անհամաձայնություն յերկու առաջնորդներու մեջ տեղ:

Հռովմեական ազգայիններու առաջնորդ Մելքիսեդեկ գիրապաժառ կը պնդէ չեղեր՝ տեղվուհն կառավարության ժողովներու մեջ գեր. Որմանյանն վեր նստել և թուղթերն անկե առաջ ստորագրել:

Գեր. Մաղաքիա վարդապետ Որմանյան կը բողոքէ և ժողովն դուրս կիշն առանց ստորագրելու:

Յեթե չես Որմանյանի տեղ ըլլալի, յերբ կը տեսնեյի, վոր Մելքիսեդեկ իմ տեղս նստած ե՛լ չես ալ կիշնեյի անոր կռնակը կը նստեյի... Նստելու վերաբերյալ խնդիրներն լուծելու կարճ ճամբան աս ե:

Վանա Պողոս վարդապետը¹²⁸) չեպիսկոպոսության աստիճան բարձրանալ կը փափաքի չեղեր, և պատրիարքարանը Նրիմյանի¹²⁹) կը հարցունէ, թե այդ մարդն արժանի՞ չե չեպիսկոպոսության, Հայրնի յի, վոր այս վարդապետին ինչ ըլլալը քսան տարի չի վեր ազգին հասկցուցած ե Նրիմյան, և այս պատճառով հալածված ե հիշյալ վարդապետն և անոր արբանյակներն. արդ ի՞նչ կը նշանակէ Ս. Պատրիարքին այս մասին Նրիմյանե տեղեկություն ուղեին:

Զարմանալի բան... վորպես թե բոլոր չեպիսկոպոս ձեռնադրվածներն արժանի լինեյին չեպիսկոպոսության...

13 Հուլիս

Ստույգ վիճակագրության մը նայելով՝ Պոլսո հայերն այսոր ունին չերեք հազար չորս հարյուր գինետուն, չերեք զրավաճառի խանութ, հազար յերկու հարյուր պարի դասատու, հինգ հայկաբանության դասատու, չերկու հազար զրոսարան, չերեք թանգարան, չորս հազար ծրար խաղի թուղթ, հինգ լրագիր:

Յեւ այս վիճակագրությունը հերիք ե Պոլսո հայերու բարոյական վիճակը ցույց տալու:

Տրապիզոնեն շարունակ դորք կուգա հոս... շատ ապացույցներ ունինք հավատալու, վոր մեր կառավարությունն Հունաստանի դիմ պիտի պատերազմի:

Լրագիր մը կը ծանուցանէ, վոր Գարատաղի և Ալպանիացիներու մեջ տեղ պզտիկ կռիւներ տեղի ունեցած են:

Ուրիշ լրագիր մ'ալ կը ծանուցանէ, թե Գարատաղի և Ալպանիացիներու մեջ տեղ կռիւներ տեղի ունեցած չեն:

Պոլսո մեջ լրագիր մը պետք ե, վորուն պաշտոնն ըլլար միայն սուտ լուրերը հերքել:

14 Հուլիս

Այսոր Պոլիս չեկավ Պ. Սըռ Ռիվըրս Ուիլսոն, վոր ասկե առաջ Յեգիպոսի չիմտական վիճակը բարւոքելու համար Անգլիայեն պատվիրակ գնացած եր Գահիրէ:

Այլ և այլ մեկնություններ կը տրվին այս անձին հոս գալուն վրա:

Յեթե քանի մը որեն մեկնի՝ նորեն մեկնություններ պիտի տրվին:

Խմբագիրներն իրենց լրագիրները քշելու համար այն տեսակ լուրեր միայն կուտան, զորս ժողովուրդը մեծ հաճությամբ կը կարդա:

Վեց տերություններն նալային ցուլց մը ընել վորոշած են՝ իրենց վորոշումներն Բ. Դոան գործադրել տալու համար:

Բ. Դոան այս նալային ցուլցին առաջին առնելու ճամբա մը գտնելու նպատակով, բոլոր նախարարներն ժողով հրավիրելով վորոշեց՝ Մեքիկին¹³⁰) վեց կախարհիւր բերիլ տալ, վորպեսզի կարդան, զեւրը հրավիրեն և վեց տերություններու մեջ անհամաձայնություն գոյացունեն:

Առաջիկա դեբրու տեղ մարտիներ թափվեցան մալրաքաղաքիս մեջ, վորոնց մեկ մասը անոթութենե մեռավ և մյուս մասն ալ անուշիկ չբռնելուն պատճառով Ասիո կողմն անցավ:

Լրագրի մը մեջ հետեյալը կը կարդամ.

«Բ. Դոան պատերազմական նախարարին խնդրանք հրաման ղրկած ե գավառական իշխանություններուն, վոր յուրաքանչյուր գավառի մեջ գտնված ձիերուն վիճակագրությունը շինելով Բ. Դոան ղրկեն»:

Հապա պալատերու վիճակագրութիւնը:

Վերջին պատերազմին դարձող ձիերուն մեծ մասը պայտ չունեցին:

Ինչ վոր գուշակած եյի անցյալ ամսու առաջին որը՝ այս ամսու տասնըհինգին կատարվեցավ:

Ըսած եյի պ. Գ. Ապտուլլահ վառվառն յերիտասարդի համար կամ քառասունարդի համար, թե չպիտի կարողանա Միացյալ Ընկերության գործադիր ժողովո մեջ ատենապետության պաշտոն վարել, և թե ինքն արժանավորություն ունի ատենապետություն ընել այնպիսի ժողովո մը, վորու պաշտոն լինի շենքեր կառուցանել ողին մեջ:

Մարգարիտությունս կատարվեցավ. քառասնըհինգ որ շարունակ վիճարանիին յիտք գործադիր ժողովո անդամներն հրաժարական տվին: Իրենց հրաժարականն ընդունվեցավ, և ուրիշ գործադիր ժողով մը ընտրվեցավ:

Այժմյան գործադիր ժողովը պաշտոնեյության ձեով կազմվեցավ. Պ. Հովհաննիս Թորոսյանի¹³¹) հանձնվեցավ, վոր յուր ուղած անձերեն գործադիր ժողով մը կազմե, և այս անձն ալ կազմեց զայն այն անձերեն, զորս ուղիւղ հարկադրված եր... Արդո հասարակությունն համոզվեցավ, թե շահախնդրությունն եր և ե անմիաբանության պատճառն, և միաբանությունն այն ատեն յուր դրոշը պիտի պարզե, յերր գործադիր ժողովո յուրաքանչյուր անդամն ընկերութենեն շահ մը հանե յուր անձին համար, և աս ալ հալանական չե առ ալժմ:

Արդ՝ ցավելով կը ծանուցանենք. թե Միացյալ Ընկերությունն յուր համակրությունը կորուսած ե. պայն գտնողին և տիրոջը դարձնողին մեծ վարձատրություն խոստացված ե հոս:

16 Հուլիս

Թեքնեմանը Հաբիբաբ այս որիս, ինչպես կըսե ռամիկն, ածուխ ե կերած և հուր կը ժայթքե բերնին:

Ի՞նչ իրավունքով, կըսե այս լրագիրն, Ավստրիո կառավարությունն թերթիս Պոսնա և Հերսեք¹³²) մտնելը կարգելու... միթե այս քաղաքները ոսմանյան բարեխնամ կառավարության չեն:

Չգիտենք թե այս հարցումն վորո՞ւ կողմն. չեթե ինձի ուղղած ըլլար՝ լես հետեյալ պատասխանը կուտայի.

«Բարեկամ, Ավստրիո կառավարությունն քանի վոր առժամանակյա կերպով տեղ չեղած ե այդ քաղաքներուն՝ առժամանակյա կերպով կարգելու քու թերթիդ հոն մտնելը: Սա ալ մոռնալու չե, վոր քաղաքագիտության մեջ առժամանակյան մրցանքներ կը նշանակե:

Որենքը մեծ խստությամբ կը գործադրվի Պարսկաստանի մեջ՝ Հիշյալ կառավարության ներքին գործերու պաշտոնյան՝ վո-

ըռշված գնին բարձր գնով ուտելիք ծախողներուն ականջը կը տրած եւ Ականջը խոսի:

Այս պատիժն հոս ալ կարելի չեր գործադրել՝ յեթե ծախողները հարկուրական ականջ ունենային: Յեթե այսպէս լինել՝ որն անոնց յուրաքանչյուրեն տասնական ականջ կը կտրելինք, տասն որվա մեջ կարող կը լինելինք թերեւս զանոնք հաղորդչան հրավիրել: Մեր ծախողներն միշտ այնչափ բարձր գիններով կը ծախեն, վոր այդ հաշվով իրենց չերէր ականջը կես ժամվան մեջ կը կորուսին, վերջը լինէ պատիժ տալու չե:

Բայց նախ և առաջ քաղաքապետութեան ականջը կտրելու չե, վոր ժողովրդեան սովորականին վեր գնով հաց գնել կուտաւ:

Բարեկամներ, յեթե այդ պատիժը անսխառաբար գործադրվի թուրքիո մեջ՝ քչերը արժանիք պիտի ունենան ականջ կրելու:

17 Հուլիս

Հայկական խնդիրն Անգլիո խորհրդարանին մեջ միշտ վիճաբանութեան նյութ կը լըլաւ: Թեր ու դեմ խոսողները պակաս չեն:

Վերջին գումարման մը մեջ Սըր Վ. Լոսըն հետեւյալ կերպով կը հանձնարարե մեր ազգը:

«Բիչ բան գիտեմ, կըսես, այս ազգին վրա, բայց մանկութենես ի վեր լսած եմ, թե հայերն ամենամեծ խաբեքաներ են Յեվրոպիո մեջ», չգիտցովի թե հայերը փոխադրված են Յեվրոպա թե Յեվրոպան փոխադրված ե Ասիո կողմը:

Սըր. Վ. Լոսընի Յեվրոպիո մեջը խորհրդարանին ծիծաղը կը շարժե, և Սըր Վ. Լոսըն խոսքն իտ առնելով կըսե.

«Յեվրոպիո մեջ չե. աշխարհի մեջ»:

Սըր Վ. Լոսըն մեր ազգին նկատմամբ քիչ բան գիտնալով՝ ծաղրելի չե այսպէս խոսելուն համար, վասն զի ուրիշներն առանց բանի մը վրա տեղեկութիւն ունենալու կարծիք կը հայտնեն. որինակի համար Մոլիերի¹³³ Ագանի¹³⁴ հետեւյալ կտորին մեջ Վալերը.

«Հարբակոն. — Վալեր, զքեզ դատաւոր կարգեցին մեր վրա, բսն ուրեմն յէս իրավունք ունիմ թե աղջիկս:

Վալեր. — Հայտնի չե վոր դուք իրավունք ունիք:

Հարբակոն. — Բայց գիտե՞ք թե ինչ ե խնդիրը:

Վալեր. — Վոչ, բայց դուք չեք կրնար իրավունք չունենալ իրավունքը ձեր քովն ես:

Այսպէս ալ Անգլիո խորհրդարանին Վալերը կըսե հայ ազգին. — չես կրնար խաբեքա չըլլալ, թեպետ և զքեզ ճանաչելու պատիւը չունիմ:

Յես կը կարծեմ, թե այս մարդը կտալի վաճառական մ'ե և մեր ազգայիններն մեկին ֆրաս տեսած ե առուտորի մեջ. ուստի կտալին վրեժը հայկական խնդիրեն կը լուծե...

18 Հուլիս

Այսոր նորեն գումարվեցաւ ազգային յերեսփոխանական ժողով:

Այսոր նորեն բացակա գտնվեցաւ Ս. Պատրիարք Հայրը, տկարութեան պատճառով: Յերեսփոխաններն շատերը ներկա չելին իրենց... քաջաոգջութեանը պատճառով: Անոնք միայն ներկա էին, վոր թիթե հարբուխ ունեցին:

Դիվանի նորընտիր անդամները միարեբան հրաժարական տվին. Ս. Պատրիարքին պիտի հանձնարարեն, վոր դիվանին անդամներուն յերթա և ազաչե, վոր իրենց պաշտոնը ազգասիրաբար կատարեն:

Ազգային ժողովո մեջ պաշտոն հանձն առնելն ալ ձևեր ունի, ինչպէս տունիրու մեջ խահվե կամ թիյ լամել:

— Հրամանեք, առեք ձեր թիյը:

— Շնորհակալ եմ, չես չեմ ուզեր:

— Կաղաչեմ, ընդունեցեք:

— Դուք հրամանեցեք:

— Յես ալ պիտի առնեմ:

— Յեթե Դուք առնեք՝ չես ալ կընդունեմ:

Յեւ թիյը վերջապէս կը լամվի...

Իմ կողմես հարցապնդում մը յերեսփոխանական ժողովուն.

— Ծովուն տակը չերթալու համար շատերը դդում կը կապեն իրենց թևերուն վրա. յերկինք չհամբառնալու համար թևերն ինչո՞ւ համար կապար չեն կապեր իրենց վոտներուն, յերբ ցամաքի վրա գտնվին:

Կարող եք խորանհն թատերաբեմ ցատկել:

Պատասխան տվեք. հա՞յարձակութուն ունե՞ք «ի մեջ տա-
նարիս եվ առաջի աստվածներն» և այն ըստին յետքը զա-
ղոննա ե մոբիլե¹³⁵ և ուրիշ բնույթով վեցերորդ յերգել:

Յեթե դուք կարող չեք՝ Թարգմանյան գերապատիվ Անտոն
վարդապետն կարող ե:

Այո, այս վարդապետն Փոքրանի¹³⁶ մեջ չեկեղիցականու-
թյունը թողով՝ Կալացի¹³⁷ մեջ խալական թատերաբեմին վրա
դերասանութուն ընել սկսած ե:

Յուր տարիքին նայելով՝ պետք ե վոր սիրահարի դերը կա-
տարի:

Անկեղծաբար խոսելով, ուրախ ենք, վոր հիշյալ վարդապետն
այս քաջութունն ունեցած ե և ազգին մեծ ծառայութուն մա-
տուցած ե. յերանի թե ուրիշ կղերներն ալ Թարգմանյանի որ-
նակին հետևեցին և մտնելին այն ասպարեզին մեջ, վոր իրենց
սիրելի յե:

Ավելի ուրախ պիտի ըլլայինք՝ չեթե Թարգմանյան վարդապե-
տան¹³⁸ խումբը մտներ հոս, կամ Տիկիա յերթար և ազգային
ներկայացումներ տար:

Իգական սեռին ծովու բաղանիքին մեջ.

— Տիկին, չնայի՞ս, հիվ ե սա կինն:

— Ի՞նչպես ճանաչեմ. գլուխը ծովուն մեջն ե և վոտները
միայն կերկին ջուրին վրա:

— Աղեկ ա, չվաղի՞ս ազատելու... պիտի խղճվի...

— Կես ժամն ավելի յե, վոր այդպես կեցած ե. և յես ալ
կը կարծեի, վոր յուր պզտիկ վոտները ցցունելու համար այդ
դիրքով կեցած եր...

Սաստիկ տաք...

Կնիկներն երկինքի բաժնելու չափ տաք...

Այսոր քանի մը կնաթողութուններ տեղի ունեցան:

Ջերմաչափն այսոր շուքի մեջ քառասունմեկերորդ աստի-
ճան կը ցցունե:

Այս տաքութունն կարծես հերիք չեր, և ահա կառավարու-
թյունն Պալատիկ հրապարակին¹³⁹ վրա դարձյալ մեծ քանա-
կությամբ թղթադրամ այրեց:

Ավելի լավ չէր լինիր, վոր կառավարութունն ձմեռվան պա-
հեր այրվիլիք թղթադրամները, վորպեսզի ձմեռվան ցուրտ որե-
րուն մեջ խեղճ և աղքատ ժողովուրդը քիչ մը տաքնար:

Մեկ կողմն ալ կը խորհինք, վոր կառավարութունն մեծ
շռայլութուն մը կընե այսպես մոխիր դարձունելով չուր թղթա-
դրամները, վորոնք կրնան վառարաններու մեջ գործածվիլ:

Յես, վոր տարին յոթը վոսկի կուտամ քիստի և ածուխի
համար, չերկու միլիոն թղթադրամի համար սիրով կը վճարեմ
չորս վոսկի, և այդ քանակությամբ թղթադրամով տարի մը թե
կը տաքնամ, թե կերակուրներս կիփեմ և թե լաթերս լվանալ
կուտամ: Ուրիշներն ալ ծախու կառնեն ինձի պես, և կառավարու-
թյունն ալ շահ մը կը գոյացնե:

Փառք նախախնամութան, թղթադրամներն այնչափ առատ են,
վոր քսան տարի կրնան գոհ ընել Պոլսո ժողովուրդը...

Մեծ անիրավություն մը...

Սիկիլիո Բաթանա քաղաքին ոսմանյան դեր-հյուպատոսն
տեղվոյն գատական իշխանության կողմե բանտարկված ե:

Ինչո՞ւ:

Վասն զի այս դեր-հյուպատոսն մասնակցած ե զողության
մը, վոր ասկից առաջ տեղի ունեցավ Հոռմի ազգային բանֆայի
մեջ:

Մեր պաշտոնյաները շատ սրդողած են այս բանտարկության
գեմ, և կը զրուցվի թե այս որերս բողոք մը պատրաստելու վրա
լեն, հարցնելու համար, թե ոտար կառավարութուն մը ի՞նչ իրա-
վունքով կը պատժե ոսմանյան կառավարության պաշտոնյանե-
րուն մեկ հաւանդ սովորությունը:

Մենք ալ կը ձայնակցինք իրենց և կը պոռանք:

Կրոնքի և սովորության ազատութուն...

Քաղաքական պարտամուրհակ մը...

Ոսմանյան բարեխնամ կառավարութիւնն հետեւալը ստորագրեց ախորժ.

«Ստորագրելու թվականն քսանը մեկ ու յետքը պարտաւոր եմ ներկայս բերողին վճարել Տուլչինիոն, վոր Գարադաղի պիտի հանձնվի»:

— Յեթե չվճարեմ:

— Վեց տերութիւններն պիտի տան և մեր տերութիւնն հաշվուն պիտի անցունեն:

Արդ, Գարադաղի խնդիրն լուծված ե... Թուլթի վրա:

23 Հուլիս

Հունաստանի խնդիրն ալ դյուրութեամբ կը վերջանար, յեթե անոր ալ ուղածը չափազանց չըլլար:

Սահման գծողներն վնաս քաղարին մեջ վոր հույն տեսած են՝ Հունաստանի տված են զայն... յեթե ասոնք իզմիր չերթալու պատիւն ունենալին՝ այդ քաղաքն ալ Հունաստանի պիտի տալին:

Մեր կառավարութիւնն վորոշած ե մինչև վերջին շունչն ընդդիմանալ ուղված տեղերը Հունաստանի չտալու համար: Արշունով առնված են անոնք, կըսեն թուրք լրագիրներն, և արշունով միայն կրնան տրվիլ: մինչդեռ հույն լրագիրները կը պնդեն, վոր կարմիր մեխնով տրվին անոնք:

Կլատսթընի¹⁴⁰⁾ տկարութեանը վրա կուրախանան տեղւոր թուրք լրագիրները. յեթե հեռագիրն վաղը լուր տա, թե Կլատսթընի հիվանդութիւնը ծանրացավ՝ մալրաքաղաքիս տաճիկ լրագիրները խնձուկ մը ընելու միտք ունին:

Հայաստանի մեջ հարստահարութիւնները կը շարունակվին: Մեր կառավարութիւնն յերեսը հոն դարձունելու վոչ ժամանակ ունի և վոչ կամք: Իրավունք ալ ունի. այն մարդն, վորուն վորը կը ձեռքեն բխլիներն՝ սանտր չուղեր անշուշտ մորուքը սանտրելու համար... Բայց մորուքը խառնաշփոթ վիճակի մեջ ե չեղեր, վորո՞հ հոգ. յերբ բռնկի՞ աչն ատեն կարևորութիւն կը տրվի... մորուքին:

Սըռ Ռ. Լոսըն վեհանձնութեամբ հետս կը կոչե աչն խոսքն, վորով թշնամանած եր մեր ազգը:

Մեծ ցավ զգացած ե չեղեր բերնեն ալիսիսի խոսք մը փախուցած ըլլալուն համար. մեր ազգը պատվաւոր ազգ մ'ի չեղեր և յուր մեջ, ուրիշ ազգերու հետ բաղդատմամբ, գեշերը սակավաթիւ են չեղեր:

Յերբ կը խոստովանի մեկն, թե աչն ինչ խոսքը բերնն փախած ե՞ պատասխանատվութենէ կտրատի. մարդս յուր կամքով յուր բերնին դուրս չելած խոսքերուն միայն պետք ե պատասխանատու նկատվիլ:

Բնութիւնն յերբեմն այնպիսի խոսքեր կամ ձայներ հանել կուտա մեզի, վորոնք անշուշտ հաճութիւն չեն պատճառեր լսողներու, բայց վորովհետեւ անոնք մեր կամքն կախում չունին՝ մեր ալ պատասխանատվութիւնը հրավիրելու իրավունք չունին:

Սըռ Ռ. Լոսըն դատը վաստկած ե:

Ամերիկացի բժիշկ մը, դոքտոր Թաններ¹⁴¹⁾, բժշկական քննութիւնն մը ընելու համար՝ քառասուն ու անոթի մնալու վորոշում տված ե:

Այս բժիշկն այժմ քսանութ ու ե, վոր անոթի կը մնա: Ամերիկայի ինչպեա նաև Յիվրոպայի բոլոր լրագիրներն ահագին ճշեր կը զոհեն այս մարդուն համար:

Չաթալճայի ամբուլթիւնները¹⁴²⁾ պահպանող ոսմանյան զորքերն անցյալները յերեսունհինգ ու անոթի մնացած ելին, և տեղական լրագիրներն վոչ մին հոժաբեցավ չերկու տող գրել. իսկ հիմա, վոր Ամերիկացի բժիշկ մը ասանկ փորձի մը ձեռք կը զարնե՞ աշխարհիս բոլոր լրագիրները իրենց ճշերը գովաստով կը լեցունեն, մինչդեռ աչգ գուտին փառքը Չաթալճայի զորքերուն կը վերաբերի, աչն զորքերուն, վոր յերեսունհինգ ու անոթի չըլլալուն և Ոսման փաշայի անկումը կը պատճառեն:

Չորքերն ալ մեկգի դնենք և դարձայ պիտի տեսնենք, վոր

այս գյուղերը նոր բան մը չէ. մեր զբաղեցնողներուն ամենն հարուստը վարժված և սասն ու անոթի մնալու:

Մարդը կամչնա սասնիկ սոխորական մեկ բառը լերե գլուտ լրագիրներու մեջ անցունելու...

Այսոր նորին գումարվեցավ աղագլին յերեսփոխանական ժողովը: Ս. Պատրիարքը բացակա չի հիվանդությանը պատճառով:

Վարչական կազմակերպության ծրագիրն նկատողության առնվելով՝ քվեի գրվեցավ հետևյալ իմաստով:

«Ով վոր վարչության կազմակերպությանը ստիպողականութունը կը ճանաչի և հաջորդ նիստին մեջ անոր վերջնական վորոշումը կուգե՝ թող ձեռքը վեր վերցունեն»:

Մեկ մասը վեր առավ յոր ձեռները:

Մեկ մասն ալ հաշտեց. թե վարչական կազմակերպության ստիպողականութունը կը ճանաչի, բայց հաջորդ նիստին մեջ անոր հողված առ հողված քննվելը կուգե, վնչ թե վերջնական վորոշումը:

Վերջնական վորոշումն ընդունվեցավ և վորոշվեցավ, վոր ժողովը յոր կու շարաթին գումարվի:

Ան խումբ մը բժիշկներ, վոր հիվանդի մը քով կերթան և անոր հիվանդությանը անմիջական դարմանի պետքը լլալն զգալն չետքը, վորոշում կուտան, վոր տասնհինգ ունեն չետքը միանան և հիվանդությանը վրա խորհրդակցին...

26 Հուլիս

Սերվիան ալ զինվորական պատրաստութուններ կընե. արդյոք սա ալ յոր սահմաններն գոհ չե:

Գիտեք, վոր սահմանն գոհ չեղողը միշտ մեզի կը վազեքանի մը տարիչ իվեր ոտար կառավարութուններուն սահմանները ուղղելն ուրիշ գործ տեսած չունիք. և մինչև վոր ամեն մարդ լուր սահմանն գոհ չլինի՝ հասգիստ քնանալիք չունինք:

Բ. Դուռը հարցուց Սերվիային, թե ինչ կը նշանակեն այդ պատրաստութունները: Սերվիան պատասխանեց, թե վոչինչ կը նշանակեն:

Անցյալ անգամ ալ այս պատասխանը տված էր Սերվիան, և մեր կառավարութունն ալ այդ պատասխանով գոհ չեղած էր:

28 Հուլիս

Պատերազմական նախարար Հյուսիսին Հյուսիսի վաշան քանի մը որեն Ալպանիա պիտի յերթա Տուլլինիոն Գարատաղի հանձնելու համար:

Արդյոք Յանիան ալ Հունաստանի հանձնելու համար առաջին նախարարն պիտի յերթա, թե ամենքս մեկանց պիտի յերթանք:

29 Հուլիս

Մարդասեր մեկը չկա, վոր մեզի հիսուն հազար վոսկի փոխտա...

Բամազանի¹⁴³) առթիվ ամսական վճարելու համար չեմտական նախարարութունը քանի մ'որե ի վեր Ղալաթի փողոցները պտտեցավ, վոր սեղանավորներն հիսուն հազար վոսկի վոխառություն մը ընե, և չհաջողեցավ:

Կերեի վոր այս Բամազանին ամսականը դալ Բամազանին տրվիլ պիտի վորոշվի:

30 Հուլիս

Անաճառ լրագիրն վեց տերութուններուն ընելիք նավային ցուցք կը ծաղրե, հրատարակելով Սիմուր ծովապետին տրված հրահանգները պատճենը, զոր վորպես թե անգղիական լրագիրներու քաղած է:

Հիշյալ հրահանգներու համեմատ՝ սուր նավային ցուցք խաղաղական հանգամանք պիտի ունենա. և յեթե Պ. Սիմուր լուր բարոյական ցուցքով չհաջողի Գարատաղի և Հունաստանի տրվելիք հողերը Ալպանիացիներու և Թուրքերու ձեռքն առնել՝ ծանր պատասխանատվություն մը պիտի հրավիրե չուր վրա: Յեթե լեռներու վրա Ալպանիացիներ չերևին՝ զրահավորները թշնամվուց չտեղ պիտի շարվին. զրահավորներու մեջ զորքերը գինի և սիրո չերգեր պիտի չերգեն, գերմանական և ֆրանսիական զրահավորներն իրարմե հեռու պիտի մնան, վոր իրարու չգարնեն, նույնպես իտալական և ավստրիականն ալ ամենն հեռու. Գարատաղիներուն

կամքը կատարվելուն պես՝ զրահավորները Հունաստանի ջուրերը պիտի չերթան. պ. Սիմուր խնջուկներ պիտի տա մյուս հրամանատարներուն, բայց ծախքն Անդղիոս կառավարութեան վրա չպիտի լինի:

31 Հուլիս

Դիսպաններն հաշկական խնդրունքն վրա միշտ կը խորհրդակցին, բայց արգելունքը դեռ հայտնի չէ:

Յեւ վորովհետեւ նախաշին ցուցին զգրութիւնն լոկ բարոյական ե՛կառաջարկեմ վոր վեց տերութիւնները պարապ տեղը մեծ ծախքերու չենթարկին՝ իրենց զրահավորները թուրքիա զրկելով. հերիք ե վոր այդ զրահավորներուն պատկերները քաշել տան և շրջանակի մը մեջ անցունելով զրկեն մեզի, վոր Բ. Դեան մեջ պատե մը կախենք:

1 Ոգոստոս

Մարախներն վոր անցյալ ամիս մայրաքաղաքիս մեջ թափվեցան և ուտելու բան չը գտնելով Ասիա անցան՝ Պիլեճիկի կողմերն դացած են և բոլոր հունձներն ավրշուկած են հոն:

Այդ տեղի բնակիչները հետին ծալը դժբախտութեան մեջ ինկած՝ գաղթելու կը պատրաստվին:

Հրաշք չէք համարիր, չեթե իմացունեմ ձեզ, թե այդ կողմի հայերեն այս մասին հանրազրութիւն մը չեկած չէ պատրիարքարան հետևյալ իմաստով:

«Մարախները մեր գյուղերուն վրա հարձակեցան և մեծ վնաս տվին հունձներուն. ստացվածքի ապահովութիւն չկա... հակառակ Բերլինի դաշնագրուն 61-րդ հոդվածին: Կադաշինք, բարեխնամ կառավարութեան ուղադրութիւնն հրավիրեցեք այս գաղանաբար և կրոնամոլ մարախներուն վրա և անոնց պատժելը խնդրեցեք: Զարմանալին այն է, թե այս բարբարոս մարախներն կը համարձակին տեղվույս վսեմ. կուսակալին առջև հասցունել մեզ այս չարիքներն. և վսեմ. կուսակալն բոլորովին անտարբեր՝ վոստիկան մ'անգամ չզրկեց զանոնք ձերբակալելու համար: Զրույց

կա՝ թե կուսակալին թելադրութեամբն է, վոր մարախներն այսպես կը հարստահարեն զմեզ: Անհապաղ ոգնութիւն զրկեցեք մեզ, ապա թե վոչ պիտի փոխենք մեր կրօնը»:

Անշուշտ իբրև հրաշք, այսինքն իբրև բնական հուրս իրողութիւն մը նկատելու չե այս լուրթիւնն, զոր կը պահեն Պիլեճիկի հայերը մարախներու նկատմամբ, չերթ խորհինք մի անգամ, վոր գալառացի հայն ամեն ոգնութիւն պատրիարքարանն կըսպասե: Յեթե քյուրդե մը կամ չերքեզե մը հափշտակվի անոր շորը՝ անմիջապես կը հեռագրե պատրիարքարան, վոր շոր զրկվի իրեն, սպառնալով միանգամայն, վոր կրօնքը պիտի փոխե՝ չեթե չուր խնդրը մերժվի պատրիարքարանն:

Վայ այն մարդուն կրօնքին, վոր շորեն կախում ունի...

Մենք ալ կը հավանինք ընդունելու, թե գալառացի հայն ունի բազում պատճառներ, վորովք անհնար կը լինի իրեն ինքզինքը պաշտպանել քյուրդի կամ չերքեզի դեմ, և այս պատճառներն ալ այնքան ծանոթ են, վոր զանոնք մի առ մի հոս նշանակին անոգուտ աշխատութիւն մը հանձն առնել ե. սակայն ժամ ե, վոր գալառացի հայն այդ պատճառներուն բարձմանը աշխատի՝ վորչափ վոր կարող է ինքն, և այն ատեն միայն դիմե պատրիարքարան՝ չերթ յուր ուժն անբավական ե դիմագրել վտանգին:

Ա՛րդ. շնորհավորելով Պիլեճիկի հայերուն պահած լուրթիւնն՝ կը խնդրեմ վեր ընդունին խորին հարգանքներուս հավաստիքն, վորով մնամ և այլն:

2 Ոգոստոս

Հաշկական խնդրունքն վրայոք առնված հաջող լուրերուն վրա մայրաքաղաքիս բոլոր ազգայինները կը պատրաստվին Հայաստանի կուսակալ ըլլալու:

Ամբակում աղան, վորուն ճակատեն վաթսուհորս ձմեռներ անցած են, քանի մը որե ի վեր զինվորական վարժութիւններու կը պարապի այնպիսի փափաքով և չեռանդով, վոր վոչ սենյակը մտնողները կը տեսնե, վոչ ալ անոնց խոսքերուն կը պատասխանե: Կինը կարծելով թե ամուսինն խելագարված ե՝ բժիշկը կանչել կուտա:

Յերկու ժամեն չետքը կուգա բժիշկն, վոր ըստ սովորութեան կը հարցունե — «ո՞վ ե հիվանդը»: պիտի վորոշեն:

Գիտեք արդեն, վոր Հիպոկրատի¹⁴⁴) սաներն այն ատեն կը ճանաչեն հիվանդներն՝ յերբ ասոնք մատով ցուցվին իրենց: Յերկու քաջառողջ մարդերու քով հիվանդ մը դիր և հարցուր բժշկին:

— Ո՞վ ե հիվանդը, տեր բժիշկ:

— Հայտնի չե, վոր այս ե, պիտի պատասխանե քեզ, ցուցց տալով այն մարդն, վոր չերկաթի պես քաջառողջ ե:

Հիվանդութուններն ալ այն ատեն կը ճանաչեն՝ յերբ հիվանդը մեռնի: Չըկա մեռյալ մը՝ վորուն ինչ հիվանդութենե մեռած ըլլալն չհասկցվի, ինչպես վոր չկա հիվանդ մը, վորուն ինչ հիվանդութենե բռնված ըլլալը հասկցվի: Շիշմանյան¹⁴⁵) խղճահար ըլլալուն պատճառով եր, վոր հրաժեշտ տվաւ բժշկական արհեստին և գրկեց գրականութիւնն, վոր մարդ չմեռցուներ:

Մեր խնդիրն քիչ մը հեռացանք. մոտենանք անոր:

Բժիշկը կառաջնորդի Ամբակում աղային սենյակը:

— Բարե, Ամբակում աղա, կըսե բժիշկը:

— Մեկ, չերկու, յերեք, կը պատասխանե Ամբակում աղան, վոր ավելի կոթ մը բռնած՝ վարժութիւն կընե:

— Ի՞նչպես եք, Ամբակում աղա:

— Մի ձախ, մի հաջ...

— Ձեզի խոսք մը ունեցի ըս...

— Հապո՞հ հառաջ, կը գոչե Ամբակում աղան և այնպիսի արագութեամբ մը կանցնի բժշկին քովն, վոր Ասկղեպիոսին¹⁴⁶) աշակերտը գետին կիչնա:

Բժիշկը վար կերթա և Ամբակում աղային տիկնոջը կըսե.

— Ամուսնույդ ուղեղը փնասված ե:

— Խելագարած ե:

— Գրեթե:

— Ի՞նչ կըսեք. հիմա խելքս կը թռցունեմ... ասոր մեկ ճա՛րը:

— Ճա՛րը... կապելու և Փրկիչ¹⁴⁷) տանելու չե:

— Ըլլալու բան չե... գոնե ազգային յերեսփոխանական ժողովը տանինք...

— Յերեսփոխանական ժողովը հիմարանոց ե:

— Ի՞նչ գիտնամ, չերեկ քրոջս տղան կըսեր, վոր ազգային յերեսփոխանական ժողովո մեջ խնդ ու խելառ խոսքեր կընեն: Երբ բժիշկ, իմ ամուսինս խելագարելու պատճառ մը չուէր մ'անգ...

— Բանի մը վրա շատ մտածեց:

— Բնավ յերեք:

— Մեծ վիշտ մը կընց:

— Վոչ:

— Խմբագրութիւն կընե:

— Ամենակին:

— Յրանսերեն — հայերեն ընդարձակ բառարան մը կը հրատարակե:

— Վոչ, վոչ, ատանկ բաներ չընե:

— Չափազանց ուրախութիւն մը զգաց մոտերս:

— Գրեթե քանի մը ատենն ի վեր միշտ ուրախ եր, ամեն ոք կըսեր. «Հայաստանի կուսակալ պիտի ըլլամ»:

— Խեղճ մարդ:

— Խղճալի ամուսինս:

Բժիշկը դեղագիր մը կը գրե, այցելութեան վարձը կընդունի և կը մեկնի:

Ամբակում աղան վար կուգա և կը հրամայե, վոր սեղան պատրաստվի:

Ամբակում աղային ուղեղը փնասված չե. անոր հիվանդութիւնն ե՝ կուսակալութեան համար չափազանց սիր:

Կարծեմ ավելորդ կը լինի ըսել, թե յիթե Հայաստանի ինքնորինութիւն տրվի յուրաքանչիւր գյուղին ու թը հարցուր կուսակալ պիտի լինա. ամենքս ալ կառավարող պիտի լինինք և կառավարելու համար Յեւրոպային ժողովուրդներ բերել պիտի ստիպվինք:

3 Ոգոստոս

Նավային ցուցի համար զրուցներն յերթալով կերթան և հաստատութիւն կը գտնեն:

Վեց տերութիւնները հաստատապես վորոշած են զրահավորներ զրկել՝ Գարազաղի և Հոնաստանի խնդիրներու լուծումը դիւրացնելու համար:

Անտարակուսելի լե այսոր, վոր տերութիւնները Հայաստանի խնդրուցն համար ալ իրենց ազդեցութիւնը պիտի գործադրեն. բայց չգիտեմ թե Հայաստանի համար ինչ զրկել պիտի վորոշեն:

Յեւ չեմ կարծեր, վոր Հայաստանի համար ալ զրահավոր ղրկեն, վասն զի մեծ դժվարություններ կան՝ վեց տերություններուն ղրկելիք քսան զրահավորները...

Տերություններն թող իրենց ուղածին պես վարվին. մենք միայն աղոթելու յենք, վոր համաձայնությունն կարճատե չլինի ասոնց մեջ:

Բնավ չպիտի մոռնամ այն պատասխանն, զոր այսոր տվալ գավառացի հայ մը պոլսեցի հայու մը, վորու կնկան հավատարմությունը կասկածելի չի:

— Դուք գավառացիներդ անդգա չեք, ըսավ պոլսեցին:

— Ինչո՞ւ:

— Միտ չունիք:

— Ո՞վ ըսավ:

— Վատ եք:

— Ո՞ւր կարդացիք:

— Քյուրդերը ձեր վրա կը հարձակին, և դուք տղու պես կուլաք:

— Պոլսեցին միշտ այդպես կըսե՛ն՝ առանց պատճառները հարցընելու:

— Շատ լավ: Ուրիշ կետ մը կա, ատոր ի՞նչ պիտի ըսես:

— Վճիռ կետն է այն:

— Ձեր կիներն ուրիշները կը հափշտակեն, և դուք ձայն չեք հաներ:

— Այդ կետը Պոլսո մեջ գավառահերեն ավելի կա, բարեկամ. դուն այդ կետին քով վերջակետ մը դիր և փակագծի մեջ գոցել. Պոլսեցին պիտի կրծել սկսավ:

4 Ոգոստոս

Անդղիա վերջապես կուգե՛ Հայաստանի ճիշտ վիճակագրությունն ունենալ ի ձեռին, վորպեսզի ըստ այնմ գործեն:

Քյուրդերն իմացած ըլլալով Անդղիո կառավարութեան այս դիտավորությունն՝ Միություն մը կազմելու վրա յեն յուրջանց մեջ՝ հալերը ջարդելու նպատակով: Յեթե քրդական Միությունն

հաջողի գործադրել յուր նպատակն՝ մեծամասնությունն հարկավ քյուրդերու քովը կը մնա:

Ի՞նչ կտրուկ ճամբա մեծամասնությունն ունենալու համար...

Վոստիկանութեան նախարարը մեծ գործ տեսավ այսոր. ձերբակալել տվաւ...

— Հիսարու¹⁴⁸) վոճրագործն:

— Վոչ:

— Ամերիկացին սպաննողը:

— Ձե:

Ձերբակալել տվաւ տասնեւորս տարեկան թրքուհի մը:

Այս մատաղ որիորդն վոճիր մը գործած է, թող տալով յուր մազերուն, վոր յերկին:

Մուհամմետի կրոնքը կարգելու կիներուն ի տես աշխարհի գնել իրենց մազերը:

Մուհամմետ շատ խստութեամբ վարված է մազերու հետ, մինչդեռ մարմնո մասին սահմանած որենքները շատ թույլ են:

Որիորդին հայրն, վոր բարձրաստիճան զինվորական մ'է, պիտի բողբոքե չեղեր վոստիկանութեան նախարարին դեմ, վոր բոլոր թրքուհիներուն մազերը ածելել կուտար՝ յեթե իշխանությունն ունենար, այնչափ ջերմեռանդ դարձած է Բամազանի որբըուն մեջ:

5 Ոգոստոս

Ազգային հաստատություններուն մեկնն պաշտոնյա մը վը ճամբովի:

— Ինչո՞ւ ճամբեցին զքեզ, բարեկամ, կը հարցուներ ծանոթներին մին:

— Յեւ ալ չգիտեմ:

— Իմացա վոր գողություն մը ըրած էս պաշտոնիդ մեջ:

— Զրպարտություն է:

— Կըսեն թե ճշմարտություն է:

— Թող ըսեն թե ի՞նչ գողցած էմ. Յեղբայր, ամեն ոք խղճիս աս հարցումը կընեն. «բան մը գողցած», և խիղճս ալ սա պա-

տասխանը կուտա. «Տեր վողորմյա, դուն անանկ մամրդ ես, դուն գողութուն ընելու համար ստեղծված չես. դուն բան մ'ալ գող-
ցած չես»:

— Թերևս խիղճդ կամչնա և յերեսը չբռնեիր ճշմարտան քեզ
ըսելու:

— Չե, իմ խիղճս ամչնալ չունի, ճշմարտութունն համար-
ձակ կը խոստովանի:

— Ստո՛ւյգ ե ըսածդ:

— Այո՛, վորու վոր կուղես հարցուր, թե 'այս ինչ մարդուն
խիղճը ճշմարտախոս ե. ամենքն ալ պիտի պատասխանեն, թե
պատվավոր և ճշմարտախոս խիղճ մ'ի:

— Յեթե այդպես ե՛ խղճեդ գաղտնի ըրած ես այդ գողու-
թյունը:

— Ժը մանժ, թյու մանժ, իլ մանժ, նու մանժոն, վու մանժե,
իլ մանժ...

— Այդ ի՞նչ ե, Կարապետ աղա, քառասունեն յետքը նոր
բանքը կը հանես:

— Ի՛նչ ընեմ, Հակոբ աղա, Հայաստանի մեջ բարենորոգում-
ներ պիտի ըլլան չեղեր. Թերևս մենք ալ պաշտոն մը ձեռք ան-
ցունենք...

— Ի՞նչ կը սերտես:

— «Ուտեմ» բային ֆրանսերենը կը 'չարդամ...

— Ֆրանսերենի յէրբ սկսար:

— Ժամ մը առաջ:

— Մեկին ի մեկ այդ բայն ի՞նչպես յեկար հասար:

— Առաջին դասս ե այս, Հակոբ աղա. ի՞նչ ընեմ, Թուրքիո
մեջ պաշտոն վարողներն ամենեն առաջ այս բայը կը սորվին:

6 Ոգոստոս

Կարնո յերիտասարդութունն դիտավորութուն ունի Կարնո
մեջ մամուլ մը հաստատուել և լրագիր հրատարակելը

Կը գովենք Կարնո աշխույժ և վառվռուն յերիտասարդության
դիտավորութունն, վորուն իրանալուն համար հաջողութուն
կը մաղթենք մեր բոլոր սրտեն, վոր շատ լայն չե դժբախտաբար

կը փախաքինք, վոր այս յերիտասարդութունն իրեն հետեողներ
ունենա, բաց չենք կարծեր, վոր իրեն ընթերցողներ գտնե, վասնզի
մեր մեջ լրագիր կարդալն դեռ իբրև ապաշխարանք կը նկատվի,
իբրև մեծ պատիժ կը նկատվի, այնպես վոր յեթե մեկուն առա-
ջարկես, վոր կամ շաբաթ մը բանտարկվի և կամ լրագրի մը տարե-
կան բաժանորդ գրվի՝ առաջինը կընդունի և յերկրորդը կը մերժե.
Ուստի յերիտասարդութունն ընկերութուններ կազմելով աշխա-
տելու չե, վոր ընթերցասիրութունն հաճի մեր ազգին մեջ ալ
մտնելու... և յեթե մտած ե քիչ մը՝ դուրս չեկնելու...

— Տղան, դուն քննութուն չտվի՞ր:

— Տվի, հայրիկ:

— Պարզաբաշխության ուրը դասատուդ գիրք մը նվեր չը-

րանվ քեզի:

— Վոչ, հայրիկ:

— Ինչո՞ւ:

— Վասն զի կադանդին ուրը դասատուլիս լես ալ բան մը չտվի,
հայրիկ:

7 Ոգոստոս

Ապետին փաշան յերբ Սեւանիկ եր՝ առժամյա վոստիկանու-
թյուն մը կազմած եր:

Այժմ Սեւանիկին լուր կուտան, վոր այդ առժամյա վոստի-
կանութենեն քառասուն հոգի իրենց պաշտոնը թողլով՝ մշտնջե-
նավոր ավագակներու հետ միացած են:

Իրավունք չունի՞ք հավատալու, վոր մայրաքաղաքիս վոս-
տիկաններն շատերը գողերու հետ կը գործեն:

Կեցցե բարենորոգում...

Մայրաքաղաքիս թուրք մամուլն Ալպանիացիներն կը խրատե,
վոր Գարադաղին ընդդիմութուն չընեն և իրենց ույժն Հունաս-
տանի դեմ պահեն:

Որ պիտի դա, ուր տաճիկ լրագիրներն պիտի հորդորեն Ալ-
պանիացիներն, վոր Հունաստանին ընդդիմութուն չընեն և իրենց

բազումներու զորութիւնն կառավարութեան խոսքը մտիկ ընելու համար գործածեն:

Այս ե թուրք մամուլն սովորական ընթացքը. նախ գրգռել և ապա հանդարտեցնել...

8 Ոգոստոս

Հարստահարութիւններու վրա խոսող հեռագիրներ ամեն ուր կուգան պատրիարքարան կանոնավոր կերպով — արդեն այդ հեռագիրներն զատ ամեն ուր կանոնավոր կերպով պատրիարքարան չեկող չկա. պաշտոնյաներին վոմանք կեսորին կուգան և վոմանք բնավ չեն գար: Այդ հեռագիրներն մին աջնչափ չերկար եր, վոր անոր փոխադրութեանը համար տասն վոսկի ոսմանյան վճարված էր հեռագրատան:

Հեռագրական տեսչութիւնը շատ գոհ է այն հարստահարութիւններն, վորք տեղի կունենան Հայաստանի մեջ, վասն զի անոնց շնորհիվ հեռագրական սնդուկին մեջ բավական վոսկի կը մտնէ:

Յեվ կարճամիտ մարդերը կուղեն, վոր կառավարութիւնն յուր յեկամուտները պակեցունեն այն պահուն՝ ուր զանոնք ավելցնելու անհրաժեշտ պետք կա:

Թող ավելցունեն, բայց ինչո՞ւ պլուսնելի մեջ չնշանակեր հարստահարութիւններէ դոյացած հասույթը:

9 Ոգոստոս

Մեր բարեխնամ կառավարութիւնն ամեն ուր կաղաչե վեց տերութիւններն, վոր Բերլինի զեսպանախորհրդո մեջ վորոշված հելլենական սահմանագիծը քիչ մը բարեփոխեն:

— Կաղաչեմ, պարոն Կոչին, կըսե վեհափառ սուլթանը, սա սահմանագիծը քիչ մը փոխեցեք:

— Անկարելի յե, վեհափառ տեր:

— Սահմանագիծ մը փոխել այսչափ դժվար գործ է, յես ուրը չերկու նախարար կը փոխեմ:

— Դուք կարող եք, վեհափառ տեր:

— Փոխե, փոխե սա սահմանագիծն. յես ալ կերակուրեն յետքը նախարարութիւնը կը փոխեմ:

— Ձեմ կարող, վեհափառ տեր:

— Դանի մը պատվանշան կուտամ քեզի:

— Կարելի չե վեհափառ տեր: Դուք զխանք, վոր թագուհիւն կառավարութիւնն վերջան կը սիրե ձեր չերկիրը, և վերջան կաշխատի անոր բարվոյն համար, ուստի շնորհ ըրեք անոր խորհուրդները մտիկ ընելու: Վեհափառ տեր, Յունիան ավելք Հունաստանի, Տուլլինիոնի Գարադաղի թողեք, թող ավելք Նովի Պազարն Ալստրիան գրավե. այն տտեն դանձը մեր տեսչութեան տակը կանենք, բայց ձայն հանելու չե՝ չերք արեւելյան Բուսնիլին Պուլլարիո հետ միանա: Յերը վոր գործերն այսպէս կարգադրվին՝ Ներքին Գործոց նախարարութիւնը մենք կը վարենք. Արտաքին Գործոց նախարարութիւնն ալ Ռուսիո կը հանձնենք, և կը տեսնեք, թե չերկիրն Վրչափ կը բարենորոգվի: Ձեր վեհափառութեան սիրտն ալ հանգիստ կը լինի և փորձանքներէ խախտու համար Դարդանելը¹⁴⁹ մեզի կուտաք, Սե ծովու նեղուցն¹⁵⁰ ալ վարպետութեամբ մը Ռուսիո գլուխը կը փաթտեք և հանգիստ սրտով, մաքուր խղճով ձեր վեհափառութիւնը ժամանակ կանցունելուր կախարդներովը: Այդ չերկու նեղուցներն ձեր գլխուն փորձանք են, ջանացեք ուրեմն այդ փորձանքները հեռացնելու: Մյուս տերութիւններն, վորք իրենց բաժինը պիտի ունենան այս փորձանքներուն մեջ՝ բնավ զխտողութիւն չեն ըներ, և դուք ալ մտատանջութեն կազատիք: Ինչո՞ւ կը վախնաք, վեհափառ տեր, տերութիւններն վիճ ապաքեն ձեր ամբողջութիւնն ապահոված են Բերլինի դաշնագրով:

Ասոնք են գրեթե տերութիւններուն առաջարկութիւններն, զորս չեթե չընդունենք՝ կըսեն, մեր վրա մեծ պատասխանատվութիւն պիտի հրավիրենք չեղեր, իսկ չեթե ընդունենք՝ ոսմանյան կառավարութեան համար նոր դարազուլի մը պիտի բացվի չեղեր: Գեղեցիկ առաջարկութիւններ, գեղեցիկազոյն խրատներ, մարմինը քառասուն կտորի բաժանել և անոր չերեսունութը կտորն առնելով՝ ոսմանյան կառավարութիւնն 240-ի վերածել և անոր ըսել:

Ա՛լ անհոգ չեղիր, քու ամբողջութիւնդ յերաշխաւորված է. Յեվրոպայն մի դատվիր, վոր փրկութիւն գտնես:

Ո՛վ ամբողջութիւն...

Ո՛վ փրկութիւն...

Ավստրիական գեսպանն աչսոր Ս. Պատրիարք հոր ալցելու-
թյուն ընելով՝ յերկարորեն տեսակցեցավ Նորին Սրբազնության
հետ հայկական խնդրույն վրա: Խոսքերն արդիոք լեբբ գործի
պիտի փոխվին, աստված իմ:

Ալպանիացիներն կը պատրաստվին դեմ դնելու նավային ցույ-
ցին, վոր տեղի պիտի չունենա, չերեկվան հասած հեռագրի մը
նալցելով:

11 Ոգոստոս

- Կնիկ, սա ողերգ տուր,
- Ի՞նչ պիտի ընես:
- Ինչ՞եւ կը հարցնես:
- Ինչ՞եւ չհարցնեմ:
- Պիտի ծախեմ և զքեզ հետս առնելով Հայաստան պիտի

չերթամ:

- Յես սրկե հունա չեմ չերթար:

— Հապա ամեն որ գլխուս միսը կուտելիր, վոր Հայաս-
տան չերթանք:

— Բայց չեյի ըսեր, վոր ողերս ծախենք ու տնայեա յեր-
թանք:

- Ըսել ե թե ողերգ Հայաստանեն ավելի կը սիրես:

— Այդ ի՞նչ խոսք ե, Հայաստանը կընամ ականջներես կա-
խել...

Ըստ իս՝ ասանկ կիներու ականջները կտրելու չե...

Վախրք կը ծանուցանե աչսոր, վոր ոսմանյան կառավարու-
թյունն չպիտի մասնակցի նավային ցույցին:

Վախրք չհաճիր հայտնելու թե վորո՞ւ դեմ պիտի ըլլա նա-
վային ցույցն, վորուն մասնակցիլ չուզեր յեղեր ոսմանյան կա-
ռավարութիւնը:

Ոսմանյան կառավարութիւնն չերկար տարիներ ի վեր հաց
Վը նվիրեր աղգային հիվանդանոցին. այժմ աչգ նվերը դադրած
ըլլալով՝ հիվանդանոցի հոգաբարձութիւնը, կըսեն աղգային լրա-
գիրներն, մեծ նեղութիւն կը կրե:

Յես կը կարծեմ, թե հիվանդանոցին հիվանդներն հոգաբար-
ձութենեն ավելի նեղութիւն կրելու չեն աչս պարագային մեջ:

Կառավարութիւնն չոր նվերը կարող ե գաղբեցունել, ինչ-
պես վոր կարող ե լրագիր մը գաղբեցունել, անոր ըսելիք չունինք.
բայց կառավարութիւնն գոն շնորհք ըներ և Հայաստանի մեջ
Բյուրդերն հափշտակված հացին փոխարենը տար աղգային հի-
վանդանոցին:

Յեթե կառավարութիւնն աչս շնորհքը զլանա՝ հոգաբարձու-
թիւնը պիտի պարտավորի Թաննըրի նոր գտած չեղանակով,
այսինքն քառասուն որ ջուր տալով ապրեցուցանել կամ մեռու-
նել հիվանդանոցին հիվանդները:

13 Ոգոստոս

Ճարոնի կառավարութիւնն արգելած ե բազմակնութիւնը:

Կոստանդնուպոլսո մեջ ալ պիտի արգելվի այդ աքաղաղային
որենքը, յեթե առևտուրներն այսպես շարունակին:

Քրիստոնյաներու մեջ արդեն կին մ'ունենալն անգամ ար-
գելված ե, և շատ չերիտասրդներ տնտեսագիտական պատճառ-
ներու համար ամուրի կը ցնան:

Անոթի զորքեր և ռազմամթերք կը ղրկվին Հունաստանի
սահմաններն ինչպէս նաեւ Կրետե:

Հունաստան ալ մեծ պատրաստութիւններ կը տեսնե, բայց
չուր թագավորը դեռ հետ չը դառնար ճամբորդութեն:

14 Ոգոստոս

Պ. Նորայր հարուստ աղգայինի մը թերթ մը կը ղրկե չուր
Ֆրանսերեն հայերեն բառարանն, զոր մաս առ մաս կը հրատա-
րակե:

— Սա թո՛ղ է, կը սլուռ հարուստ աղագլինը, այս բառաբան-
թո՛ղ ընեմ չես. ժամանակ է հիմա ատանկ չնչին բաներու հա-
մար ստակ տալ, չեմ ուզեր, հետ դարձուցեք և ըսեք իրեն, վոր
մեյ մ'ալ ասանկ բաներ չզրկե ինձի: Ահա, պարոն գրագիր, քեզի
ալ հատկապես կը պատվիրեմ, վոր չեթե իմ բացակայութեանս ինձի
համար գիրք կամ լրագիր բերելու ըլլան՝ չընդունիք, ապա թե
վոչ կը վնասեմ զքեզ:

Ժամ մը կանցնի, ուրիշ մը կը մահն՝ վորսի շուն բերելով հետը:

— Ինձի՞ համար բերեք այդ շունը:

— Այո, տեր:

— Ի՞նչպէս եւ այդ շունն, աղբիկ ե:

— Շատ աղբիկ ցեղեն ե, աղն սկսկան տոմեն ե:

— Ի՞նչ կուզեք ատոր համար:

— Զորս վոսկի:

— Յերեք վոսկի տամ: Պարոն գրագիր, սա շունն առ և
տուն տար:

Յեւ մեր գրագետները դեռ չեն ուզեր համոզվիլ, վոր մեր
հարուստներն ամեն բանի ստակ կուտան բացի լրագիրներէ և գիր-
քերէ: Բացառութիւններ կան, բայց այնչափ հազվագիշտ են,
վոր արվեստահանգեսի մը զրկելու համար պահած եմ զանոնք:

15 Ոգոստոս

Բ. Դուռն նոր պայմանաժամ կը մուրա Տուլչինիոն Գարատաղի
հանձնելու համար:

— Քանի մը որ պայմանաժամ:

— Աստված վորորմի:

— Ստակ մը չունիմ, քիչ մը պայմանաժամ վորորմեցեք:

— Բարի լեկար:

— Տեր աստված գձեզ փորձութիւններէ ազատ պահե. անոթի
չեմ, կտոր մը պայմանաժամ:

Մանրուկ չկա:

Տերութիւններն չեն տար Թուրքիո ալ պայմանաժամն.
Իրավունք ունին, վասն զի Բ. Դուռն ալ չուզեր տալ Տուլչինիոն
Գարատաղին:

Կայսերական պալատին մեջ ամեն որ ժողովներ կը դռմար-
վին խորհելու համար այն հնարքներուն վրա, վորովք կարելի
լինի վոչ Տուլչինիոն Գարատաղի տալ, վոչ Յանիան Հունաստանի,
վոչ ալ բարենորոգում Հայաստանի:

Զարմանալու չե, Թուրք կառավարութիւնն միշտ առնելու
վարժված ըլլալով՝ միշտ կը դժկամակի չերը իրմն բան մը խնդրի:

16 Ոգոստոս

Կառավարութիւնը հրամայեց, վոր մայրաքաղաքիս արու-
բնակիչներուն մարդահամարը պատրաստվի:

Մեծ դժվարութիւն... մարդեր կան վոր կերպարանքով արու-
յեն թեպետե, սակայն եդեն բնավ տարբերութիւն չունին. ասոնք
արուներու հետ պիտի հաշվին:

Դարձյալ մարդեր կան, վոր հաղիւ 1/8 մարդ կարծեն. չեթե
ասոնց յորաքանչյուրն մեկ մարդ պիտի համրվի՝ սխալ վի-
ճակագրութիւն մը կունենանք: Ուղիղ վիճակագրութիւն մը շի-
նելու համար կառաջարկեմ:

1/4 մարդ հաշվել բոլոր Թուրք խմբագիրները.

1 մարդ հաշվել հարյուր Թուրք պաշտոնյան.

1 մարդ հաշվել հարյուր քսանհինգ Թուրք սպան.

1 մարդ հաշվել վաթսուն Թուրք կուսակալ:

Այս հաշվով միայն կարելի չե ուղիղ վիճակագրութիւն մը
յերևան բերել:

17 Ոգոստոս

Պ. Թրոթըր, ¹⁵¹⁾ վոր Հայաստանն մայրաքաղաքս վերա-
դարձած ե, հայտնած ե թե Հայաստանի մեջ մարդահամար ընելն
անկարելի ըլլալով՝ ինքը տունները համրելով գլուխ հանած ե
այդ դժվարին գործը: Պ. Թրոթըր յուրաքանչյուր հայու տունին
տասը հոգի և յուրաքանչյուր քչուրդի տունին հինգ հոգի հաշ-
վելով ունեցած ե այնպիսի թիւ մը՝ վորով հայերը մեծամասնու-
թիւն կը կազմեն: Այդ թիւին կը հաստատե նաեւ այն վիճակագրա-
կան տեղեկութիւնները, վորք անցյալները պատրիարքարանե
հաղորդվեցան տերութիւններուն:

— Կնիկ, Պոլսո մարդահամարը պիտի պատրաստեն յեղեր:
 — Ի՞նչ ընեմ:
 — Քեզի ալ պիտի գրեն հարկով:
 — Ինչո՞ւ:
 — Դուն ալ մարդ չե՞ս:
 — Ինչո՞ւ ուրեմն կըսեն թե «յեվ յեղիցիմ յեքկոյան ի մար-
 տիկ մի»:
 — Վիճակագրության համար չե ան, նոնողիկս:

18 Ոգոստոս

Հրդեհներուն առաջին առնելու պաշտոնով մասնաժողով մը
 պիտի կազմվի:
 Հանձնաժողով մ'ալ պիտի հաստատվի հրդեհները մարելու
 համար:
 Մենք հիմա ուրիշ գործ չունինք. ամեն ոք մասնաժողով,
 հանձնաժողով, մասնախումբ, հանձնախումբ կազմելեն դատ գործ
 տեսած չունինք:

Հունաստանի թագավորն չվերադարձալ տակավին յուր լեր-
 41րը:
 Յեվրոպական քանի մը լրագիրներ կը ծանուցանեն, թե Պ. Կը-
 լատսթոն խորհուրդ տված և Գեվորգ թագավորին, վոր ժամ
 առաջ Աթենք վերադառնա:
 Գեվորգ թագավորը Ռուսիա ուղեւորեցալ:
 Յեթե Կլատսթոնի խորհուրդները միշտ այսպես կը դործադրե-
 42լին Հունաստանի կողմէ՝ շատ հավանական և, վոր քիչ ատենեն
 շփոթութիւն մը ծագի իրարու մեջ:

19 Ոգոստոս

Ավստրիական կառավարութիւնն հայտարարեց, վոր չեթե
 Ռսմանյան կառավարութիւնն Հունաստանի հետ պատերազմիլ
 43ակնի՝ ինքն ալ պիտի բարեհաճի նովի — Պազարը գրավելու:
 — Ինչո՞ւ:

— Յուր սահմանները պահպանելու համար, Հարկով Անգղիան
 44ալ պիտի ուղե ուրիշ կողմ մը գրավիլ՝ Հնդկաստանի ճամբան
 ապահովելու համար:

20 Ոգոստոս

Անգղիո ղեսպանն այսոր Գանտիլլի ¹⁵²) գնաց և Ս. Պատ-
 45րիարք հոր հետ բանակեցալ հայկական խնդրո վրա:

Ամենայն ինչ կատարյալ ե...

Նավային ցուցը տեղի պիտի ունենա:

Անգղիական, գաղղիական և իտալական զրահավորները Փա-
 46լերմո ¹⁵³) նավահանգիստին մեջ համախմբված են. ուսական
 զրահավորները Ռակուզա լեն ¹⁵⁴) և գերմանական զրահավոր մ'ալ
 Մալթային ճամբա չեւած ե:

Անգղիական, գաղղիական, իտալական, ուսական և գերմա-
 47նական զրահավորներ...

Կեցցե՛ հինգլեզվան նավատորմիդը:

Ադրթենք, վոր այս նավատորմիդին մեջ լեզուները չխառնը-
 48վին ¹⁵⁵), վորպես զի կարողանան աշտարակին կիսատ մնացած
 շինութիւնն ավարտել:

Յես ալ թովմաս առաքյալի ¹⁵⁶) պես թեպետ և Անգղիո կա-
 49ռավարութեան կողը մատս չեմ խոթած, այսու ամենայնիւ հիմա
 կը հավատամ, վոր տերութիւններն Ալպանական Միութիւն կամ
 50քերորդութիւն մտիլ ընելու ժամանակ չունին և վորոշած են
 անպատճառ կարգադրել Հունաստանի, Գարատաղի և Հայաստանի
 խնդիրները:

Տեր աստված. անսասան պահ տերութիւններուն համաձայնու-
 51թիւնը, համաձայնութիւն՝ վորուն նմանը քերականութիւննե-
 րու մեջ իսկ խիստ քիչ կը գտնվի:

21 Ոգոստոս

Կայսերական դորքերն այսոր մեծ ուրախութեան մեջ են.
 52Հունիսի ամսականն այսոր վճարվեցալ իրենց:
 Թուրք լրագիրներն գոհությամբ կը հրատարակեն այս լուրն
 և չեն կարմրիր:

Թերևս ասոնք կը կարծեն, թե ուրիշ տերութիւններն իրենց զորքերուն ամսականներն չորս ամիս չհաքը կը վճարեն:

Դիսպաններն նոր ծրագիր մը մատուցին Բ. Դրան՝ Հայաստանի խնդրուն նկատմամբ:

Լրագիր մը կը ծանուցանէ թե Իրլանտիո մեկ քաղաքին մեջ մայր աստվածածին հրաշքով յերեցած ե յերկու հարյուր տղաներու:

Անցյալներն հոս ալ այնպիսի բան մը յերեցաւ, վնչ տղաներու, այլ Մեծն Բրիտանիո դեսպան Պ. Կոշենի. սակայն քանի մը չարամիտ անձեր ըսին, թե պալատեն փախած կին մ'եր այն, վոր թագուհւոյն կառավարութեան Պոլսո դեսպանին ծունկներուն փարելով ազատութիւն խնդրած ե:

23 Ոգոստոս

Տպագրական տեսչութիւնը թող կուտա թուրք լրագիրներուն, վոր ամեն թշնամանք և զրպարտութիւն ընեն հայ և հուլն պատրիարքներուն, իսկ բնավ թույլ չտար, վոր քրիստոնյա մասուն թուրք մամուլն պատասխան քաղաքավար լեզվով:

Ոսմանի անուն լրագիրն Հիսուսի դեմ ալ հարձակվեցաւ, և տպագրական տեսչութիւնն լուծիւն պահեց:

Իսկ յերբ Նեոլոդոս հուլն լրագիրն Թեքնեմանը Հափիաքի դեմ հուլն պատրիարքարանն պաշտպանել սկսաւ՝ յերկու ամսվան համար դադարեցաւ տպագրական տեսչութեան կողմէն:

Ահա մամուլ փերաբերութեամբ հալասարութիւնն, զոր կը վաչելենք Թուրքիո մեջ:

23 Ոգոստոս

Սամսոնն կը գրեն, թե կին մը ամսույս տասնհինգին դավալ մը բերած ե, վորուն կեսը մարդ և կեսը ձուկ ե յեղեր:

— Կես կտրելով տապակելու և ուտելու եյին: —

Այս հրեշը ծնանելենք քանի մը ժամ յետքը մեռած ե:

Այս հրեշին ծնանելուն վրա չեմ դարմանար, բայց այնչափ վաղ մեռնելուն վրա կը խորհիմ:

Ինչո՞ւ:

Անոր համար, թե Խնչպես կապրի ուրեմն մեր ազգային յերեսփոխանական ժողովն, վորուն մեկ քառորդը մարդ և յերեք քառորդը թութակ ե:

Լոնտրայեն առնված հեռագրի մը նայելով Սըր Չարլզ Տիլք¹⁵⁷) հարցման մը պատասխանելով ըսած ե.

«Անգղիական կառավարութիւնն լուր առած ե, վոր Քրդական Միութիւն մը կազմելու զրույց կա, բայց ինքն անոր նպատակը չգիտեր, վոչ իսկ տեղակ ե, թե այդ գաղափարը Բ. Դոննն կը քաջալերվի: Իսկ չեթե Միութեան նպատակն քրիստոնյաներու դեմ թշնամական լինի՝ պ. Կոշեն պետք չեղած դիտողութիւններն պիտի ընէ Բ. Դրան»:

Կը խնդրենք պ. Կոշենն, վոր այդ Միութեան նպատակն քրիստոնյաներու դեմ թշնամական չեղած, պետք չեղած դիտողութիւններն ընէ Բ. Դրան:

24 Ոգոստոս

Պայրամին առթիւ տրվելիք ամսականները վճարելու համար կառավարութիւնն ոսմանյան պանքային հիսունհինգ հազար վոսկլո փոխառութիւն մը ըրաւ, Կիպրոսի չեկամուտներն և քանի մը գավառներուն տասանորդներն չերաշխավորութիւն տալով:

Յեթե վաճառական մը չուր գրագիրներուն և գործակատարներուն ամսականները վճարելու համար չուր կալվածներն չերաշխավորութիւն ցուց տար՝ անմիջապես չուր վարկը կը կորսուներ և անանկացալներու քով կերթար կը նստեր:

25 Ոգոստոս

Յերկու ամսվան համար դադարված Նեոլոդոս լրագրույն ի նպատակ մայրաքաղաքիս հուլներն յերկու ամուր մեջ հազար վոսկլի հանգանակեցին. այս հանգանակութիւնն ավելի պիտի գիրնա՝ յերբ ուրիշ քաղաքներու հուլներն ալ զրկեն իրենց նվերները:

Յեթե մեր Թուրքիոյ խմբագիրները գիտնան, Վոր իրենց համար աշխարհի հանգանակութիւն մը պիտի ընեն՝ շարաթը անգամ մը կը գոցվին, և կամ մէջ մ'ալ ընալ չհրատարակելու համար կը խափանվին:

Այս քաջալերութիւնը չկա մեր ազգին մէջ, Վոր խմբագիրներն ալ քիչ մը տարբեր յեղանակով խմբագրեն իրենց թերթերը:

26 Ոգոստոս

Դարձյալ նախարարական փոփոխութեան զրուցներ կը գրվին լրագիրներու մէջ:

Մինչև Վոր մեր գլուխները չփոխվին՝ նախարարական փոփոխութիւնները չպիտի վերջանան:

Յեւ Վորովհետեւ անկարելի չե մեզ մեր գլուխները փոխել՝ պիտի ստիպվինք որ մը մեր գլխարկները փոխել¹⁵⁸): Այս ե հիմակվան ընթացքը, գլուխը չփոխողին՝ գլխարկը կը փոխեն, չեթե չես հավատար՝ Պուլլարիա գնա և տես:

27 Ոգոստոս

Մայրաքաղաքիս մէջ արծաթ մեմիսիէյին կեղծը կը շինեն յեղեր քանի մը ընկերներ:

Այս խեղճերը ձերբակալեցան այս որերս, մինչդեռ պատվանշան տրվելու յեր իրենց, վասն զի արծաթ մեմիսիէյե չմնաց հրապարակի վրա. հասարակութիւնը ինչ զրամ գործածե:

28 Ոգոստոս

Հեռագիրն այսոր բերալ մեզ համառոտութիւն ճառին, զոր Անգղիոյ Թագուհին խոսած ե խորհրդարանական նիստերուն շըրջանին փակման առթիւ:

Այս ճառին մէջ Թագուհին հիշելով, թե Հայաստանի հատուկ բարենորոգումներուն համար տեղութիւններն իրենց զիտավորութիւններն հաղորդած են Բ. Դրան, կը հուսա Վոր առաջադրված նպատակին պիտի հասնին:

Ամեն անգամ Վոր մեր ազգային լրագիրներն այս իմաստով հողվածներ կը հրատարակեն՝ Մանգումե¹⁵⁹) լրագիրը կը պոռա. «այդ լրագիրները ստախոս են, ժողովուրդը խաբելով ստակ շահելու համար կը հրատարակեն աղբալիսի հողվածներ»:

Ժամ ե արդ հարցունել Մանգումեյի, թե Անգղիոյ Թագուհին ալ հայերը սին հոլսերով քնացնելու և անկե ստակ քաշելու համար ըրած ե այդ հայտարարութիւնն յուր ճառին մէջ:

Պետք ե խոստովանիլ թե հայկական խնդրուցն չեվրոպական լրագիրներուն և մանավանդ Անգղիոյ խորհրդարանին մէջ մուտքն արդյունք ե այն անխոնջ ջանքերու, զորս ի գործ դրած են Պատրիարքը, հայ գրագետներն և Լոնդրայի ազգայինները: Թող Մանգումե աղբալես հավատա, թե հայկական խնդրն ինքն իրմե ծագեցալ, ինքնիրմե մտալ չեվրոպական լրագիրներու և Անգղիոյ խորհրդարանին մէջ: Իսկ չեթե իրմե զատ ուրիշ հավատացող մը գտնե՝ թող բարեհաճի զայն ցուց տալ մեզ:

29 Ոգոստոս

Չեմ հիշեր, Հայաստանի վնր կողմը քայմաքամ մը չուր պաշտոնատեղին գնացած Ժամանակը ավազակներե կողոպտվեր ե:

Ավազակներն իրենց պաշտոնակիցը մերկացնելով ըսած են անոր:

Մեզի դեմ միշտ գանգատներ կը գրվին Կ. Պոլիս, իսկ քեզի համար շնորհակալութեան նամակներ. մինչդեռ դու և մենք միևնույն արհեստը կը գործածենք տարբեր յեղանակներով:

Քայմաքամը խոսք տալով, Վոր անոնց ալ քայմաքամութիւն մը տրվելուն համար պիտի աշխատի՝ ոճիքը կազատե:

30 Ոգոստոս

Ալպանիացիները վորոշած են դիմադրութիւն ընել նապալին ցուլցին, Վոր այսոր կամ վաղը տեղի պիտի ունենա:

31 Ոգոստոս

Նապալին ցուլցը չգործադրվեցալ այսոր:

Առաջիկա. առաջին նախարար անվանվեցավ նախորդ առաջին նախարար Սալիտ փաշան, վոր նշանավոր ե հակակրությամբը, զոր ունի մեր ազգին դեմ:

Կեսոր. ժամե ժամ նոր փոփոխություններու կսպասենք: Սալիտ փաշան դեռ պաշտոնանկ չեղավ:

Յերեկո. Սալիտ փաշան դեռ կը վարե յուր պաշտոնը:

Կը զրուցվի, թե անցյալ ամսու մեջ պ. Կոշնի յերեցած աստ-վածածինը Ֆերանե հագած և յերեսն ալ յաշմախով ծածկած ե չեղեր:

1 Սեպտեմբեր

Մասիսի խմբագիրը քանի մը ժամանակե ի վեր ինքզինքը բոլորովին քահանայության տված ե. ամեն անգամ, վոր ձեռքս կառնեմ աչս թերթը՝ մեջը ուրիշ բան չեմ գտներ, բայց միայն նշանտուք, կամ հարսնիք, կամ ննջեցյալ, և շատ անգամ ալ լի-րեքը մեկեն:

Հարուստ մը նշանվելու պես՝ Մասիս յուր բերանը կը բանա և կսկսի աշպես խոսել:

«Բերկրությամբ սրտի իմացանք, վոր վսեմափայլ աշս ինչին ազգասեր, բարեսիրտ, գթասիրտ և ազնվական վորդին—Մասիսի գոյականներն իսկ կը շողքորթե անոնց, չուրաքանչյուրին չերեմն չորս անգամ տալով—Մեծապատիվ աշս ինչին նազելաշուք աղջը-կանը նշանված ե և հարսանյաց հանդեսն ալ մոտերս պիտի կա-տարվի: Ավելորդ ե ըսել, թե աշս միությունն վորչափ բերկրու-թյուն պիտի պատճառե վողջամիտ ազգայիններու, վասն զի աշս միութենեն պիտի ծնանին այնպիսի զավակներ, վոր Մասիսի բա-ժանորդ պիտի գրվին, մեծամեծ ծառայություններ պիտի մա-տուցանեն ազգին. այնպիսի զավակներ՝ վորոնց փայլուն ապա-գան աշտը իսկ կարող ենք շնորհավորել»:

Իսկ չերբ հարուստ մը վախճանի՝ Մասիսի խմբագիր Տեր Իսթիւճյան քահանան ննջեցյալին տղուն հարցնել կուտա ուրիշի մը բերնով՝ թե պիտի շարունակե՞ Մասիսի բաժանորդագրու-

թյունն. յեթե բացասական պատասխան տրվի՝ Մասիս լուռ կը մնա. իսկ յեթե հաստատական՝ շուրջառը կը հագնի և կսկսի ալոռալ:

«Յովոք սրտի կը ծանուցանենք, վոր մեծապատիվ աշս ինչը չերեկ գիշեր յուր մահկանացուն կնքեց ծաղիկ հասակին մեջ.— հարյուր քսան տարեկան—ի խոր սուգ ընկղմելով յուր ազգական-ներն, դրացիները բարեկամները—հապա յուր պարտատերերը.— յեթե միթիթարվելու բան մը ունին՝ աշս ալ սա չե, վոր հանգույ-լան կը թողու բարեկիրթ զավակ մը, վոր—խոսք տված ե Մասիսի բաժանորդագրությունը շարունակել—ամենուն համակրությունն առ ինքն գրաված ունի և այլն»:

Յերբ միշտ աշպիսի լուրերու կը հանդիպիմ Մասիսի մեջ՝ ին-քըն իրենս կըսեմ.

«Յեթե հարուստ մը համուսնանա կամ չվախճանի՝ Մասիսի յիմտացույցը շատ խեղճության մեջ պիտի իննա»:

Սուչն գիտողությունն ընելես յետքը կը հարցունեմ յես ին-ձի, թե Մասիսի խմբագիրն ինչո՞ւ կնուսնենրն ալ չհրատարակեր և կամ վերջապես ինչո՞ւ քահանա չձեռնադրվիր...

2 Սեպտեմբեր

Թրքական մամուլն կրակ ու բոց կը ժաշթե մեր ազգին մո-լուքին վոր չ'ընկիր: Թերեմամբ հափաք կեղծ նամակ մը կը հրա-տարակե աշտը Դանիել Պաղդասարոֆ ստորագրությամբ: Աշս Դա-նիելն՝ վոր նուչնիսկ Թերեմամբ հափաքին խմբագիր Միսհադն ե, կըսե, թե յեթե թուրք կառավարությունն Հայաստանի ինքնու-րիշությունն չտա՝ Յեվրոպա պիտի տա զայն. և յեթե Յեվրոպան ալ չտա՝ քանի մը տարիյն Ռուսիո նավեր պիտի չերկան Սե-ժովու մեջ: Հայտնի չե, վոր Միսհադ շինծու նամակներով քյուր-դերը գրգռել կուզե հայերու դեմ. սակայն քյուրդերը պիտի գրգռվին... Արդյոք ասոնք գո՞հ են թրքական կառավարութենեն, վորուն պաշտոնյաները մեկմեկ ավազակ լինելով՝ շատ անգամ կը հափշտակեն՝ ինչ վոր քյուրդերը պիտի հափշտակեյին...

Փոքրիկ կատակերգություն մը.

Գիտեք արդե՞հ, վոր աղջիկ-տեսի սովորությունն բոլորովին վերցված է մայրաքաղաքի մեջ: Յերիտասարդներին շատերն յերբ կին մը առնել ուզեն՝ աչնպես կը վարվին, ինչպես կը վարվի մի ցեղ՝ յերբ կով մը կամ ձի մը առնել ուզիմ. աղջիկն իրենց ազգականներուն աչնրով կը տեսնեն և, չեթե հավնին, սակարկութեան կսկսին, իսկ չեթե չհավնին՝ ուրիշ աղջիկ մը տեսնելու կերթան: Ժամանակով սովորություն կա չեղեր աղջիկներն բաղանիքի մեջ ալ քննել տալ, համոզվելու համար թե մարմինը թերութեաններ չունի: Ա՛հ, վորչապի մարմնապաշտ են մարդերն ամուսնութեան մեջ. ո՞վ մարդեր, դուք մարդ չպիտի ըլլաք: Հոգի մըն բաղանիքն ալ քաղաքանն է. բայց վո՛չ վոք քաղաքան կերթալու անհիշք աղջկան հոգի մըն թերութեանները տեսնելու համար... միայն աչն երկներն, վոր տգեղ կիներն ունին՝ քաղաքան ղրկել կուզեն իրենց կիները... Մարդերն ավելի նշութապաշտ են քան հոգեպաշտ: Ի դուր կը պոռան աստվածաբանները, թե հոգին մեծ է քան զմարմին. աչ, կըսեն, հոգին մեծ է քան զմարմին, բայց մարմին գեղեցիկ է քան զհոգի, և ամուսնութեան մեջ, կըսեն, մեղի ավելի գեղեցկություն պետք է, քան թե մեծութուն: Ո՛վ հիմարութեան...

Ներեցեք, նշութեան քիչ մը շեղեցա:

Տիկին Թ... ին լուր կտրվի, թե սեպտեմբեր չեքքին յուր աղջիկը տեսնելու համար քանի մը տիկիներն աղջիկ տեսի պիտի գան:

Տիկին Թ... իրար կանցնի և անմիջապես աղջիկը կը կանչե: Աղջիկը վազելով կուգա:

— Քեզ տեսնեմ, աղջիկս, կըսե տիկին Թ... աղվորիկ մը հագվե, սգվե:

— Ի՞նչ կա, մայրիկ:

— Քանի մը հշուրեր պիտի գան աչոք. անոնց առջեւ շատ մի խնդար, վոր քաշել տված ակոսներուդ տեղերը չերեան:

— Մայրիկ, դուն ալ միշտ ակոսներս չերեսս կը դարնես. չորս ակոս քաշելով ի՞նչ կըլլա չեղեր:

— Ձե, վորդի, քուկին բարվուշդ համար կը խոսիմ կոր. թե երուդ մեջ մեկմեկ կտոր բամբակ թխմե, վոր գեր չերեսս:

— Իմին կազմս ի՞նչ ունի վոր... տձե՞ եմ...

Դուռը կը զարնեն:

— Յեկան, չեկան, կը պոռա մայրն և դուռը բանալու կը վազե, աղջիկն ալ հագվելու:

— Ա՛ս է տունը, կը հարցունեն հշուրերը դրան առջե:

— Աս է, աս, կը պատասխանե տիկին Թ... ներս հրամանեցք:

— Սխալմամբ ուրիշ տուն մը չմտնեցք:

— Ձե, չե, հոս պիտի գաք:

Հշուրերն, վորք չերեք տիկիներե կը բաղկանալին՝ ներս կը մտնեն:

Պետք է գիտնալ, վոր այս հշուրերն Ընկերութեան մը անդամներ են, վորք տունե տուն պտըտելով տիկիներե դրամական նվեր կը հավաքելին իզական սեռին դաստիարակութեան համար:

— Բարի չեկաք, մաղամկեք, կըսե տիկին Թ...

Բարի տեսնեք, կը պատասխանեն չերեք հշուրերն, վորոնց միմե քիչ մը կը սրդողի մաղամ բալին վրա, կերեի վոր դրամազել եր:

— Ի՞նչպիս էք, աղբիկ եք:

— Փառք աստուծո. ձեզի տեսնեք ավելի աղեկ չեղանք:

— Վողջ չեղեք, ատիկա ձեր ազնվութեանն է:

— Ի՞նչպիս ժամանակ կանցունեք գիշերները:

— Շիտակը, կանուխ կը պառկինք. մեծավորս պտըտիլ չսիրեր, հիմա կիման դրոսանքներն ալ շատ չախորժիր:

— Աղեկ կընեք:

Աղջիկն վոր աճապարանք հագված եր՝ սենյակեն ներս կը մտնե և հշուրերու ձեռները կը թոթվե:

— Աղջիկս, ձեռք չապաղես:

— Տեր վողորմյա, աչդ սովորութեանը չկա հիմա, կը պատասխանեն հշուրերը:

— Ինչո՞ւ չկա, թող տվեք վոր պազեն, կաղաչեմ:

— Թող չենք տալ:

— Իրավ վոր կը սրդողիմ, հաչին ալ իմանա նե՛ կը բարկանա ինձի, կաղաչեմ թող տվեք, վոր ամենուդ ալ ձեռները դատապարտեմ. մեղա, բերանը չմաշիր ս...

— Շատ լավ:

— Մենք մեր մեծերեն ինչ վոր տեսեր ենք նե՝ անանկ կը-
նենք: Զեռքես լեկաթին չափ աշխատեցա, վոր աղջիկս կըթեմ,
Փրանսերեն ալ սորվեցուցի: (աղջկանը դառնալով) աղջիկս, քիչ
մը Փրանսերեն խոսքեր չընես մաղամենեուն հետ:

Հյուրերեն մին մաղամ բառին վրա կես կանգուն վեր կը ցատ-
կե նստած տեղեն:

— Բավական ձեռագործ ալ սորվեցուցի, կը շարունակե տիկին
Թ... պարել ալ գիտե, չեթի կուզեք պարեցեք հետը քիչ մը:

— Թող ֆիա ալսոր, կը պատասխանե հյուրերեն մին և զրպա-
նեն անդորրագիր մը կը քաշե, մատիտ մ'ալ հանելով ծոցեն:

— Յեթե ուզեք՝ քիչ մը Փրանսերեն խոսի...

— Շնորհակալ ենք, խերը տեսնեք, մենք ալ անոր ուսում-
նականությանը վստահելով հոս լեկանք, և շատ ուրախ ենք, վոր
մեր հուսացածեն ավելի կըթված և պարկեշտ տեսանք զինքը:

Տիկին Թ... կուրախանա ալս հայտարարության վրա, վոր
իրեն համար կը նշանակեր, թե խոս-կապը հետևյալ որը պիտի
ղրկվի:

— Քանի՞ դահեկան գրենք, կը հարցնե հյուրերեն մին, մա-
տիտն և անդորրագիրն ձեռքին մեջ բռնելով:

— Քանի՞ դահեկան...

— Այո, ձեր կարողությանը համեմատ բան մը ըսեք:

— Ատոր խոսքը հորը հետ պիտի ըլլի:

— Հայրը հըր գտնենք, դուք գիտեք հարկավ թե ինչ կընաք
տալ. ասիկա անանկ բան մ'ե, վոր ամսե ամիս պիտի առնվի:

— Ամսե ամիս ինչո՞ւ առնվի. ասանկ գործի մը ելնողը հար-
կավ առաջուց պատրաստած և լուր տալիք ստակը: Բայց յես ալ
ձեզի բան մը հարցունեմ:

— Հարցուցեք:

— Այս ստակն վորու վոր պիտի տանք նե՝ ան ալ գոնե զրա-
մագլուխ մը ունի:

— Ի՞նչ կըսեք, տիկին, հազար վոսկիի մոտ դրամագլուխ ունի
այսոր:

— Հազար վոսկի:

— Այո:

— Ի՞մ լսածս հազիվ հարյուր վոսկի ունի չեղեր:

— Սխալ և տիկին:

— Քանի՞ տարեկան բան ե աս, վոր հազար վոսկի ունենա:

— Հազիվ չերկու տարվան կա, տիկին:

— Զիս կը ծաղրե՞ք կոր, մաղամեն:

— Ծաղրելու ի՞նչ կա, տիկին:

— Վնաս չունի. բայց ինձի ըսին, թե քառասունի մոտ ե
չեղեր, և մորուքին մեջ ձերմակ ալ ինկեր ե:

— Ի՞նչ... մորուք... մեր ընկերությունը մորուք ալ ունի
չեղեր...

— Զեր ընկերությունը...

— Ապա դուք վորո՞ւ համար կը խոսիլք:

— Մեր փեսացույին համար չեյլ՞ք խոսեր:

— Ներեցեք, տիկին, սխալմամբ հոս յեկած ենք... Պ. Ի...յա-
նի տունն հըր ե:

— Մեր քովի տունն ե:

— Թողություն կընեք, մենք ընկերության մը համար դրամ
հավաքելու լեւած ենք այսոր:

— Դուք ալ ներեցեք, յես ալ աղջիկ-տեսի համար հյուրե-
րու կսպասեյի այսոր:

Հյուրերը կը բաժնվին տիկին Թ... և, վոր պատուհանին
առջև կանցնի կը նստի լուր բուն հյուրերը սպասելու:

4 Սեպտեմբեր

Յեթե Հայաստանի մեջ բարենորոգում լինի՝ նմանը չտեսնը-
ված արյունահեղութուն մը տեղի պիտի ունենա չեղեր հոն:
Քյուրդերը վախ չունենալով վնչ Ռուսիայեն և վնչ Յեվրոպայեն՝
հավու պես պիտի մորթեն և պիտի ուտեն չեղեր հաչերը:

Այսպես կը խոսի առձեռակա մամուլն, վորպեսզի Յեվրոպան
փոխե լուր ընթացքը, զոր վորոշած ե բռնիլ արևելյան առկախ խըն-
դիրներուն լուծմանը համար...

6 Սեպտեմբեր

Նոր զազարունի մը ¹⁶⁰):

Հայ կին մը, վոր ժամանակի մ'ի վեր հիվանդ եր՝ առջի որը
թաղվելու տարված ժամանակ դադաղին մեջ կը նստի և խմելու
ջուր կուզե:

Մասիս այս դեպքը հիշելով կըսե.

«Տասնեկններորդ դարուս մեջ կը վաչլե՞, վոր կենդանի մը մեռյալ կարծւի»:

Յես ալ կըսեմ:

«Ինչո՞ւ ուրեմն տասնեկններորդ դարուս մեջ կենդանի կարծւի Մասիսն, վոր մեռյալ է»:

7 Սեպտեմբեր

Մաքսատան պաշտոնյաները մեծ խնամքով կը քննեն մայրաքաղաքս մտած գիրքերն, վորպեսզի կառավարութեան քաղաքականութեան դպչող կետեր չպարունակեն անոնք:

Այսպէս, Վիեննայէն կամ Վենետիկէն ղրկված քերականներն ալ մեկ ծայրեն մյուս ծայրը կը կարգացվին, վոր Տուլչինիոյի կամ Հունաստանի կամ Հայաստանի վրա բան մը գրված չըլլա անոնց մեջ:

Այսուհետեւ բառարաններն ալ խիստ քննութեան պիտի լինութարկվին:

8 Սեպտեմբեր

Հաշկական խնդիրն յուր կարգին կսպասե, վոր լուծվի: Նախ Գարատաղի խնդիրն պիտի լուծվի, յետքը Հունաստանի խնդիրն և վերջը Հայաստանինը:

Պատիւութեան առակ մը կարդացած եմ՝ չգիտեմ ո՞ւր: Այս առակն կը պատմե, թե վարժապետին մեկը տղու մը ձեռքը քերական մը տալով՝ կը հրամայե անոր, վոր այլ ըսե: Տղան այլ չըսեր: Վարժապետը չեղևու շարաթ շարունակ կաշխատի աշակերտին այլ մը ըսել տալու և չհաջողիր: Յերբ պատճառը կը հարցվի տղուն՝ սա պատասխանը կը տրվի, թե չեթե այլ ըսեմ՝ յետեան բեկն, գիմն, դան և մինչև յեվ ո Ֆ ըսել պիտի տաք ինձի, ուստի անոր համար այլը չեմ ըսեր, վոր մյուս գիրքերն ալ ըսելու չստիպվիմ:

Մեր կառավարութեան ալ չուզեր Գարատաղի խնդիրը լուծել, վորպեսզի, մյուսներն ալ լուծելու չստիպվին:

Թեպետե վերոհիշյալ առակն քաղվելիք խրատը չեմ հիշեր, բայց լավ կը հիշեմ, վոր վարժապետը հաստատամտութեամբ մինչև յեվ ո Ֆ ըսել տված է տղուն:

Յեւ կատարեմքը, վոր այդ վարժապետն ավելի հաստատամիտ է, վոր թե միայն մինչև յեվ ո Ֆ-ն, այլ ընթերցարան լիակալի կարդացնե թուրք կառավարութեան, թուրք կառավարութեան շահուն համար:

9 Սեպտեմբեր

Վաչ անոնց, վոր կը հանդգնին Հայաստան բառն արտասանել...

Դատական նախարարութեան կողմէն ծանուցագիր մը ղրկվեցավ Պատրիարքարան, խստիվ պատվիրելով Ս. Պատրիարքին, վոր այսուհետեւ չգործածե Հայաստան բառը:

Բացի այս պատվերին՝ ծանուցագիրն կարգիլէ Ս. Պատրիարքին՝ Բ. Դրան քաֆր գրել այն խնդիրներու համար, վորք կրոնականին հետ բնավ վերաբերութեան չունին: Կրոնական խնդիրներու համար Ս. Պատրիարքը պիտի վայելէ քաֆր գրելու շնորհը, իսկ յերբ մեր ինչքն, կյանքն ու պատիվը բռնաբարվին՝ Ս. Պատրիարքը լուութեան պահելու չէ լեղիր:

Դատական նախարարութեան ծանուցագիր մ'ալ քուլդերուն ղրկելու չէ, ծանուցանելով իրենց՝ վոր այսուհետեւ մեր ընչից, կենաց և պատվուն խնայեն և մեր կրոնքը միայն բռնաբարեն...

10 Սեպտեմբեր

Քարաքաշյանի¹⁶¹) աշխարհագրութեանը հրատարակվեցավ այս որերս:

Պ. Քարաքաշյան Մուշ և Վան քաղաքները Քյուրդստանի մեջ դնել բարեհաճած է այս անգամ, մինչքեւ 1866-ի աշխարհագրութեանը մեջ՝ Հայաստանի մեջ շինած եր այդ քաղաքները:

Ի՞նչ նպատակով արդոք այդ քաղաքները Հայաստանին Քյուրդստան փոխադրված են... վոր աշխարհագրութեան քաղած է յուր տեղեկութեաններն Պ. Քարաքաշյան... — Լորդ Բիկոնսֆիլդի աշխարհագրութեանն անշուշտ...

Վարչական կազմակերպության ծրագիրն քվեարկութ յամբ ընդունվեցավ չերեմիոխանական ժողովն, և Պատրիարքին հանձնելվեցավ ի գործադրութ յուն:

Մինչև հիմա վարչական գրութ յան վրա կը բեռցունելինք այն բոլոր սխալները, զորս կը գործելինք վարչութ յան մեջ. տեսնենք այսուհետև ի՞նչ պատասխանատու պիտի ըլլա մեր սխալ քայլերուն... արդյոք մեկ չերկու տարիչն չեաքը, այս նոր գրութ յունն ալ չպիտի բամբասենք:

12 Սեպտեմբեր

Ազգային նոր հանդես մ'ալ ավելցավ:

Պ. Գ. Մսերյանի աշխատասիրութ յամբ Մեսեորա¹⁶²) անվամբ իզմիրի մեջ ի լույս ընծայվեցավ այս հանդեսն:

Նույն բարեմաղթութ յունը կընենք այս հանդեսին՝ ինչ բարեմաղթութ յուն վոր կըլլան բարեկամներու՝ նոր տարվո առթիվ:

Մեսեորա, չերջանիկ որեր, հաջողութ յուն, առատ բաժանորդներ և հարատևութ յուն կը մաղթեմ քեզի:

Պ. Մսերյան, քեզի ալ լայն սիրտ և ընդարձակ քսակ կը մաղթեմ, վոր կարնաս փաստ կուրծք տալ և շարունակել ինչ վոր սկսած ես:

13 Սեպտեմբեր

Բ. Դուռն վորոշած և Տուլչինիոն հանձնել՝ յեթե Հունաստանի և Հայաստանի խնդիրներուն համար նավային ցույց չլինի:

Յես կաղթեմ, վոր Տուլչինիոն չհանձնվի, վորպես զի Հայաստանի համար ալ նավային ցույց մը լինի:

14 Սեպտեմբեր

Բարձր Հայոց անգղիական հյուպատոս Պ. Թրոթլը խիստ բարի վկայութ յուններ կուտա Հայաստանի հայերուն համար:

Պ. Թրոթլըրի վկայութ յանը նայելով՝ Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներուն մեջ հայերը վարժարաններուն մեծ հոգ կը տանին:

սակալն գյուղերու մեջ պետք յեղածին չափ վարժարաններ չկան դեռ: Անգղիական հյուպատոսն համոզված և, վոր Հայաստանի մեջ ապագան հայերունն և, վորք միշտ ոգնութ յուններ կընդունին կեդրոնեն—մալրաքաղաքես—մինչդեռ քյուրդերն վոչինչ ունին գովեստից արժանի: Ժամ և, վոր Միացյալ ընկերութ յուններն և արհեստասիրաց ընկերութ յունն բազմապատկեն իրենց ջանքերն, Հայաստանի մեջ լույս տարածելու:

15 Սեպտեմբեր

Ս. Պատրիարքը պատասխանեց դատական նախարարութ յան կողմն առինքն զրկված ծանուցագրուն:

Ներսես Պատրիարքն կըսե, թե ինքը չե ստեղծած հայաստան բառն, վոր կը գտնվի նույնիսկ թուրք կառավարութ յան շինել տված աշխարհացույցներուն մեջ:

Ամենապատիվ Պատրիարքն կը հայտնե հետո, թե ինքը բնավ հաճույք չգգար հարստահարութ յուններու համար քաֆիր գրելով, թե կառավարութ յունը պարտավոր և բառնալ այդ հարստահարութ յուններն, վորպեսզի հարկ չմար քաֆիր գրելու:

Յեթե թուրք կառավարութ յունն՝ Հայաստանն և Թաֆիրը բառնալու տեղ հարստահարութ յուններն բառնալու ջանար՝ ավելի մեծ ծառայութ յուններ մատուցած կը լիներ յուր չերկրին: Սակայն մեր հավատքն այն և, վոր հարստահարութ յունները չեն վերնար, մինչև վոր չվերնան... քյուրդերը...

16 սեպտեմբեր

Արհեստասիրաց Ընկերութ յունն Մշո Ս. Առաքելոց վանուց մեջ չերկրագործական վարժարան մը պիտի բանա մոտերս:

Քիչ բացառութ յամբ վանքերն մինչև այսոր մեյմեկ ծուլարաններ են, ուր արժանապատիվ միաբանները կուտեն, կը խմեն և կը պառկին. վորպես թե ավետարանն ըսած լիներ իրենց. գնացեք այսուհետև կերեք, խմեցեք և պառկեցեք:

Ուրախ ենք, վոր Արհեստասիրաց Ընկերութ յունն՝ այս վանքերն մին առնելով՝ բարենպատակ գործի մը պիտի հատկացնե զայն: Ո՛ւր եր թե վանորելից խորհուրդն մյուս վանքերն ալ

միաբաններուն ձեռքեն առնելու և աշխարհականներուն վարձու տար, վորպէս զի այդ վանքերին ալ քիչ մը ոգուտ քաղեր ազգը:

Միաբաններուն գալով՝ անոնց համար անկեղանոց մը շինելու չե տեղ մը, վոր յերթան մեջը պառկին և բնավ չեկնեն: Հերիք է, այսչափ տարիներէ ի վեր ազգին ծառայեցին, քիչ մ'ալ հանգիստ ընեն...

17 Սեպտեմբեր

«Հեղինակիմ մյուս գործերը»:

Գիտե՞ք վորոնք են հեղինակին մյուս գործերը:

Համբերեցե՞ք, վոր ըսեմ:

Քանի մը ատենն ի վեր սովորութիւնն դարձած է մայրաքաղաքիս մեջ, վոր տասնեւից յերեսներէ բաղկացալ տետրակ մը հրատարակողն՝ տետրակին անունը տետրակին թէ ճակատին վրա կը գրէ և թէ չետէի կողմը. վորով մեկ աշխատասիրութիւն մը չերկու աշխատասիրութիւն յեղած կըլլա: Կարգացողը կուզէ գիտնալ, թէ հեղինակին մյուս գործերն վորոնք են, և շուտ մը կը համոզվի թէ հեղինակին մյուս գործն այն հրատարակութիւնն է, զոր կը կարգա:

Վոմանք ալ հեղինակիմ մյուս գործերն ըսելով՝ հրատարակվելիք գիրքերու անուններ կը շարեն: Ասիկա պարզապէս ինքզինքը հալը անվանել է այն զավակներուն, զորս ապագային մեջ ունենալ կը կարծէ կամ կը փափաքի վոք:

Ալ ասկից կարող եք գուշակել, թէ վոքչափ փառամոլ գրիչներ ունինք:

Դիւրք հրատարակելն տեսակ մը մոլութիւնն դարձած է Կ. Պոլսո մեջ: Մին յուր բարեկամին նամակ մը կը գրէ և հետեւալ որը դայն առանձին տետրակով մը կը հրատարակէ: Ուրիշ մը տան մը մեջ նշուծի մը վրա քիչ մը շատախոսութիւն ըրած է, հետեւալ որը մասնավոր տետրակով մը ի լույս կընծայէ յուր խոսքերը, ծանուցանելով միանգամայն, թէ բարեկամներն աղաչած են զինքն, վոր տպէ ու հրատարակէ յուր շատախոսութիւնը: Յետեւ այս մոլութիւնն այսպէս շարունակվի՝ քիչ ատենն Պոլսո հայ յերիտասարդներն տետրակներով պիտի խոսին իրարու հետ,

վորով թէ առատ հեղինակներ ունեցած պիտի ըլլանք և թէ տպարանի պետերը ստակ պիտի վաստակին:

19 Սեպտեմբեր

Անգղիո ազգ. յերեսփոխանական ժողովույն անգամ պ. Ճեյմս Պրայս¹⁶³) այսոր մեր ազգային ժողովույն ներկա գտնվեցաւ: Ատյանն վերնալէն յետք յերեսփոխաններն Ղալաթիո յեկեղեցի-վույն թանգարանին մեջ ընդունելութիւն ըրին հիշյալ աղատա-կան յերեսփոխանին, վոր հայտնեց, թէ աղատականներն ամեն ճիշդ պիտի թափեն Հայաստանի խնդրույն լուծմանը համար. թէ հայերը մեծ բաներ պահանջելու չեն և շատանալու չեն Լիբանանու կամ Արևելյան Րումելիի վարչութիւն նման վարչութիւն մը, վոր իրենց պիտի տրվի:

Աղատական յերեսփոխանի մը աչսպիսի հուսադրիչ խոսքի-քեն յերեսփոխանները ուրախութեամբ լցվելով՝ մեկնեցան:

Յեւ սակայն Բ. Դուռն մինչև այսոր ալ չըսավ...

20 Սեպտեմբեր

Տերութիւն շահերուն փաստակար լուրեր տվող լրագիրներն պիտի խափանվին:

Այս է տպագրական տեսչութիւնն նոր պատվերը:

Տպագրական տեսչութիւնն այս պատվերը տերութիւն շահե-րուն փաստակար չէ...

21 Սեպտեմբեր

Ամեն որ նոր ծանուցագիրներ կը փոխանակվին Բ. Դրան և դեսպաններու միջև:

Բ. Դրան գրածները դեսպաններն չեն ընդունվիր, վոչ ալ դեսպաններուն գրածները Բ. Դռնեն:

Դեսպանները գործերն ավելի փութով հառաջ տանելու հա-մար լավ կընեն, յետ Բ. Դրան մեջ հաստատեն իրենց բնակու-թիւններն և արտաքին գործոց պաշտոնեյին հետ առատորեն ծանուցագիրներ փոխանակեն:

Կարծենք մինչև այսօր Գարատաղի խնդրույն համար հազար ծրագիր առաջարկվեցավ և մերժվեցավ. արդյոք Հայաստանի խնդրույն համար քանի՞ հազար ծրագիր պիտի խմբագրվի:

22 Սեպտեմբեր

Դուռը կը խոստանա Հայաստանի մեջ բարենորոգումները գործադրել, միայն թե չեղեք ամիս պայմանաժամ կը խնդրեք: Յեթե չեղեք ամսվան մեջ այդ բարենորոգումները չգործադրվին՝ Բ. Դուռն իրավունք կուտա տերություններուն, վոր դարձյալ... ազդարարություններ ընեն իրեն:

Ի՞նչ գեղեցիկ առաջարկութուն:

Յեթե ազդարարություններն դարձյալ ոգուտ չընեն՝ տերություններն դարձյալ իրավունք կունենան ազդարարություն ընելու:

Ազդարարություն՝ ընեն վորչափ վոր ուզեն, իսկ ճնշում չենք ընդունիր:

23 Սեպտեմբեր

Բ. Դուռը ծրագիր մ'ալ առաջարկած է Հայաստանի բարենորոգումներուն նկատմամբ:

Սույն ծրագրույն համեմատ՝ հասուցիին հարյուրին տասը տեղական պիտույքներու համար պիտի գործածվի և հարյուրին իննսունը Պոլիս պիտի ղրկվի:

Այս եր ապակեդրոնացման վրա հիմնված բարեկարգությունը... Դեպքաններն մերժած են Բ. Դրան այս ծրագիրն ալ, և Բ. Դուռն չեղևորդ մը խմբագրելու վրա յե: Ընդհանրապես, կը կարծվի, թե մինչև 1881 ծրագիրներով պիտի ղրգալի Բ. Դուռը:

24 Սեպտեմբեր

Գերմանիայեն պաշտոնյա մ'ալ պիտի գա, արտաքին գործոց նախարարության խորհրդականի պաշտոն վարելու համար:

Յեկմտականի համար Գերմանիայեն չեկած մյուս պաշտոնյան առաւոտե մինչև չեղեկո՞ Պանք Ոթոմանի մեջ բնութեան:

Կտրոնները կը համրե, և կըսվի թե հաղիվ չերկու տարվան մեջ կարող է ավարտել այս պաշտոնը... Անշուշտ մյուս գալիք պաշտոնյային ալ ծրագիրներ համրել պիտի տա Բ. Դուռը...

Փոխանակ այսպես պաշտոնյաներ բերելու Գերմանիայեն, ավելի լավ չլինի՞ր, վոր մեր բոլոր գործերը Բիսմարք¹⁶⁴ իշխանին հանձնենք...

28 Սեպտեմբեր

Սովետոց Մասնաժողովո անդամներն մեծ անձնանվիրությամբ և զոհողությամբ կաշխատին Հայաստանի սովյալներուն վիճակն՝ ձմեռվան լեղ անակին մեջ ալ ապահովելու համար:

Մեծ շնորհակալության և գովեստից արժանի չեն հիշյալ Մասնաժողովո բոլոր անդամներն, վորոնց մին թեպետև միշտ զբաղար կը գրե Մասնաժողովո հայտարարությունները:

Այս սովին գրաբար լեղուն բավական ոգուտ քաղեց. չեթե շատ մը մարդեր սովին մեռան՝ մեռյալ մ'ալ սովին հարություն առավ գոնե, լրագիրներու մեջ քանի մը որվան համար:

29 Սեպտեմբեր

Բ. Դուռն վերջապես վորոշեց Տուլչինիոն Գարատաղի հանձնել և այս խնդիրն լմցնել:

Բայց տեսնենք, վորոշումը պիտի գործադրե՞. խնդրույն ամենեն կարևոր կետն աս է:

30 Սեպտեմբեր

- Հայրիկ, քերականությունն ուղիղ խոսիլ չ'աորվեցներ:
- Այո, տղաս:
- Ինչո՞ւ ուրեմն լրագիրներին վոմանք ուղիղ չեն խոսիր...

- Հայրիկ, ի՞նչ է ամուսնությունը:
- Տղաս, սիրո մեջ բարդ լառ մ'է, վոր չերկու բառն կը բարդվի:
- Հապա սիրական ի՞նչ ըսել է...
- Դերանուն մ'է, տղաս, վոր ամուսնուն տեղ կը դրվի անհավատարիմ ամուսնության մեջ:

Թող տվեք ինձ, պարոններ, վոր աչս ամսու հիշատակարանիս առաջին որը կրնեի ունի ջիւերուն նվիրեմ:

Ամեն որ կը կարդաք լրագիրներու մեջ արդունային հոգւածներ, մաղձալին գրութիւններ. աչսոր ալ իմ ջղային քանի մը տողերս կարգաւ հաճեցեք:

Քանի մը ժամանակի ի վեր մայրաքաղաքիս մեջ ջղային հիւանդութիւն մը չերեան չեկած ե, և քիչ կնիկ կա, վոր աչգ ախտին չենթակա չլինի:

Դեռ անցյալ շաբաթ եր, վոր փողոցի մը անցած ատենս ստիպեցա մեկին ի մեկ կանգ առնել՝ տունե մը հետեւալ խոսքերը լսելով.

— Շնորհ ըրեք, ջուր բերեք:

— Կարապետ, դուն բժշկին վազե:

— Քացալսը բերեք:

— Լիմոնը բերնին մեջը սխմեցեք:

— Թորոս, զեղագործին վազե:

— Մարկոս, ինչո՞ւ կանչեք ես, քահանային գնա:

Վախենալով, վոր զիս հոն անսնելով ժամկոչին վազցնիլ կուտան՝ քիչ մը հեռացա և փողոցին ծալքը սպասեցի սա գործին վախճանը տեսնելու համար:

Քանի մը վարկյանն, չերկար գլխարկով բժիկ մը հիշալ տունը մտաւ: Ձայները դադրեցան: Յերեք վարկյան ևս անցաւ, և ահա տան սպասավորն տունեն յեւալ՝ ձեռքն ունենալով թուղթ մը, վոր հավանականաբար բժշկին տված զեղագիրն եր: Դեղագործութեան քիչ մը ծանոթութիւն ունենալով՝ սպասավորին մոտեցա և աղաչեցի, վոր զեղագիրն տեսնեմ: Այս ճամբով, ըսի ինքնիւրենս, հիւանդին ախտը կը հասկնամ և հետաքրքրութիւնս կը փարատեմ: Սպասավորն հաճեցաւ և թող տվաւ, վոր կարդամ զեղագիրն մեջ... ահա կարդացածս.

«Ճերմակ գլխարկ մը,

Աջ կողմը սև փետուրներով դարդարված,

Ձախ կողմը պղտիկ թռչուն մը,

Առջևի կողմը ծաղիկ մը,

Յետևի կողմը խնձոր մը:

(Ստորագրութիւն) բժ. Գ. Ք.

Կյանքիս մեջ բնավ աշպիտի դեղագիր մը կարդացած չլալով՝ հետաքրքրութիւնս փարատելու տեղ ալեւցաւ: Հետաքրքրութիւնս իրավունք ունի ալեւնալու, վասնզի գլխարկ մը, մանավանդ աչգ տեսակ գլխարկ մը, վոր պարտեղե մը բնավ տարբերութիւն չունի, վնչ դեղահատի պես կը կլլվի, վոչ վերեն կը խմվի և վոչ վարեն, ուստի սպասեցի բժշկին, վոր դուրս յեւնելուն պես՝ մոտեցա իրեն և ներուժն խնդրելով քաղաքավարութեամբ հարցուցի.

— Արդո՞ք կրնամ հարցունել, թե ո՞վ եր հիւանդը:

— Քսանա՞յ տիկին մը:

— Վտանգաւթը ե հիւանդութիւնը:

— Վոչ... չնչին բան մը... ջղային տկարութիւն մը... արդունային գործութիւն մը... սանկ...

— Դեղ մը տվի՞ք:

— Այո... Բայց ներեցեք, ալելի յերկար չեմ կարող խոսիլ, վասնզի հիւանդներ ունիմ նալելու, ըսաւ և մեկնեցաւ բժիշկը:

Նույն իրիկունը քործը կատուեմ և կիմանամ, վոր աչգ հիւանդ կրնն որ մը առաջ յուր ամուսինն գլխարկ կուզե և չերը կը տեսնե, վոր ուզածը չե առնված՝ կորոշե, վոր ջղային հիւանդութիւն ունենա:

Քանի մը որ առաջ, ուրիշ կին մ'ալ մաղ ֆնաց, վոր պիտի մեռնի, յիթե բժիշկը ժամանակին չգար: Այս հիւանդուհին ալ պարահանդես մը հրավիրված եր, բայց պարահանդեսի շրջադեհատ չունենալով՝ յուր երիկն ուզած եր զայն: Երիկը ժամանակ չունի, (այսինքն դրամ չունի, վասնզի անգործ ըլլալով՝ շատ ժամանակ ունի) յուր կնկան խնդրեք կատարելու: Կինն ամոթ կը համարեր սովորական շրջադեհատով պարահանդես չերթալն և իրավունք ալ ունի, վասնզի շատ անքաղաքավար ե, խաւարալ ե այն կրնն, վոր պարահանդես կերթա և յուր թեւերն ու կուրծքը ցուցց շտար արգո հասարակութեան: Յիթե կրնի չերեսփոխանակա ժողով մունենային՝ սովորական հագուստով պարահանդես գացող կրնի ունի պարսավանաց քվե կուտային: Եթե նախարարութիւն մ'ունենային՝ նախարարութենե վար կառնային այդ կուրծքը և թեւերը ծածկված կրնի, անվստահութեան քվե տալով անոնց և իբրեւ վնասակար քաղաքականութեան հետևող ամբաստանելով զանոնք:

— Արդ, այս կինն կորոշե, վոր ջղային հիվանդութիւն ունենա. յուր վորոշումը կը գործադրե, բժիշկը կուգա և դեղագրէին մեջ պարահանդեսի շրջադրեցող մը գրելով կը մեկնի:

Ահա, բարեկամներ, կիներու ջղային հիվանդութիւնը, զոր բուժելու համար կամ կոշիկ, կամ գլխարկ, կամ շրջադրեցող և կամ վերջապես հագուստ մը պետք ե: Կրնայի բյուրավոր դեպքեր պատմել այս հիվանդութեան վերաբերյալ, բայց գլխու ցավ չպատճառելու համար այս չափով կը շատանամ:

Յե՛րբ պիտի հրաժարիք այս պճնասիրութենէ, ո՞վ կիներ: Աստված, կըսե Ս. Գիրքը, կինը մարդու կողմէն հանեց, այո՛, բայց նորաձեւութիւնն ալ զայն մարդուն գլուխը դրավ:

2 Հոկտեմբեր

Միայն կիները չեն, վոր միշտ նոր ձեւով հագվիլ կուզեն. հրապարակի վրա ալ կը գտնվին քննադատներ, վոր նոր ձեւով խոսիլ կուզեն:

Կը ներկայացնեն ձեզ պ. Գրասեր Ատոմն¹⁶⁵), վոր Մասիսի մէջ նոր կամ հին հրատարակութիւններ քննադատելու պաշտոն կը վարե: Ճշակը կիրթ ե, և քննադատի մը հարկ յեղած դրամագլուխն ունի, բայց շատ անգամ դիրք մը քննադատած միջոցին կսկսի յուր ցավերը մեղի պատմել: Յերբեմն ալ ինքը խոսած ատեն՝ Լիթբեն¹⁶⁶) ալ խոսքի մեջ կը նետվի: Սա խոսքը չլինցուցած՝ Վիքտոր Հյուգո, Վոլթեռ¹⁶⁷), Լամարթին¹⁶⁸) և ուրիշ հարցուրավոր հեղինակներ կուգան, խոսքին մեջ կը խառնվին, այսպես վոր ընթերցողն կստիպվի ըսել:

— Կամ ամենքդ ալ լռեցեք, կամ մեկիկ մեկիկ խոսեցեք, վոր հասկնանք:

Գանի - քանի անգամներ ըսած եմ պ. Գրասեր Ատոմին. «Պ. Ատոմ, թող տուր սա մարդերուն ոճիքն և դու խոսելիքդ ըսե»:

Որինակի համար, չես կըսեմ.

«Արշալույսին արթնացա, հագուստներս հագա և քիչ մը հաց կերա»:

Տուր այս տողը պ. Ատոմին և հետեյալ որը քեզի պիտի ըսե.

«Արթնցա արշալույսին, զոր Վարդափառն¹⁶⁹) կանվանեն զասականք, և հագա հագուստներս, վորք տձեւութիւն ծածկելու միայն ծառայելու չեն, կըսե Ժան-Ժաք Ռուսո¹⁷⁰), և կերա քիչ մը հաց, թեպետև Ավետարանը կըսե, թե «Վոչ միայն հացիվ կեցցե մարդ, այլ բանիվ Տյառն»:

Ինչո՞ւ համար մտքին ուղղութիւնը դեմ ապստամբիլ և ընթերցողներդ չարչարել, ո՞ւր Ատոմս, շիտակ ճամբադ գնա, ի՞նչ հարկ կա ամեն քայլափոխիդ մեջ-մեկ հեղինակի դուռն ափ տուելու:

3 Հոկտեմբեր

Լրագրի մը մեջ կարդացի հետեյալ տողերը.

«Յեթե կղերին թերութիւնները գրել հարկ ըլլա՝ հատորներ վը լինին»:

Իրավունք տվի այս մարդուն. չես ալ փորձած եմ, վոր յեթե կղերին առավելութիւններն գրել հարկ ըլլա՝ չերկու տող չեմ կրնար լեցունել:

Մայրաքաղաքիս մեջ գտնվող վարդապետներն, վորք միշտ հայրենիք, հայրենիք կը պուռան՝ հիվանդութիւն կուենան՝ յերբ Հայաստանի մեկ գավառն առաջնորդ ընտրվին:

Կը հրաժարվիմ հականե հանուն զանոնք հոս հիշել:

Ասոնք միշտ հոս մնալ կուզեն. Վոսփորին չերկու չեղբերուն վրա կը փափաքին ծառայել Հայաստանին:

Ափսոս, քիչ հալ կղեր ունինք, վոր Նոսրայփի ունենա...

4 Հոկտեմբեր

Վաճառականի մը պարկերուն մեջն հակ մը Մեակ լրագիր գտնված և մաքսատունն արգելված ե, վորովհետև Ոսմ. կառավարութեան բարենորոգումներուն վրա կծու հողվածներ կը պարունակե չեղեր:

Հոս մտնել ուզող լրագիրները բարենորոգման վրա խոսելու չեն, վասնզի շատ դժվար ե թուրքիայի մեջ բարենորոգում մուծանելը. մաքսատունն անմիջապէս կարգիվի իբրեւ ֆլասակար ապրանք:

Ազգային ընկերություններն, առանց բացառություն, աշխուժիվ և լեռանդամբ կը գործեն:

Միացյալ Ընկերությունն, Արհեստասիրաց Ընկերությունը, Ազգանվեր Հայուհյաց¹⁷¹⁾ և Դպրոցասեր Հայուհյաց¹⁷²⁾ և վերջապես բոլոր ընկերություններն իրարու հետ կը մրցին:

Այս ընկերություններն մեկ քանին նվիրատուներ ևս հանած ըլլալով, բաժանորդագնե գատ նվեր ալ կը հավաքե ժողովըրդէն, վոր յուր լուծան չզլանար ազգոգուտ ձեռնարկություններու:

Յովալի չե սակաջն, վոր ժողովուրդն ընթերցասիրություն մասին այնչափ լեռանդ ցուց չտար... Պ. Նորալը, վոր անհողդողդ հաստատամտություն մը կը շարունակե յուր բառարանին հրատարակությունը, այսչափ նեղություն չեր քաշեր, չեթե նվիրատուներ հաներ կամ չեկեղեցվո մեջ գանձանակ պտըտցուններ ի նպաստ յուր բառարանին:

Կամչանք խոստովանելու, բաց պետք ե ըսել թե, վոր չեթե վենետիկի կամ վիեննայի միաբանությունները¹⁷³⁾ չլինելին՝ ազգն այսօր վոչ թե գաղղիներն—հայերեն, այլ միայն հայերեն մ'իսկ պիտի չունենար...

Կեցցե՛ սահմանադրություն...¹⁷⁴⁾

6 Հոկտեմբեր

Հայկական խնդիրն դեռ կսպասե, վոր Գարատաղի և Հունաստանի խնդիրները լուծվին, վորպեսզի կարգն իրեն գա:

Սուլէն խնդիրները գորդւան հանգուց¹⁷⁵⁾ դարձած ըլլալով՝ կը կարծվի թե դասակը միայն պիտի կրնա զանոնք լուծել:

Վեց տերություններուն զրկած նավատորմիդ մինչև այսօր ոգուտ մը չունեցավ... Տուլլինիոն դեռ Գարատաղի չհանձնվեցավ, թեպետ և թուրք լրագիրներն ամեն ուր կը պոռան, թե քանի մ'որեն Տուլլինիոն կը հանձնվի:

Ո՞վ չգիտեր, թե թուրքերուն մեկ ուր ամիս մ'ե, ամիսը տարի և տարին՝ դար: Յերբ թուրքիան չերեք տարի պայմանաժամ խնդրե բարենորոգման համար՝ չերեք դարու մեջ հաղիվ կրնա բարենորոգման ոգտակար ըլլալուն համոզվիլ:

Բյուրդերուն պարսից հողը մտնելը մտատանջություն կը պատճառե մեր ազգայիններուն, վորք կը վախնան, թե քուրդերն յերբ պարսից սահմաններն հալածվին՝ չարիք չգործեն դարձյալ Հայաստանի ժողովրդյան վրա:

Արդեն լուր կուտան, թե պարսից հողին վրա բավական հայեր ջարդված են քուրդերի:

8 Հոկտեմբեր

Թուրք կառավարությունն Լուսինյան վեցերորդ Լեոն թագավորին¹⁷⁶⁾ լուսանկար պատկերներն ժողվել տվավ հայ գրավաճառներու խանութներին:

Կըսվի թե զանոնք հրացանի պիտի բռնել տա...

Բ. Դուռն յուր խորին քաղաքագիտություն մը համոզված ե, թե այդ պատկերներն են հայկական խնդիրն հուզողները:

9 Հոկտեմբեր

Թուրք լրագիրներն պարծանք կը հրատարակեն, թե Պայրամի առթիվ պաշտոնյաներուն ամսական պիտի տրվի:

Մարդս ինքնիրեն հարցունելու կստիպվի, թե յեթե ասոնք Պայրամ չունենային՝ պաշտոնյաները բնավ ամսական չպիտի առնեին...

Յովալին այն ե, վոր տարին մեկ-չերկու Պայրամ ունին. մյուս ամիսներն ի՞նչ կուտեն պաշտոնյաները:

— Կաշնոք... մանավանդ Հայաստանի մեջ...

10 Հոկտեմբեր

Սովը նորեն սկսավ Հայաստանի մեջ յերելի:

Սովից մասնաժողովը այս մասին ախուր լուրեր հրատարակելով՝ ազգային ոգնությունը կը խնդրե:

Դժբախտաբար մեր շատ մը հարուստ ազգայիններուն սրտին:

մեջ ալ գթության սով կա. և չերբ աչս չերկու սովերը իրարու հանդիպին՝ հետեանքը գուշակելը շատ դժուրին ե:

Այն հարուստներն, վորք կարող են սովալներուն հոգուտ չերկու հազար վոսկի տալ՝ հազիվ տասը կամ քսան վոսկի կուտան: Կերելի թն ասոնք միջին աստիճանի մարդերեն շատ չեն ախորժիր և անոնց վերնալը կը փափաքին աշխարհիս վրայեն, վորպեսզի իրենք միայն մնան և հանգիստ պտըտին: Ուրիշ ինչ կերպով մեկնելու չե այս տեսակ հարուստներուն անհոգութիւնը...

Հանկարծահաս դժբախտութիւններն անմիջական ոգնութիւններու կը կարոտին, և աս ալ հարուստներու գործն և պարտքն ե. ժողովուրդն չկրնար ըսել սովյալներուն. սպասեցեք, մի մեռնեք, մինչև վոր մենք մեր մեջ դրամ հավաքենք և ձեզի դըրկենք:

Այս ճշմարտութեան չեն ուզեր համոզվիլ մեր հարուստներեն վրամանք:

11 Հոկտեմբեր

Այսոր սրբազան Պատրիարքին անվան տոնախմբութիւնն ըլլալով՝ նորին Սրբազնութիւնը բազմաթիվ ացելութիւններ ընդունեց պատրիարքարան: Վարչութեան անդամները, չերսփոխանները, շատ մը քահանաներ, վարդապետներ, չեպիսկոպոսներ փութացին ացելութիւն տալ նորին Սրբազնութեան, վոր թեպետև տկար՝ ամենքն ընդունեց և չերկոյին ուշ ատեն հազիվ կըցաւ Պատրիարքարանն չենել:

12 Հոկտեմբեր

Լրագրի մը մեջ կը կարդամ.

«Որքն չեպիսկոպոսը¹⁷⁷) հանքային ջուրերը գնացեր ե յուր առողջութիւնը դարմանելու համար»:

Առողջութիւնն քննա տեսած ե արդիւք, վոր զայն դարմանելու համար հանքային ջուրերը գնացած ե:

Գիտելինք վոր առողջութիւն ձեռք բերելու համար հանքային ջուրեր կերթան, բայց զայն դարմանելու համար ջուրեր չերթալն առաջին անգամն ե, վոր կը խեմ:

13 Հոկտեմբեր

Արմաշու վանքին վանահայրը հիշյալ վանքին մեջ չերկրագործական վարժարան մը հիմնել կը փափաքի:

Կը շնորհավորենք գերապատիվ վանահոր այս փափաքն և անոր իրացման համար արդեն չերկու մոմ վառեցինք այսոր:

Նորին գերապատիւթիւնը շատ փափաքներ ուներ ժամանակով հիշյալ վանքին վրա, վոր վերջապես կործանման վիճակին հասավ: Կը փափաքինք, վոր այս անգամ ալ չերկրագործական վարժարան բանալու փափաքով ախոռի չվերածե զայն:

14 Հոկտեմբեր

Անտոն վարդապետ Թարգմանչան, վոր հռովմեական չեկեղեցիեն լուսավորչական չեկեղեցին ցատկած եր մեծ. տոքտոր Շիրմանյանի հորդորանքն, և վոր վերջերս նորեն լուսավորչի չեկեղեցիեն հռովմեական չեկեղեցին անցած եր, և վոր հայտնի չե թե քանի մը որքն վոր կրոնքը պիտի ընդունի, նամակ մը հրատարակելով կը հերքե այն լուրը՝ թե գերասանութիւն ընել սկսած ե: Միայն թե Թրանսիլվանիո մեջ գտնվելով՝ այն տեղի սովորութեան համեմատ մորուքն ածիլած ե չեղեր, և մորուքը պատճառ տված ե չեղեր յուր վրա հրատարակված անտեղի գրույցներուն:

Ուրախ ենք, վոր Անտոն վարդապետ յուր մորուքն ածիլած ե. չեթե հոս գտնվեր՝ Պատրիարքարանն պիտի կատարեր այդ մորուքին արարողութիւնը:

15 Հոկտեմբեր

Դեսպանի մը հորաքույրը մեր չեկեղեցի տրարողութեան շատ հաջնած լինելով՝ խնդրած ե, վոր որ մը ներկա գտնվի: Լրագիրներեն վրամանք աչս լուրը հրատարակելով կը ծանուցանեն, թե Ս. Պատրիարքն որ մը Բերայի չեկեղեցիույն մեջ հատկապես պատարագ պիտի մատուցանի:

Մենք հաւատք չենք ընծայեր այս լուրին: Թատերական ներկայացման համար մեկը կարող ե ըսել. «այսինչ խաղը շատ

սիրեցի, անգամ մ'ալ ներկայացուցեք վոր տեսնեմ»։ Բայց չեկեղեցական արարողութեան համար չենք կարծեր, վոր ասանկ առաջարկութեան մը յեղած լինի։

16 Հոկտեմբեր

Ամսյա նոր հանգես մ'ալ հրատարակվիլ սկսաւ Վալիֆ¹⁷⁸ անունով և պ. Մ. Գալենտերյանի տնօրինութեամբ։

Այս հանգեսը հատկապես գեղեցիկ սեռին համար կը հրատարակվի և այդ սեռին վերաբերյալ հաղուստներն ձեռնու առհասարակը սորվեցունեն։

Առաջին թիվը տեսնելու և աչքե անցնելու պատիջն ունեցանք, բայց մենք բան մը չկրցինք հասկնալ. չեթե մինչև ամսու գլուխ բան մը հասկնամք՝ կ'իմացունենք։

17 Հոկտեմբեր

Յերեսփոխանական ժողովը Սրբազան Պատրիարքին ուղերձ մը ուղղեց ի պատասխանի այն ճառին, զոր նորին սրբազնութիւնն յերեսփոխանական ժողովի բացման առթիւ ղրկած էր հիշյալ ժողովին։

Յերեսփ. ժողովն կը հայտնե, թե հայկական խնդրույն համար վստահ ե, թե աստուծո վողորմութեանը, թե կառավարութեան արդարասիրութեանը և թե Ս. Պատրիարքին հայրենասիրութեանը։ Ուղերձը կը վերջանա դարձյալ Ս. Պատրիարքին հանձնելով հայկական խնդրույն շարունակութեանը։

Ուղերձին լեզուն յես այնպես հասկցա, վոր յերեսփ. ժողովն ավելի Ս. Պատրիարքին հայրենասիրութեանը վստահ ե քան թե... քան թե... կառավարութեան արդարասիրութեանը... ըսենք լինաւ։

18 Հոկտեմբեր

Բնավ դասագիրք մ'այնչափ քննադատութեան նյութ չեղած չեր, վորչափ վոր կըլլա Յեղիշե վարդապետ Դուրյանի¹⁷⁹ հրատարակած «Ընթացք ի գրոց բարբառը»։

Յերկու ամիս ե, վոր մեկ կողմեն ամեն որ սխալներ կը դրոնեն այդ դասագրքին մեջ, և մյուս կողմեն արժ. վարդապետը չուր դրքեն սխալ քաղողներուն սխալները կը գտնե, վորչափ ալ հայր Յեղիշե համոզվիլ չուզե և ուզած կերպով մեկնե քերականական կանոնները՝ հայտնի չե թե չուր դասագիրքը ունի սխալներ և թերութիւններ։ Սակայն մենք չուր ընդդիմախոսներուն պես չենք ուզեր չուր դասագրքին պատիւը կոտրել և զայն բոլորովին անոգուտ համարել. չուր դասագիրքն ամեն դպրոցներու մեջ կրնա աշակերտներուն տրվիլ իբրեւ վարժութեան գիրք. և ուսանողները քերականութեան կանոններուն համեմատ անոր մեջ գտնված սխալները կուզեն։ Արդեն քերականութեան շատ հեղինակներ այս դրութեան կը հետեին, դիտմամբ սխալ կը գրեն, վորպեսզի աշակերտներն կանոններուն համաձայն գանոնք ուղղեն։ Հայր Յեղիշեյի դասագիրքը մեծ հարմարութեան ունի այս մասին... Իրար անցնելու ի՞նչ կա։

Աշխատելու յետեւ չեմ Վալիֆին բան մը հասկնալ, բայց կարելի չե. չեթե չուր հանգեսին բառարանն ալ մեկտեղ հրատարակած ըլլար՝ այնչափ դժվարութեան չեյի քաշեր։

19 Հոկտեմբեր

Ս. Յերուսաղեմի վանուց մեկ նոր կանոնագիրը կը հրատարակեն աղգային լրագիրները։

Այս կանոնը Վսեմ. Ստեփան փաշա Ասլանյան¹⁸⁰ խմբագրած էր՝ չերբ հիշյալ վանքին հաշիվները քննելու համար քննիչ ղըրկված էր Յերուսաղեմ։

Նորին վսեմութեանը յերկու հարյուր վոսկի առավ ի վարձատրութեան յուր ըրած քննութեան, վորուն արգելանքը դեռ վոչ վոք գիտե։

Ահա վանք մը, վոր յերեսուն հազար վոսկի պարտք կը դիզե, և մենք իրեն կանոն կը շինենք, առանց հարցնելու, թե ի՞նչպես գոյացաւ այդ պարտքը, Յերուսաղեմի պատրիարքն ե պատասխանատուն թե միաբանութեանը. ի՞նչ յերաշխաւորութեան կա, վոր ուրիշ անգամ վերստին պարտական չպիտի մնա այդ վանքը։

կանոնի չգոյութիւնն պատճառով գոյացավ, այդ հարստահարի-
պարտքը. ո՞վ եր պատճառ միաբանական ուխտին կանոն չունե-
նալուն: Առանց այս հարցումներուն գոհացուցիչ պատասխան-
ներն առնելու՝ խեղճ ժողովրդեայն դիմել և ստակ ուզելն ուրիշ
բան չնշանակեր, ինքե վոչ հաստատել սա ճշմարտութիւնը, թե
կրոնավորները վանքերու մեջ պիտի նստին, պիտի ուտեն, պիտի
խմեն, պիտի պառկին և ժողովուրդն ալ անոնց ծախքը պիտի
հոգա վասն լերկնային փառաց:

20 Հոկտեմբեր

Անգղիական լրագիրները կը ծանուցանեն, վոր Տուլլինիոյի
հանձնումն յետք լեթե Անգղիա առանձին մնա՝ ավելի առաջ
չպիտի յերթա:

— Յէտ պիտ յերթա:

— Աս ալ չենք հուսար:

Անգղիական լրագիրներուն այս գուշակութիւններն տխուր
ազդեցութիւն մը ունեցան անոնց վրա, վորք իրենց հույսը
միայն Անգլիո վրա գրած եյին: Յեւ արդարեւ, Անգլիո աղատա-
կան կուսակցութիւնը շատ նպաստավոր կերպով խոսեցաւ Հայ-
կական խնդրուն համար, նույնիսկ թաղուհին յուր խոսած ճա-
ռին մեջ Հայոց խնդիրն ալ հիշած եր: Սակայն մոռնալու չե-
վոր չերը շահը խոսի՝ հիշողութիւնը կը տկարանա և մարդս չկըր-
նար յուր ըրած խոստումը հիշելու:

21 Հոկտեմբեր

Միացյալ Ընկերութիւնը վանա վարժապետանոցին մեջ
բնական գիտութիւններու դասախոսութիւնն ալ ավելցուց: Հիշ-
յալ ընկերութիւնն Կիլիկիո մեջ ալ գործել սկսավ, Ատանայի և
Հալեպի դպրոցներն յուր տեսչութիւնն ներքե առնելով:

Քաղցր և մեղ հավատալ, վոր սույն ընկերութեան Գործա-
դիր ժողովո անդամներն հաջողած են բառնալ այն անհամաձայ-
նութիւնն, վոր ի սկզբան կտիրեր իրենց մեջ:

22 Հոկտեմբեր

Զրուց կը պտըտի, թե Սսո Կաթողիկոսն¹⁸¹) Բ. Դրան հրա-
մանաւ լերեք վարդապետներու հետ Կ. Պոլիս կը բերվի հսկողու-
թիւն տակ:

Լրագիրներուն ամեն խոսքին հավատալու յե...

Այսոր ալ չկրցի բան մը հասկնալ Վալեքին...

23 Հոկտեմբեր

Լրագիրները կը ծանուցանեն, թե Կարնո և Վանա զավառե-
րու մեջ ըլլալիք բարենորոգումներուն լերկրորդ կոմիտեք Աղա-
բեկյան Սարգիս եֆեստին Պոլիս յեկած ե:

Աս ալ սուտ լուրերուն կարգն անցունելու չե:

Յեթե յեկած լիներ՝ յեղած բարենորոգումներուն վրա կրնա-
յինք լուրեր առնել:

24 Հոկտեմբեր

Այսոր լերեսփոխանական ժողովն գումարվեցաւ Ղալաթիա:
Յերեսփոխանները բաժանական խոսեցան իրարու հետ, բայց
մեծամասնութիւն գոյացած չըլլալով՝ վորոշումները հաջորդ նիս-
տին թողվեցան:

— Ինչո՞ւ խոսեցան ուրեմն, քանի վոր վորոշելու համար
մեծամասնութիւն չունեին:

— Ժամանակ անցունելու համար...

25 Հոկտեմբեր

Կայսերական կառավարութիւնը խուրպան պայրամիւն¹⁸²) ծախ-
քերուն համար չորս-հինգ հազար վոսկլո փոխառութիւն մը
ընել կը փափաքի Ղալաթիո սեղանավորներեն:

Յեթե այս փոխառութիւնը չհաջողի՝ պայրամն քանի մը շա-
բաթ չիտ պիտի ձգվի կրսին:

Այն կառավարութիւնն, վոր պայրամի համար փոխառու-
թիւն ընելու կըստիպվի՝ ինչպես կարող ե բարենորոգում մտցու-
նել Հայաստանի մեջ. բարենորոգումն պայրամներուն ամենեն
մեծն ե և, հետեապես, մեծ ծախքերու կարոտ ե, մինչդեռ մենք
մեծ աղքատութենե ուրիշ բան չունինք:

կը ցավիմ, վոր Վայեֆին վրայոք տեղեկութիւնն չպիտի կըրնամ տալ. վասն զի մինչև այս ժամս պարապ տեղը կը հոգնիմ զայն հասկնալու համար:

Զգիտեմ թե որիորդները և տիկիներն ինչպիսի պիտի կարողանան զայն հասկնալ և հազուստ ձևեր:

Աստված կարողութիւն տա ի բնոց:

Հալկական խնդիրը կը քնանա, և անկարելի է, վոր Գարադաշի խնդրոյն լուծվիլին առաջ արթննա:

Տեղվույս աղագայիներն՝ Կլատսթոնի բերանն չեւած խոսքերուն մեջ հալկական խնդիր գտնելու համար ամեն ոք Յեվրոպայեն յեկած հեռագիրները կը կարդան:

Հայ լրագիրներն մին կըսեն, թե Յեվրոպայեն բարիք հուսալը պարապ բան է, և թե անցյալին մեջ ալ մեր աղզը անկե բարիք տեսած չէ:

Շատ լավ, բայց այդ լրագիրն չուր այդ կարծիքն յերկու տարի առաջ հայտնելու. յեր, վոր աղզն ալ ըստ այնմ վարկի... ալսինքն Յեվրոպայեն ոգնութիւնն չխնդրելը բնավ. վորովհետև անցյալին մեջ անոր մեկ բարիքը վայելած չէ յեղեր...

Արդոք այդ թերթին խմբագիրն բաժանորդ չգրէր այն անձերն, վորոնք անցելուցն մեջ իրեն բաժանորդ գրված չեն:

Սովելոց Հանձնաժողովը հետևյալը կը հրատարակէ.

«Ի պաշտօնէ վշտից գուժաբեր՝ ցավ է մեզ, զի այսոր գուժոց ամենաահաւորն կը պարտավորիմք հաղորդել:

«Ըստ հեռագրո՝ սովամահ յերեվեցավ.

Արմայաց զինն գրեթե կրկնապատկեցավ.

Փոխառութեան չափն իսկ լրացավ»:

Ոսմանյան կառավարութիւնն աղագային հիվանդանոցին բազում տարիներէ հետե հատկացուցած միսն ալ դադրեցուց այս որերս:

Հիվանդանոցին պատվարժան հոգաբարձութիւնը ժողովրդյան դիմելով՝ հացին և մսին դադարումեն պատճառած կորուստը դարձանել կաշխատի:

Սովելոց Հանձնաժողովը այսոր ալ հետևյալը կը հրատարակէ. «Ինչպես կը նախագուշակելինք՝ անա արմայաց գինն որ ըստ որե կը բարձրանա. սովյալ գուղորելից բնակիչք ի քաղաք կը խռնին. նոթելոց տխուր թափորք ընթանալ կսկսին. հին նոթութեան աղաղակն, զոր զարուհն պահ մի դադարեցուց՝ վերստին կը վերադառնա:

Ցարդ աղերս, պաղատանք առաջի վողորմածաց արկինք: Այսոր մեռելոց դիակներ սոցա գթութեանց կը ներկայացնեմք»:

Յեվ գավառներն ընդունած տխուր լուրերը կը շարե ժողովրդյան առջև:

Մայրաքաղաքիս ամեն թաղերու մեջ ի նպաստ սովյալներիս վերստին դրամ կը հավաքվի...

Անգղիա կը խրատե Հունաստանն, վոր համբերե, ապագային մեջ ոգնութիւնն խոստանալով անոր:

Արդեն Հունաստանն համբերելու համար խրատի պետք չունի, յեթե Յեվրոպայեն ոգնութիւնն չլինի՝ համբերելու ստիպված է:

Աղոթենք, վոր թագուհիույն կառավարութիւնը մեր խընդրույն համար ալ համբերելու քաղաքականութեան չհետևի, վասն զի հայերը չափեն ալիլի համբերած են և ալ համբերելու կարողութիւնն չունին:

Թեպետև աչքերը տեսնելու համար տրված են մարդուս, բայց շատ մը երիկներ զանոնք կը գործածեն՝ չտեսնելու համար իրենց կիներուն հանցանքները:

Պարը սիրո տոնավաճառն է: Սիրո դաշնադրություններն հոն կը կնքվին նախ:

Կինն շինականներուն մեջ՝ միայն ոգնական է յուր երկին, միջակ մարդերու մեջ՝ բոռ և ազնվականներու մեջ՝ պատիժ:

3 Նոյեմբեր

Վորչափ ալ պնդեն ջերմեռանդ թատրոնասերներն, թե թատրոնը բարոյական դպրոց մ'է, չեն կարող խախտել իմ համոզումս, վոր ե՛թե թե թատրոնն այսօր անդամազննության դպրոց մ'է:

Կյանքիս մեջ չեմ հանդիպած հանդիսականի մը, վոր թատրերգության մը վերջին արարվածին լետքը քովը նստողին ըսե-

— Ի՜նչ գեղեցիկ խոսքեր... Ի՜նչ գաղափարներ ու սիրուն կտորներ: Ի՜նչ հետաքրքրական տեսարաններ:

Բայց կյանքիս մեջ չեմ տեսած բարեպաշտ թատրոնասեր մը, վոր թատրոնեն լելած ժամանակ՝ ընկերին չըսե.

— Ի՜նչ գեղեցիկ դերասանուհի... Ի՜նչ սիրուն աչեր... Ի՜նչ հետաքրքրական ծուկեր:

Արդ, իրավունք չունիմ պոռալելու, թե գեղեցիկ դերասանուհի մը սքանչելի պիեսա մ'է:

Իրավունք ունիս, կըսեք, հավատալու, բայց վոչ խոստովանելու:

Խոստովանիմ և հավատամ:

Մայրաքաղաքիս մեջ տիկին Հրաչյայի¹⁸³⁾ աչերուն վրա Նեյլի աճարակեմ¹⁸⁴⁾ ավելի կը խոսվի, և Հրաչյայի հայրն, հեղինակ այդ պիեսային, Նեյլի աճարակին հեղինակեն ավելի ծանոթ է թատրոնասերներու:

Բավական է, վոր Քարաքաղյան լերկու քուլերն¹⁸⁵⁾, կամ տիկին Հրաչյայ, կամ ուրիշ գեղեցիկ դերասանուհի մը, կամ ասոնց ամենը մեկն դեր ունենան ներկայացման մը մեջ, կատակեր-

գութլունն կամ վողբերգությունն վորչափ ալ աղեկ՝ չըլլա՝ դարձյալ թատրոնը հանդիսականներով կը լեցվի:

Ինչպես առանց գործքի հավատքը մեռյալ է, այնպես ալ առանց գեղեցիկ դերասանուհի մեկն ընտիր վողբերգությունն մեռյալ է:

Դուք ալ այսպես պիտի մտածելիք՝ չեթե ականատես ըլլալիք այն իրարանցումին, վորով քանի մը տնորեններ թաղե՛ թաղ կը պտըտին այս որերս, աղվոր դերասանուհիներ փնտռելու համար:

Յեւ այս լեղանակով կարելի՞ չէ միթե ծաղկեցնել հայ թատրոնն, ուր դերասանուհիներն աղգային են և ներկայացումներն ոտար:

Միջապուլի Բարեսիրաց Ընկերությունն¹⁸⁶⁾ կը պատրաստվի ներկայացումներ տալու քանի մ'որեն. առջին ներկայացումն պիտի ըլլա Նեյլի աշտարակն, գեղեցիկ պիեսա յոթը պատկերով, վորուն մեջ դեր պիտի ունենա տիկին Հրաչյայ, գեղեցկագուն պիեսա մեկ պատկերով: Հանդիսականներուն հարյուրին ինսուռնելինը մեկ պատկերը տեսնելու կերթան և հարյուրին մեկը՝ յոթը պատկերը տեսնելու: Ինսուռնելինը հոգի շատ չէ՝ մեկ պատկերի համար. մեկ հոգի քիչ չէ՞ յոթը պատկերի համար:

Ուրիշ կետ մ'ալ կա:

Այդ մեկ հոգին թի՜նք ոգուտ պիտի քաղե այդ ներկայացումն, վոր բնավ աղգային կյանք չպարունակեր յուր մեջ:

Ո՞ւր էք, ինքզինքնիդ բանաստեղծ, փիլիսոփա կարծող պարոններ. ինչո՞ւ աղգային կյանքին վերաբերյալ թատրերգություններ չեք գրեր աղգային թատրոնը ծաղկեցնելու համար, ժողովրդիցան վարքն ու բարքն ուղղելու համար: Յեթե կը վախնաք, վոր ձեր հեղինակությունները հարգ և պատիվ չեն գտներ՝ կը սխալիք. քաջալերվեցեք, ո՛վ վախկոտ հեղինակներ. գեղեցիկ դերասանուհի մը կը ծածկե ձեր թատրերգություններուն տգեղությունները. ո՞ն ա՜նգը, սիրտ առեք և ջանացեք սիրուն դերասանուհիներով փալեցնել ձեր հնացյալ հեղինակությունները...

5 Նոյեմբեր

Շնորհավոր նոր վարչություն և բարի սահմանադրություն: Նոր վարչությունն, վոր չորս ամիսներ է վեր կազմվելու վրա չէր՝ վերջապես կազմվեցավ շնորհիվ աստուծո:

Տար աստված, վոր թղթակազմ չըլլար և քանի մ'որեն չըպատ-
ալեր:

Հայրենիք¹⁸⁷) հետևյալ կերպով կը շարե նոր վարչության ան-
ձերը:

Գերապատիվ Տ. Մաթեոս լեպիսկոպոս¹⁸⁸) կրօնական գործոց
խորհրդական:

Մեծ. Միքայել եֆ. Մոմճյան՝ հարաբերական գործոց խորհրդ-
դական:

Մեծ. Տիգրան եֆ. Յուսուֆյան՝ ներքին գործոց խորհրդ-

» Միքայել » Մամիկոնյան՝ կրթական գործոց խորհրդ-

» Գարեգին » Մեկիքյան՝ տնտեսական գործոց խորհրդ-

» Սերոբե » Աղնավուրյան՝ դատական գործոց խորհրդ-

Ահա այս մեծապատիվ անձերուն ձեռներուն մեջն ե այժմ
ազգին սանձերը:

Մաղթենք, վոր սուչն նոր վարչութունը հինը փնտռել չտա
մեզ:

7 Նոյեմբեր

Պիլեճիկի առաջնորդ Տեր Ղևոնդ լեպիսկոպոս նամակով մը կի-
մացունե Ամեն. Ս. Պատրիարք հոր, վոր պաշտոնին պիտի հրա-
ժարի, վասն զի Պիլեճիկի մեջ վնչ մարդ կա չեղիր, վնչ դրամ և
վնչ զգացում:

Պիլեճիկի գեր. առաջնորդը հրաժարելու տեղ առաջարկելու
չեր Ս. Պատրիարքին, վոր Մայրաքաղաքես քիչ մը մարդ, կտոր
մը զգացում և բավական քանակությամբ դրամ ղրկվեր իրեն,
վորպեսզի կարենար յուր պաշտոնը շարունակել:

Այս յերեք հազվագյուտ բաներն անշուշտ անհրաժեշտ պետք
են նորին գերապատվության, վոր, ինչպես կերևի՝ ինքն ալ
չունի յուր վրա, վնչ դրամ, վնչ զգացում և վնչ մարդ: Եթե ինքն
ունեցած ըլլար՝ հարկավ յուր ժողովրդյան ալ փոքրիկ մաս մը
կը հաներ:

Նոր վարչութունն¹⁸⁹) նիստ ըրավ պատրիարքարանի մեջ
և ղիվանատան պաշտոնյաներու փոփոխության վրա խորհեցավ,
խոսեցավ և մեկնեցավ:

Վարչութունն՝ ազգային ժողովո¹⁹⁰) ասկից առաջ քվեարկած
չեմտացուցով չե կարող չուր պաշտոնն անթերի կատարելու:

Յես կը կարծիմ, վոր ազգային ժողովն կամ չեմտացուցը
պիտի փոխե, կամ այն հրահանգներն, զորս տված ե վարչության:
Յեթե վոչ մին փոխե և վոչ մշուան՝ վարչութունն պիտի անդա-
մալուծվի և պիտի սպասե, վոր մեկը գա և զինքը Պրոպատիկե¹⁹¹)
ափազանին մեջ նետե:

9 Նոյեմբեր

Նոր խնդիր մ'ալ պիտի ծագի մոտերս:

Սսո կաթողիկոսն Պոլիս գալու համար ճամբա յեւած ե:

Ի՞նչու կուգա Պոլիս:

Զհարցուցի, վասնզի քանի մը տարիներ առաջ հարցուցած
եյի, թե ինչո՞ւ Սիւ կերթա, և պատասխան առած եյի, թե Սսո
աթոռն ու թեմն բարեկարգելու կերթա: Բանի մը ամիս չետքն,
չերբ իմացա, վոր զիս խաբած են՝ ուխտ ըրի, վոր մեջ մ'ալ
չհարցունեմ, թե ինչո՞ւ Պոլիս կուգա և ինչո՞ւ Պոլսեն կերթա...

10 Նոյեմբեր

Ուրիշ հրաժարական մ'ալ:

Յերզնկայի առաջնորդն ալ հրաժարելու միտք ունի չեղիր:

Հոն ալ չկա մարդ, զգացում և դրամ:

Յերզնկայի կլիման անհարմար կուգա լելիւր նորին սրբազնու-
թյանն:

Այս առաջնորդին ալ կլիմա մը փնտռելու, գտնելու և ղրկե-
լու չե:

Հուսանք սակայն, վոր Յերզնկայի առաջնորդը անիրավ հար-
ձակումներե առանց յշտանալու հառաջ կտանի այն գործերն,
զորս այնքան սիրով և չեռանդյամբ սկսավ: Յեթե կլիման իրեն
չհարմարվի՝ նորին գերապատվութունն աշխատելու չե զինքն

կլիմային հարմարեցունել, դի մի լցցի բանն, թե վարդապետներն
կը փոխեն իրենց կլիման՝ իբրեւ լեպիսկոպոս ձեռնադրվին...

11 Նոյեմբեր

Տեսարանն է Բերալի թատրոնի մը ռիթմիկներէն մեկուն մեջ:
Պատվավոր մարդու մը անպատիվ կիսն հուշնի մը հետ սիրո
բանակցութիւն կընեն:

— Տես, ըսավ քովի ռիթմիկի մեջ նստող մեկն իւր ընկե-
րին, կը վալլէ, վոր անանկ պատվավոր մարդու մը կիսն անհա-
վատարիմ գտնվի յուր երկանը:

— Իրավունք ունիս. ոտարասիրութիւնը չի, վոր մեր ազ-
գին տունը կը փլցնէ, պատասխանեց ընկերը:

12 Նոյեմբեր

— Ամբակում աղա, վաղը չե մլուս որ վան պիտի լերթամ:

— Բարի ճանապարհ կը մաղթեմ:

— Նամակ գրելու չմոռնաս:

— Անհոգ լեղիր. տասնհինգ որն անգամ մը կը գրեմ և լու-
րեր կուտամ քեզի:

— Ուրեմն հասցեն տամ քեզի, վոր նամակներս սխալմամբ
ուրիշին ձեռքը չանցնին:

— Հարկ չկա. Մասիսի կը հանձնեմ նամակները:

— Այդ ի՞նչ ըսել է. Մասիսը նամակներու տալի է:

— Հիմա ամեն մարդ իւր մեկ բարեկամին գրած նամակն
Մասիսի կուտա և պատասխանն ալ անոր մեջ կը կաղաւ: Անցյալ-
ները չգիտեմ, վոր ընկերութեան ատենադպիր տիկին... Ս. Պատ-
րիարքին նամակ մը գրած եր Մասիսին մեջ և պատասխանը
քանի մը որ ցեղքը հիշյալ թերթին մեջ առած եր: Դարձյալ ու-
րիշ մեկն իւր մեկ բարեկամին գրած մտերմական մեկ նամակն
Մասիսի միջոցով հրատարակած ու պատասխանն նույն լրագրին
մեջ կարդացած եր: Վ՛որ մեկը համբեմ...

— Շատ աղեկ. Մասիսի միջոցով գրե նամակներդ և պա-
տասխանները հոս կարդա:

— Ասանկով թղթատարի ծախքեն ալ կը խախինք:

— Մանավանդ թե մեր նամակները չեն կորսվիր:
Կեցցե՛ք թղթատար Մասիսն... և տակալին ըսողներ ալ կան,
թե Մասիս հասարակութեան ոգտակար ծառայութիւններ չմա-
տուցաներ...

13 Նոյեմբեր

Ուրախառիթ լուր մը...

Պեշիքթաշի¹⁹²⁾ մեջ խումբ մը լերիտասարդներ ընկերու-
թյուն մը կազմած են իրենց մեջ. նպատակ ունենալով մեկ դա-
հեկան տուգանք վճարել ամեն անգամ վոր իրենց խոսակցութեանը
մեջ ոտար բառ խառնեն:

Այս տուգանքին գոյանալիք հասույթն ազգագուտ ընկերու-
թյուններէն մեկուն պիտի նվիրեն:

Հապա ի՞նչ տուգանք առնելու չե այն հայերէն, վորք իրենց
խոսակցութեանը մեջ լերբեմն հայերէն բառեր կը խառնեն և շատ
անգամ հայերէն բառ ընավ չեն խառներ:

Այս միջոցն շատ լավ է ազգային լեզուն կոկելու համար. և
յեթե աչսպիսի ընկերութիւնն մ'ալ ազգային խմբագիրները կազ-
մեն՝ ընկիրութիւններն բավական ոգուտ կը քաղեն ուստահացոյց
լրագիրներէն, նա մանավանդ «Մեակեն»:

14 Նոյեմբեր

Կրօնական գործոց խորհրդականն լեկեղեցվո և լեկեղեցա-
կաններուն բարեկարգութեանը վերաբերյալ կանոնադիր մը խմ-
բագրելու վրա չե:

Կրթական գործոց խորհրդականն ալ վարժարաններու բա-
րեկարգութեան վերաբերյալ ծրագիր մը պատրաստելու զբաղած է:

Տնտեսական գործոց խորհրդականն ալ ազգային անտուկը
բարեկարգելու համար ծրագիր մը փնտռելու յետեւ չե:

Ինչպե՞ս հայտնի կը տեսնվի՝ հոտից ցզլուխ բարեկարգու-
թեան պետք ունինք, սակայն անուրանալի ճշմարտութիւնն մ'ե,
վոր բարեկարգութեանն ավելի դրամի պետք ունինք:

Խնդրեցե՛ք զգրամն, և ամենայն ինչ հավելցի՛ ձեզ...

Սեբաստիայեն հետևյալ հեռագիրն լեկավ.
«Կուսակալն ազգային գավառական ընդհ. ժողովո անդամները
բանտարկեց»:

15 նոյեմբեր

Ավերալի Հայասանի¹⁹³⁾ կառավարութեան կողմէն ամեն ուր
կը փնտռվին, ինչպէս նաեւ այն ամեն գիրքերն, վորոնց մեջ Հա-
յասան բառն կը գտնվի:

Ամեն ուր կը ձերբակալվին և կը բանտարկվին Հայկա¹⁹⁴⁾ և
Վարդանա¹⁹⁵⁾ պատկերներն:

Յերեկ մաքսատունեն արգելվեցավ 1881-ի որացուցներեն
հիսուն որինակ, վոր Տրապիզոնի շողենավը կը տարվեր...

Սեբաստիայեն հետևյալ հեռագիրն ընդունվեցավ այսօր.
«Կուսակալն քաղաքական ժողովո անդամներն ալ բանտար-
կեց»:

16 նոյեմբեր

Սեբաստիայեն հետևյալ հեռագիրը զրկած են.

«Կուսակալն ազգ. վարժարանիս աշակերտներեն քսանհինգ
հոգի բանտարկեց»:

Ինչո՞ւ համար այս բանտարկութեանները:

Վասնզի քանի մ'որ առաջ կուսակալին Բոնաֆին*) առջևը
հայու դիակ մը դառնաւ և, և յերկրորդ գիշերն կուսակալին Բո-
նաֆր**) քարկոծված և:

Ապա ուրեմն քարկոծողներն բանտարկյալներն են:

Քննութեան յեղած և:

Բնավ չերբեք. քանի վոր կուսակալին Բոնաֆր***) քարկոծ-
ված և հայտնի չէ, վոր հայերը հանցավոր են:

Այս խնդիրն Բ. Դրան և Պատրիարքարանի մեջտեղ բանակ-
ցութեան նյութ չեղած և. տեսնենք վերջն ուր պիտի չերթա...

*) Պեշիկթաշի ընկերութեան մեկ գահեկան ալ յիս պարտական յեղա:

**) Յերկու գահեկան յեղալ:

***) Յերեք յեղալ:

17 նոյեմբեր

Բարեբախտաբար բանտարկութեան լուր չեկավ այսօր Սե-
բաստիայեն:

Յես կը կարծեմ, թե կուսակալն Սեբաստիո բոլոր հայերը
բանտարկած և և, հետեապես, դուրսը մարդ չէ մնացած; վոր ա-
նոնց բանտարկվին հեռագրով իմացունեն մեզ:

Տաճկաստանի մեջ բանտ... Բանտի մեջ բանտ...

18 նոյեմբեր

Ի՞նչ չեղավ հայկական խնդիրը:

Բան մ'ալ յեղած չէ. նույն վիճակին մեջ և՛ ուր վոր եր չեր-
կու ամիս առաջ:

Տուլչինիոն Սե լերան հանձնվեցավ յերկու ուր առաջ: Հու-
նաստան ալ յուր գործը լմնցնելու չէ, վոր կարգը մեր խնդրուն-
դա:

Անգղիո կառավարութեանն այժմ ուրիշ խնդիրներով զբաղած
ըլլալով՝ հայկական խնդիրը քիչ մը մոռցած ըլլալ կը թվի. սա-
կայն անգղիացիներ հայերը կը հուսան, թե Անգղիո կառավարու-
թեանն վերստին ձեռք պիտի առնեն Հայաստանի բարեկարգու-
թեան խնդիրն, զոր այնչափ չեռանդով պաշտպանեց:

Խնդիրներ կան, վոր պտուղներու կը նմանին—պահվելով կը
հասունանան, թեպետեւ կան ալ, վոր պահվելով կը փտտին:

Աղոթենք, վոր մեր խնդիրն վերջիններեն չըլլա:

20 նոյեմբեր

Կրօնական գործոց խորհրդականն մայրաքաղաքիս թաղական
խորհուրդներուն պիտի հարցունեն, թե կրօնագիտութեանն ինչ
վիճակի մեջ և դպրոցներու մեջ:

Զարմանալի չէ՞, գոյութեան չունեցող բանի մը վիճակն հար-
ցունեն:

Յեւ թաղային վարժարաններու մեջ ինչ ունինք, վոր կրո-
նագիտութեանն ունենանք: Սակայն յես գիտնալ կը փափաքեցի,
թե կրօնագիտութեանն ինչ վիճակի մեջ և այն կրօնականնե-
րուն քով՝ վորք գավառներու մեջ առաջնորդութեան պաշտոն-
մերժելով՝ մայրաքաղաքես բաժնվիլ չեն ուզեր:

Վանա ընդհանուր դատախազն հիշյալ քաղաքին մեջ տեղի ունեցած հարստահարությունները հերքող տեղեկագիրը մը ղրկած եր Բ. Դրան:

Գերապատիվ Խրիմյան սրբադանն ¹⁹⁶⁾ ալ վերոհիշյալ տեղեկագիրը հերքող տեղեկագիրը մը ղրկած ե այս որերս:

Արդեն ինչ վոր հաստատուե հայրիկն՝ կը ժխտվի Բ. Դանեն, և ինչ վոր հաստատուել փորձե Բ. Դուռն՝ կը հերքվի Հայրիկեն: Յերբ այս վերջինն գրակ մը ներկայացնե կառավարութեան և անոր ժամ մը առաջ քուլըգե մը սպանվիլն հաստատուե կառավարութեանն անմիջապէս կը հերքե բսելով. առիկա մեռած չե այլ կը ննջե. յետե Հայրիկն քիչ մ'ալ պնդե՝ ընդհանուր դատախազն կը պատասխանե. մեռած չե այլ ծնած ե. և տեղեկագիր մ'ալ կը ղրկի Բ. Դուռն հայտնելով, թե այս որերս Վանա մեջ յերեսուն տարու տղա մը ծնաւ... մեռած...

Պ. Տուպլիե անուն յերեկի ըմբիշն, վոր քանի մը շարաթի ի վեր Բերա Բոնքորտիայի թատրոնին մեջ մայրաքաղաքիս ըմբիշներուն ասպարեզ կը կարդար և հաղթանակ կը տաներ՝ այս որերս հաղթվեցաւ Սիմոն անուն բեռնակրե մը:

Հայ ըմբիշն գայն ձեռներուն վրա բռնելով՝ հանդիսականներուն կը հարցունե, թե ուր նետե ալդ բեռն...

Պ. Տուպլիյե, զոր տասնեկներորդ դարու Աքիլես ¹⁹⁷⁾ կը կոչեն՝ պարտութեանն չընդունիր, առարկելով, թե ինք ոտար ե տաճկական ըմբշամարտութեան: Հայ բեռնակիրն կը հաւանի գաղղիական ըմբշամարտութեամբ անոր դեմն յեղնելու և յերկրորդ անգամ կը գետնե դաշն:

Պ. Տուպլիյեն դրամ կը խոստանա Պ. Սիմոնին, վոր անգամ մ'ալ ան հաղթի, վորպէսզի յուր վաստակած համբաւն չարատի: Պ. Սիմոն կը մերթե այս դրամական ըմբշամարտութեան: Այժմ մեր ազգայիններն վոմանք հանգանակութեան մը կընեն իրենց մեջ՝ հայ ըմբիշին նվիր մը ընելու նպատակով:

Կըսեն թե միութեանն աղեկ բան ե:

Իմ կարծիքով՝ միութեանն մեր ազգին համար աղեկ չե:

Տարի մը առաջ Իսկիւտարի ¹⁹⁸⁾ յերեք դպրոցներն իրարու հետ միացան և յետքը ավելի խեղճ ըլլալով՝ իրարմե բաժնվեցան:

Քանի մը ամիս կա, վոր Արարատյան, Կիլիկյան և Դպրոցասիրաց — Արեւելեան ընկերութեաններն միանալով՝ Միացյալ Ընկերութեանք յեղան, և այսոր հիշյալ Միացյալ Ընկերութեանքն չունին այն նախանձելի վիճակն, զոր ունեյին ասկե առաջ:

Կրնաք ուրանալ՝ թե անմիաբանութեանն ալ ունի յուր ոգուտները:

Թուրքիո կառավարութեանն յուր պաշտոնյաներուն ամսականները ամեն ամսու գլխուն վճարելու համար նոր միջոց մը պիտի գտնե յեղեր:

Պիտի վորոշե յեղեր, վոր մեկ ամիսն հարկուր ութսուն որերե բաղկանա:

Իզմիրի փողոցներուն պատերուն վրա հետեյալ ազգարարութեանը կախված ե տեղվուչն գողերուն կողմեն. —

«Գիշերներն դուրս յեղողներն առ նվազն իրենց քսակին մեջ յերեք մեծիտիե ունենալու չեն. ապա թե վոչ իրենց կշանքը վրտանգի մեջ պիտի ըլլա»:

Ահա վասիկ միջոց մը, վոր կը հարկադրե Իզմիրի բնակիչներն՝ միշտ յերեք մեծիտիե ունենալ իրենց վրա:

Կեցցե Իզմիրի վոստիկանութեան...

Իսկ անոնք, վոր հիշյալ գումարը չունին՝ պիտի ստիպվին գիշերներն իրենց տուններն դուրս չեղնելու:

Աս քիչ մը առողջապահական ե, վասն զի հիշյալ քաղաքին ողն խոնավ ըլլալով՝ գիշերներն դուրս յեղողներն հարբուխ կը բռնվին:

Կեցցեն Իզմիրի գողերը...

Սառ Մկրտիչ կաթողիկոսն մայրաքաղաքս հասած եւ Հակա-
թոռութեան խնդիրն քիչ որեւն չերեան կելնի:

Աղթամարա¹⁹⁹) կաթողիկոսն աթոռի խնդիր չհարուցանելու,
վասնդի նստած չունի, վոր աթոռի վրա խորհի. ամեն որ կուտե,
կը պառկի և կը քնանա:

Յերբ վոր բան մը ինն գեղեցիկ 'ե' անոր վորջափ ալ զարդ-
արվի՝ կը վալի:

Որինակի համար, Արեւիլյան Մամլո թղթակցին Շահնուրի²⁰⁰)
լեզուն, վոր գեղեցիկ եւ և պճնասեր:

Յես ալ որ մը փորձեցի լեզուս պճնել, բայց վերջն հուսա-
հատեցա, տեսնելով ագեղ կին մը՝ զոր զարդերն ավելի ագեղ-
ցուցած էին:

Ի՞նչու համար խել մը ագեղ լեզուներ պարզութունը կը
թողուն և պճնասիրութեան մեջ կերթան զիրենք զգլիլ ընելու...

Յե՞րբ պիտի դադրինք լրագիրներու մեջ կարգալի աջակիսի
հողվածներ, վորոնց մեջ խոսք չկա և միայն զարդ կա:

Խմբագիրներուն ուղադրութունը կը հրավերեմ այս կետին
վրա:

ՊՏՈՒՅՏ ՄԸ ՊՈԼՍՈ ԹԱՂԵՐՈՒ ՄԵԶ

Մ Ի Զ Ա Գ Յ Ո Ւ Ղ

Նախ և առաջ հարկ ե գիտնալ, Վոր այս գլուղը մտնելու համար քանի մը դժվարութիւններ կան—խոսքս պատվովոր մարդերու համար ե ե վնչ գողերու համար—իսկ անկե յերևելու համար դժվարութիւններն ավելի մեծ են. արեւելյան խնդրուէն²⁰¹ ձևով շինված գլուղ մ'ե: Յեթե նավամատուցին ճամբայեն մըտնել ուզես՝ վեց հոյակապ ձեմիշներու հոտը քթիդ ուշադրութիւնը կը գըրավեն; և անմիջապէս կը համոզվիս, Վոր Միջագլուղ բնակողի մը համար պղտիկ քիթ մը մեծ փորձանք ե: Յեթե լեռան կողմե իջնել փորձես՝ փրկանքդ հետդ տանելու յես, Վոր չեթե գողերե բռնվիս՝ կարենաս ոճիքդ աղատել: Իսկ չեթե Պեշիկթաշի կողմեն գաս՝ աչերդ թաշկինակով մը կապելու յես, Վոր հոգն անցյալ տարւան հրդեհեն մնացած մոխիրներն աչերուդ չփչե: Այս գլուղին մեջ մտնելու ապահով ճամբան ողապարիկով հոն իջնելն ե, կըսեն, իսկ յնձի համար հոն մտնելու ամենեն ապահով ճամբան հոն բնավ չմտնելն ե:

Այս գլուղին մեջ հինգ հարկուր քսան տուն կա հայու. սակայն ասոնց մեջ կան տուններ, Վորք չերկու և չերեք բնտանիքներե բնակված են: Յեթե գործերն այսպէս շարունակվին՝ քսան բնտանիք մեկ տան մեջ պիտի բնակին և վիճակագիրները տուն համրելու տեղ սենյակ պիտի համրեն:

Յերկու չեկեղեցի կա, միւռն անունն Աստվածածին ե, իսկ մյուսինը Լուսավորիչ: Գլուղիս Աստվածածինը սահմանադրական չե, ամեն այցելունքը միեւնոյն չեղանակով չընդունիր. հարուստ այցելու մը տաճարեն ներս մտնելուն պես՝ ժամկոչ յեղբայրները իրար կանցնին աթոռ մը գտնելու և հլուրին քովը դնելու համար. իսկ չերք այցելուն աղքատ ե՝ հրաման կընդունի գետնի վրա աղոթելու: Հարուստները Ս. Զատկին կամ Ծնունդին միայն

կուգան չեկեղեցին, և շատ անգամ ալ անձամբ չկրնալով ներկա գտնվիլ՝ իրենց ալցեառմամբ կղրկեն չեկեղեցին։

Այս յեկեղեցվուլն վերնատունեն ամեն տարի տեղ կը ծախվի կամ վարձու կը տրվի—Թեպետ լրագիրներու մեջ ծանուցում չըլլար.— արդեն հարուստ տիկինները ամբողջ վերնատունը ծախու առած են, և տոնի որերը մեյմեկ պահապան կնիկ կը զրկեն հոն, վորպեսզի իրենց տեղը պաշտպանեն ոտար կիներու հարձակումներու դեմ։ Արդյոք ժամանակն ե հիշել Ավետարանին այս խոսքը. Տուս իմ տուս աղոթից կոչեսցի, յեվ դուք արաքիք զսա այս ավագակաց։ Լուսավորիչը ժողովրդական ե, այր և կին՝ խառն կը մտնեն տաճարն, բայց Լուսավորիչն, այրերուն վրա վստահութունն չունենալուն համար Թերևս, չեկեղեցվուլն աջ կողմն այրերուն տված ե և ձախն կիներուն... Ո՞վ կարող ե պնդել, Թե մեր չերեսփոխանական ժողովն ալ այնպես վարված չե. Թե՛ղ չարամիտներն պարզամիտ ժողովրդյան հավատացնել ուզեն, Թե չերեսփոխանական ժողովն միայն կիները ներս առած ե և այրերը դուրս ձգած ե. չես չեմ հավատար։

Ս. Աստվածածնա չեկեղեցվուլն դեմն ե Թարգմանչաց վարժարանն, վոր շատ կանոնավոր խեղճության մեջ կը գտնվի, և յեթե վոչ չուր խեղճությամբը, դոնե յուր կանոնավորությամբը կարող ե ազգային Վարչության նախանձը շարժել։ Շատերը կը զարմանան, Թե ասանկ հարուստ Թաղի մը վարժարանն ինչո՞ւ աղքատ ֆնա։ Յես չեմ զարմանար։ Վարժարանն անոր համար աղքատ ե, վորովհետեւ Թաղին մեջ հարուստներ կան։

Դյուղիս մեջ կա Հոփսիմյանց վարժարան մը, վոր խնամակալունի տիկիններու տնորենության տակ կը կառավարվի և հույս կուտա, վոր որ մը ուսչալ և կրթչալ աղջիկներ դուրս պիտի տա։ Առջն վարժարանին սանուհիները բավական հաջողությամբ կը Թարգմանեն գրաբարե աշխարհաբար, և յեթե սովորոց Հանձնաժողովո ատենադպիրին գրաբար նամակները չեն կրնար լուծել՝ հանցանքն իրենցը չե, վասն զի իրենց դասատուն անգամ շատ անգամ ըղեղը կը պատառե՝ այդ նամակներե իմաստ մը հանելու համար։

— Պ. Շաշյան, վոր Հայաստանի մեջ սովու պատճառած աղետներուն վրա ժողովրդյան գուլթը շարժելու և անկե նվեր հավաքելու նպատակով նամակներ կը հրատարակե լրագիրներու

մեջ՝ հասարակության անհասկնալի լեզվով կը խմբագրե յուր սավառնաթեկ նամակները, վորպեսզի մեր ազգայիններն իրենց չեղբայրներուն տառապանքներն իմանալով չտխրին և չլան։ Այս տեսակով Պ. Ատենադպիրն ազատ եր լատիներեն ալ խոսիլ ժողովրդյան...

Աղջիկներու վարժարան մ'ալ կա, դոր Ազգանվեր Հայուհյաց Ընկերութիւնը բացած ե՝ աղքատ աղջիկներու ձրի դաստիարակութուն տալու համար։ Կարողություն և հաջողութուն կը մաղթենք սույն ընկերության աղնվասիրտ տիկիններուն, վոր ամեն ջանք ի գործ կը դնեն իրենց նպատակին հասնելու համար... Յեթե այս կիներն այր, և իրենց այրերը կին ըլլային՝ անշուշտ Թարգմանչաց վարժարանն այսպես դժբախտ տեսնելու դժբախտությունն չեկնք ունենար։

Լուսավորչյան վարժարանն գոհացուցիչ ե առ այժմ, սակայն միշտ հսկումի պետք ունի, վոր անընդհատ հարատեւե յուր կանոնավորությանը մեջ։

Հայկական Կրթարան անվամբ գիշերոթիկ և ցերեկյա վարժարան մը, վորու տնորենն ե Պ. Գուրգեն²⁰³), ամեն արգելքներու և ձախողություններու դեմ դնելով՝ այսոր խիստ կանոնավոր վիճակի մեջ մտած ե։ Ահա գլուղիս ամենն մեծ շնքն և մարդը։

Հոս ե Բաբսիւրաց Ընկերության Թատրոնն²⁰³), վորու անունըն անշուշտ հազար անգամ կարգացած ես փողոցի պատերուն վրա։ Այս Թատրոնի մեջ կը ներկայացվին ժամանակավ անմահ Պեշիկթաշլյանի²⁰⁴) և մահկանացու Հեքիմյանի²⁰⁵) վողբերգութուններն, վորոնց նմաններն այժմ պարգևաբաշխության որերը վարժարաններու մեջ կը ներկայացվին ի մեծ ձանձրություն հանդիսականներու։ Այս Թատրոնին մեջ ե, վոր այժմ շատերը ատենաբանություններ կընեն ժողովրդյան ոգտակար նյութերու վրա։ Անուրանալի ճշմարտություն մ'ե, վոր Միջագուղ ամեն Թաղե առաջ սկսած ե լուսավորչալ ազգերու նմանիլ աշխատելու և... չհաջողու... քանի վոր նմանիլը՝ ըլլալ չե, միշտ պիտի հիշեմ կապիկին առակը²⁰⁶)։

Այս Թաղը խաղաղասեր ե. պատրիարքներու փոփոխություններու ժամանակ բնավ կարծիք հայտնած չե։ Որ մը չեկեղեցվուլն մեջ լսված չե. հիւլի, չհիւլի²⁰⁷)։ Կերևի, վոր Միջագուղ-

ցին չեկող պատրիարքեն ալ գոհ ե, գացողեն ալ, կամ վոչ յեկողեն գոհ ե և վոչ ալ գացողեն: Նույնիսկ թաղային գործերուն մեջ ալ չեզոքութիւն կը պահե. ուրիշ թաղերու մեջ շարաթը մեկ անգամ թաղականի կռիւ կը ծագէ, հոս մինչև հիմա ատանկ բան մը պատահած չէ: Հոս չեկող թաղականներին հաշիւ փընտռելու գեշ սովորութիւն ալ չկա. գեղացին իրարու վրա մեծ վատահումութիւն ունի:

Պզտիկ չերտասարդութիւն մը կա, վոր ընկերութիւններ կազմելով լուծելով՝ ազգին իրական ծառայութիւններ կը փափաքի մատուցանել: Մինչև հիմա հարցուր ընկերութիւն կազմված և հարյուր հիսուն ընկերութիւն լուծված ե. իսկ հիմա կա Արհեստական ընկերութիւն մը, վոր հաստատ քայլերով ճամբա կառնե և վորուն նպատակն ե Հայաստանի մեջ արհեստ տարածել:

Գյուղիս ազգայինները քանի մը դասերու կը բաժնվին:

Դաս մը կա, վոր միայն գիվանագիտական խնդիրներով կը զբաղի: Այս դասն յերբ գինեատուն մտնե և յուր առջև ունենա ողի շիշը՝ կը փափաքի գիտնալ, թե կլատսթըն ի՞նչ խոսած ե Արեւելան խնդրույն վրա, թե Պիսմարը ի՞նչ ընթացք պիտի բռնե, թե Գումանտուրիոս ի՞նչ գրած ե Անորդիոսին, և մինչև վոր ասոնց գոհացուցիչ պատասխանները չառնե՝ գինեատունն դուրս չելնի:

Մյուս դասը գիվանագիտական խնդիրներե ձանձրուցթ կը զգա. իրեն համար գիտնալու առաջին խնդիրն այն ե, թե ողիի վրա աղած ձուկ ուտելու չե, մի՞ս թե պտուղ. ահա վասիկ իրեն համար բարենորոգման խնդիր...

Դաս մ'ալ կա, վոր ամբողջ որեր վարսավիրացի խանութներու առջև կը պտըտի, վորոշում տալու համար, թե ի՞նչ ձև տալու չե մագերեսն, վոր որիորդին հաճելի չերենա և յուր առջևն չվճնտվի:

Թեթև դաս մ'ալ կա, վորու վրա թեթևութիւնը ծանրացած ե. յերբ ծանրացած ե, կըսեմ, թեթևութիւն քանակութիւնը կիւրեմկայեք անշուշտ. այս դասը կիրակի որերը նավամատուցին վրա կսպասե, վոր որիորդ կամ տիկին ...ին հետ բարձրաձայն չերկու բառ Ֆրանսերեն խոսի:

Դաս մ'ալ կա, վոր առևտուրի մեջ կորուսածն խաղի մեջ վաստկելու համար խորամանկութիւն կը խորհի. հարուստներն ալ ունին այս ախտը, բայց անոնք բամբասանքե գերծ են, վասն

զի ինչ վոր ախտ ե աղքատի համար՝ անմեղ դրոսանք կը համարվի հարուստի համար:

Պզտիկ բացառութեամբ թե այլերն և թե կիները պճնասեր են: Չափին ավելի կարեւորութիւն կուտան հագուստներու, հետեալեա աչն, վոր շքեղ հագված ե՝ կատարյալ մարդ ե. իսկ աչն, վոր պարզ հագված ե՝ մարդ կոչվելու արժանի չէ: Ուր վոր ալ ըլլա, չերբ կը տեսնես կին մը, վոր հովահարով մը դեմքը կը հովահարե, նույնիսկ ձմեռվան ամենասաստիկ ցուրտ որերուն մեջ, վոր չերեսները մեկ մը աջ մեկ մը ձախ կը դարձունե կես ծիծաղով, վոր մեջքը միշտ կը կոտրտե և չերկու բոպեյին անգամ մը գլուխը կը շտկե, վոր ձեռնոցները կը հանե, նորեն կը դնե, շրջադգեստը կը շտկե, չհալնիւր, կը կանգնի, նորեն շտկելու ջանք կընե, չերբեմն բերանը բանալով գիտամբ կը խնդա, վոր աղանները ցուցցտա. չեթե չխնդար՝ գիտցիր, վոր բերանին մեջ աղուա չկա, հասկցիր, վոր աչք կինը Միջագլուցցի չե. իսկ յերբ անոր քովը աղեկ հագված չերիտասարդ մը գտնվի ու հետը խոսակցի, չերբեմն Ֆրանսերեն բառեր դործածելով, աչք կնկան սիկարա հրամցունե և քթին մեջ մտնելու չափ մոտենա անոր՝ հազար վոսկիի գրավ դիր, վոր ասոնց չերկուքն ալ Միջագլուցցի չեն. չեթե կորսնցնես հազար վոսկին՝ չեկուր ինձմե առ:

Արեւն չայրելու համար՝ իգական սեռն, քիչ բացառութեամբ, չերեսը բրինձի փոշի կը քսե. բայց Միջագլուցցի լուսինն արևու չափ կիզիչ ըլլալուն պատճառով՝ գիշերներն ալ կը գործածե այն փոշին, վորուն վոմանք սկսած են հիմա քովաքես խոսնել:

Միւրասուն որիորդները կամ տիկիններն յերբ տուն մը այցելութեան չերթան՝ սանդուխին չերկրորդ աստիճանն կերկնցընեն իրենց վոտներն և սղասավորներու քաշել կուտան իրենց կոշիկներն, վորպեսզի պզտիկ վոտներն ամենուն ցուցց տան. իսկ չերբ վոտները մեծ ըլլան՝ սղասավորներուն քաշել կուտան իրենց ձեռնոցները. շատ մը կիներ ալ իրավամբ քաշել տված են իրենց աղաները, վորովհետե մեծ ելին անոնք և մեծ ցավ կը պատճառելին... գեղեցկութեան:

Տիկիներեն վոմանք կոմսուհիներու կամ մարքիզուհիներու նմանելու համար ամեն հնարք ի գործ կը դնեն: Յերբ զավակ մը բերեն աշխարհ՝ իսկույն ստնտուցի մը կը հանձնեն զայն, վասնզի ազնվականութեան դեմ ե, վոր կին մը յուր զավակին կաթ տա:

Արդոք պիտի գտնուի որն, ուր սպասուհիներն բերեն իրենց տիկիներուն բերելիք զավակներն ալ, վորպեսզի փափկասուն տիկիներն ծննդաբերութեան ծանր գործին ալ խալտին...

Միջադուղցին ուրիշ թաղեցիներու բաղաժամաբ ավելի քաղաքավար ե: Խնդում չերես ունի. յեթե չերեմն տխուր տեսնես զինք՝ պատճառն թաղին ազգային վարժարանն ե:

Գլուղիս կլիման չեզոք ե. վնչ բարիք կը գործե և վնչ չարիք, բնակիչներն ալ իրենց կլիմային պես են:

Կան յերիտասարդներ, վոր ինքզինքնին միշտ բարձր դրից մեջ կը գտնեն. չեթե ասոր պատճառը փնտովի՝ դուրին եհամող վիճակ, վոր աչք յերիտասարդներն աչքափ բարձր չափով կարծես յին զիրենք՝ չեթե ոգին ավելի թեթեւ չըլլային: Գլխաւորաբար մեր ազգին մեջ շատերու բարձրանալուն գաղտնիքը բնական որոնքով միայն կը լուծվի: Ծանրերը միշտ գետնաքարք կը ֆնան և թեթեւները վեր կեննեն: Այս գլուղին մեջ կան յերիտասարդներ՝ վորոնց գլուխն յեթե չվան մը անցունենք՝ կրնանք զանոնք թուլցիկի պես բարձրացունել... ողին մեջ:

Ավելորդապաշտութուն չկա այս գլուղին մեջ. (վոսկին այս հաշվին դուրս ե). մանավանդ թե պաշտապաշտութուն կը տիրե հոս. Ամենն ավելի պաշտովոյ կուռքը նորաձեւութունն ե:

Զբոսանքը շատ կը սիրեն հոս. չեթե տան մը մեջ պարն սկսի՝ առ նվազն վեց որեն կը վերջանա. իսկ չերբ ազգային խնդրո մը վրա խոսք բացվի՝ կես ժամն ավելի չտեվեր:

Ներքին բերքն ե— չեւակ և բամբասանք: Յեւակն ամեն տարի առատ չըլլար. իսկ բամբասանքն, վոր շատ անձրեւն կամ շատ չեւաշտութենն վախ չունի՝ ամեն տարի առատ հոգնէ կուտա: Ծառ տեղերին հոս կուգան՝ աչս ապրանքն գնելու համար:

Արտաքին բերքն ե— գողեր և ծովեղերքին վրա շուներու գլխակներ:

ՔՈՒՄ ՔԱՐՈՒ

Կ. Պոլսո մեջ յերկու Գում Գարու²⁰⁸) կա — ներքին Գում Գարու և արտաքին Գում Գարու, ինչպես Մասիսի մեջ յերկու տեսակ լուր կա — ներքին լուր և արտաքին լուր: Մասիսն լուրերուն արտաքինը ներքինն վորոշելու համար, յերեմն ուշադրութուն պետք ե, վասն զի շատ անգամ Ամերիկայի մեջ կնկան մը չերեք զավակ մեկն բերելուն լուրը Մասիսի մեջ ներքին լուրերուն աակը կը կարգացվի. ինչպես վոր ուրիշ լրագիրներու մեջ շատ անգամ պատահած եմ հացագործի մը եղն, վոր չերբ փողոցի մեջ դա՝ ներքին լուրերու մեջ կանցնի, իսկ չերբ Պատրիարքարանի մեջ յերգե՝ ազգային լուր կըլլա: Իսկ Գում Գարուն ներու մասին այս շփոթութունները չկան. ներքինն չերեք արտաքինին մեջ և արտաքինն ալ բնավ ներքինին մեջ տեսնված չե: Բայց վորովհետեւ տուալին անգամն ե, վոր ներքին Գում Գարուն չերթալ պարտիլ կուգես՝ չես հանձն կառնեմ քեզի առաջնորդել:

Ժամը մեկ ու կես ե. Մահսուսիկի շոգենամը²⁰⁹) ալ ճիշդ մեկ ու կեսին կամուրջն²¹⁰) կը մեկնի Գում Գարու չերթալու համար: Վաղե, բայց կաղաչեմ ուշադրութուն ըրե, վոր ծովը չիյնաս, չերկաթյա կամուրջն փայտյա կամուրջն անցած ատենդ: Կը խնդրեմ, վոր վերարկուդ ալ խնամքով կոճկես, վասն զի կամուրջին վրա կան տեսակ մը մարդեր, վոր գրպանդ կը խառնեն և ինչ վոր գիտեն հոն՝ կառնեն... այս տեսակ մարդերու — գավառներու մեջ — քայմազամ²¹¹) անունը կուտային անցյալները թուրք լրագիրները: Ժամը չերկու զարկով, և շոգենամը տակավին տեղն չարժիք. համբերե, հիմա կը մեկնի. մեր յերեսփոխանական ժողովն ալ առջանը ժամը հիշս վեցին պիտի բացվի կը ծանուցանե, և ատյանը

ութին կը բանա: Ահա նախապետը լերեցաւ... վեր լերէն նստեմ, վոր հով առնես... նախապետն ահա վարտիքը կապեց, ձեռներն ալ լվանալուն պէս կը մեկնինք... Շուտ ըրեմ, աճապարեմ, հովանոցդ բաց... շատ թըշնցամբ... ֆրաս չունի. ուրիշ անգամ լերը շոգենալը սուլել պատրաստվի՝ հովանոցդ բաց, վոր շոգիլին չթըշվիս... աչքդ լույս, ճամբա լերաք... Սաբայ պուրնուն²¹²) դառնալնուդ պէս... բայց ինչո՞ւ կայնեցաք. կարծեմ ածուխը հատաւ... նախապետն ինչո՞ւ չեն արթնեցներ, վոր պեաք լեղածը նայի... նախաստիններն ո՞ւր են... ահա հոս են, սեմալի կը խաղան. անոնք իրենց տեղին չեն լերերար՝ մինչև վոր հրաման չառնեն իրենց նախապետին, վոր չարթննար՝ մինչև վոր իրեն ձայն չտրվի նախաստիններին, վոր իրենց տեղին չեն լերերար մինչև վոր... (կրկնեմ քանի անգամ): Ահա ճամբորդներն, վոր շարժելու միտում ունենալ կը թվին... Յեթե ածուխ չկա՝ փառք աստուծո, հողմ կա. հողմը կարող է ածուխին պաշտոնը վարել. բայց առաքատ չկա... Ինչո՞ւ ապշած եք, պարոն ճամբորդներ. բացեք ձեր հովանոցները հողմին առջև, վոր շոգենալը շարժի... Վո՛չ, վո՛չ, համբերեցեք, ահա նախակ մը, վոր Բում Բաբու կերթա. չվան մը ձգեցեք, վոր շոգենալը քաշե. աչք թիավարները բարի անձեր են, ձեր խնդիրքը չեն մերժեր, մանավանդ թե ձեր ուղածն ալ ինքնորոշութուն չէ: Տեսեք ինչ լեռանդով թի կը քաշեն... կես ժամեն Բում Բաբուի նախամատուցը կը հասնիք: Վերջապէս հասաք...

Բարեկամ, ձախ կողմդ դարձիր, բայց լերկաթուղվո գծին վրային մի քալեր: Հիմա ա՛յ կողմ դարձիր և սա նեղ փողոցներն են մտիր. քիչ մը քալելիդ յետքը ինքզինքդ կը գտնես բարձր շենքի մը առջև, ու յերկու մարդ քու թեմերեդ կը բռնեն և աչք շենքին բռնութեամբ ներս կը հրեն դեք: Մի վախճար, բան չկա: Չախակողմյան սանդուխեն վեր լերի և բոլոր սենյակները պտըտեմ, մեջը մարդ չես կրնար տեսնել: Ինչո՞ւ. վասնզի բոլոր սենյակներուն դռներուն վրա հետեյալը գրված է. առանց գործոց նետ մտնելն արգիլյալ է: Ժամը չորս է, բայց այս արեւելքն խղճի մտոք կը հարգվի: Բում Բաբույի մեջն ես, բարեկամ, և աչք շենքն ալ Պատրիարքարան է. Պատրիարքարան ըսվելուն բուն պատճառն ալ անկանոն ընթացք մը ունենալն է: Պաշտոնյաները կսկսին գալ. դեք բռնող յերկու մարդերն կառաջնորդեն քեզի սենյակ մը՝ ուր սև աչերով, սև ընքվիներով, կլոր և սիրուն դեմքով

մարդ մը անուշութեամբ քու վորպիսութեանդ, թաղդ, տարիքդ և արհեստդ հարցունելին չետեմ կըսեմ.

— Պարոն, յերեք տարվան աղգային տուրք պիտի վճարեք, յոթանասունըհինգեն՝ յերկու հարյուր քսանհինգ դահեկան:

Ներումն կը խնդրեմ. յեթե գիտնայի վոր աղգային տուրք վճարած չեյիր՝ կը հորդորելի դեք Պատրիարքարանի փողոցն չանցնելու. բայց վորովհետեւ անգամ մը մտած ես հոն՝ պարտք տալու չես առանց վշտանալու, վասնզի չուր պարտքը վճարելու անհոգութուն ընողներուն համար Պատրիարքարանն ասկե ավելի դուրին ճամբա չէր կրնար գտնել:

Պատրիարքարանն դուրս յնկելուդ պէս՝ դիմացի դռնն ներս մտիր. Մայր յեկեղեցին է աչն: Այս յեկեղեցվուն մեջ ժամանակավաճեն որ ս. պատարագ կը մատուցվի, իսկ հիմա շարաթը հաղիվ մեկ անգամ պատարագ կըլլա հոն: Բսանը յոթ քահանա ունի աչ յեկեղեցին, վորոնք Յենի Բաբույի և Կետիկ փաշայի²¹³) յեկեղեցիներու մեջ ալ պաշտոն կը վարեն. սակայն չկարենալով իրենց որական ապրուստը ճարել—վորովհետեւ շատ կուտեն—շատ անգամ իրենց ծուխերուն տունները կը մնան, անոնց ննջեցելոց հոգվուն համար կուտեն կը խմեն: Ասոր համար է, վոր շատ անգամ յեկեղեցվուն մեջ քահանա չգտնվիր: Մայր յեկեղեցվո բակը յերկու գերեզման կը տեսնես. ասոնց միուն մեջ թաղված է Տատյան Պողոս ամիրա²¹⁴) և մյուսին մեջ կը քնանա Պեղճյան Հարություն²¹⁵), վոր յերկու հազար դահեկան ամսական կտակած է Մայր Վարժարանին, հազար դահեկան ամսական արտաքին Բում Բաբույի վարժարանին և հիսուն դահեկան ամսական բանտի յեկեղեցվուն. ափսոս, վոր աղգային լրագիրներուն համար և Պատրիարքարանի փողոցներուն մաքրվելուն համար բան մը չէ կտակած:

Յեկեղեցվուն քովն է թաղին վարժարանը, վոր համբավովոր լեղած է չուր հարուցած վեճերովը. Դասատուները շարաթը մեկ անգամ կը փոխվին հոս. ամեն որ նոր դասատու և նոր դրություն: Չար լեղուները կըսեն, թե այս վարժարանին մեջ ամենեք ավելի հարգ և պատիվ գտնող դասատուներն անոնք են, վոր աշակերտներուն շատ թուղթ, գրիչ, մեկան և մատիտ սպառել տալու դրություն կը հարգեն, և այս դրությունը շատ հաճելի չէ յեղեր Հոգաբարձութեան անդամներուն:

Մենք չենք ուղեր հալատալ, բայց հալատացողներուն ալ

հավատքը հերքելու հափ զորավոր փաստեր չունինք դժբախտաբար: Աստված չընե, չեթե հոգաբարձուներեն մեկն զերձակ ըլլա՞ր՝ աշակերտները շաբաթը մեկ անգամ նոր հագուստ հագնելու պիտի ստիպվեյին: Իսկ չեթե մեկն ալ սափրիչ ըլլա՞ր՝ անպատճառ հետևյալ տողերը ներքին Կանոնագրության մեջ պիտի անցնեյին. «Աշակերտները պարտավոր են ուր չերեք անգամ կտրել տալ իրենց մազերը»:

Ո՛վ անձնանվիրութուն, գոնե անգամ մը քու յերեսդ տեսնելու պատիվը պիտի չունենանք: Տրամիլ պետք չե. կեդրոնական զբոսարանը գնա քիչ մը, վոր բացվիս: Այդ դարձիր, և զեմդ կեննեն չերեք զբոսարան. մեջ տեղի զբոսարանը մտիր, ուր սեղանի մը վրա դրված պիտի տեսնես աղգային քանի մը լրագիրներ, վորոնց վրա դրված կան ողբի շիշեր և գավաթներ: Թաղին բոլոր աղգասերները հոս կը հաճախեն և ողբ խմելով աղգային կենսական խնդիրներու վրա կը խոսին: Վողջ ըլլան: Անդին քանի մը չերիտասարդներ նստած, Պրին և Բեքիա կը խաղան. վողջ ըլլան ու խաղան: Ասդին քանի մը անձեր ջերմ վիճաբանության մը բունըված են. ասոնք թաղական խորհրդո անդամներ են և անանկ բարկությամբ իրարու չերես կը պոռան, վոր կարծես թե ասոնցմե մին չեկեղեցին բան մը ծախած և ստակը ծոցը դրած ե... առանց յուր ընկերներուն իմաց կամ բաժին տալու: Ուրիշ մը բարձր ձայնով խաղ կը կանչե. վերջապես խառնակութունը կը թաղավորե հոն: Սակայն այս կեդրոնական զբոսարանը դարձյալ շատ կանոնավոր ե այն ամեն բաներեն, վոր կեդրոնական անունը ունին, ինչպես կեդրոնական վարչություն, կեդրոնական սնունդ, կեդրոնական վարժարան, վոր տակավին չբացվեցավ:

Յեթե այս զբոսարանն չախորժեցար՝ ծովու վրա կառուցված և անեմ-սաղի ըսված զբոսավայրը գնա. հոն հանդարտ գլուխով կընաս նստիլ, վասնզի հոն թաղական խորհուրդ չկա, և հետևապես, կռիվ ալ չկա: Գլուխդ վեր առ և սա պատահանեն ներս նայե. տես սա կինը, վոր աղքատ ըլլալուն պատճառով բուսրա չե կըցած առնել և ալուր կը քսե չերեսներուն. խեղճ կնիկ... Բայե... նայե. սա գեղեցիկ աղջիկը հափհեփին հետ կը խոսի դրան առջև. Խնչ կը խոսի արդյոք... անշուշտ Հայկական խնդրույն վրա չխոսիր. կարմիր ներկ առած ե առջի ուր և վճարելու դրամ չունի խեղճը... Խնչ խեղճութուն: Ահա քանի մը հալ չերիտասարդ

ձկնորսներ գինետունն չերած՝ չերգելով կուգան. մի վախնար, ասոնք մարդու չեն դպչիր, պատվավոր կարծված անձերեն շատ պատվավոր են ասոնք, վոր ստախոսութուն, նենգութուն և նախանձ բնավ չունին: Ճամբադ շարունակե, և ահա Անեմ-սաղի կոչված զբոսավայրը հասար: Նստե քիչ մը և չեկող պարոններն և որիորդները դիտե: Ա՛յ քեզի որիորդ մը, վորուն շրջագետը իյնալու վրա չե, կերևի վոր աղեկ կապած չե... ահա կին մը, վոր կուրծքը բացած՝ տղուն կաթ տալով կամաց-կամաց կուգա խնդալով... ասդին նայե, հարյուր տեսակ գույն կա սա կնկան հագուստներուն վրա: Յերիտասարդները կսկսին գալ: Բում Բաբուցին մեծավ մասամբ հոս կը հաճախե, ուր շատ մը ցեանցուցեք և խոսկապեք տեղի կունենան վոչ պաշտոնապես: Յերկու սեռերն հոս նշանացի կը խոսին իրարու հետ՝ չերը իրարմե հեռու մնան, իսկ ականջե ականջ կը խոսին՝ չերը իրարու մոտ լինին. բնությունը՝ կարծես չերբեմն ականջն աղջիկներու աշտերուն վրա դրած ե, վասնզի չերբեմն չերիտասարդներն աշտերուն վրայեն կը խոսին, իրենց խոսքն դուրսով լսելի ընելու համար: Այս տեսակ խոսակցութունն շատերը քիչ մը տարորինակ գտնելով՝ չեն ուզեր իրենց ընտանիքը հոն տանիլ:

Յեթե նեղվեցար հոս՝ Պատմախանե կոչված զբոսարանը գնա... տես այրերու և կիներու բազմութունը: Այ կողմդ նայե, երիկ կնիկ իրարու հետ կռվի բռնված են... երիկը փայտով կապոնա կնկանը՝ վոր ապտակ կը ցցունե երկանը... չերկու տարու տղա մ'ալ անոնց քովը նստած կուլա... կինը թաշկինակով շրջագետը կը սրբե. կարծես տղան մորը գիրկը միղած ե և պատճառ տված ե վիճաբանության: Ընտանիքներու մեջ պզտիկ տղաներու մեզը մեր չերեսփոխաններուն հարցապնդումին կը նմանի, միշտ վեճ կը հարուցանե:

Յերկուր քիչ մ'ալ աղջիկներու վարժարանն չերթանք, վոր Լուսավորչյան կը կոչվի և զոր Տեր Սուքիաս քահանա կառուցած ե 1868-ին, աղգեն ոգնութուն մուրալով: Սույն վարժարանն ժամանակավ չերեք հարյուրի չափ աշակերտ ունի, իսկ հիմա վոր Տեր Սուքիասեն առնված և թաղական խորհրդո հանձնված ե՝ հազիվ ութսուն աշակերտ ունի: Կը կարծվի վոր հայերը չեն ուզեր աղջիկ զավակ ունենալ, աղջիկներու կանոնավոր վարժարան մը չունենալուն համար:

Այս թաղին մեջք կան Մեղպուրյան, Սուրենյան յեւ Սգոանյան վարժարաններ, վորոնց առաջին յերկուքը յերկու սեռն աշակերտներ կընդունին, իսկ վերջինը միայն իգական սեռն կընդունի... Շիտակը խոսելով՝ հայրերն և մայրերն անհոգություն չեն ընելու այս վարժարաններու տղա հասցնելու համար։ Այս մասնավոր վարժարաններուն ալ հաջողություն մաղթենք, քանի վոր թաղային վարժարաններ հուսահատած ենք։

Թաղիս ալրերը մեծով մասամբ արհեստավոր և պատվավոր մարդեր են, վոր ժամանակով աղագային խնդիրներու մեջ մեծ դեր կը խաղային, իսկ քանի մը տարիներ ի վեր իրենց թաղային վարժարանին վեճերովը կըբոսնուեն։

Ասոնք գրեթե ընդհանրապես սբիրիքուալիսթ²¹⁶) են, ամենքն ալ ողի կը խմեն, միայն թե ողին ՏՐՈՂ տեսակին կը գործածեն։ Այս տեղի ժողովուրդն այնպես համոզված է, թե ողին տեսակ մը ջուր է, վոր տխրության վրա թափվելուն պես՝ ուրախության կը փոխե զայն։ Տյուզը տարբեր յեղանակներով կը գործածվի հոն. վոմանք առանց ջուրի կը խմեն. քիչ մը ջուր գնդիներ ալ կան. են վոր առաջ քիչ մը ջրով կը լվան իրենց ընկերանը և վերջը կը խմեն ողին, վոմանք գավաթով կը խմեն, իսկ վոմանք շիշով, և մեկ քանիներ ալ տակառով։ Գավաթով խմողները կը ծաղրվին ինչպես ումեոբաթ²¹⁷) բժիշկներն ալորաքներեն²¹⁸)։

Թե ալրերը և թե կիները շատ կը սիրեն բաղնիքը. ձմեռը տաք բաղնիքներն դուրս չեն չելներ, ամռան ալ ծովու բաղնիքներն։ Ամենքն ալ սազն մը ալելի հաջողակությամբ կը լողան, բայց չափազանց տնտեսագետ ըլլալուն պատճառով՝ մինչև վոր ութը ինը ժամ ծովու մեջ չմնան՝ բաղնիքանին վաթսուն փարա վճարելու համար դժվարություններ կը հանեն։ Խնայողության համար վեց ամիս Մեծ Պահք կը բռնեն և լուրիացով ու ձեթով կանցունեն իրենց որերը։

Առաջվան ջերմեռանդությունն անհայտ չկած է այս թաղին և անոր հաջորդած է անտարբերություն աղոթքի մասին։ Կիրակի առավոտ մը գնա Մայր Յեկեղեցին. ժողովուրդն մարդ չպիտի տեսնես հոն. յեթե քահանա մը տեսնես՝ մոմ մը վառն և դուրս ելիր։ Կիները միայն Ս. Զատիկին կամ Ս. Ծնունդին որերը կերթան յեկեղեցին, և այն ալ վոչ թե աղոթելու համար, այլ իրարու հագուստներու վրա դիտողություն ընելու, աղջիկներն

մանչերուն նշանելու և չերբեմն ալ յեկեղեցվուն մեջ դավակ բերելու համար։

Իգական սեռը թուղթ բացող կնիկներու ալ կը հավատա, պակաս քանոգ խաթուններուն ալ. յեթե կին մը հորի գուշկ կորուսնէ՝ թուղթ բացողներու կը դիմե կորուսած գուշկը գտնելու համար— Թասոնի՞ դիմելու յեր. յեթե աղջիկ մը յուր սիրականը կորուսնէ՝ պակաս քանոգ կուտա։ Այս նախապաշարունակները շատ տուներու մեջ դեռ կը տեսնվին։

Իգական սեռը հոս պճնասեր չէ, հագուստի մասին շատ դրամ չմտնիր. տարին անգամ մը Բերա կելնե և Լուչի Ֆիլիբի²¹⁹) ժամանակն մնացած գլխարկ մը կառնե քառապատիկ գնով և չեա կը դառնա. ասոր կըսեն, հնաձեռություն նորաձեռության... Հագուստ վաճելեցնելու համար ալ չերկու-չերեք ժամ հայելիին առջևը մնալ չուզիր, հագուստն միմիայն յուր անձը պաշտպանելու համար կը հազնի, և ասոր համար է, վոր չերբեմն գուլպաները սխալմամբ ձեռներուն կանցունեն և ձեռնոցներն վոտներուն։ Վորչամփ չերխառաքներ կան, վոր ասանկ աղջիկներ կը փնտռեն։ Աշխատասեր են. առավոտն մինչև չերեկո կամ կար կը կարեն, կամ լաթ կը լվանան և կամ տախտակ կը սրեն. տեսակ մը աղջիկներու կամ կիներու պես ծունկ ծունկի վրա դրած պատուհանին առջև չեն նստիր շաբաթներով։

Այս թաղին մեջ կը բնակի Պ. Մինաս Քարամաճյան, աղագային չերեսփոխան և Լույս²²⁰) հանդեսին խմբագիր, վոր խմբագրական տաժանիկ ասպարեզին մեջ ազգին կը ծառայե յուր լուրջ և զավեշտական հոգվածներով և սակայն դարձյալ պետք չկած քաջալերությունը չգտնիր։ Հոս կը բնակի նաև աղագային չերեսփոխան և Հայրենիք²²¹) խմբագիր Պ. Մկրտիչ Մելիքյան, վոր խմբագրական ծանր բեռն տակ կը ճնշվի։ Զգիտեմ, թե այն ժողովուրդըն, վոր Հայրենիք մը չէ կարող ապրեցունել, իրավունք ունի Հայրենիք պոռալու... Հոս ծնած է գերապատիվ Մատթեոս չեպիսկոպոս Իգմիրլյան. Պատրիարք կուզե ըլլալ և չի կրնար։

Այս թաղին սահմանն է արևելքն ողի, արևմուտքն գինի, հյուսիսն քոնյաք, հարավն ըմ. կը կարծվի թե նոյն նահապետ²²²) Բուժ Բարուցի յեր։

Կառավարությունն վոչ սահմանադրական է, վոչ ալ միապետական. անհոգությունն է, վոր կը վարե թաղին գործերը։

Նշանավոր և Մայր Յեկեղեցւո ջրհանկերներու խումբը, վոր կտրիճ չերիտասարդներէ կաղմված և և մեծ պատիւ վաստկած և չուր ճյուղին մեջ: Յեթե հարուստ ըլլալի՝ ամբողջ թաղ մը կրակի կուտալի՝ այս կտրիճներու վազելը տեսնելու համար:

Քում Քարուն շատ խոնավ և, բայց Քում Քարուցին շատ առողջ ե: Խոնավութիւնը միմիայն անոնց լաթերուն վրասած և, և լեթե չերբեմն Քում Քարուցի մը տեսնես, վոր բորբոսած հագուստով կը վազե՝ հասկցիր, վոր ասոր պատճառն խոնավութիւնն և:

Մոռցանք հիշելու, վոր այս թաղին մեջ հազար չերկու հարյուր տուն հայ կա և չերկու հազար չորս հարյուր գինետուն, այսինքն տուն զուլիս չերկու գինետուն. բայց թաղեցին այս թիվին գոհ չըլլալով՝ բողոքած և, և չուր բողոքն ալ նկատողութեան առնվելով վորոշված և հազար գինետուն ևս ավելցունել:

Գ.

Ք Ա Ս Ը Մ Փ Ա Շ Ա

Յերկաթյա դիմակ մը պետք և մարդուս այս թաղը պարտելու համար: Փողոց մը մտնի, նույն փողոցին մեջ բնակող կիներն ու նաղլիկներն պատուհաններու առջև կը վազեն և քու գալիք տեսնելով՝ իրարու հետ խոսիլ կը սկսին.

— Տիկն, սա դիմացեն չեկողը կը ճանչնաս:

— Չեմ ճանչնար, բնավ տեսած չունիմ:

— Այս փողոցին մեջ մեկը կը փնտռե արդյոք:

— Ո՞վ գիտե:

— Վաչելուչ չերիտասարդ մ'ե:

— Ի՞նչ աղվոր մազեր ունի:

— Ասոր մազերուն աղվորութիւնն ալ հըր և, սատանա կը նմանի:

— Ապուշ-ապուշ նայվածք մ'ալ ունի...

— Ասկից դատ ոճիքին վրա ալ չերկու մատ չեղ կա, շոգե-նավի մեջ մեքենագործ և, ինչ և:

— Վոտքդ պազնեմ, ատ լի՛նչ մեծ վոտք ունի.

— Կամաց խոսե, քա, կը մոտենա կոր:

— Թո՛ղ մոտենա:

— Աչքերն ալ պատուհաններուն վրա չե:

— Աս լի՛նչ անշնորհք մարդ և:

Նույն փողոցին յեւթր, խնդիրը կը սաստկանա. իգական սեռն անպատճառ և անպատճառ կուզե դիտնալ, թե ո՞վ ես դուն, թե մազերդ ինչո՞ւ աղվոր չեն և թե ոճիքիդ վրա ինչո՞ւ չերկու մատ չեղ ես դրած, և մինչև վոր ասոնք չհասկնա՝ քունը չտանիր:

Բայց թողունք իգական սեռն պատուհաններու առջև և մենք մեր գործին նայինք:

Ինչպես վոր առանց փուշի վարդ չըլլար, այնպես ալ առանց փոշանոցի Բասմ փաշա չըլլար, և չեթե վարդը սիրողն անոր փուշն ալ սիրելու չե՝ Բասմ փաշա նստողն ինչո՞ւ անոր կոյանոցն չհարգե, մանավանդ վոր սուլն կոյանոցն չեթե Փարիզ փոխադրվեր՝ տարին մեկ միլիոն Ֆրանկ հասուցթ կը բերեր... Շահու անսպառ աղբյուր մ'ի այս կոյանոցն Յեվրոպայի մեջ, բաց թուրքիո մեջ ինչպես տաղանդն ու հանճարն՝ նույնպես այս կոյանոցն քաջալերություն չգտներ և շատ անգամ հալածման յենթակա չե... Թող զրուցեն թե թուրքիո մեջ շահու աղբյուրները ցամքած են...

Յեկուր սա նեղ փողոցեն վեր չեկնեք և Հայոց թաղը մըտնենք, վոր Յեճի չեռմե կը կոչվի ճիշտ այն գիրքերուն պես, վորոնք հարցուր հիսուն տարի առաջ տպված են և նոր՝ օպագրություն կը կրեն իրենց չերեսը:

Սուլն թաղին մեջ ութսունհինգ հայ ընտանիք կա, վոր չորս հարցուր հիսուն հոգի կը պարունակե: Ասոնց մեջ բնավ բարեպաշտ չը գտնվիր, վասնզի չերբ չեկեղեցի չերթա՝ ուրիշ մարդ չես գտներ հոն, բաց միայն Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետ: Այս Հայրապետն չերեսը միշտ ծամածռած ե. կերևի վոր շատ բարկացած ե թաղեցվույն, վոր յուր քրիստոնեական պարտավորությունները չճանաչեր: Վոմանք կըսեն թե թաղեցին տեղվույն տեմիր պառ քահանային հետ աղեկ չըլլալով՝ ուխտ ըրած ե չեկեղեցին վոտք չկոխել. տեմիր պառ քահանան ալ ուխտ ըրած ե չեկեղեցին գուրս վոտք չկոխել. սակայն զարմանալի չե, վոր մեր ազգայինները չերբ գինեգլանի մը բարկանան՝ բնավ ուխտ չեն ըներ գինեատունը վոտք չկոխելու...

Յեկեղեցվույն դեմը դպրոց մը կա Ս. Մեսրոպյան վարժարան²²³) անվամբ: Ս. Մեսրոպը հոն բավական կտանջվի, առավոտե մինչև չերեկո աշակերտներու արժող կը կերցունեն, անոնց քալել կը սորվեցունեն, անոնց վարտիքը կը քակի և կը կապե: Խեղճ Ս. Մեսրոպ. չեթե տան մը մեջ սպասուհի չերթար՝ չորս հարցուր գահեկան ամսական կառներ... Մայրերն զավակ բերելուն պես՝ Ս. Մեսրոպին կը հանձնեն դանոնք, վոր դաստիարակվին: Թաղականները առաջին տարին ճիգ մը ըրին և դպրոցը քիչ շատ բարեկարգեցին. այս տարի հոգնություն կառնեն՝ վորպեսզի դատարի նորեն սկսին գործելու:

Հոս կը բնակի Պ. Խ. Սարաճ, վոր յուր թաղակիցներուն ուսման փափաք ներշնչելու համար հոգվածներ կը հրատարակե Հայքնիսի մեջ և վորոնց վերնագիրը ընտրած ե Դպրոց յեվ ազատուններն, վորոնք իրենց գլուխ ունին Բագսը²²⁴): Այս չերիտասարգն չեկեղեցվո քով հիմնած ե թանգարան մը, ուր չերբեմն կը մտնե և փոշիները թոթվելով դուրս կենն անկե այն հուսով, վոր թաղին տղաները կարգալ սորվին և որ մը գան կարդան հոն, թող Պ. Սարաճ այս հուսով ինքզինքը խաբե:

Թաղիս փողոցները այնչափ նեղ են, վոր մարդս անցած ժամանակը կը կարծե թե քարս հագած ե, շունչ առնելու համար նեղություն կը դգա:

Տուներն այնչափ սիրով գրկած են զիրար, վոր վոչ արևն և վոչ անձրևը կարող են իրենց ալեկեցությունը ներգործել փողոցեն անցնողներուն վրա:

Թաղային կռիվները պակաս չեն, և ամենամեծ քաջություն կը սեպվի հոս կռիվ հանելին չետքը կանոնավոր կերպով չետ քաշվելը:

Յերբ ոտարեն հարձակում մը տեղի ունենա՝ այրերը չետ կը քաշվին և ասպարեղը կը մնա գեղեցիկ սեռին, վոր գրեթե ամեն կռիվներու մեջ հաղթանակը կը տանի:

Չրոսանքի տեղ չկա. թաղեն քիչ մը հեռու կա Ոգ մեյճանիի դաշտը, ուր Սերը միշտ կը պտրտի հոն հաճախողներուն մեջ տեղը:

Փողոցներեն ճանճ մ'անգամ չանցնիր, վասնզի ան ալ գիտե, վոր բամբասանքի պիտի յենթարկվի:

Գեղեցիկ սեռը աշխատասեր ե, կար կը կարե, գիշերներն անքուն մնալով կաշխատի և աղվոր հագվել կը սիրե, բաց հագուստը վալեցնելու մեջ միշտ չերջանիկ չե:

Հոս շատերը մարդուս մորուքին կը խնդան, վասնզի այրերուն մեծ մասը սավրիչ են. մաս մ'ալ կա, վոր միշտ տխրագեմ ե, վասնզի դարբին ե և չերկաթի հետ կաշխատի մինչև չերեկո և փափուկ խնդիրներու մեջ մտնել չուզեր: Յերկու մասն ալ աշխատասեր և գործունյա չեն՝ չերբ ածելի և կռանի վրա չե խնդիրը, իսկ չերբ իրենց զավակներուն դաստիարակության վրա

խոսք բացվի՝ այն ատեն անդամալուծ կը կտրին և պրոպատիկա-
ալազանին մեջ նետվելու փափաք ալ չեն զգար:

Քասըմ փաշայի ողբ շատ աղեկ և բժիշկներու համար. քանի
անգամ վոր ֆոլեալ չեղած և մայրաքաղաքիս մեջ՝ Քասըմ փաշա-
յի մեջ ծնունդ առած և և ուրիշ թաղի մեջ մեռած և: Շատ աղքատ-
բժիշկներ այս թաղին ողին շնորհիվ մեծ հարստություններ դի-
զած են:

Այս թաղին ողբ ամառվան չեղանակին մեջ միշտ լուծում
կը պատճառեն: Թուրքո-ուսուկան կոիվեն առաջ Արևելյան խնդրույն
լուծում տալու համար դեսպանախորհուրդն այս թաղին ստո-
րոտն ըրավ չուր նիստերը:

Այս թաղին մեջ որենք մը կա, վորով աղքատներուն խստիւ
արգիլված և հիվանդ ըլլալը. հարուստները միայն իրավունք ու-
նին հիվանդանալու: Անցյալներն աղքատ մը դիպվածով հիվան-
դացավ և թաղականին դիմեց, վոր թուղթ մը առնե ու Փրկիչի
հիվանդանոցը չերթա: Թաղական խորհուրդն նկատելով, վոր
այս աղքատն որինաց դեմ վի ըվելով հանդգնած և հիվանդ ըլլա-
լու՝ զայն պատժելու նպատակով ամբողջ վեց ամիս մերժեց անոր
թուղթ տալ: Աղքատին ճարը հատնելով՝ տեղե մը տասը դահե-
կան ճարեց ու թաղականին տալով հաջողեցավ անկե թուղթ մը
առնելու և այդ թուղթով Փրկիչ մտնելու: Այս որենքը շատ արդար
և: Թաղականը մոտերս ծանր տուրք մը պիտի սահմանե յեղեր
բոլոր այն աղքատներուն համար, վոր կը համարձակին որենքն
վտանակիս ընելով հիվանդանալ:

Այս թաղին գետն և այն նշանավոր ականն, վոր Բերային
կը վազե և այս թաղին անցնելով ծովը կը թափի: Այս գետին վրա
զրոսարաններ շինված են, ուր կերթա թաղեցիկն՝ քիչ մը ող-
առնելու և ծխախոտ ու կլկակ քաշելով ժամանակ անցունելու:
Այս գետը կրնա նավարկելի ըլլալ, միայն թե ճամբորդներուն
քիթը կտրելու չե և կամ քիթը կտրած ճամբորդներ ճարելու չե:

Դ.

Պ Ե Շ Ի Ք Թ Ա Շ

Սըսսութ... ձայն մի հաներ, վերարկուդ կոճկե, ձեռներդ ալ
ննջեցալի մը պես կուրծքիդ վրա դիր և բարե բռնե. աջ կողիդ
մի նայիր, ձախդ ալ մի դառնար, գլուխդ վեր մի բռնե. վար
ալ մի բռնե. չիտեդ մի նայիր, առջևդ ալ մի նայիր. ահա ա-
սոնք են իմ հրահանգներս Պեշիքթաշի մեջ քալելու համար. ա-
սոնք են ահա այս թաղին փողոցի կանոնադրության հոգւածներն,
վոր մինչև ի վերաքննություն՝ սահմանադրության հոգւածներու
պես գործադրվելու չեն գոնե փողոցներու մեջ. իսկ չեթե այս շրջա-
նակը նեղ գտնես, ինչպես պատրիարքները սահմանադրության
շրջանակն, և անկե քիչ մը դուրս չելնել ուղես, ինչպես պատ-
րիարքները սահմանադրության շրջանակն՝ խստապահանջ չեմ
ըլլար և թույլ կուտամ քեզի, վոր գոնե առջևդ նայիս, վոր չիչ-
նաս, վասնզի չեթե իչնաս և չերկու վտաներդ ալ կոտրես՝ վոչ
վոք կուգա ձեռներդ բռնելու և քեզի ոգնելու, դու քեզի ոգնե,
վոր, կըսեն այս թաղին պարոնները, աստված քեզի ոգնե, և այն
վիճակի մեջ թող կուտան զքեզ, վոր աստված քովդ գա, ձեռներդ
բռնե և Վեզիր խանը տանի զքեզ վտաներդ կապել տալու համար:
Ժամանակավ Ինֆնտնտրյուն բառը չկար մեր աղբին մեջ. նույն
իսկ Ինֆնտնտրյուն հեղինակն անպատճառ Պեշիքթաշ բնակած
ըլլալու չե և հոն զգացած ըլլալու չե այսպիսի գիրք մը հորինելու
և հրատարակելու պետքը: Արդ, առջևդ նայե, վոր չիչնաս և վողջ
առողջ չեղնեք սա թաղին:

Սա նեղ փողոցն վեր յեղնեք ու չեկեղեցին մտնեք, վասն
զի շատ թաղերու մեջ անպատճառ նեղ փողոցն անցնելու չե
չեկեղեցի չերթալու համար— վոչ ապաքեն նեղ ճամբան միշտ
արքայություն կը տանի, Ժամանակավ այս թաղին մեջ ժողովուրդը

մեծ ջերմեռանդութիւն ունեւ յուր Քալբախին մեջ. Քալբախն-
 րուն վերնալին ի վեր ժողովրդւան մեջ բարեպաշտութիւնն ալ
 վերացաւ: Կրօնական ժողովը, աղայական խնդիրներով զբաղե-
 լով աղայական վորոշումներ տալու տեղ՝ պարտավոր եր ժողո-
 վուրդը յեկեղեցասիրութեան վարժեցնելու համար անոր գլուխը
 քալբախ անցունելու Տնա սա յեկեղեցին, ինչ ճաշակով շինված ե.
 ալ ինչ ոգուտ, մեջը հալատացական ավելի փոշի կա և փոշի-
 ներն մաքրվելու համար դրան քով գոնե մեկ վրձին ալ չկա: Թա-
 դականներն հըր են... քահանաներն ինչ կընեն, քարոզիչն հըր
 ե... Մի հարցունեիր. քահանաները իրենց քարոզչին հետ շա-
 բաթը հինգ անգամ կուի կընեն և վեց անգամ կը հաշտվին:
 Թաղեցվուչն ժողովրդւան մասը քահանաներու կողմը կը բռնե, իսկ
 ազնվական մասն՝ քարոզիչինը: Ինչ ե ապոնց կուվուչն պատճառը:
 Ինչ կընա ըլլալ կրօնականներու կուվուչն պատճառն. կամ իրենց
 հոսացածին չափ մարդ չմեռնիր և կամ հարսանիք ու կնոնք
 չըլլար, վորով իրենց պլոսնեյին հալատարակչութիւնը կը կորսվի:
 Միթե ասոնց պլոսնեյն հալատարակչութիւնը համար ամեն ոք մեռ-
 նելու չե, ամեն ոք կ'իմն մ'առնելու չե, ամեն ոք դավա՞ր ունե-
 նալու չե: Այո, յեթե այս անկարելի յե՝ Գերմանիային չեմտա-
 գետ մը բերելու չե, վոր կանոնավորե ասոնց պլոսնեյն:

Այս թաղն ալ ունի յերկու վարժարաններ, վորոնց մեջ ոք
 մը մեր թոռներու թոռները պիտի կըթվին՝ յեթե պեշիքթաշին
 հաջողի մինչև նուչն ուրը բարեկարգել յուր դաստիարակութեան
 շնքերը: Պեշիքթաշին, յուր վարժարանները կանոնավորելու հա-
 մար, քսան տարիչն ի վեր դաստուղ կը փոխե, հոգաբարձու կը փո-
 խե, գրասեղան կը փոխե, տնտես կը փոխե, գրիչ կը փոխե, թաղական
 կը փոխե, գիրք կը փոխե, և դարձալ չհաջողիր. թող անգամ մ'ալ
 դպրոցին աշակերտները փոխե, տեսնենք ինչպե՞ս կըլլա. յեթե
 դարձալ հոսացած արգելունքը չտեսնվի՝ այն ատեն հարկ կըլլա
 թաղեցվուչն փոխել յուր... յուր... լաթերը... վոնչ, յուր... գլուխը:
 Այս թաղին մեջ կը բնակի Իւթիւճյան, Մասիսի խմբագրատեղը,
 վոր կարող ե այդ վարժարաններու տնորենութիւնն յուր վրա
 առնել և թաղին դավաններուն դաստիարակութեանը աշխատել,
 սակայն կը վախնա խեղճն, վոր ասանկ պաշտոնի մը գլուխ անց-
 նելուն պես՝ քանի մը ամիսեն յուր տունը պիտի քարկոծեն. Պե-
 շիքթաշին ասոր փորձը տված ե դժբախտաբար—: Իւթիւճյան

այս քարկոծումն չեր վախնար՝ յեթե Մասիսի յեկամուտը նե-
 րեր շաբաթը մեկ անգամ նոր ապակիներ անցունել յուր տանը
 պատահաններուն:

Մասնավոր վարժարան մը կա հոս, վոր աշակերտներուն
 Հայոց պատմութիւն միայն կը կարդացունե: Մեկ դասագիրքը
 յերկու անգամ կը կարդացունե. աշակերտը դայն լմնցնելուն պես՝
 Փափագչանի Հայոց Պատմութիւն մը ²²⁵) կը տրվի իրեն. աս ալ
 յերեք անգամ կարդալն յետքը Սուրենյանը կը կարդա. ասոնց
 կը հաջորդեն մյուս Հայոց Պատմութիւնները, զորս յերեքական առ-
 գամ կը կարդա իրարու յետե: Աստված քառասուն տեսակ Հայոց
 Պատմութիւն տված ըլլալով մեզի՝ խեղճ աշակերտները դեռ չկրցին
 անոնց ամենը կարդալ լմնցնել, վոր մենք ալ տեսնելինք, թե այս
 դասատուն Հայոց Պատմութիւն-են վերջը ինչ դասագիրք պիտի տա
 աշակերտներուն: Այս դասատուն, կըսեն, միայն քանի մը
 հարուստ ծնողներ կը հրավիրե քննութեան:

Պեշիքթաշի մեջ մաս մը կա, վոր վաճառականութեամբ կամ
 արհեստով կապրի, մաս մ'ալ կա, վոր չգիտցվիր ինչպե՞ս կապրի,
 մաս մ'ալ կա, վոր պարտք դիզելով կապրի, մաս մ'ալ կա, վոր
 շաբաթականով կամ ամսականով կապրի: Այս վերջինն ամենեն
 մեծ մասն ե, վոր մեծ վարժութիւն ըրած ե՝ գետինը ծռելով
 գետնեն... բա՞ն մը առնելու... վոնչ, գետնեն բարե առնելու և
 տալու: Այս մասին բերանեն բնավ չպակսիր սիկառաց չիվ ծառա
 յեմը: Եթե ոք մը հարցուր անգամ ծառա յեմ չըսե՝ հետեյալ որը
 պաշտոնն կը հանվի: Այս խեղճերը պաշտոնն չգրկվելու համար
 վարժապետի մը յերդ մը շինել տված են ծառա յեմ նաքարաթով
 և ամեն իրիկուն սեղանը չնստած այդ յերդը կերգեն: Միջագլուղ
 ալ կերգեն նուչն յերդը Երեմիքի Խալիլի ²²⁶) մեջ պաշտոն
 վարող յերիտասարդներն, վորոնք Միջագլուղի աղագլխներուն
 կեսը կը կազմեն:

Ով վոր այս թաղը կերթա՝ պարտավոր ե արատ հանող փո-
 շիչն քիչ մը հետը տանելու, վասնզի քիչ մարդ կա, վոր այս թաղը
 մտած ըլլա և վրան արատ քսված չըլլա. հոս արատն առատ ե:

Անցալ դարե մնացած փաստարաններ կը գտնվին հոս և
 վորոնք աստուճո վերաբերալ դատերը կը փաստաբանեն: Ասոնք
 ժողովրդւան կողմն վավերացված փաստաբաններ ըլլալով՝ Պեշիք-
 թաշի ճարտասանները կը համարվին:

Աղաչելու և պաղատելու այնքան վարժված են, վոր չերբ այդ խղճուկ բարենքերով դեմք կենեն՝ կը ստիպվիս կամ պաշտոն մը կամ քսակդ անոնց տալ. ասոնք չերբ ուզեն՝ իրենց աչերեն արտասուք ալ կը հանեն:

Յերիտասարդութուն չկա հոս. յիրբ աղգալին խնդրո մը համար խորհրդակցիլ հարկ ըլլա՝ Սամաթիայեն ²²⁷) կամ ուրիշ թաղեն մարդ կը կանչեն. իսկ յերթե թաղն տեղեն առնես տանիս՝ ժողովուրդը ձայն չհաներ. այնքան խաղաղասիր ե:

Ինքզինքն ազնվական կարծող մասն առանց գինեւուն կամ նպարավաճառի մը խանութը հանդիպելուն շիտակ տուն կերթա. իսկ մնացած մասերը գինեւուն ալ կերթան զրոսարան ալ և նարտ կամ թուղթ կը խաղան կիրակի որերը մինչև յերեկո: Վո՞մանք ալ գիշերները միջմեկ տուն հաժարվիլով բռնա կը խաղան:

Ասոնք, յիրբ փողոցի մեջ գտնվին՝ իրենց բարեկամը չտեսնելու կը դարձնեն և բարե տալու կը վախնան, վոր չըլլա թե իրենց բարեկամին խաչվի մը հրամցնելով քսան փարա վատնեն:

Ընկերականութունն հոս այնչափ հառաջ գացած ե, վոր յերկու դրացի զիրար չեն ճանչնար՝ և միջադյուղցիին կը հարցնեն, թե ո՞վ ե իրենց քովի առնը նստող ընտանիքն:

Պեշիքթաշին այն աստիճան քաջասիրտ ե՝ վոր չորս Պեշիքթաշի կարող ե մեկ մուկի դեմ կռվելու: Ասին անգամ վոր Լապել Նիկի ²²⁸) ներկայացում տրված ե՝ Ալաֆսիտու ²²⁹) դերերը կատարելու համար Պեշիքթաշի դերասաններ փնտռված են:

Այրերը հոս շարաթն յերկու անգամ շապիկ կը փոխեն: Յերբ աղգասիրության վրա խոսք բացվի, կըսեն նախ բաղնիք և ապա ազգ: Ասոնք, թիչ բացառութեամբ, ժամերով սափրիչներու առջև կը նստին, և ածիլիկն առաջ յերեք ժամի չափ մազլիլով կը փետտեն իրենց պեխերուն ծալրերն և կըր ձե մը կուտան անոնց:

Դառնաք իգական սեռին:

Գեղեցիկ սեռն փողոցը քալած ժամանակը գետինը չնայլոր, այլ յերկինք և աս ալ թերևս չուր պարանոցն ցուց տալու համար: Կիներն հոս մեծ ազդեցութուն ունին իրենց երիկներուն վրա, վորոնք միշտ կիններուն չեաւեն կը քալեն ըստ ավտարանին՝ թե քողցե այր գնայր յիլ վմայր յուր յեւ յերթից գնես կնոջ յուր: Կիներն այրերու հնազանդելու տեղ՝ այրերը կիներու կը հնազանդին: Պեշիքթաշի կները գեղեցիկ են, տան աիկին և աւաշեն. հոս

բրինձի փոշին շատ հարգ չունի: Պարզասիրությունն ալ քիչ հարգ ունի. վասնզի Պեշիքթաշի թաղն Բերայի շատ մոտ ըլլալով՝ թաղիս իգական սեռը շարաթը գոնե մեկ անգամ Բերա կերթա և նոր ձեւ կառնե տունը կը բերե:

Այս թաղին կիներն այրերեն ավելի աղգասիր են, բայց որովան մեծ մասն իրենց հագուստ ձեւելու և կարելու հատկացուցած ըլլալով՝ ժամանակ չեն գտներ աղջիկներու վարժարանն անգամ մը աչքե անցունելու:

Պղտիկ աղջիկներուն գալով՝ ասոնք փողոցն անցնողներե չտեսնվիլու յեղանակով մը պատուհաններուն առջև կը նստին, և քովի տունը դարնվիլուն պես՝ իրենց գլուխը պատուհանն դուրս կը հանեն և դուրը դարնողը գլխն մինչև վոտները քննիկն քտու վաղիլով վար կերթան, և չուրաքանչյուրն իրեն մորը կիմացունե, թե ալս կազմով, ալս հասակով, ալս գուշով մեկը յիկալ զրացվուցն տունը: Մայրերն շնորհակալութուն հայտնելով այս փոքր դեսպաններուն՝ նորեն վեր կը դրկեն զանոնք, վոր աղիկ մը մտիկ ընեն, թե ինչ կը խոսվի զրացվուցն տունը և իրենց խմացունեն:

Պեշիքթաշին դարնան Ֆուլլարի կերթա և ամռան Ոխլամուր ըսված զրոս վալին. ուր կիրակի որերը ողգապագ կը խաղան և անբարոյական խոսքեր ընելով բարոյականութուն կը քարոզեն հանդիսականներուն, վորոնց մեջ պատվավոր այրեր և կիներ գտնվիլն զատ վեց յոթը տարու տղաներ ալ պակաս չեն. իսկ ձմեռը տան մեջ կը փակվի կը նստի, մինչև վոր անունի տոնախմբութուններն սկսին: Այս տոնախմբութուններն սկըսելուն պէս ան տուն նստին արգիլված ե. ամեն գիշեր անունի յերթալու յի, մինչև առավոտ գոնե յիսա մը ողի և հինգ յիսա գինի խմելու չե, վոր սիրտը հանգիստ ըլլա:

Թաղիս ոգն վոչ ծանր ե և վոչ թեթե, վոչ ուրախութուն կը պատճառե և վոչ տրտմութուն, անտարբերութուն կը պատճառե:

Այս թաղին մեջ յերեք հարյուր հիսունի մոտ հայ տուն կա, բայց այս տուններուն մեջ քանի մարդ կա. առ ալ տեղվուցն թաղական խորհուրդին հասկնալու չե:

Թաղիս ներքին բերքն ե խիլ մը գլուխներ. տղաւմանի պաւի, Բերեսեքի պաւի, չամուսեքի պաւի, համամեքի պաւի. այս գլուխները արքունական շինութուններու մեջ կը գործածվին: Նշանավոր ե նաև այս թաղին Բուլու պաւին:

ՔԱՐԱԿՅՈՍՐՅՈՒՔ ՅԵՎ ՍԱԼՄԱԹՈՍՐՈՒՔ

(Միացյալ քաղ)

Շուտ ըրե, բարեկամ, բարեկամներուդ յես քեզ մեղա ըսե, զնա խոստովանանք չեղիր, հաղորդվե ու ծնողներուդ վերջին վողջույնդ տուր. չեթե վողջ առողջ դառնանք՝ բան մը կորսնցուցած չենք ըլլար, իսկ չեթե մեռնինք՝ չենք տանջվիր, թե ինչո՞ւ չկատարեցինք մեր քրիստոնեական, բնտանեկան և բարեկամական պարտավորութիւնները... Բարեկամներու մնա՛ք բարով չըսած մեռնելը մեծ անքաղաքավարութիւնն է: Թերևս հարցունես ինձ, թե ի՞նչ հարկ կա այս պատրաստութիւններն ընելու, պատե՛րա՞մդ ալիս չիրթանք: Վո՛չ, բարեկամ, պատե՛րա՞մ չալիս չիրթանք, այլ խառնուրդ²³⁰) բնակող շողենամբներն մեկուն մեջ ալիսի մտնենք:

- Վո՛չ, վո՛չ, չես ալի շողենամբները չեմ մտնիր:
- Տղայութիւնս պետք չէ, մի վախնար:
- Ուխտ ըրած եմ չմտնելու:
- Կնիկ մի ըլլար, աշխարհիս վրա ամեն բան մեղի համար ե. քաջալերվե՛, նետվե նայիմ սա շողենամբն մեջ, մահն վախցողը մարդ ըսվելու չէ արժանի: Ո՛ն անդր, քաջալերութիւն, հապ ո՛ն, հառաջ:

Ահա շողենամբն մեջն ենք... Հոս նստե. քաջութեամբ նստե, ծռնկերդ շատ մի բանար, վոր սա խեղճ մարդն ալ նստի... ծռնկերդ վրա չեկան նստեցան, քնաս չունի, համբերե... — Բայց տես, կռնակս ալ կեխեն կը նստին: — Հոգ չէ, խեղճ բռնակները հոգի չունին: — Շունչս կտրիլ սկսավ: — Բան մ'ալ չես ըլլար, կը վարժվիս: — Շողենամբն վարժափ ծռեցավ, մեջը ջուր առնել սկսավ, ալիսի խղճվինք: — Բան չկա, ամեն բան տեսնելու

չէ: Ահա չեկանք Պալատ²³¹), պատրաստվե վոր չեկնենք, սակայն կամաց կոխն նավամատուցին վոր չվիլ... Յերբայեցիներու շուրջ կային պիտի անցնինք հիմա, ժամացույցդ և քսակդ պահպանե: Ահա Քեսմե քայեա կոչված դառնվերը, ուսկից վեր չեկնելու համար գոն չորս կանգուն լերկայնութեամբ շնչառութիւն ունենալու չէ: Զատիվերին գլուխը հասանք. Սալմաթոմբուքն է հոս: Մեծ փողոցին վրայի զրոսարանը թաղին ազգային զրոսարանն է, Տես, քարերուն վրա հինգ տեսակ ազգ. լրագիրներ դրված են, վորոնց յերեսը նայող չկա. թանգարան մ'ալ կա, վորուն տերն է սուլն թաղին Գրասիրական ընկերութիւնը, վոր վեց տարեկան ըլլալով՝ ակռային վախն անցուցած է և որ ըստ որե աճելու վրա չի: Աս ընկերութեան նպատակն է լրագրով, գիրքերով և կիրակնորդա դասախոսութիւններով թաղին մեջ ընթերցասիրութիւն տարածել: Այս զրոսարանին մեջ կը գտնվին դիվանագետներ, վորոնք ամեն որ կը քննադատեն կամ Պիսմարքի ընթացքը կամ Կլաուսթընի աշխարհավարութիւնը, Հառաջանանք դեպի Քարակլոմբուկ: Այս գինետունները քանի մը ամիս առաջ գոցված էին, իսկ հիմա նորեն բացվեցան՝ դեսպաններու շնորհիւ: Թաղեցիները շնորհակալութեան ուղերձ մը կատարագրեն դեսպաններու տալու համար, վասնոր խեղճերը իրիկունները Պալատու գինետունները կերթային խմելու և գիշերվան ժամը չորսին հաղիվ կրնային իրենց տունները մտնելու, վորով իրենց ընտանիքներն հանդիմանութիւններ կը լսէին: Զրույց կը պաշտի, թե թաղեցին պիտի պնդե յեղեր, իրիկունները կանուխ տուն չերթալը դուրսացնելու համար, վոր չուրաքանչյուր տան քովը պղտիկ գինետուն մը բացվի:

Այս թաղին փողոցներուն թիվը չերեսունը մեկի կը հասնի. բայց ասոնց մեջ կան անանկ փողոցներ, վորոնցմե անցնելու համար կատարյալ մարմնամարզութիւն գիտնալու չէ. ասոնց ասոր, կամ գլուխդ կը կտրես կամ թեղ և կամ ուրիշ մեկ կողմդ: Փողոցներ կան, վոր Կ. Պոլսո առումն ի վեր նորոգված չեն և նորոգվելիք ալ չունին:

Ահա Քարակլոմբուկի լեկեղեցին, վորուն անունն է Վոսկեքերան և ուր կա հրաշագործ Աստվածածին: Ուխտատեղի չէ, ջիրմեռանդ և բարեպաշտ ուխտավորները պղտիկ Զարխափան կանվանեն այս աղոթից տունը: Զավակ չունեցող ալրերն ու կի-

ները հոս ուխտի կուգան, շատ զավակ ունեցողներն ալ հոս ուխտ կընեն: Պարապ պտուղները, հիւանդութենէ չելնողները, իրենց սպասավորներուն իրավունքը ուսողները, իբրեւ ավանդ առնված ագամանդները ուրիշի ծախողները, վորքայրիներուն ստակը կլանողներն ընդհանրապէս հոս ուխտի կուգան:

Այս տեղի քահանաներն ալ քիչ-շատ ուսած են հրաշագործութուն և չերբեմն-չերբեմն պղտիկ հրաշքներ ալ կը գործեն: Զերմեռանդի մը կողմէ Աստվածածնա պատկերին նվիր տրված զուտ վոսկիչն գոտի մը յերկու որվան մեջ վոսկեզոծ պղնձի փոխվեցավ: ուրիշի մը նվիրած Խառ քելփեյնն ալ սիմի աշլափոխվեցավ:

Յերբեմն ինքնիրմէ ասանկ աշակերպութիւններ տեղի կու-նենան այս չեկեղեցվուն մեջ, աշակերպութիւններ՝ վոր ուրիշ չեկեղեցիներու մեջ ալ պակաս չեն:

Թաղիս քարոզիչն ալ կտրուկ մարդ մ'է. շատախոսութիւն չսիրեր. շատ անգամ պաշտոնական գրութիւններն և չերբեմն ալ ավետարանը կը համառոտե և այնպէս կը կարգա, ունկնդիրներուն ձանձրու յի չտալու համար:

Թաղական խորհուրդը մոտերս պիտի վորոշե, վոր որինավոր տետրակ ունենա չեկեղեցական անոթներու, վորպէսզի անոնք ալ հրաշքով չփոխվին կամ չերկինք չհամբաւնան: Մեծ զգուշու-թիւն և խնամք պետք է այն թաղերը, ուր հրաշքներ կը գործ-վին:

Սույն միացյալ թաղն, վոր կը բաղկանա Քարակոմրուկ, Սալմաթումրուք, Սուլթան Համամ, Պղտիկ և Մեծ Մալթա թաղերն ունի հինգ հարյուր հիսունը չորս տուն հայ: Ամենեն բազմամարդն է Սալմաթումրուք, վոր ունի չորս հարյուր քսան և ութը տուն, մեկ չեկեղեցի, մեկ նախակրթարան, մեկ ուսումնարան և աղջիկ-ներու վարժարան մը: Հիշյալ դպրոցներուն մեջ կան հարյուր չերեսուն և ութ աշակերտ և ութսունը չորս աշակերտուհի կամ աշակերտացու կամ աշակերտագուս: Վեց տարեկանն վեր աշակերտ կամ աշակերտուհի չընդունվիր, վասն զի այս տարի-քին մեջ հոն կսորվին հայերեն, տաճկերեն, ֆրանսերեն, անգլիերեն, գերմաներեն, սլավերեն, յերբայերեն, թվաբանութիւն, տրամաբա-նութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, կրօնագիտու-թիւն, գծագրութիւն, չերաժշտութիւն, բնագիտութիւն, քի-միաբանութիւն, փիլիսոփայութիւն, մարմնամարզութիւն, հո-

գեմարզութիւն: Հոս ընթերցանութիւնը իրենց մօրն արգանդին մեջ կուսանին: Թաղեցին չոր վարժարաններուն այս հրաշալի հառաջադիմութիւնն պարտավոր է Ուսումնական Խորհրդուն, վոր բնավ հոգ չընեն նույնիսկ չեթե աչերովն ալ տեսնե, վոր մասվածառ մը վարժարանի տնօրենութիւն կամ հոգաբարձու-թիւն կընե:

Ժողովուրդը մեծ մասամբ տգետ է, և տգիտութիւնն պաշտ-պանութիւն գտնելով՝ որ ըստ որե հառաջ կերթա: Յեթե այս վարժարանին մեջ գիտութեան տեղ տգիտութեան դասեր ավանդ-վելին՝ առաջին կարգի վարժապետանոց մը կըլլար տգիտութեան:

Իրենց վիճարանութեան յիշանակին վրա թեթե գաղափար մը տալու համար՝ կը հրատարակենք հոս վիճարանութիւն մը, վոր չերկու հոգի մեջ տեղի ունեցած է.

— Բարեկամ, այս տեսուչն մեր զավակներուն ապագան կըս-պանեն:

— Վհչ, այս տեսուչն մեր զավակներուն ապագան կը շինե. յերեկ լալընի Ահմատ աղան վարժարաններու այցելութիւն մը ընելով՝ շատ գոհացուցիչ գտեր է զանոնք:

— Բայց չերեկ պողանի Տիմիթրոն կը պնդեր, թե այդ մարդն այդ պաշտոնին մարդը չէ:

— Սխալ է, պողանին կիրք ունի մեր տեսուչին դեմ, վոր իրիկունիքը պողա չխմիր:

— Խորհուրդ մը ընենք և սա տեսուչը փոխենք. մեղք է մեր զավակներուն:

— Ատանկ բան չըլլար, դուն քու նստած խանութիդ վարձ-քը չես կրնար վճարել և կելնիս ազգային գործերուն մեջ կը մըտ-նես:

— Յես քեզի պէս ուրիշին իրավունքը չեմ ուտեր, դուն ին-ձի աղիկ նայի:

— Բերանդ ժողվե՛, հիմա աթուր գլխուդ կիջեցնեմ հա, անպիտան:

— Դուն ալ ասիկ վերջը չեկուր տե, մեր տունն կնկանդ հա-մար ռապխտ առ:

— Անցյալ շաբթու չե՛ր վոր չերկար բանքալոնս առիր և Քա-րակոմրուկ ուխտի գացիր:

— Քուկին ինչ վատ ըլլալդ ամեն մարդ գիտե:

— Վատը դու ես...

Ծեծկվուքը կսկսի, ապտակ և կից փոխանակվիլ կսկսին:

Յերրորդ մը կուգա և կը միջամտե...

— Բանքալոնի մը համար կը վալլե՞ վոր...

— Վատ ըսավ ինձի:

— (Ականջն ի վար) Դու ալ այդ ավանակին խոսքին կարևորութուն մի՛ տար:

— Ան ալ ինձի անպիտան ըսավ:

— (Ականջն ի վար) Ամօթ ե, այդ իշուն խոսքերուն կարևորութուն կուտաս, (Բարձր) Հաշտվեցե՛ք, յիդրայր եք դուք... բաց այս բանքալոնի խնդիրը ինչպես ծագեցավ:

— Վարժարանի վրա խոսք բացվեցավ...

— Վարժարանին բանքալոն պիտի հագցունելիք, ինչ պիտի ընելիք վոր...

— Չե, տեսուչը...

— Առնենք, յիդրայր, առնենք, տեսուչին բանքալոն մը առնենք, ինչ կըլլա չեղեր:

— Չես հասկնար, յիդրայր, խնդիրը վարժարաններու վրա չեր:

— Վարժարաններու համար կը վիճաբանելիք:

— Այո:

— Դուք չերկուքնիդ ալ ավանակ եք չեղեր... վարժարանի մը համար իրարու սիրտ կոտրել ինչ պիտի ըլլա. չես ալ կարծեցի, վոր ոգտակար բանի մը համար կը վիճելիք... այ ավանակներ:

Վիճաբանողներն այս դիտողութունն իրավացի կը գտնեն, կը զղշան, վոր չնչին խնդրո մը համար զիրար վիրավորած են, կը պագտվին, կը հաշտվին և ուխտ կընեն, վոր մեջ մ'ալ վարժարանն իրենց բերանը չառնեն:

Թաղականի կռիվները հոս պակաս չեն: Յերը թաղական խորհրդո ընտրութեան ձեռնարկվի՝ մարդուն մեկը Դիողինեսի լապտեր²³²) մը կառնե չերեք հազար հոգիներն ինը հոգի գտնելու համար, և մը կարծիք չհաշտողի: Թաղական ըլլողն կամ վից ամիսն հրաժարական կուտա և կամ չուր անկողինը թաղական խորհրդարանը կը փոխադրե:

Սալմաթոմբուրի մեջ կան քանի մը մարդեր, վորոնք մեծ

պործ մը տեսնելով անմահանալու համար իրենց շանը պոչը կը կտրեն²³³):

Քսանի չափ հարուստներ կան, վորոնք ազգային բարենպաստակ գործերուն համար իրենց քսակն չեն խնայեր: Ասոնցմե տասն և ութ հատը անցյալ տարի իմանալով, վոր Դպրոցասիրաց Արևելյան ընկերութունն իրենց պարահանդեսի տոմսակ պիտի դրկե անմիջապես տեղ մը հավաքվեցան և վերջեցին թաղը վրտք չկոխել, մինչև վոր պարահանդեսը տրվի:

Հոս ալ ուրիշ թաղերու պես շատ մը ընկերութուններ կազմված են և կործանված են: Ե Գ Ի ընկերութունը հաստատված որն՝ թաղեցին կը հուսար, վոր հիմնական կերպով սկսված սուչն ընկերութունն ալ բբ զգ պիտի գար ախչ, բձպ, գիշ, դիւ-ն, և բա, բե, բի կարդալով՝ որ ըստ որե հառաջ պիտի չերթար... Ընկերութունն այսոր յուր անունն իսկ մոռցած ե, Ուրիշ քանի մը ընկերութուններ ալ կազմվեցան, բաց անոնք յեվ ո Գ-ն սկսած ըլլալով՝ խիստ կարճատև կյանք ունեցան: Հիմա ն և յ-ն ընկերութուն մը հաստատելու միտք ունին: Այդ ընկերութունները վորքան վոր անուն չունին այսոր՝ դրամագլուխ մը ունին, վոր կազմված ե քսանը մեկ հատ չերկաթուղվո բաժնետոմսե, վաթսուներ վեց և չերեք քառորդ արծաթ մեծիտե, քսան փարաչե, տասն վոսկիլե, չերկուք ու կես վոտք ունեցող թիկնաթուռ ու մեջը պարապ մեկ մեկանի շիշե: Այս դրամագլուխը կը պահպանեն քանի մը անձեր աղատ և անկախ վորեկ պաշտոնական և վոչ-պաշտոնական չերաշխավորութենե և պատասխանատուութենե, և թաղեցին կը լըպնի չերթալ այդ անձերե ստորագրութուն առնել:

Պատիկ մաս մը կա այս գլուղին մեջ, վոր չերբեմն կը շարժի, չեր... չերկրաշարժ ըլլա: Բաց մեծ մասն անշարժ ըլլալով՝ լուսավորութունը կը կաղա հոն:

Իգական սեռը արականն ավելի պարկեշտ ե: Աղեկ հագվելու բնավ հոգ չտանիր. ամեն ուր ալ չհագվիր, տարին անգամ մը կը հագվի, մնացած որերը գիշերազգեստով պատուհանին առջև կը նստի և Ֆես կը հյուսե: Ասոնց համար տո՛ւ ի որ չկա. չորս տարին կը անգամ մը կերթան յեկեղեցին, վոր իրենց քթին քովն ե, և իրենց քիթն ալ մեծ չե, վոր յեկեղեցվուն հեռավորութունն պատճառ բռնեն: Ասոնք լալըն կը հագնին չեթե չորս տարին ան-

գամ մը չեկեղեցի չերթան: Այս թաղի կիներուն հայերեն խոսակցութիւնն ուրիշ թաղի կիներուն խոսակցութիւնն կը գանազանի սա կետին մեջ, վոր ուրիշ թաղի կիներն հայերենի մեջ տաճկերեն բառեր կը խառնեն, մինչդեռ ասոնք տաճկերենի մեջ հայերեն բառեր խառնելով հառաջ կտանին մայրենի լեզուն: Ասոնք կարող են Մեակի մեջ հայերեն հողվածներ գրել:

Այս թաղն առողջ ոգ մ'ունի. և յեթե թաղեցին գեշ ոգի մը մեջ աշխարհ գալու ստիպվել՝ մեռած պիտի ծներ:

2.

Ե Յ Ո Ւ Պ

Եյուպի²³⁴) մեջ յերկու սուրբ կա, վոր իրարմե կես ժամու չափ հեռավորութիւն ունին: Այս սուրբերեն միույն անունն ե Աստվածածին և մյուսինը Յեղիա: Այսոր Ս. Յեղիայի Եյուպի վրա պիտի խոսինք:

Այս թաղին մեջ բնավ սատանա չկա, գրեթե մեծ մասամբ աղավնիի պես միամիտ են: Ժողովուրդը պահպանողական ըլլալով՝ քայլ մը հառաջ գնացած չե այն վիճակէն, վորուն մեջ ստեղծած ե զինքն աստված: Այս թաղին մեջ պտըտողն ինքզինքն Ադամա ժամանակակից կը կարծի:

Հարկւր տասը հայ տուն կա հոս: Ժամանակով յերկու վարժարան ունիւին, մին աղջիկներու և մյուսը մանչերու. իսկ հիմա այդ շէնքերն ալրած ըլլալով՝ աշակերտներու մեկ մասը տան մը մեջ կը խաղան և մեկ մասն ալ փողոցներու մեջ: Աշխատող պզտիկ մաս մը կա, վոր հանգանակութեամբ վերաշինել կաշխատի թաղին վարժարանները:

Ժողովուրդն չուր զավակներուն դաստիարակութիւնը համար սիրտ չհատցուներ. յեթե աստված կամենա, կըսե, մեր զավակներն առանց վարժարան չերթալու ալ կրնան ուսումնական ըլլալ:

Հոս վո՛չ ընկերութիւն կա և վո՛չ յերիտասարդութիւն, այլ առանձնասիրութիւն և տղայութիւն կա. տմեն մարդ պարտավոր ե չուր տունը քաշվիլ ու նստիլ, մեծ անիրավութիւն ե դրացիուն տունն չերթալ և մեկ յերկու ժամ նստելով ժամանակ անցունելը:

Այս թաղին մեջ արհեստն ալ չուր որորոցին մեջ ե դեռ:

Ելուպի աղգայիններուն մեկ մասը բրուտ ըլլալով՝ հողե տեսակ — տեսակ ամաններ և անոթներ կը շինեն:

Հողե տեսակ մ'ալ անոթ կը շինեն, վորուն հայերենը չենք հիշեր, բայց մեր ընթերցողներուն կատարչալ գաղափար մը տալու համար հիշչալ անոթին վրա՝ կը պարտաւորինք ըսել, թե շատ մը կիներ հիմա ճիշտ այդ հողե անոթը հարդե շինելով՝ վրան լաթ մը կանցունեն և քիչ մը ծաղիկով և բոսելայով դարգարելեն յետքը իրենց գլուխը կանցունեն:

Այս թաղին մեջ դիտուուն չկա և ողի ծախվիլը արգիւլած ե... Ինչ դժբախտություն: Թաղեցին յերեկոները ընդհանրապես Իլիմոն Բսկելիսի կը հանդիպի և հոն քանի մը գավաթ ողի խմելեն յետքը կերթալու թաղը՝ ուր տան մը մեջ ալ գաղտնի ողի կը ծախվի: Շատ մը ընտանիքներ իրենց դավալներն ողիյե կտրելու համար ալս թաղը կուգան, ինչպես վոր տենդ ունեցողներն ալ հիմա Միջագուղ կերթան՝ ջուր խմելե կտրվելու համար:

Ժողովուրդն չեկեղեցասեր ե, սակայն քարոզիչ չուղեր. չեթե տարին մեկ յերկու անգամ Պատրիարքարանն քարոզիչ մը զրկվի հոն՝ թաղեցին սիրով կընդունի դայն այն պայմանով, վոր քարոզը տալուն պես թաղեն դուրս չեն:

Կիները մեղի պես ժրջան են, վարկչան մը պարապ չեն նստիր, երբաբի, ցալվար հագած՝ Ֆեսահանի համար Ֆես կը հյուսեն, նստած իրենց տանը դրան սեմին վրա, վորու առջևն կանցնի թաղին կոյանոցը: Թաղին աշխատավորներն գոնե հանգանակութուն մ'ալ բանալին և անոր արդշունքովն մաքրելին սուլն կոյանոցն, վորուն մեջ յերեմին կիյնան լամպիքա շատկեկ խմողները. իսկ չեթե թաղեցվուլն քիթը շահ մ'ունի այդ կոյանոցին հոտն՝ ատոր ըսելիք չունինք:

Կիները լացնածալալ սիրտ մ'ունին, և ալս պատճառով չերկարակաց են. ամենն կարճ կյանք ունեցող կիսն ինսունինը տարեկան ե, և յերբ հարյուր տարեկան կին մը մեռնի՝ ծաղիկ հասակին մեջ առաստված փոխված կը համարվի, իսկ յերբ մեկ տարեկան աղջիկ մը մեռնի՝ վիժած կը սեպվի:

Իգական սեռի մեջ փոքրիկ մաս մը կա, վորուն հետ խոսելու համար դրան հագնելու չե, վասնզի ասոնք փայտով կը խոսին, և չեթե կանխալ զգուշութուն չընես՝ զլուսդ կը պատռեն:

Բամբասանքն հոս հուսացվածեն ավելի յե, միայն թե սահմանափակ ըլլալով՝ երբաբի ցալվարին վրա կը դառնա միշտ:

Թաղին բերքն ե փայտե շինված տղու խաղալիքներ, վորոնց և յերեմին մեծ մարդեր ալ ծախու կանեն իրենց համար:

Ողբ թեպետե աղիկ ե, բայց բնակիչներուն թմրությանը նայելով՝ կերելի վոր քիչ մը թմրեցուցիչ ե: Ելուպցիներն վոմանք փողոցը քալած ժամանակնին կը քնանան և աղվոր յերազներ կը տեսնեն:

Գ Ա Տ Ը Գ Յ ՈՒ Ղ

Աշխարհագրական հնավանդ սովորութեան դեմ խոսած չըլլա համար՝ պարտավոր ենք ըսել, թե այս գլուղն ալ ունի չոր արեւելքն, արեւմուտքն, հյուսիսն և հարավն. բայց մեր խիղճն ալ հարգելու համար՝ կստիպվինք խոստովանելու, վոր արեւելքին, արեւմուտքին և հյուսիսին գոյութիւնն անվանական է. հարավն է միայն, վոր կը տիրե այս գեղին վրա: Հյուսիսն իսկ չեթե չերեւմն քանի մը խոսք ընել ուզե՝ հարավին բերնով կը խօսի: Արեւն հոս հարավային կողմէն կելնե և հարավային կողմէ կը մտնե, վերջապես ամեն բան հարավ է հոս:

Այս տողերը գրելով մեր նպատակն է իմացունել արգո հասարակութեան, վոր ձմեռվան չեղանակին մեջ այս գլուղն չերթալ փափաքողներն ամառվան հազուստ հաղնելու չեն. իսկ ամառվան տաք որերուն մեջ չերթալ ուզողները մերկ չերթալու չեն հոն, այսինքն եւեթոյթե հագնելու չեն:

Մահսուսիյե-ի ընկերութիւնն չոր ճամբորդներն զովացնելու համար է, վոր այնպիսի ձևով շոգենամներ կը բանեցունեն, վորոնք միշտ ծովու ալիքներ կընդունին իրենց մեջ, վորով ճամբորդները ծովու ջրով կը լվացվին և կը զովանան: Յեթե այս չըլլար՝ ճամբորդները տաքեն կը մարելին:

Այս գլուղն այնչափ որհնչալ գլուղ մ'է, վոր քանի մը տարիներէ առաջ, չերը հրեային մեկը գուշակութիւն ընելով ըսավ, թե գետինն տակ պիտի անցնի այն գլուղն, վորու անվան սկզբնատառը Գ է՝ ամեն մարդ միաբերան պուռաց, թե Գատը գլուղն ըլլալու չե ալ գլուղը: Հրեային գուշակութիւնը չելավ, բայց ինչ ոգուտ, գեղին պատիւը հրապարակի վրա կտարեցավ: Այն թվականին ըսողներ ալ գտնվեցան, վոր այս լուրը տարա-

ժողները մեր կեսարացի ազգայիններն ելին, վորոնք աժան գնով տուն վարձելու համար հնարած իլին այդ լուրը: Յեւ արդարեւ, տուններուն գիները հարյուրին վաթսուն իջան. շատ մը վաճառականներ իրենց առնելիքն ուզեցին գեղի մեջ նստող վաճառականներն. շատերը հեռացան գեղին, իսկ մեր կեսարացի ազգայիններն իրենց նստած տեղին չշարժեցան, քոյ աժան նրսիմ ու գեթիմ տակն անցնիմ, ըսելով:

Այս գեղին մեջ թեպետե չերեքհարյուր հիսուն տուն հալ կա, բայց բնիկ ազգային հաղիվ քսանյերեք ու չերեք քառորդ մարդ կա. մնացածն ալեւալ թաղերե գաղթած է:

Ժամանակավ աժայի դաշտ մ'եր այս գեղը. իսկ չերը քանի մը չեվրոպայիներ, վորոնք վորսորդութիւն ընելու մոլութիւնն ունեյին, այս գեղն չեկան դաշն վորսորդութեան հարմար գտնելուն համար՝ մեր ազգայիններն ալ շատերը անոնց հետեւելով չեկան բնակութիւն հաստատեցին հոն: Այսոր չեթե չեվրոպայիներն հեռանան այդ գեղին՝ մեր ազգայիններն ալ կը թողուն դաշն: Ո՞վ կրնա պնդել, թե մեր ազգայիններն չեվրոպայիներու նմանիլ չեն ուզեր...

Այս գեղին մեջ բացի հարավին կը տիրե նաե ազնվապետութիւնն, վոր հարավին չափ տենդ կը պատճառե գեղին ազգային գործերուն և թերեւ անկե ավելի վնասակար է:

Ամեն անգամ, վոր թաղական խորհուրդ ընտրված է՝ անդամներու մեջ անհամաձայնութիւն գոյացած է: Թաղական խորհուրդն այնքան կարծիքներե բաղկացած է, վորքան անդամներե վոր կազմված է, և այս շատ վնաս տված է ազգային վարժաբանին հառաջադիմութեան: Թաղական խորհուրդ չուրաքանչիւր անգամ իրեն հաճելի չեղած դրութեամբ կուզե առաջ տանիլ վարժարանը. մին ֆրանսական դրութիւնը կը պաշտպանե, ուրիշ մը գերմանական դրութեան վրա կը հարձակի, չերորդ մը անգղիական դրութիւնը իբրեւ փրկարար միջոց կը նկատե, չորրորդ մը թրքական դրութիւնն մագիվ չափ չեղիր, հինգերորդ մը ավստրիական դրութիւնը կը փաստաբանե, և կարծիքներուն այս անհամաձայնութեան մեջ վարժարանը կը գոցվի, և բացվիլու համար կսպասե, վոր թաղական խորհուրդն հաճի դրութիւն մը բնորոշիլ: Թաղական խորհուրդն չկրնար համաձայնութիւն գոյացնել. բայց վարժարանը կը բացվի և կսկսի կառավարվիլ, որ մը գերմա-

նական դրուժյամբ, որ մը ֆրանսական դրուժյամբ, առավոտ մը թրքական դրուժյամբ և չերեկո մը անգղիական դրուժյամբ-այսպես թաղականի մեջ համաձայնություն կը գոյանա և թաղեցին ուրախ սրտով զիրար կը շնորհավորեն ըսելով. «Ապրին թաղական խորհրդո մեծապատիվ անդամներն, վոր իրարու հետ համաձայնած են»: Սակայն այս վարժարանին անկանոն ընթացքը մեծ ոգուտ բերավ ազգին, ծնունդ տվավ Պերպերյան վարժարանին²³⁵), այժմ Իճատիե²³⁶), վոր պատիվ կը բերե ազգին:

Գյուղիս բնակիչները շատ քաղաքավար են. իրարու սիրտ չկոտրելու համար ամենամեծ գոհողություններու հանձնառու կըլլան:

Անցյալները ազնվապետական շատն մեկը կացինով մը վարժարանին հիմը տեղեն կը հաներ, ուրիշ մ'ալ քանի մը քայլ հեռու-յեն կգիտեր: Յերբ այս վերջնուն հարցվեցավ, թե ինչո՞ւ անտարբեր կեցած եր' հետևյալ պատասխանը տվավ.

— Մտերիմ բարեկամս ե, չեղբայր, միտքս դրի, վոր չերթամ չերկու խոսք ընեմ, բայց վերջեն մտածեցի, վոր մեր բարեկամությունը պիտի վերավորվի. անոր համար թող տվի, վոր ուզածն ընե:

Մաս մը կա հոս, վոր ազնվապետներու գործիք ըլլալով՝ այն ատեն միայն ազնվապետներու առջև ձայն կընա հանել՝ չերբ օտրի մը չերգել հարկ ըլլա:

Մեկ մասն բոլորովին անտարբեր ազգային գործերու՝ կամ ծովեզրյա սրճարաններու մեջ նարտ կը խաղա և կամ նախկին կը քաշե:

Ուրիշ ազնվապետական մաս մ'ալ կա, վոր միայն ուխտով կամ պեզիֆով կը ծառայե ազգին:

Այս գեղին չեկեղեցին, վորու անուն ե ս. Թագավոր և ուր ս. Աստվածածնա որը մեծ տոնախմբություն կըլլա՝ ուխտատեղի մ'ե և ուխտավորներեն շատ դրամ կընդունի: Այս Թագավորն ալ ուրիշ Թագավորներու պես բավական հասույթ ունի, բայց զայն գործածելու կերպը չգիտեր, ելմտագետ Թաղականներ չունենալուն համար: Յեթե ուխտավորներեն առնված դրամներն լավ մատակարարվին չերջանիկ ս. Թագավոր մը կունենայինք և յուր վարժարանն ալ միշտ բարեկարգ վիճակի մեջ կը հարատևեր:

Այս գեղին մեջ ընդհանրապես կամչնան ազգային զգացում

կրիւ, ինչպես դու կամչնաս տունդ ջուր կրելու: Յեթե յերեք ստիպվին առնք որ մը ազգային զգացման պետքը ճանաչելու՝ դարձյալ իրենք անձամբ չպիտի կրեն զայն, այլ իրենց սպասավորներուն պիտի տան զայն, վոր իրենց յետեն բերեն:

Իսկ այս գեղին մեջ կը գտնվին նաև այնպիսի անձեր, վորոնք ազգային զգացում կը կրեն:

Ասոնցմե չե Մուրատյան բարեհամբավ գերդաստանն, վոր ծանոթ ե յուր ազգասիրական գործերով:

Մեծ. Մկրտիչ Բեքնատի Մուրատյան աղջիկներու վարժարան մը բացած ե հոս 1868-են ի վեր և ամիսը 6-700 դահեկան ծախք ընելով՝ աղքատ աղջիկներ դաստիարակել կուտա հոն: Ձմեռվան չեղանակին մեջ աղքատներու ձրի ածուխ կը բաշխե, ինչպես նաև աղքատներու ձրի բժշկ կը զրկե և ձրի դեղ կուտա: Մուրատյան յիշորայիններն իրենց մորը թաղման համար չեկեղեցվուն յոթանասուն վոսկի և կտակի պաշտոնի համար ութսուն վոսկի, վարժարանի շինության համար հարյուր վոսկի նվեր ընելեն զատ՝ չերկու հարյուր հիսուն վոսկի դարձյալ նվիրած են վարժարանի շինության համար:

Նմանապես հոս կը բնակին Մեծ. Սերովբե Կուրպենկյան, Արիկ Ունճյան և Շաշյան Պողոս Եփեսոսներն, Սովեոց մասնաժողովո անդամներեն չերեքն, վորոնք իրենց մյուս ընկերներուն հետ մինչև այսոր գիշեր ցերեկ աշխատելով՝ ամեն ազգասեր սրտերու մեջ անմոռաց հիշատակ մը թողած են, թեպետ և մեր Ազգային Զոզերեն հնգական որինակ առած չեն: Ասանկ աշխատող ազգասերներ ունենալենս յետքը՝ սովն դեռ քառասուն տարի ալ տե՛ն՝ բնավ փուլթ չենք ըներ:

Թաղիս բնակիչներն ընդհանրապես հարուստ են և ընդհանրապես մեկ ձիթապտուղը, կըսեն, չորս պատառ կընեն. տնտեսապետությունն մինչև այս աստիճան հառաջ գնացած ե. բայց շատ հարուստներ այս ալ շաշլուկութուն համարելով՝ վորոշած են սեղանի վրա մեկ ձիթապտուղ միայն դնել:

Քանի մը հարուստներուն համար ալ արևը սովորականն չերեք ժամ վերջը կը ծագի, չերեքն ալ բնավ չծագիր, և այդ հարուստներն մինչև չերեկո քնանալով՝ գիշերը կարթնանան և կսկսին իրենց բեժալիք:

Ուրիշ թաղերու հետ բաղդատմամբ՝ ողիւի և գինիի գործածութիւնը քիչ և հոս. ընդհանրապէս զոնցմէ կը գործածվի:

Իգական սեռն զոնցմէ տեղ բամբասանք կը գործածեն և առանց շուրի: Իրարու յետեւ զերար գետինը կանցունեն, իսկ յերբ դեմ առ դեմ գան՝ զիրար յերկինք կը բարձրացունեն:

Յեթե գործ չունիս՝ չեղւոր նա պատուհանին առջև քիչ մը կայնինք ու մտիկ ընենք:

— Տիկին Քաթիկ, որիորդ Աղավին տեսա՞ր յերկի:

— Բարով խերով չտեսնեցի, ատ վորչափ ճերմակ քոված եր... զլուխն ալ ուրի պարկին մէջ և խոթեր, ինչ ե ըրեր:

— Անանկ ալ շրջագոստ մը հագած եր, վոր չորս կողմը բաց եր:

— Թերեւս բռնաւ պակսած ե:

— Գոնե վտանքը պղտիկ ըլլալին:

— Այսուամենայնիւ սատանան շատ գեղեցիկ ե:

— Գեղեցկութիւնն ալ ճշտ ե ատոր... յերեսը բնավ տեսնել չեմ ուզեր, կողով տեսնե:

Ահա որիորդ Աղավին գուռը կը զարնե աչն տան, ուր այս խոսակցութիւնը կը լլա:

— Բարի յեկաք, որիորդ Աղավին, աս ճշտ եք. հիմա տիկին Քաթիկին քեզի համար կը խոսեցի և կըսեցի, թե որիորդ Աղավին մեզի բոլորովին մոռցաւ:

— Յես ձեզի կը մոռնամ, ամեն որ գալ կուզեմ, բայց տան գործերը թող չեն տար: (Մեկուսի) Կողով տանի յերկուքնիդ ալ:

— Որիորդ Աղավին, իրավ վոր ձեզի տեսնամ նե՝ քուլըս տեսածի պէս կը լլամ: (Մեկուսի) Սատանան տեսնե յերեսդ: (Բարձր) Որիորդ Աղավին, ամեն որ տեսնամ նե քեզի՝ չեմ վշտանար:

— Շնորհակալ եմ: (Մեկուսի) Խենթ ըլլալու եյի, վոր խոսքերուն հալատայի:

— Այդ շրջագոստիդ ձեն ուսկի՞ց առիւր, Աղավին:

— Հավնեցո՞ք:

— Շատ հավնեցա, որիորդ Աղավին, հատ մ'ալ յես պլտի շինեմ անանկ:

— Հավնելու բան մը չե, կարծիմ:

— Ի՞նչ կըսես, որիորդ Աղավին, շատ ձեւալոր ե: Որիորդ Աղավին, խափմ կուզեք, անձեղ կուզեք, պտճեղ կուզեք, կերա-

կճեր կուզեք, գինի կճեք, սիկարա կուզեք, կաղաչեմ, որիորդ Աղավին, առանց քաշվելու զրուցեցեք:

— Բան մ'ալ չեմ ուզեր, ձեր վողջութիւնը կուզեմ:

— Անուշ մը հրամանեցեք:

— Շատ լավ, կընդունիմ:

— Քեզի բան մը պիտի հարցնեմ, բայց շիտակ պիտի զրուցես, վասնզի շաքաթ մը կա, վոր տուններուս մեջ կռիւլ պակաս չե. տիկին Թերեզային առջևի աղաները շինծու չեն մի:

— Յետևիններն ալ շինծու յեն:

— Վողջ ըլլաս, յես կըսեմ նե՝ ինծի չեն հալտար... անուշ մ'ալ կը հրամանեք, որիորդ Աղավին:

— Ձե շնորհակալ եմ:

— Բան մ'ալ պիտի հարցունեմ, բայց կը քաշվիմ կոր...

— Մի՛ քաշվիք:

— Տիկին Մարթային գիրութիւնը բնակմն ե թե բամպակ թխած ե:

— Տիկին Անթառամին ըսածին նայիս նե՝ բամպակ ե, իսկ տիկին Շուշանին խոսքին հալատանք նե՝ բուրդ կը թխեն յեղեր:

— Շնորհակալ եմ, որիորդ Աղավին, մեզի մեծ հոգե մը ազատեցիր. չգիտես քանի մը օրե ի վեր վորչափ անհանգիստ եյի... որիորդ Աղավինին կերակուր բերեք:

Որիորդ Աղավինն մնաք բարով կըսե և կը մեկնի մոմուլով. «ասոնք ալ միշտ ուրիշները վար զարնելու խոսքեր կընեն»:

Իգական սեռի մեջ կա ընտիր մաս մը, վոր յերբեմն ազգային ինդիւրներու վրա կը խոսի: Կա մաս մ'ալ, վոր Ազգանվեր— Հայունաց ընկերութեան մեկ ճյուղը կը կազմե այս գեղին մեջ և վոր մեծ գործեր տեսնելու պատրաստված ե:

Նորաձեւութիւնը տեսակ մը ախտ յիղած ե հոս. գեղեցիկ սեռը շատ անգամ գիտակով Մարսիլիայի շոգենավին կը նայի, վոր վերջին ձեն ամենեն առաջ յուր վրա յերկի:

Գիղիս զրոսավայրն ե Մոսա պուռնու ըսված տեղն, վոր ծովու վրա կը նայի. բայց հոն գացողները ծովին չեն նայիր, այլ գեղեցիկ սեռին, վոր անշուշտ ծովնն ալիւի զվարճութիւն կը պատճառե:

Գեղիս բերքն եւ առաջին կարգի տենդ. աղքատները տենդին
չերրորդ տեսակին կընան առնել, առաջին տեսակը հարուստներ-
ընդ համար պահւած եւ և շատ սուղ կը ծախվի:

Զարմանալի չե սակայն, վոր բժիշկներն չերբեմն հիվանդներ
կը դրկեն հոս՝ ոգափոխութեան համար:

Ողին վիճակը խեղճ եւ Իւսկիւտարը թող չտար, վոր հյուսիս
մտնե հոն և բարեկարգութուն մտցունե ողին մեջ:

Ը.

Ր Ո Ւ Մ Ե Լ Ի Շ Ի Ս Ա Ր

- Հրամանեցեք, աղա՛ւ, պատվական սրափոգ, աժան պիտի տամ:
- Մի՛ քաշեր, չեղբայր, թո՛ղ տուր ոճիքս:
- Պատվական սրափոգ, աղա, ողի՛ի հետ աղեկ կերթա:
- Թո՛ղ տուր, պետք չունիմ:
- Ինձի նայե դուն, աղա՛ւ. չեկուր քեզի աղվոր քե՛մալ տամ,
անոնց մի՛ նայիր դուն...
- Զուկ առնելու համար չեկա հոս, չեղբայրներ:
- Ասդին չեկուր, բարեկամ, անոնք խարդախ մարդեր են...
- Ոխա մը ձուկ ունիմ պահած, քեզի տամ, ողի՛ին վրա շատ աղեկ
կուտվի. այս առտու բանեցի, բարեկամի տրվելու բան ե...
- Զեմ ուզեր:
- Յեկուր քեզի ողի մը հրամցունեմ:
- Շնորհակալ եմ, չեա թաղը պտտելու համար չեկա և վոչ
թե ողի խմելու համար:
- Այս գեղին մեջ ողի կը խմվի, բարեկամ, և առանց ողի
խմելու պտտիւն անկարելի չե հոս:
- Սովորութուն չունիմ:
- Գոնե սա ձուկին առ, աժան պիտի տամ:
- Զեմ ուզեր:
- Ի՞նչ կուզեք մարդեն, անպիտաններ, թող տվեք, վոր գոր-
ծին չերթա, ինչո՞ւ ոճիքին փակեր եք:
- Զեր մարդասիրութենն շնորհակալ եմ:
- Ասոնք անանկ մարդիկ են, վոր նավամատուցին վրա
ձեկը տեսնելուն պես չորս կողմեն կը պաշարեն:
- Այո՛
- Յե՛վ կուզեն, վոր բռնի ձուկ առնել տան քեզի:
- Ճիշտ եւ:

— Քանի անգամ ըսած եմ իրենց, վոր այս բնավորութիւնն ինն փոխեն:

— Շատ բարի մարդ եք: Մնաք բարով, թաղը քիչ մը պիտի պտտիմ:

— Հազար անգամ պատվիրեցի իրենց, վոր դեղը յեկողներն մի ձանձրացունենք, բայց վորո՞ւ կըսես:

— Շնորհակալ եմ, մնաք բարով:

— Ասոնք անանկ մարդիկ են, վոր գլուխնուն դրածը կըսեն:

— Շնորհակալ եմ:

— Գեղին վարժարանին համար քանի մը դուրուշ նվեր կուտամք, աղա, ծառադ՝ իմ վրաս առած եմ դպրոցին տնօրենութիւնն և կը կառավարեմ:

— Թաղեցին ի՞նչ կընեն:

— Թաղեցին ձուկ կը բռնեն:

— Դպրոցն չեկամուտ ունի:

— Վոչ, դպրոցը չեկամուտ չունի, և առանց չեկամուտի աչք չառ աղեկ կառավարվելու վրա յի... փառք աստուծո, մենք չեկամուտի պետք չունինք:

— Առանց դրամի ի՞նչպես կը կառավարվի:

— Վարժապետներու ամսական չեմ տար:

— Լավ:

— Տնտեսի ալ ամսական չեմ տար:

— Շատ աղեկ:

— Թուղթի, գրիչի և մելանի ալ ստակ չեմ տար:

— Կեցցես:

— Փայտի, ածուխի համար ալ բան մը չեմ վճարեր:

— Սքանչելի... գոնե բոլոր վարժարաններու տնօրենութիւնը դուն առնելիք վրադ:

— Հիմա հարցուր ինձ, թե ի՞նչպես կը կառավարես:

— Հարցուցի:

— Հարցուցի ըսելով չըլլար, հարցուր:

— Շատ աղեկ, ի՞նչպես կը կառավարես:

— Ռոպերթյան վարժարանի²³⁷ հայ ուսանողներին մեկ քանին կուգան ձրիաբար դաս կուտան. եյ, ըսէ:

— Ե՛յ:

— Տնտեսի համար պետք չունիմ. աշակերտներն իրենց ուտելիքն ու խմելիքն իրենք կը բերեն. եյ, ըսէ:

— Ե՛յ:

— Թուղթը, գրիչը և մելանը ասդինն անդին կը մուրամ, ե՛յ, ըսէ:

— Ե՛յ:

— Փայտի, ածուխի պետք չունիմ, վասնզի մեր աշակերտները մրսելու սովորութիւն չունին: Ահա այսպես կը կառավարեմ դպրոցը, բայց դարձեալ կը բամբասվիմ:

— Ի՞նչ ըսելով կը բամբասեն:

— Կըսեն, թե չ'ըրբեմն քանի մը ընկերներու հետ վերը աչգին կիշնիմ ողի խմելու և դպրոցին աշակերտներուն խաղ կանչել կուտամ. կըսեն, թե ձկնորսներու ողի խմցնելով զանոնք շահած եմ և գեղին մեջ հասարակաց կարծիքը խղդած եմ: Անցյալները վարժուհի մը խնդիր ծագեցավ. չես կուզել վոր վարժուհին չեղնե. գեղին բոլոր ձկնորսներն ժողովքի յեկան և միաբերան պողոտան վաճառեցին չեմբ ուզեց: Քանի մը լուսավորչաւներ սկսան հարցնել, թե վարժուհին ինչո՞ւ չիք ուզեր, յեթե հանցանք ունի՝ ըսեք հանցանքն և ան ատեն մենք ալ ձեզի հետ կըլլանք և չենք ուզեր: Ձկնորսները, վոր բարի մարդիկ են՝ նորեն պողոտան:

— Ձեք ուզեր:

— Ինչո՞ւ չեք ուզեր:

— Մենք ի՞նչ գիտնանք. Բառնիկ աղալին հարցուցեք:

— Բայց վարժուհին հանցանք չունի:

— Հանցանք չունենալուն համար չենք ուզեր, ըսին և վեճը գոցվեցավ. յեթե չգոցվիր՝ ձկնորսներն աղեկ մը պիտի ծեծելին աչք լուսավորչաւները:

— Վարժարանն հիմա ի՞նչ վիճակի մեջ ե:

— Աղիկ ե. չես ուրիշ գործ չունիմ, առավոտե մինչև յերեկո դպրոցի համար կաշխատիմ. ուղած ժամանակս ալ ազգային հանդես ըսելով՝ լրագիրներու մեջ ծանուցում կընեմ, հանդես մը կուտամ, քանի մը հարչուր դահիկան ալ անկե կը փրցունեմ:

— Ի՞նչ բանի հանդես ես յն: Սահմանադրութեան տարեդարձի՞ հանդես ե, չեկեղեցվույն տոնախմբութեան հանդես, թե վարժարանին...

— Իրավ վոր կարեւորութիւն տված չեմ անուն մը դնելու:

համար. չեկնու տես, վոր հարցնող փնտռող ալ չկա, բայց գալ տարի անուն մը պիտի դնեմ:

Քանի տուն հալ կա:

— Ամառը ութսուն տուն ե, աշունը յոթանասունըհինգ, ձմեռը վաթսուն ե գարունը վաթսունըհինգ:

— Թաղեցիին արհեստն ի՞նչ ե:

— Թաղեցիին մեկ մասը նավավար ե ե մեկ մասը ձկնորս: Ամենքն ալ մաքուր սիրտ կը կրեն ե մաքուր ողի կը խմեն, բայց այնչափ առողջ են, վոր սովորական խոսակցութեան մը մեջ անգամ իրենց ձայնը Թարապլայեն ²³⁸) կը լսվի: Հաստանդամ մարդիկ են, շատ կապրին, անուշ-անուշ հալսուցիկ մը ունին: Գամ մարդիկ են, շատ կապրին, անուշ-անուշ հալսուցիկ մը ունին:

— Վողջ ըլլան: Կրնան ի՞նչպէս կլանք կանցունեն:

— Յազմա կը շինեն, կը ծախեն ե երկինքին կը նային: Ուրիշ Թաղեցի մեջ՝ գործը կարգին դնողն միայն կը կարգվի, վոր կարենա յուր կինը ապրեցունել. հոս հակառակն ե. ապրուստը ճարել չկրցողը կը կարգվի, վոր կինը զինքը նայի: Հոս պճնասիրութիւն, բամբասանք, շռայլութիւն, Թատրոններ, զրոսարաններ չկան. հոս կլանքն անմեղ ե:

— Մեծապէս շնորհակալ եմ ամառ տեղեկութիւններեդ:

— Ողբ շատ քաջառողջ ե. չեթե առջի իրիկվընե յիբկու ռիսա ողի խմես՝ առտուն անանկ թեթե կարթնաս, վոր կը կարծես Թե առջի գիշերը բան մը խմած չես. շատերը հոս կուգան ողի խմելու:

— Շնորհակալ եմ:

— Յեթե վարժարանին համար նվիր մը ընես՝ չես ալ շնորհակալ կըլլամ:

— Յեկնուր սա ձուկը մի փախցունիր, աղա:

— Սա ստաֆուլն առ ու ողիի մեզեք ըրե, աղաս:

— Սա քեծալի չառնե՞ս:

— Պետք չունիմ, ըսի ե ինքզինքս նավակի մը մեջ նետեցի:

Ս Ե Լ Ա Մ Ս Ը Զ

Ահա վիճաբանելու, հայհուցելու ե իրարու գլուխ պատռելու հարմարութիւն ունեցող Թաղ մը, վորու մեջ մարդս չեթե վայրկյան մը մնա՝ ինքզինքն ազգային յերեսփոխանական ժողովո մեջ կը կարծե ե դուրս չեկնելու ճար մը կը մտածե: Հարցնուր սա Թաղեցիույն, Թե ինչ ե այս անսպառ վիճաբանութիւններու պատճառն, ե վստահ չեղիր, վոր հետեւալ պատասխանը պիտի առնես.

«Սահմանադրութեան գործադրութիւն»:

Այս Թաղին մեջ մտնալուդ պես՝ գինետունն մը հետեւալ խոսակցութիւնը պիտի լսես.

— Այս շարաթ անպատճառ փոխելու չե:

— Այո, չես ալ ձեր կարծիքն եմ, վար առնելու չե ե տեղը ուրիշ մը դնելու չե: Թաղական խորհուրդը ընտրվողը գործ տեսնելու չե:

— Ասանկ Թաղական խորհուրդութիւն չըլլար:

— Ներեցեք, բարեկամ, Թաղական խորհուրդը դեռ չեկու որ ե, վոր պաշտոնի անցավ... սպասեցեք, նայինք ի՞նչ պիտի ընե...

Քանի որ կուգե Թող ըլլա. փոխանակաբիւր ընդունել տալու չենք, վոր որ համրենք:

— Յեւ դեռ գործ մը չտեսավ... վոր...

— Տեսա՞ր խելացի խոսքը... գործ մը տեսած չըլլալուն համար պետք ե վոր իշնա. մենք Թաղական խորհուրդը ընտրեցինք, վոր վարժարանները բարեկարգե, Թաղին գործերը կարգադրե, մեկ-յիբկու գանձապետներու քով մնացած դրամն ուզե...

— Յերկու որվան մեջ ի՞նչ կընա ըլլալ, չեղբայր...

— Յերկու որվան մեջ ի՞նչ կընա ըլլալ... չերկու որվան մեջ

գանձապետին մեկը թաղականին ամբողջ ստակը պարպեց...—Շիշ մը ողի բեր, ծո:— Ինծի մի բարկացներ, աստվածդ սիրես: — Քիչ մ'ալ մեզե բեր:

— Յես ալ համակարծիք եմ բարեկամիս... շիշ մ'ալ ինծի ղրկե, Հակոբիկ:

— Թաղին մեջ քանի խաղաղութուն ըլլա, վարժարանները շտկվին կրսներ նե՝ միշտ բան մը կելլա... աղբերնիս անոր համար չհտչեա կերթա կոր ան... — Ոխա մը ճերմակ գինիյնն ղրկե ինձ, վարպետ... — Սեր և միութուն ըլլա նե՝ դեռ կըլլա... — Գինիի հետ քիչ մ'ալ ձուկ ղրկե... — Վորձը պիտի հասկցնես, ամեն մարդ մեկ կողմ կը քաշե— Կենդանութուն ... Ինչ պատվական դինի... Փոխենք, չեղբայր, փոխենք սա թաղական խորհուրդը և տեղը մեր ծանոթներին քանի մը հոգի դնենք...

— Սա Տ... աղան դնենք. մոտերս շատ ինկած ե խեղճը, տունը ոխա մը ածուխ առնելու համար դրամ չունի. ան ալ մեր աղբն ե, թող քանի մը ղրուշ ալ ան վաստկի:

— Սա շիշը լեցնւր, ծո... չեմ ըսեր վոր Տ... աղան չվաստկի. բայց մեր ալ վիճակն աղեկ չե, չեղբայր... գործերը շատ դադրած են:

— Իմ կարծիքս ալ սա յե, վոր սահմանադրութենէն դոնե մեր ածուխին ու փայտին ստակը հանենք... բայց սահմանադրութիւնն ալ գործադրվելու չի... սահմանադրութեան դեմ յեղողն իմ առաջին թշնամիս ե... մեղք ե սահմանադրութեան, թեպետե Տ... աղային ալ մեղք ե:

— Յեկեք, աղգային դեղարանը յերթանք և հոն լուծենք խնդիրնիս:

— Շատ աղեկ:

Տեսարանն ե աղգային դեղարանին մեջ:

— Բարե, եֆենտի:

— Բարե:

— Բարի իրիկուն:

— Աստուծո բարին:

— Բարեկամներու հետ յիկանք ձեզի ձանձրութիւն տալու:

— Ձեր տալիք ձանձրութենէն շնորհակալ եմ... հիվ ե հիվանդ մեջերնիդ:

— Թաղական խորհուրդը հիվանդ ե:

— Հասկցա... բայց մարդիկը դեռ չերկու որ ե, վոր անցան պաշտոնի:

— Աղիկ ան, մինչե վոր տապալենք նե՝ յերկու շաբթիան կըլլան:

— Ի՞նչ հանցանք պիտի գտնենք, դաջ տապալելու համար:

— Յեղբայր, նախ և առաջ տապալելու վրա խորհինք, վերջը հանցանք մը կը գտնենք հարկով... հանցանքներու սով չկա, փնտք Աստուծո:

— Գիտեք, վոր յես դձեղ միշտ պաշտպանած եմ, բայց այս խնդրունքն մեջ կեստ մը կա, վորուն հսկառակ եմ յես:

— Ի՞նչ կեստ:

— Թաղական հանցանք չունի դեռ. սպասեցեք քանի մը որ, վոր սխալ քաջլ մ'առնե և ան ատեն իրավունքով հրապարակ չեղնենք:

— Պիտի համաձայնիս մեզի:

— Անկարելի չե այս կեստն մեջ:

— Մհընե չպիտի բաժնվիս:

— Խղճիս կը դաչի:

— Ռոպ սր լաճեքեք մը կ'առաս ինծի դուն:

— Գլխուս վրա:

— Ինձ ալ շիշ մը Պորտուգի գինի տվեք:

— Շատ լավ: Չհասկնաք թե յես թաղականը չտապալելու ձողմն եմ. յես ալ կուզեմ վոր տապալվի, բայց...

— Յերկար մի ըներ, ոխա մը ձկան չուղ տուր ինծի:

— Ձեր ալ սիրտը կոտրել չեմ ուզեր... կաշխատիմ այս գիշեր մեկ աղվոր պատվական և ընտիր հանցանք մը գտնել և անով տապալել թաղականն, բայց պայմանով մը...

— Այսինքն մեկու մը բան չըսենք:

— Վնչ... Սա պայմանով, վոր յեթե ասկից վերջը հիվանդանալով դեղ գնելու ստիպվիք՝ իմ դեղարանս հրամանք:

— Պարտքերնիս ե, չեղբայր, այս գիշերվընե բոլոր բարեկամներուս կը գնեմ, վաղվընե անդին հիվանդանան և հոս գան դեղ առնեն. հիվանդ չեղած ատեննին ալ թող գան առնեն. եֆենտիմ, ինչ կըլլա չեղեր... պարապ տեղը հազարումեկ բանի ստակ կը տրվի կոր...

— Շնորհակալ եմ:

— Մնաք բարով:

— Յերթաք բարով:

Հետևյալ որը կոխվել էր ծագի թաղին մեջ, թաղեցիներին խումբ մը պատվավոր ազգայիններ փայտերով զինված՝ թաղ-խորհրդարանի վրա կը հարձակին և թաղականներուն մեկուն վտարանեն դուրս կը հանեն: Պատրիարքարանը չեղելութունը կիրանա և հրահանգ մը կը դրկե, վոր ցկատելով, վորով կսկսի և խորհուրդ լուծյալ ետով կը վերջանա:

Ինչ վոր կը պատմենք հոս՝ տարին հինգ վեց անգամ կը պատահի այս թաղին մեջ: Սահմանադրության հաստատութեան ի վեր չե յեղած թաղական մը, վոր իր պաշտոնավարութեան ամբողջ շրջանն լրացուցած ըլլա: Առժամանակեայ թաղական խորհուրդ մը մեկ քանի տարի պաշտոն կը վարե չերեմն: Յեւ վոր մի թաղական խորհուրդ կանոնաւոր հաշիվ կրցած ետալ այս թաղին մեջ. թաղեցիներ ալ թաղական խորհուրդ ընտրելն գլուխը քերելու ժամանակ չունի, վոր հաշիվ պահանջ ետան: Հինգհարկուր քսանհինգ տուն հայ կա հոս, վեցհարկուր չերեսուն քվեարկու և չերկու հազարի մոտ ընակիչ... բայց չերթ թաղականի համար քվե տալ հարկ ըլլա՝ քվեարկուներու թիվը վեց հազար կանցնի. ալ հասկցիր, թե մեկ հոգի քանի քվե կուտա հոս. Սելամսըզցին շատ շուտ ե... քվեչի մասին:

Յերեք կուսակցութուն կա հոս — կեդրոնական, աջակողմյան և ձախակողմյան:

Կեդրոնականն ե՝ թաղական տապալող, աջակողմյանն ե՝ վարձատր մասը, վոր քահանաներու գործիք ե, իսկ ձախակողմյանն ե՝ անտարբեր մասը, վոր միշտ խոհեմութուն կը համարել լռեն:

Թաղեցիութն բարեպաշտութեանը գալով՝ կրնաք շուտով հասկընալ դոյն, չերբ ըսեմ ձեզ, թե կիրակի որերը չեկեղեցվո մեջ չերկու հարյուրի ավելի մարդ չըլլար, և ժողովրդյան մեջ շրջաբերութեան հանված գանձանակին մեջ ալ հազիվ յոթանասունը-հինգ փարա կը գոյանա: Այս չեկեղեցին տասը քահանա ունի. աստված ամենն ալ անփորձ պահեսցե և Սելամսըզցին պարզեվեսցե: Յեկեղեցվո խաչահանգստին շուրջ չերկու տեսակ ե, մեկն անարատ ե, իսկ մյուսը նենգված: Անարատին գինը քիչ մը սուղ

ե, իսկ մյուսը ձրի յե, ուղածիդ չափ կրնաս խմել: Առաջին տեսակին ուղողն լուսարարին կը դրմե, վոր անմիջապես կերթա և պահած տեղին կը բերե. չերկրորդ տեսակին խմել ուղողը գլուխն չեկեղեցվո շրջիցին վրա դրված դուլին կերկնցնե և ուղածին չափ կը խմե. այդ շուրս ախորժակ կը բանա չեղբ:

Հոս ալ թաղային վարժարանն հետ չերթալու մասին կը մրցե մյուս թաղային վարժարաններու հետ, և շատերը կը հուսան թե առաջին մրցանակն աս պիտի վաստկի:

Քանի մը տարիներ առաջ սովորութուն կար հոս՝ որը չերեք ընկերութուն կազմել... տարվան մը մեջ չերեք հազարի չափ ընկերութուններ կազմվեցան... դպրոցներ բարեկարգելու ընկերութուն, ընթերցասիրութուն տարածելու ընկերութուն, ծխախոտը ձգելու և ափսոն կլնելու ընկերութուն, ընկերութուններ կազմելու ընկերութուն, գիրք հրատարակելու ընկերութուն, գիրք չկարդալու ընկերութուն... վոր մեկը համբմ. բայց ասոնց ամենն ալ խոտի պես անցան գնացին: Հիմա հատ մը միտնց ամենն ալ խոտի պես անցան գնացին: Ընկերութուն, բայց գործը չգիտենք տակավին, և չգիտնալու իրավունք ունինք, վասն զի գեռ նոր ե, ապա չե և աստված գիտե մեծնալիքը: Մեր փափաքն ե, վոր գոնե այդ ընկերութունն յուր նախորդներուն չնմանի:

Իսկիւտարցին ուր վոր ալ ըլլա՝ շուտ կը ճանչցվի: Յերբ կը տեսնես մարդ մը, վոր լեցուն ձերմակ տոպրակ մը ունի ձեռքը՝ գիտցիր, վոր մարդը Իսկիւտարցի չե, և չեթե չե՝ մոտերս անպատճառ Իսկիւտարցի պիտի ըլլա:

Իսկիւտարցին յուր կլանքին մեջ բնավ չըսեր յուր մեկ մտերիմ բարեկամին կամ ազգականին. «այս գիշեր մեր տունը հրամե, կերակուր մեկ տեղ ուտենք»: Բայց յուր կլանքին ամեն որերու մեջ լսիկ չգաղթել ալ մարդուն՝ վորու չերեսը կլանքին մեջ անգամ մը տեսած ե. «Գիշեր մը խնձույք մը բրե ու գիտալ հրավիրի յիդբայր, ինչ կըլլա, մենք ալ ոտարական չենք»:

Գինետոնները հոս այնչափ համակրութուն և քաջալերութուն գտած են, վոր հանդգնած են չեկեղեցվոյն քիթը մտնել. այնքան մոտեցած են անոր: Գինետոններուն հաճախորդները Արամյան դավ. կներն ²³⁹) են, վոր գիշերվան չերեքին տուն կը դառնան, վասն զի, ինչպես ըսինք՝ ազգային վիճաբանութունները գինետոն մեջ տեղի կունենան և ան ալ ժամը չերկուքեն վերջը: Ժամը չերկուքեն առաջ վիճաբանութունն արգիլված ե.

— Մնաք բարով:

— Յերթաք բարով:

Հետևյալ որը կոխվել կը ծագի թաղին մեջ, թաղեցիներեն խումբ մը պատմավոր ազգայիններ փայտերով գինված՝ թաղ-խորհրդարանի վրա կը հարձակին և թաղականներուն մեկուն վտա-ներեն, մյուսին մորուքեն, մեկալին ահանջեն քաշելով խորհրդա-րանեն դուրս կը հանեն: Պատրիարքարանը չեղելութունը կի-մանա և հրահանգ մը կը դրկե, վոր նկատելով, վորով կսկսի և խոր-հուրդ լուծյալ ե-ով կը վերջանա:

Ինչ վոր կը պատմենք հոս՝ տարին հինգ վեց անգամ կը պատահի այս թաղին մեջ: Սահմանադրության հաստատութե-նեն ի վեր չե յիղած թաղական մը, վոր իր պաշտոնավարու-թյան ամբողջ շրջանն լրացուցած ըլլա: Առժամանակեա թաղա-կան խորհուրդ մը մեկ քանի տարի պաշտոն կը վարե չերքեմն: Յեվ վոչ մի թաղական խորհուրդ կանոնադր հաշիվ կըցած ե տալ այս թաղին մեջ. թաղեցի ալ թաղական խորհուրդ ընտրե-լեն գլուխը քերելու ժամանակ չունի, վոր հաշիվ պահանջե և առնե: Հինգհարյուր քսանհինգ տուն հայ կա հոս, վեցհարյուր չերեսուն քվեարկու և չերկու հազարի մոտ բնակիչ... բայց չերթ թաղականի համար քվե տալ հարկ ըլլա՝ քվեարկուներու թիվը վեց հազար կանցնի. ալ հասկցիր, թե մեկ հոգի քանի քվե կու-տա հոս. Սեւմաքցի շատ շուտ ի... քվեչի մասին:

Յերեք կուսակցութիւն կա հոս — կեդրոնական, աջակողմ-յան և ձախակողմյան:

Կեդրոնականն ե՝ թաղական տապալող, աջակողմյանն ե՝ վախճանալ մասը, վոր քահանաներու գործիք ե, իսկ ձախակո-լմյանն ե՝ անտարբեր մասը, վոր միշտ խոհեմութիւն կը համարի լոբէն:

Թաղեցիութիւն բարեպաշտությանը գալով՝ կրնաք շուտով հաս-կընալ զայն, չերթ ըսեմ ձեզ, թե կիրակի որերը չեկեղեցվո մեջ չերկու հարյուրի ավելի մարդ չըլլար, և ժողովրդյան մեջ շրջա-բերության հանված գանձանակին մեջ ալ հազիվ յոթանասունը-հինգ փարա կը գոյանա: Այս չեկեղեցին տասը քահանա ունի-աստված ամենն ալ անփորձ պահեսցե և Սեւմաքցիին պարգե-վեսցե: Յեկեղեցվո խաչահանգստին ջուրը չերկու տեսակ ե, մեկն վեսցե: Յեկեղեցվո խաչահանգստին ջուրը չերկու տեսակ ե, մեկն անարատ ե, իսկ մյուսը նենգված: Անարատին գինը քիչ մը սուղ

ե, իսկ մյուսը ձրի չե, ուզածիդ չափ կրնաս խմել: Առաջին տե-սակեն ուզողն լ. սարարին կը գիմե, վոր անմիջապես կերթա և պահած տեղին կը բերե. չերկուրդ տեսակեն խմել ուզողը գլուխն չեկեղեցվո շրջիվին վրա դրված դուլին կերկնցնե և ուզածին չափ կը խմե. աչգ ջուրն ախորժակ կը բանա չեղեր:

Հոս ալ թաղային վարժարանն հետ չերթալու մասին կը մըցի մյուս թաղային վարժարաններու հետ, և շատերը կը հուսան թե առաջին մըցանակն աս պիտի վաստկի:

Քանի մը տարիներ առաջ սովորութիւն կար հոս՝ որը չերեք ընկերութիւն կազմել... տարվան մը մեջ չերեք հազարի չափ ըն-կերութիւններ կազմվեցան... դպրոցներ բարեկարգելու ընկերու-թիւն, ընթերցասիրութիւն տարածելու ընկերութիւն, ծխա-խոտը ձգելու և ափսոս կլնելու ընկերութիւն, ընկերութիւններ կազմելու ընկերութիւն, գիրք հրատարակելու ընկերութիւն, գիրք չկարդալու ընկերութիւն... վոր մեկը համբմ. բայց ա-սոնց ամենն ալ խոտի պես անցան գնացին: Հիմա հատ մը մի-ացն կա, վորու անուն ե Կրքաքրաց Ընկերայութիւն, բայց գործը չգիտենք տակալին, և չգիտնալու իրավունք ունինք, վասն զի դեռ նոր ե, ապա չե և աստված գիտե մեծնալիքը: Մեր փափաքն ե, վոր գոնե աչգ ընկերութիւնն յուր նախորդներուն չնմանի:

Իսկիւտարցիին ուր վոր ալ ըլլա՝ շուտ կը ճանչցվի: Յերեք կը տեսնես մարդ մը, վոր լեցուն ճերմակ տոպրակ մը ունի ձեռքը՝ գիտցիր, վոր մարդը Իսկիւտարցի չե, և չեթե չե՝ մոտերս ան-պատճառ Իսկիւտարցի պիտի ըլլա:

Իսկիւտարցիին յուր կլանքին մեջ բնավ չըսեր յուր մեկմտե-րիմ բարեկամին կամ ազգականին. «այս գիշեր մեր տունը հրամ-մե, կերակուր մեկ տեղ ուտենք»: Բայց յուր կլանքին ամեն որերու մեջ լսելի չգաղթիր այն մարդուն՝ վորու չերեսը կլանքին մեջ անգամ մը տեսած ե. «Գիշեր մը խնձույք մը բրե ու զիս-ալ հրավիրի յիղարայր, ինչ կըլլա, մենք ալ ոտարական չենք»:

Գինետոնները հոս այնչափ համակրութիւն և քաջալերու-թիւն գտած են, վոր հանդգնած են չեկեղեցվոյն քիթը մտնել, այնքան մոտեցած են անոր: Գինետոններուն հաճախորդները Ա-րամյան զտվ. կներն²³⁹ են, վոր գիշերվան չերեքին տուն կը դառնան, վասնզի, ինչպես ըսինք՝ ազգային վիճաբանութիւն-ները գինետոն մեջ տեղի կունենան և ան ալ ժամը չերկուքեն վերջը: Ժամը չերկուքեն առաջ վիճաբանութիւնն արգիլված ե.

յերկու ժամ շարունակ ողի կը խմվի և լեռքը ասեղնապետն-դի նեպանը-զանգակ հնչեցնելով՝ զիվանին պատրաստված և ատենին բացված ըլլալն կը հայտնէ:

Իւսկիւտարցիին նմանը չկա առևտուրի մեջ. Պոլսո կողմը տասը փարաչի ծախված բովաթեսը յերկու դահեկան վար չեն տար Իւսկիւտար:

Սելամսըզցիին լավ հմտություն և կատարյալ տեղեկություն ունի ածուխին վրա. ուստի յերբ ձմեռվան համար տնային առնելու յերթաք՝ սկիւմսըզցի մը առեք ձեր հետը և թող տվեք, վոր ան չնեք ընտրությունը. Առուխդ առի՛ր, մնա՛ք Բարովի ըսե ու գործդ գնա՛:

Սելամսըզցի ժողովուրդն ընդհանրապես բարձր ձայնով կը խոսի կամ կը հայհոյե. և աս ալ քաջության և անկեղծութեան նշան կը համարի:

Հնություններու մեջ նշանավոր են բույսուդի սրճարանն և անոր բազմոցները: Այս սրճարանի մեջ կը սորվի ամեն մարդ, թե թնչ՝ ե ածուխի, փայտի և միսի գինները, թե վորո՞ւ կրիկն եւրիկն թողած ու փախած ե, թե երիկն թողած ու ինչո՞ւ փախած ե, թե վորո՞ւ աղջիկն վոր յերիտասարդի պիտի նշանվի և թե ինչո՞ւ պիտի նշանվի: Հոս ե նաև յիծարիկ ըսված զրոստավայրն, վոր ամեն տեսակ զրոստանք ունի յուր մեջը. մուտքը ազատ ե, յիշելու համար ալ դրամ վճարելու հարկ չկա: Հոս ալ յերբեմն ազգային խնդիրներու վրա վիճաբանություններ տեղի կունենան: Ազգային վիճաբանությունները տեղի չեն ունենար միայն այն տեղերն ուր վոր պիտք եյին ըլլալ:

Իգալան սեռն ալ արտկանին պես վիճաբանությունը քիչ մը շատ կը սիրե հոս: Քանի մը անգամներ խնամակալություններ կազմվեցան և լուծվեցան՝ աղջիկներու վարժարանն բարեկարգելու համար. չհաջողեցան բարեկարգելու... ինքզինքնին նախ և առաջ:

Գիղեցիկ սեռն հոս գիղեցիկ ե, աղքատասեր ե, զրոստասեր ե. Նորաձեռութեան դասերը Գատը գյուղեն կը սորվի:

Այս թաղին մեջ կան պակաս նետող, թուղթ բացող կիներ, վոր ամեն բան կը բացաղրեն քեզի, ամեն գողտիք կը գտնեն: Իգալան սեռին մեջ շատ հավատացողներ կան այս կիներուն, սակայն չմոռնանք սեռու՝ վոր Սելամսըզի այրերուն մեկ քառորդն իգալան սեռին մեջն կը հաշվի միշտ:

Հոս ամեն տուն Լեպլեպիճի Հոռնոռն ²⁴⁰) մեյ-մեկ կտոր կը կանչեն, և յեթե որ մը ամբողջ Սելամսըզը պատելու ըլլաս՝ Լեպլեպիճի Հոռնոռն ամբողջ որեքան մտիկ ըրած կըլլաս:

Ազգային յերգերը մինչև այսօր չեն կարողացած այս տուներեն ներս մտնել:

Սիրահարութեան համար հոս մինչև հիմա հատուկ տեղ մը պատրաստված չըլլալով՝ թաղեցին շատ անգամ Իճատի կերթա Պալթային լեռը և հոն խոսկապ, նշանտուք կընեն: Կիները շատ անգամ հոն ձեռնոց կը նետեն իրենց անարգանք ընող կիներուն և մենամարտութեան կը հրավիրեն զանոնք: Դեռ անցյալ օր յերկու կին իրարու բալական հայոյություններ ուղղեցին և իրարու գլխարկ պատուեցին, և յեթե վոստիկանությունը չմիջամտեր՝ իրարու գլուխ ալ զպատուելու հավանականություն կար:

Դպրոցականներուն մեծագույն մասը փողոցներու մեջ հայերեն չեն խոսիր, սակայն յերբ հայոցիլ հարկ ըլլա՝ մայրենի լեզուն կը գործա՛ն և սամաթիացիներու յերկրորդը կրնան համարվիլ:

Սելամսըզցին այնքան սիրով ե իրեն դրացի յենիմահալեցիի հետ, վոր անցյալներն, յերբ դպրոցները միացնելու փորձ յեղավ՝ մաղ մնաց, վոր յերկու թաղն ալ զիրար կործանելու չափ հառաջ պիտի յերթային: Սելամսըզցին չուր զրացվույն հետ դժոխք անգամ յերթալ չուղեր: Յենիմահալեցին ալ անոր հետ արքայություն ալ չերթար: Սելամսըզցին հիմա այնչափ բաժնված ե յենիմահալեցիին, վոր ներքին համոզմամբ զայն ուրիշ ազգ մը կընդունի: Իրարու քահանայի հաղորդություն չեն առներ, և վոչ ալ իրարու յեկեղեցի կերթան. արդեն յերկու թաղի քահանաներն ալ իրենց ձուխերուն հետ համընթաց կը քալեն:

Յեթե Յենիմահալեցի վարժարանի մեջ աշակերտ մը կռիվ ընե՝ իսկույն զինքը կը հանդիմանեն ըսելով. «Կերեի, վոր Սելամսըզի քահանաները կնքած են զքեզ»:

Իւսկիւտարի ողը խիստ ե. տկարները անմիջապես կառնե կը տանի անդիլ աշխարհ:

Ներքին բերքն և հրաժարյալ պատրիարքներ, վոր կուգան այս թաղին մեջ կը նստին տան մը մեջ, վոր ձրի կը տրվի. թեպետե շատ մը պատրիարքներ առանց վարձքի նստելու տուն մ'ունենալով հանգեր՝ չեն ուղեր իրենց հրաժարականը տալ:

Թ. Ո Ւ Գ Ա Բ Ո Ւ

- Կաղսչեմ, այս թաղին անունը մի՛ տար, յեղբայր:
- Ինչո՞ւ:
- Վասնզի այս թաղին անունը տխուր հիշատակներ կարթն-
ցնե մտքիս մեջ:
- Ի՞նչ պատահեցավ:
- Յրկու տարվան տղաս զո՞հ տվի այդ թաղին:
- Ողբ այդչափ գե՞շ ե:
- Վճչ:
- Շիտակ դրուցե, յեթե գեշ ե՝ մենք ալ չերթանք:
- Վճչ, բարեկամ, ողբ պատվական ե:
- Ի՞նչպես յեղավ, վոր տղադ մեռավ հոն:
- Կիրակի առավոտ մը տղաս հետս առի ու չեկեղեցի գնացի-
լես ալ ուրիշներու պես առթիքիս դրադած ելի... մեջ մ'ալ ժա-
մերգության միջոցին անանկ ձայն մ'ելավ, վոր... ահ միշե այ-
սոր ականջես չեկներ այդ ձայնը... ահ, յեղբայր, անանկ ձայն
մ'ելավ, վոր տղաս վախցավ, մարեցավ, ինկավ:
- Տեր վորորմիա... վորոտեմ եր:
- Ո՛ւր եր թե վորոտում ըլլար... անբացատրելի ձայն մ'եր:
- Թնդանոթ եր:
- Յերանի թե թնդանոթ ըլլար... անմեկնելի բան մ'եր:
- Ի՞նչ եր ուրեմն:
- Տիրացույին ձայնն ե յեղեր... Անմիջապես տղաս գիրկս
առի ու բծիղներու դիմեցի. հույս չկա, լեղին բրդած ե, ըսին,
և դավակս մեռավ:
- Այո՛, պարոնին խոսածը սուտ չե, իմ կինս ալ որ մը վախ-
ցավ այդ ձայնավորին ձայնեն և յերեք ամսու դավակ մ'ան-
ցուց:
- Որ մ'ալ յես լեղապատառ դուրս փախա այդ չեկեղեցի յեն:

Այս տեղեկութունները կարգալեն յիտքը բնական ե, վոր
մեր ընթերցողներն գովածակին մասնել թոր Գաբուշի չեկեղեցին,
ուր թաղիցին ալ մտնել շատ չսիրեր: Թաղիցիին չեկեղեցի չե-
թալուն պատճառն՝ չեկեղեցվոյն զանգակ չունենալն ե կըսվեր:
Իսկ յերբ յերկու տարի առաջ Խրիմյան հոն քարոզ խոսելու գնաց
և չեկեղեցվուն մեջ մարդ չտեսավ՝ թաղականներուն դառնալով
ըսավ:

— Պարտալ բան ե, վոր ծախքեր կընեք ասանկ ժողովուրդին
զանգակ շինել տալու համար. իմ տեսածիս ու հասկցածիս նա-
յելով՝ սա պարխապեն թնդանոթ ալ նետելու ըլլաք՝ աս տեղ
մարդ չեկեղեցի չախտի գա:

Զերմեռանդներուն գալով՝ ասոնք կը պատասխանեն, թե ի-
րենք կուզեն ամեն ուր չեկեղեցի չերթալ. բայց կը վախնան, վոր
ձայնավորի ձայնեն կը վախնան և կը հիվանդանան:

Մենք ալ ուրեմն չեկեղեցվուն դռնեն նայելով շատանանք,
վասնզի բժշկի ստակ տալու ժամանակ չե:

Այս չեկեղեցվոյն մեկ կողմն ե թաղալին վարժարանն, ուր,
յեթե աստված կամենա, թանչեր պիտի դաստիարակվին ուր մը:
Այս վարժարանին դռն վրան տախտակ մը կար ժամանակավ,
վորու վրա գրված եր Լեվոնյան Վարժարան: Հիմա այդ տախտա-
կը վերցված ե և տեղն ուրիշ բան մը գրված չե: Յերկու հարյուր
մոտ աշակերտներ կան սույն վարժարանին մեջ, վորու ուսման
ընթացքը վեց տարվան բաժնված ե հետևյալ յեղանակով:

Ա.	Տարի	Ուղղական	Բան
Բ.	»	Սեռական	Բանի
Գ.	»	Տրական	Բանի 'ի Բան
Դ.	»	Հայցական	Զրան
Ե.	»	Բացառական	ի Բանե
Զ.	»	Գործիական	Բանիվ:

Աշակերտ մը վեցերորդ տարին լրացունելուն պես վարժա-
րանեն կենե, և հայրը վաճառական մը կը փնտռե, վոր տղան
անոր քով գրագրության տա: Իսկ յիրը հայրն չը հաջողի գավա-
կը վաճառականի մը քով գրագրության դնել՝ կը սրդողի և կը
զղջա յուր տղուն այնչափ ուսմունք սորվեցուցած ըլլալուն հա-
մար:

— Կարապետ աղա, դավկիդ տեղ մը գտմար:

— Զե, ուսմունքն ալ պարտալ բան ե յեղեր, յեղբայր. տղաս

տասնևմեց տարի կարդալ տվի, վոր ուսումնական ըլլա և վարժարանն յեղնելուն պես վաճառականի մը քով դնեմ, վոր մարդ ըլլա: Ամեն բան գիտե, կրակի պես ե, գրիչին արյուն կը կաթե, բայց ինչ ոգուտ:

— Վաճառական մը չգտմը:

— Քանի մը վաճառականներու ներկայացուցի դինքը, բայց այդ վաճառականներն ալ տգետ ըլլալով՝ տղու հարգը չեն ճանչնար: մյուս տղաս պիտի հանեմ վարժարանն և արհեստի պիտի տամ:

— Շատ լավ կընեք:

Յեկեղեցւոյն մյուս կողմն ե աղջիկներու վարժարանն, վորու վրա ալ ժամանակաւ Գոհարիկյան վարժարան գրված էր և վարժարանին մեջ քիչ-շատ ուսում կար. իսկ հիմա Գոհարիկյան վարժարան անունն և ուսմունքն վերցված են իրրե ավելորդ բաներ և միայն վաթսուերե չափ աղջիկներ կերթան կուգան՝ իրենց կերածը մարսելու և քալել սորվելու համար. վերջինը կընա ոգտակար ուսում մը համարվիլ վասնզի շատ աղջիկներ քալելու կերպն ալ չեն գիտեր:

Թաղիս թաղականները գրեթե բնավ չեն փոխվիր. մեկ կողմն հրաժարական կուտան, մյուս կողմն հրահանգ կը դրկիլի Պատրիարքարանն, հին թաղականները նորեն կը ընտրվին և առողջ փառք պաշտոնի գլուխ կանցնին և կսկսին գործել:

Վիճաբանության մեջ թաղականներու գործածած պաշտոնական լեզուն հետեյալն է:

— Շուն շանվորդի՛, յես քեզի չըսի՛, վոր այդ գումարը հաշվույն չանցունես:

— Փատի կտոր, ինչո՞ւ պիտի չանցունեմ յեղի:

— Իրարու ինչո՞ւ անվայիլ խոսքեր կընեք, իշու կտորներ, չմք ամչնար. մենք թաղական պիտի ըլլանք, ամեն մարդ մեզմե բարի որինակ պիտի առնե... ավանակի պես կը վարվիք իրարու հետ... արջու պես կը խոսիք...

— Հիմա հորդ պառկած տեղեն կսկսիմ հա... քեզի ինչ կըլլա կոր... մենք իրարու հետ հաշիվի մը վրայոք մարդու պես կը խոսինք կոր...

— Սա աթոռն բռնելուս պես գլխուդ կիջեցունեմ հա, իշու թոռ. իրարու հետ քաղաքավարությամբ խոսեցեք ըսի, ավանակ, գոմեշ... գեշ ըսի:

Թաղականի մեջ մեկ հոգի կա միայն, վոր ս. Ջատիկ կամ Ծնունդի որերը առատ-առատ ժամուց կուտա յուր քսակեն. մնացածներն ալ առատորեն ժամուց կուտային, բայց թաղականի սնտուկեն կուտային ժամանակաւ. իսկ հիմա, վոր թաղին մեջ լիացված ե սնտուկեն ժամուց տրվիլ, ս. Ջատիկ և Ծնունդի որերը հիշալ թաղականներն յեկեղեցին կանուխ կեննեն կերթան, վոր չստիպվին ժամուց տալ իրենց քսակեն...

Յեթե հարցվի, թե ինչ ե թաղական խորհրդո տեսած գործը՝ կը պատասխանենք, վոր անոր գլխավոր գործն ե չորս կալվածներն գոյացած յեկամուտը հավաքել և մեկ լուսարարին ու յերկու ժամկոչին ամսական վճարել: Յեթե լուսարարին ու ժամկոչին հրահանգ տրվի, վոր իրենց ամսականներն յերթան այդ կալվածները վարձողներեն առնեն ամսե ամիս՝ թաղականներուն գործ չմնար: Չմոռնանք ըսել սակայն, վոր թաղական յերկու ամիսե ի վեր թաղին վարժարանին հոգաբարձությունն յուր վրա առած ե... Տեր աստված ընդունելի արասցե... Յեկող հոգաբարձությունը, կըսեն, վողջ ըլլա, վարժարանները բավական կործանեց և հեռացավ. Հիշալ հոգաբարձության անդամները յերկու տարի առաջ ս. Ստեփանոսի տոնախմբության որը չորս տակառ ողի և ութը տակառ գինի բերել տալով վարժարանը՝ հոն սեղան շտկեցին և մինչև յերեկո այնքան ողի և գինի խմեցին, վոր չկըրցան քալել և տակառի պես գլտորվելով կրցան իրենց տունները մտնել: Վարժարանին աշակերտներն տեսան իրենց հոգաբարձուներն նույն վիճակի մեջ և իրենք ալ գինետուն մը մտնելով՝ մեկմեկ հատ տնկեցին ի փառս սրբույն Ստեփանոսի նախավկային:

Յեկեղեցին յերեք քահանա ունի, վորք խոսք կառնեն այն խնդիրներու մեջ՝ վորք հարսանիքի, կնունքի կամ ննջեցյալի հետ վերաբերություն ունին. ուրիշ խնդրո մը վրա խոսք բացված ժամանակ կը քնանան:

Թաղեցին ալ շատ հոգ չտանիր յուր վարժարանին ու յեկեղեցւոյն, միայն տուգ ողիին վրա յե յուր խելքը: Թոր գաբուցին միշտ մինչև առավոտ կը նստի գինետունը, յուր առջևն ունենալով տուգի հետ քիչ մը յեփած լուբիա կամ քիչ մը պտուղ՝ յեթե վոստիկաններ չգան ժամը յերեքին և գինետան դուռը դարձնելով՝ դուրս չհանն զայն գինետունեն: Յուր խոսակցությունը յեղանակով ե, կամ ռարզը պիտի կանչե կամ մանի: Աղագային

գործերուն վրա բան մի հարցունքը իրեն, վասնզի սովորութիւնն չունի ատանկ բաներու վրա խոսելու: Իսկ յիթե Կլատսթըն, Պիքոնսֆիլտ, Կրանվիլ ²¹¹) անուններն մին փախցունես՝ անմիջապէս ապտակ մը կուտա յերեսիդ ըսելով, թե ֆրանսիներն լիզվով հաշոյած ես իրեն: Ձայնավոր վարժապետն այս գիտեալունը բերելու յե, վոր ձայնը հանե և հոն յիղողները վախցունե, վոր մեյ մ'ալ չերթան հոն:

Ուրիշ գիտեալն մը մեջ խումբ մը կա, վոր թաղին աղնվազ կան մասն ե: Ասոնք իրարմե մեյ մեկ կանգուն հեռավորութիւն վարժապետներու վրա նստած են. իրենց առջին ունին յերեսուն փարանոց մեյմեկ շիշ օյով: Բնավ իրարու հետ չեն խոսիր, կարծես սրղողած են իրարու. իրենց յերեսը կախած՝ լոկի մնջիկ իրենց շիշը պարպելու և նորին լեցնել տալու կը նային: Այնպիսի ձեով մը և պարկեշտութեամբ մը կը խմեն, վոր կարծես թե ողի խմելն պարտաւորիչ ե, և մեծ պատիժի պիտի յինթարկին՝ յիթե կաթիլ մը ողի քնա շիշերուն մեջ: Լռութիւնը կանոնավոր կերպով կը տիրե հոն... մեկը աչիւրը վեր առնելով յոր քովիին ուղի շիշին չի նայիր. հոն արտասանված խոսքերն են բարի իրիկուն, սա լեցուր. գիտի բարի: Խոսելու վարժված յերեսփոխան մը կը ճաթի, յիթե վայրկյան մը նստի ասոնց մեջ:

Կիները բնական ե, վոր բամբաստիքը սիրեն, բայց իրենց աշխատասիրութիւնն, վարքն ու բարքը մեծ գովեստի արժանի չեն: Ասոնք շատախոսութիւն ընելու համար տունե տուն պտըտող ու փողոցները չափող կիներն են. կաշխատին և իրենց ձեռագործները ծախելով ստակ կը վաստկին: Պէնասիրութիւնն բնավ չունին. պարկեշտութեամբ կը հագվին և մեծ հնազանդութիւն ու հավատարմութիւն կը ցուցնեն իրենց ամուսիններուն: Շատ մը այրեր իրենց կիներուն, հայրիւր իրենց աղջիկներուն, մանչեր իրենց մայրերուն բնական չեղած են և անոնց վաստկած դրամով կապրին... Կեցցեք արական սեռին պատիւը...

Թաղիս մեջ 400 տուն կա հայու, վորուն յուրաքանչյուրին մեջ գոթի յերկու ընտանիք կա:

Թոր գարուի ողը շատ առողջ ե, և յիթե այսպիսի շարունակե՝ քահանաները այդ թաղին հրաժարիլ պիտի ստիպվին վասնզի բնավ նշխարյալ չըլլար յեղի:

ԺԱ.

Կ Ե Տ Ի Կ Փ Ա Շ Ա

Այս թաղին ազգայիններն իրարու խոսք չեն հասկնար. լեզուները խառնված են հոն. վասնզի վերջին հրդեհն ի վեր Պոլսո թոր թաղերն, ինչպիսի նաեւ դավաճացի ազգայիններն գաղթականութիւն հաստատված ե հոն:

Ինչպիսի վոր աշտարակը շինողներն իրարու լեզու չհասկընալուն համար չկրցին աշտարակին շինութիւնն ավարտել, այնպիսի ալ ասոնք դեռ չհաջողեցան իրենց վարժարանին շինութիւնն ավարտել:

Յոթը կամ ութը ամիս ե, վոր ձեռնարկած են վարժարանի շինութեան, առանց անոր ծախքը նախապէս հոգալու. ի սկզբան այնպիսի կարծած են ասոնք, վոր վարժարանի հիմը դրվելուն պէս՝ ուրիշ բան չմնար ընելու, յիթե վոչ առավոտ յերկու քիչ մը ջուր տալ շինքին արմատին, վոր բուսի պէս աճի ու բարձրանա: Ուստի հիմը դրվելուն պէս թաղեցին ուրախացով, վոր վարժարանի խնդիրն ալ լուծվեցավ, և սպասեց, վոր ինքնիրմե բարձրանա: Իսկ չերբ տեսավ, վոր սխալած ե յուր կարծիքին մեջ՝ սկսավ ասդին անդին վազել դրամ ձարելու համար: Շատ ծանր կերպով բարձրացավ այս շինքը. կես կանգուն բարձրանալուն պէս՝ յերկու ամիս դադար կաններ և կսպասե, վոր թաղեցին դրամ ձարե և նորին սկսի բարձրանալ. յիթե մեկ կանգուն բարձրանար՝ չորս ամիս կսպասե: Հիմա վոր բավական բարձրացած ե՝ դարձալ կսպասե, վոր պատահաններու համար ապակի ձարեն ու բերեն: Այս ընթացքով հուսալի յե, վոր մեկ-յերկու տարիսն հիշալ վարժարանն աշակերտ պիտի կրնա ընդունիլ:

Յեկեղեցիս քիչ մը վեր թաղային սրճարանին դեմ խրճիթ մը կա, ուր կը դաստիարակվին թաղին աշակերտները, վորոնց թիվը քսանհինգ կամ յերեսուն ե: Դպրոցին մեջ հետեյալ դասերը կաւանդվին:

Առավոտին մինչև կես որ չեկեղեցական չերգերու վարժու-
թյուն.

Կես որին վերջը Գերական, Սաղմոս ²⁴³), Նարեկ ²⁴³) և քիչ
մ'ալ պնակի վրա գրավարժություն:

Այսու ամենայնիվ այս վարժապետը ննջեցալի մը լուր
առնելուն պես՝ դասերը կը թողու, ննջեցալին կը դիմե և ննջեց-
յալին վերադառնալուն՝ աշակերտները ծեծելու կը ձեռնարկե: Ծեծի
դասը շաբաթը չերեք անգամ ե և ան ալ չերեկոյան դեմ:

Ս. Հովհաննես Ավետարանիչ անվամբ չեկեղեցի մը կա հոս,
վորուն քարոզիչն ուրիշ մտմտուք չունի, չեթե վոչ սա՝ թե
Խնչպես կարելի չե քանի մը ամիսն չեպիսկոպոսության բարձ-
րանալ: Ամեն կերակի քարոզ կը խոսի. ամեն քարոզին բնարան
կը դնե ավետարանին մեկ պարբերություն մը և քարոզը կը վեր-
ջացունե արեւելւան խնդրով:

Հոս ալ թաղական խորհուրդն ուրիշ թաղական խորհուրդնե-
րու պես կարևորություն չտար վարժարանին, այլ կը նայի, վոր
հարուստ ազգայիններն մեկը մեկն և անկե չերեք չորս հարյուր
վոսկի փրցունելով անոր մարմինն չեկեղեցվո մեջ թաղե:

Անհավատալի չէ, վոր յիբեմն թաղականի անդամներն
մեկը յուր հարուստ բարեկամներն մեկուն հետ խոսակցի աչս-
պես:

— Բարեկամ, քեզի համար գեղեցիկ տեղ մը կա:

— Ու՞ր, Վոսփո՞ր:

— Չե, Կետիկ փաշայի կողմը... ծովահայաց գետին մը:

— Չեմ ուզեր:

— Սքանչելի տեղ... յիբեկ քանի մը բարեկամներ կը խոսե-
լինք, ամենքս ալ քեզի արժանի տեսանք այդ տեղը: Յեթե չես
ստակ ունենայի՝ յես կ'առնելի:

— Առնեմ Խնչ ընեմ, չեղբայր:

— Յեթե մեռնելու ըլլաս՝ իմաց տուր ինձի, վոր աչս տեղը
քեզի տանք...

— Մեռնելիս չեաքը գետինն Խնչ ընեմ:

— Թաղվելու համար, չեղբայր:

— Հիմա հասկցա միտքդ. բայց յես դեռ մեռնելու միտք
չունիմ:

— Յես ալ չեմ ուզեր, վոր հիմա մեռնիս. աստված չընե:

Սակարկությունը լմնցունենք հիմա. դուն չերբվոր ուզես՝ ան
ատեն միտի, միայն թե ստակը կանխիկ տուր, վոր վարժարանիս
շինենք լմնցունենք:

Բարձր ձայն ունեցող ժամկոչները մեծ հարգ ու պատիվ
կը վայելին թաղիս մեջ:

Հոս 300 տուն կա հայու: Մեծ մասը կեսարացի յե. ժողո-
վըրդյան մեկ մասին գործը սեղանավորություն ե. անշան մաս
մ'ալ արհեստավոր կը գտնվի:

Յեթե աչս թաղին մեջ ժիր և գործունյա մեկը տեսնես
ան ալ գավառացի հայն ե. բնիկ թաղեցին գործունեութենե
զուրկ ե:

Թաղեցին նշանավոր ե յուր անտարբերությամբն, գոր-
ցույց կուտա ամեն խնդիրներու մեջ: Հոս յեթե մեկու մը հա-
գուստը կ'առնեն քաշես առնես՝ ինչուս պե՛տ կըսե և թող կուտա,
վոր հագուստը առնեն տանին:

Հոս հարուստ և փորը կուշտ մարդ չկա շատ. աղքատն ու
արբեցողն չափեն սովի յե:

Յեթե հոս վարպետորդի մեկը գտնվի՝ ամբողջ թաղն մատի-
վրա կ'առնե և ամիսներով ու տարիներով կը խաղցունե:

Թաղեցիներն աչն աստիճան վախկոտ են, վոր յեթե քիչ մը
բարձր ձայն հանես՝ ամենքն ալ կը զարհուրին և կը փախչին:

Այստեղ ընկերական կյանք չկա. իրենց ամենն զլխավոր
զբոսանքն ե զբոսարանի մը մեջ մտնել և ի՞նչ յուզ խաղալ:

Իգական սեռն վոչ գործ ունի և վոչ արհեստ. իր կյանքը
քնանալով կ'ամ պատուհաններու առջև նստելով կ'անցունե: Պա-
րոններն և որիորդներն վոմանք գիշերները փողոցները կը շրջին
և անմեղ սիրահարություններով ժամանակ կ'անցունեն:

Այս թաղին մեջ կը բնակի Փանոսյան, խմբագիր Մանգուլեյի,
բայց չգիտցվիր, թե թաղին վարժարանին վրա ինչո՞ւ հոգ չտա-
նիր: Հոս կը բնակին նաե քանի մը բժիշկներ, վորոնցմե մին
անցալները մինչև վոր ստակը չառավ՝ տունն դուրս չեկավ
աղքատ հիվանդի մը յերթալու համար: Հաբուստներն ալ պար-
տավոր են հոս նախ բժշկին այցելության գինը զրկել և ապա
աղաչել բժիշկն, վոր բարեհաճի գալ և իրենց հիվանդն ... մեռ-
ցունելի: Աչն ատեն բժիշկը վաղելով կերթա:

Հոս ե Վարդուկյանի թատրոնը, վոր ձմեռվան չեղանակին մեջ

ներկայացումներ տալով ժողովուրդը կը կրթե: Քանի մը ատենն ի վեր հայերեն ներկայացումներն արգիլված ըլլալով է. Դրան կողմն՝ միայն տաճկերեն լեզվով ներկայացումներ կը տրվին: Թագեցին ալ վախեն հայերեն չխոսի, վոր է. Դռնին դիտողութուն մը չըլլի իրեն:

Այս թատրոնին ոգուտ քաղելով քանի մը խարբեաներ՝ չորս կանգուն յերկայնութեամբ և մեկ ու կիս կանգուն լայնութեամբ հայտարարութիւններ կը հրատարակեն, փառավոր Երկայացում, սեանչեի Երկայացում, խիստ շեղ Երկայացում, արտա-կարգի Երկայացում, Երեմ կարգի Երկայացում ևայլն ըսելով խեղճ ժողովրդյան քթին կը բռնեն և անճոռնի ներկայացումներ տալով ժողովրդյան քսակը կը պարպեն: Հո՛ր թատրոնի դռնապանն հեղինակ կըլլա և ժողովրդութուն մը կը գրի՝ յեթե առավոտ մը քսակին մեջ ստակ չգտնե: Թատրոնի տեսարանին վրա փառավոր ներկայացումներ տրվո՞ծ են շնորհիւ Վարդուկանի անդուլ աշխատութեանը, բայց տեսարանին դուրս ոթակներու մեջ ալ ներկայացումները պակաս չեն չեղած: Դիչեր են, վոր թատրոն կերթան՝ ներկայացված խաղը տեսնելու համար, շատերը սթյակներու մեջ կը նստին՝ իրենց փնտրած անձերը գտնելու համար:

Յերբ վարաբույրը բացվի՝ հանդիսականները ուժգին ծափահարոթյամբ կողջունեն գերասաններն և իրենց յերեսը կը դարձունեն դեպի ոթյակները. շատ անգամ ծափահարութիւն մը կը լսվի աշխարհի վարկերի մը մեջ, ուր բնավ հարկ չկա ծափ դարձնելու: Հանդիսականներն վոմանք կըսեն.

— Ի՞նչ անպիտան մարդեր կան. հիմա ծափահարութիւն ընելու ի՞նչ կա:

Յեւ չեն գիտեր խեղճերն, վոր ծափահարութիւն ընողն խաղին համար չըրաւ, ալ չուր սիրուհին ժպիտ մը կամ նշան մը առած ըլլալուն համար ծափ դարկալ:

Ընդհանրապես ուրիշ թաղերի ազգայիններ կուգան թատրոն: Կետիկ փաշային շուրջութիւն կը համարի տարին անգամ մը թատրոն յերթալը: Յեւ արգեն հոս բնակողներուն մեծ մասը վոսկի միայն յերկրպագութիւն կընեն և վոչ ուրիշ բանի: Կան քանի մը հոգիներ, վոր տարին անգամ մը կընան թատրոնին ներս մտնել, ան ալ յեթե հաջողին չըջված պակաս վոսկիները թատրոնի տոմսավաճառին կլեցունել: Յեթե տոմսավաճառն

դիտողութիւն ընելով հայտնե վոսկի պակաս ըլլալն՝ սա պատաս-խանը կառնե.

Յեթե մեր վոսկին պակաս է՝ ձեր տալիք խաղն ալ լման չեմ:

Ուրիշներն ալ տնտեսագիտութեան համար իրենց ընտանիքները կառնեն և փողոցի մեջ թատերաբեմին յետևի կողմը կը կայնին, վոր անկից լսեն ներկայացումն. մեկ մասն ալ տոմսավաճառի և կամ ուրիշ պաշտոնյայի մը հետ խոսքը մեկ ընելով՝ ձրի կը մանի թատրոնին, և Վարդուկան կը կարծե, թե այս անկարգութիւններուն առաջին առնելով՝ դրամ պիտի վաստկի:

Կետիկ փաշայի դիրքը բարձր է և ողն ալ գեշ չե. միայն թե մարդս չուր տունն մինչև վոր շուկա յերթա՝ հազար ու մեկ գուշն փողիներու մեջ կը լողա, յեթե լողալ չգիտնա՝ կը խեղդվի:

ԻՒՍԿԻՒՏԱՐ ՅԵՆԻ ՄԱՀԱԼԵ

Լսած եք անշուշտ, վոր ախտ մը կա, վորոտ անուանն ե ինձի մի՛ դպչիր, բայց չեյիք իմացած հարկավ, վոր այդ ախտն այս թաղին մեջ ծնունդ առած ե:

Հիմա հասկցաք ալ, վոր այս թաղին մատ դպցունելու չե՛, յեթե չեք ուզեր ավելի ևս վատթարացունել զայն:

Մեր ուշադրութենն վրիպելու չե, վոր յեթե այս թաղին աղաներուն դպչելու չըլլաք՝ թաղին բոլոր իրավունքներն ոտարի կը ծախեն. իսկ յեթե դպչելու ըլլաք՝ ազգին իրավունքներն ոտարի կուտան. անա դպչելու և չդպչելու տարբերությունն:

Փոքրիկ պատմություն մը ընենք հոս:

Բավական տարիներ առաջ, տեղվույն հուշները գերեզմանատունն չունենալով հոն՝ կը փափաքին աժան գնով ծախու առնել գետին մը, ուր թաղել կուզէին իրենց ննջեցյալները:

Թաղին քանի մը հայ աղաները հուշներու այս դիտավորությունը լսելով՝ անոնց հետ բանակցության կը մտնեն:

— Իմացանք, վոր թաղիս մեջ տեղ մը կը փնտռեք յեղեր ձեր ննջեցյալները թաղելու համար:

— Այո, անանկ միտք մը ունինք:

— Այս մասին մեր ձեռքեն չեկած ծառայությունը չենք զլանար ձեզի. յերկու յեկեղեցիներն արդեն քույր-յեղբայր են, իրարու շատ կը նմանին, յերկվորյակ են կարծես...

— Շնորհակալ ենք:

— Քույրն յեղբորն վրա կը խնդենա:

— Վողջ ըլլա:

— Ըսեք մեզի հիմա, դուք վոր կողմ կուզեք գետին ունենալ:

— Մենք կուզենք, վոր ձեր գերեզմանատանը կեսը մերն ըլլա:

— Այդ ըլլալու բան չե, ատոր խոսքը մի՛ ընեք...

— Ինչո՞ւ, քույրն չուր յեղբորն այս ծառայությունը չը՝ կըրնար ընել:

— Անկարելի ե:

— Ինչո՞ւ անկարելի ըլլա. ատկե դուրին ի՞նչ կրնա ըլլալ...

— Մեր գերեզմանատունն ի՞նչպես ձերինը կրնա ըլլալ...

— Գիշերվան մը մեջ մեր Պալըքլըլի գերեզմանատունեն²⁴⁵) գերեզմանաքարեր բերել կուտանք, կըղնենք, և հետեւալ որը կըսեք, թե հուշները մաս ունին յեղեր մեր գերեզմանատան մեջ:

— Ատանկ բան մը կարո՞ղ ենք ընել:

— Կարո՞ղ եք հապա. դուք թաղին յերեկելիներն եք, մեծերն եք. դուք ամբողջ թաղն ալ կրնաք ծախել:

— Հապա մեր խիղճը...

— Խիղճն ասանկ գործերու մեջ մտնելու իրավունք չունի, խղճին ապտակ մը կը զարնեք դուրս կը վռնտեք... կամ թե ձեր խղճին քանի մը վապի կուտաք...

Իրավունք ունիք. խղճին դպչելու բան մը չկա հոս. մեր ըրածը գողություն չե, սպանություն չե. յեղբայրն չուր քույրեն գետին կուզե, և քույրն ալ կուտա. ասոր ո՞վ կրնա բան մը ըսել...

— Խղճի վերաբերյալ խնդիր չե աս... փառք աստուծո, ձեր ըրածը գողություն չե. ազգին մեկ կալվածեն մեզի ալ բաժին պիտի հանեք: Ավետարանը կըսե, յերկու շապիկ ունեցողն մեկն ընկերին տալու չե. և վորովհետեւ դուք հոս մեկ գերեզմանատուն ունիք՝ պետք ե, վոր կեսը մեզի տաք... աստվածահաճո գործ մ'ե սա:

— Մեզի ալ այնպես կը թվի...

— Ձեր այս աստվածահաճո գործին համար վարձատրություն ալ պիտի ընդունիք...

— Ձե, չե, մենք կաշառքով գործ չենք տեսներ:

— Կաշառք... աստված չընի:

— Ձենք ուզեր վոր ըսեն, թե աղաները ստակ կերած են ու ազգին տեղն ուրիշին ծախած են:

— Մենք ալ չենք ուզեր:

— Ինչո՞ւ բամբասովինք:

— Ինչո՞ւ բամբասովիք... չես վարձատրություն բառը գործածելով՝ հասկցնել ուզեցի, թե աստուծո կողմի պիտի վարձատրվիք:

— Ատոր ըսելիք չունինք. բայց կաշառք չինք ընդունիր: Ուրիշ բան ե, չեթե դուք մեր տեսած գործին դո՛ւ ըլլաք և ձեր շնորհակալությունն հայտնելու համար մեզի դրամական նվեր մը ընեք... Նայե, ատոր ըսելիք չունինք, իբրև նվեր կընդունինք. բայց իբրև կաշառք՝ ընավ չերբեք. ատմեր պատվունյ կը դպչի:

— Շատ լավ. քնաք բարով:

— Յերթաք բարով:

— Քանի մ'որեն կը տեսնվինք:

Քանի մ'որեն չեաքը հունական տապանաքարեր կը տեսնը՝ վին մեր գերեզմանատան մեջ. ժողովուրդն իրար կանցնի:

— Իմացար պ. Կարապետ:

— Չիմացա. ի՞նչ կա:

— Մեր գերեզմանատան մեջ հունաց քարեր կան:

— Անկարելի չե:

— Յես տեսա:

— Թերևս մեր քարերը հունարենի թարգմանած են:

Ժողովուրդն աղաներու կը դիմե:

— Աղաներ, ինչո՞ւ նստած եք:

— Ի՞նչ ընենք հապա:

— Գերեզմանատունը չերթալու վրա չե:

— Ո՞ւր:

— Չգիտենք ուր... հունաց քարեր կան:

— Որհնչալ ժողովուրդ, առաջուց չկալին այդ քարերը:

— Չկալին:

— Մեր գիտցածին նաչելով՝ այդ քարերը շատունց ի վեր կային հոն, և հուշներն իրավունք ունին այդ գետնի վրա:

Ժողովուրդը կը հուզվի. գերեզմանատան մեջ կոխվը կսկսի. հիսունեն ավելի հայ լերիտասարդներ կը բանտարկվին, և ազգը մեծ դժվարությամբ կարող կըլլա առնելու գերեզմանատան կեսը հուշներեն՝ վորք ամբողջ գերեզմանատունը կ'ենել կուզելին: Հոս կը վերջանա այն փոքրիկ պատմությունն, վոր այն ատեն մեծ հուզում պատճառած է ժողովրդյան մեջ:

Թաղականութունը հոս մենաշնորհ մ'ե քանի մը անձերու, վորք քսան տարիչի ի վեր իրենք զիրենք կընտրեն, ամեն տարի հրաժարական կուտան, նորին կընտրվին, դարձյալ կը հրաժարին, վերստին կընտրվին: Ասոնց քաղաքականությունը միապետական է. խեղճ Սահմանադրությունը ինքզինք կը պատուի և դարձյալ չի կարող չոր ձայնը լսելի ընել: Թաղական խորհուրդն ուղածին պես կը կառավարի վարժարանն, վոր այժմ անդրժրհեղեղյան կարգի դպրոց մը կրնա համարվիլ: Ծիմարանն²⁴⁶) այն աստիճան հինցած է, վոր ամենաթեթև հով մը փչած ժամանակ յերկրպագություն կընե: Յեկեղեցին բավական հարուստ ըլլալով՝ կարող եր յուր թաղին վարժարանին ծախքերը հոգալ՝ յեթե աստված կամենար...

Թաղեցին այս մասին ըզրորովին անհոգ է. իմիճ ինչո՞ւ պես. Թաղական խորհուրդն հարկավ իրավունք ունի, վոր կըսե, այսպես կը վարվի: Աղնվապետական մասը Թաղական խորհրդո համաձայն է ամեն խնդիրներու մեջ, և այս մասն պատարագի ժամանակ յերկու անգամ, առաքելոց-ին և ուրիշ յեղիքով-ին, Թաղական խորհրդարանը կերթա, սիկար քաշելու և խահվե խըմելու. յեթե յ'րբեմն այս մասն մին մոռնա Թաղական խորհրդարանն յերթալու և խահվե խմելու՝ Թաղականն ժամկոչ մը կը զրկվի յեկեղեցին և իմաց կը տրվի այդ աղային, վոր խահվեն պաղած է, հրաման թող խմե:

Յեկեղեցվուն մեջ առաջին փնտռվիլիք բանն է իրենց համար՝ փառավոր ձայնավորներ ունենալ. ասոնք կուզեն, վոր իրենց ձայնավորին ձայնը Գատը գեղեն ալ լսվի, վոր այդ գեղեն ալ ժողովուրդ քա իրենց յեկեղեցվուն:

Յենի մահալին յերկուքի բաժնված է, վերին Յենի մահալե և ստորին Յենի մահալե, և Յենի մահալե—նոր թաղ—կոչվելուէ բուն պատճառն ալ թաղին հին ըլլալն է:

Վերին Յենի մահալին բոլորովին աղնվապետական է. ամեն մարդու հետ տեսնվելու չզիջանիր: Վոդլմպոսի²⁴⁷) աստվածներուն հետ միայն տեսնվելու արժանի կը համարին զիրենք: Այս մասն, ի՞նչպես ըսինք՝ յուր կարծիքը Թաղական աղաներուն տված է և բնավ բանի մը չխառնվիր. միայն կը խառնվի այն խնդիրներուն, վորոնք աղիկ միսի, կարագի, բանջարեղենի, գի-

նիւի, ողիւի և վերջապէս մարմինը ուռեցնելու արհեստին հետ կապակցութիւն ունին:

Անավասիկ վերի թաղին բնակիչներեն մեկուն խոսակցութիւնն Սեւաձարզցիի մը հետ.

— Եֆենտի, այսոր աղգային ժողով դացի՞ր:

— Յերթալու միտք չունի. բայց այդ կողմեն միս առնելու ստիպւած ըլլալով՝ քիչ մը ներս նայեցա:

— Ի՞նչ կար:

— Շուն շանորդիները պատվական միս կը կտրեն կոր...

— Աղգային ժողովին համար ըսի...

— Վեց ու կես ոխա առի, բայց ասանկ ընտիր միս...

— Յերեսփոխանները ամբողջ յիկած եյին:

— Բա՛ւ լիմանի գինիով ի՞նչ աղվոր կերթա, գիտե՞ս:

— Յեղբայր, աղգային ժողով մեջ ի՞նչ խոսեցան այսոր:

— Ի՞նչ գիտնամ, յեղբայր... փորձած եք, վոչխարի միսեն պիճեմ կը շինվի՞ մի:

— Իմ խոսքիս պատասխանե:

— Ի՞նչ պատասխանեմ. չես գիտե՞մ ինչ խոսեցան: Յերեսփոխանին մեկը դուրս լիւծ մեկուն կը պողար ըսելով, թե չես քեզի պէս աղգին ստակները կերած չեմ և քեզմէ աղիկ որենք գիտեմ... աղիկ որենք գիտնալն ստակ չըներ, մա՛ր ա՛ն անանկ մեջ կը լեցունեն վոր... այսոր ինչո՞ւ համար քե՛զի չկամ:

— Մնաք բարով:

— Յերթաք բարով. գիշերը յեկուր նարտ խաղանք:

— Տեղս հեռու չե, մնաք բարով:

Վերի թաղին իգական սեռը գեղեցիկ է, բայց արական սեռն այդ գեղեցիկութենէ՝ զրկված է: Իգական սեռին մեջ բամբաստանքն այն աստիճան հառաջ գնացած է, վոր յիթե ուրիշ մը բամբաստելու համար նստին՝ շաբաթն մը հազիվ կրնան լմնցունել: Հոս կիներն պատուհաններու առջև կը նստին և փողոցին անցնողին հասակին, քթին, մորուքին, հագուստին վրա դիտողութիւններ կընեն: Կիները հոս չերկու գլխարկով յեկեղեցի կերթան, թեպետե մեկ գլուխ ունին: Գլխարկին մեկն իրենց գլուխը կը դնեն և մշուսն ապաստվորն կը տանի իրենց յետեւէն: Յեկեղեցի մեջ գլխարկը կը փոխվի: Կիներուն գլուխներն այնքան փոքր են, վոր հիմակվան գլխարկներն հատ մը բավական եր չորս կնկան գլուխ գո-

ցիլ՝ չեթե սովորութիւնն ըլլար չորս-հինգ հոգիի մեկ գլխարկ դնելը: Նորաձեւութիւնը հոս կը պաշտվի: Յենի մահալիցուհին Սեւաձարզ կերթա և անկէ հագուստի նոր ձևեր կը գողնա:

Վարի թաղն հասարակապետական է: Յերիտասարդութեան մեջ չերբեմն շարժում կը տեսնվի, բայց այդ շարժումն միշտ ապարդիւն կը մնա. վասնզի միապետութիւնն թող չտար, վոր չերիտասարդութիւնը գործէ:

Այս թաղին մեջ ալ ընկերութիւններ հաստատված և կործանված են. թեպետե այժմ չգիտեմք, թե ընկերութեան մասին ի՞նչ վիճակի մեջ է, սակայն դուրսն է գուշակել, վոր կամ ընկերութիւնն մը կազմվելու վրա չէ կամ ընկերութիւնն մը կործանվելու վրա:

Յերիտասարդութեան մեջ մաս մ'ալ կա, վոր ինքզինք ձայնավորութեան տված է և աղվոր խաղեր չերգելով՝ պողալ կը փափաքի. այս մասին կարծիքն այն է, թե գեղեցիկ ձայնով խաղ կանչելն մեծապէս կը նպաստէ աղգային հառաջադիմութեան և թե՛ չեթե քիչ մ'ալ ողի կամ գինի խմելով խաղեր կանչվին՝ աղգին վերականգման գործը դուրսացած կը համարվի:

Թագեցվուչն ընդհանուր լեզուն տաճկերեն է, իսկ աղքատներունը հայերենով խառն տաճկերեն:

Գինետուն հաճախողները մեծ մասամբ աղքատ են և մոլի. իրենց սովորութիւնն է ժամը չորսին տուն դառնալ. Հարուստները չեն յերթար գինետուն և չերթալու ալ պատճառ ունին. վասնզի գինետուններն իրենց տուններնու՛ն, մեջ փոխադրած են: Այս թաղին թե հարուստն և թե աղքատն ընդհանրապէս ուտելու, խմելու, պառկելու և քնանալու համար միայն աշխարհ յեկած կը կարծէ գինքը:

Հոս կը բնակի Պ. Խաչատուր Մխաբյան²⁴⁸), վորուն գործերուն հրատարակութեանը կը սպասէ դեռ ազգն:

Հոս կը բնակէր «Փունջ» լրագրի խմբագիր Պ. Համբարձում Ալաճաճյան, վոր չուր թերթը շաբաթն չերկու անգամ հրատարակել բով կը համարի աղգին ծառայիւ համար:

Այս թաղն նույնն է այսոր՝ ինչ վոր եր հարյուր տարի առաջ. և յիթե յերիտասարդութիւնն թաղին գործերուն ձեռք չերկնցնեն՝ չերկու դար ալ այսպէս կերթա: Ուստի Սեւաձարզցիին

կիցնա, վոր շարաթը մեկ անգամ հսկում ընե չուր դրացվույն համար:

Շատերը կը պնդեն, թե չեթե Յենի մահալիցիք քանի մը շարաթ ուրիշ գեղ մը փոխադրվին ողափոխութեան համար՝ թաղին ողջ կը փոխվի և թաղիցին ալ յուր կարծեքներդուն մեջ փոփոխութիւն զգալով՝ քիչ մը կարթննա քունեն:

Տեղվույս քարոզիչն ե Մատթեոս չեպիսկոպոս Իզմիրլյան, վոր չեպիսկոպոսանալու համար Ղալաթիո ռեալսը²⁴⁹ գործիք չեղած ե ժամանակով, և յուր ձեռներեն բռնելով քալեցնող Հայրիկն տապալիւ աշխատած ե գիշեր ցերեկ... Թերեւս որ մը արդարանար այս մարդն, չեթե աշխատակից չլիներ աշխատի խըմբակի մը, վոր իրեն անձնական շահուն համար կը գործեմիւսն: Արդոք պատրիարք ըլլալու համար զո՞վ պիտի մատենե ալս կրօնավորը...

Ժ. Ն.

Բ Ե Ր Ա

Բերայի սահմանն ե արեւելքէն խաղամուկութիւն, արեւմուտքէն պնդասիրութիւն, հարավէն շալկութիւն և հյուսիսէն խարդախութիւն:

Ա՛լ ասանկ սահմանակիցներ ունենալիդ չեաքը հանդարտ սրտով կյանք անցուր:

Այս թաղը Պոլսո Բարիզն ե—Յեթե Բարիզն իրեն նվաստութիւն չհամարիր չուր անունն Բերայի վրա տեսնելը:

Անվանի չեն հասարակաց պարտեզներն, վորք դրախտ ալ կը կոչվին և ուր կը գտնվի ծառ գիսոյլան բարձր յեվ չարի.²⁵⁰ բարձր ծառը դեռ պտուղներով բեռնավորած ե, իսկ չարի ծառին վրա վոչ թե պտուղ, այլ անբեռ անգամ չեա կարող գտնել:

Փողոցները բավական լայն են. միայն թե առավոտներն այդ փողոցներէ անցնելու չգար, վասնզի ամեն առավոտ կավլվին և փողեղեն մառախուղ մը չորս կողմը կը պատեն:

Ունի գեղեցիկ խոսարաններ, վորոնց մեջ չեղեցիկ աղջիկներ մինչև առավոտ յեղանակով կը խոսին այլևայլ նյութերու վրա: Ունի նաև համալսարաններ, վորոնց մեջ աղեկ թուղթ խաղալու, վարպետութեամբ դիմացինդ կողոպտելու գիտութիւնը կավանդվի դպրոցական յեղանակով:

Տուններուն գրեթե յերեք մասը քարուկիր ե: Այս տուները շատ քաջ են. կրակե բնով չեն վախնար, բայց կալրին:

Ձեռագործներն մեծ կատարելութեան հասած են. գեղեցիկ սեռեն անոնք, վոր գոհ կըլլային, չեթե արական սեռին վերաբերեցին՝ հոս խանութներ բացած՝ մեր ազգային աղջիկներուն և տիկիներուն գրպաններն ամեն ոք, ամեն ժամ, ամեն վարկյան, ամեն ըողպե, բազում դրամ կը քաշեն:

Փոքրիկ գլխարկի մը համար չերկու վոսկի կուգեն, իսկ զայն

շտկելու համար, այսինքն վրան ծաղիկ մը կապելու համար՝ մեկ
վոսկի կը պահանջեն: Բարիդեն լեկած դադափաբրին համեմատ
շապիկներ կը կարեն, զոր առաջին անգամ կոճկելուդ կոճակ-
ները կը բրդին, լեկթե քիչ մը չերկար շունչ առնես՝ կարերը կը
քակվին. այսպես հասկցիր բոլոր հագուստներուն համար: Այս
տեղեն շապիկ կամ զգեստ ծախու առնողն ուշադրութեամբ և վո-
րոշալ չափով շունչ առնելու լի:

Նշանավոր է լուր լին, վոր ձմեռ ատեն կը գոյանա թագ-
սիմեն ²⁵¹) մինչև Դալաթիո Սերալը: ²⁵²) Ընկերութիւնն յը ալդ
լճին վրա նաւակներ բանեցնելու արտոնութիւնն խնդրեց, բայց
չկրցավ ստանալ:

Յեթե երեսոնություն տրված ըլլար՝ այդ մարդը մեծ դուժարաներ կը շահեր. սակայն այս արտոնության հակառակեցան կիւներէն վոմանք, վորք բարեպատե՛հ առիթ կը՝ համարելին սուլն լինն՝ իրենց խողոր սրունքներն արդո հասարակության ցուց տալու համար, վասնզի յերբ այդ լճակեն անցնելին՝ մինչև ծունկերը վեր կառնելին իրենց՝ յըջաղգեստն: Գալով այն կիւներուն, վորք նիհար սրունքներ ունելին՝ ասոնք բավական աշխատեցան, վոր շնորհվի այդ արտոնությունն, վորպեսզի իրենք ալ ձմեռվան յեղանակին մեջ կարողանային դուրս յեկնելու ազատությունը վաչելի, վասնզի ասոնք կը՝ զգուշանային իրենց տկար սրունքներն ուրիշներու ցցունելի, միանգամ ընդ միշտ հաստատուելու համար այն ճշմարտությունն, թե կիւներն իրենց տգեղ կողմերն ծածկելու համար միշտ մեծ զոհողություններ կընեն:

Այս թաղին ազգաշինհրուն վրա կատարչալ տեղեկութուն տալու համար՝ պարտավոր ենք շատ մասերու բաժնեկրաններ:

Մաս մը կա, վոր բնիկ Բերացիի չե, այլ կամ Հասգլուդցի կամ Յենի Գարուցի չե, վոր ժամանակավ շատ հարուստ ըլլալուն պատճառով այս թաղն յեկած է և սնանկացած է, վորպես թե Հասգլուդի կամ Յենի Գարուցի մեջ սնանկանալն մեծ դժվարություններ ունենար: Արդ, սնանկացած բոլոր ամիրաններն ²⁵³⁾ գրեթե այս թաղին մեջ կը բնակին: Յեւ արդարեւ, այս թաղն շատ դյուրություններ կընծայե այն անձերուն, վորք հաստատապես վորոշած են դադրեցնել իրենց վճարումներն, և ասոր համար է, վոր շատ վաճառականներ հոն կերթան՝ չեր սնանկանալ փափաքին: Շատերն ալ սնանկանալի վերջը հոն կերթան՝ իրենց

ծանոթներէ հեռու մնալու համար. վասնզի սնանկությունն ժամա-
նակավ աշնքան անպատիւ բան մը նկատված եր, վոր սնանկացող
մը նորընծա քահանայի մը պես քառասուն որ ապաշխարանք կը
քաշեր և տունեն դուրս չեր յիշներ: Հիմա, փառք լուսավորու-
թյան, սնանկությունը թեպետև սովորական բան մը դարձած է,
բայց դարձյալ կը գտնվին խավարչալ մարդեր, վորոնք իրենց
փոքրություն և ամօթ կը համարին ուրիշին իրավունքը կ'ընելը:
Ահա այս խավարչակներն են, վոր Բերա կը դադրեն. լույս մաղ-
թենք իրենց համար, վորպէսզի նախապաշարուն մեկդի թողլով՝
հանդարտ խղճով սնանկանան և իրենց մեծ պատիւ համարին
ուրիշներու ստակներն ուտելը: Արդեն հարստանալու համար ա-
մենեն կարճ ճամբան է աս, և այն բոլոր հարուստներն, զորս այ-
սոր կը տեսնենք, բայց տեսել չենք ուղեր՝ այդ ճամբով հասած
են իրենց նավահանգիստը: Ահա մարդ մը, վոր յուր կյանքին
մեջ բնավ վաճառականությամբ չէ զբաղած և այսոր փոփոխի
չերկու ամբերուն վրա բարձրացած հոյակապ շենքերու տեր
է: Ի՞նչպէս կառուցած է զանոնք, մի հարցունք, հափշտակու-
թյամբ կառուցած է: Ասդին դարձիր և կը տեսնես այնպիսի
անձեր, վորք իրենց կյանքին մեջ հազիւ ապրելու համար դրամ
վաստկած են. բայց այդ անձերն այսոր, չգիտեմ, վոր կղզիուն
մեջ տեր են այնչափ գետիններու՝ վորոնցմէ նոյն նահապետին
որին ի վեր մաս-մաս կը ծախեն, և այդ գետինները չեն սպա-
ռիր. վո՛չ թե միայն չին սպառիր, այլ վորքան ծախվին՝ այնքան
կը ընդարձակվին: Ի՞նչպէս. մի հարցունք, վասնզի պատասխանը
գողությունն է, և այս գողերն մեծ հարգ ու պատիւ կը վայելեն հա-
սարակության մեջ՝ վոր կըսեն անոնց համար.

— Շատ խելացի, շատ ճարպիկ մարդեր են, կանխավ պատ-
րաստած են իրենց ապագան:

Յնթե աստուք ուրիշ հողի մը վրա գտնվելին, ցմահ բան-
տարկության կը դատապարտուելին:

Դաս մ'ալ կա, վոր վո՛չ գործ ունի և վո՛չ յեկամուտ և վո՛չ ալ հող ապրելու համար: Այս մասին վրա յեթեակնարկ մը ընես՝ կը զարմանաս, թե ինչպես կապրի և ինչո՛ւ անութութենե չմեռնիր. բայց յերբ իր ընթացքը քիչ մը քննես՝ կը զարմանաս, թե ինչո՛ւ միլիոնի տեր չըլլար: Այս մասին բոլոր գրամագլուխն և յուր կրած հագուստն, զոր կը շինես՝ բարեկամներե նախ փոխ

շտեղելու համար, այսինքն վրան ծաղիկ մը կապելու համար՝ մեկ վոսկի կը պահանջեն: Բարիդեն չեկած դադափարին համեմատ շապիկներ կը կարեն, զոր առաջին անգամ կոճկելուդ կոճակները կը բլրեն, չեթե քիչ մը չերկար շունչ առնես՝ կարերը կը քակվին. այսպես հասկցիր բոլոր հագուստներուն համար: Այս տեղեն շապիկ կամ զգեստ ծախու առնողն ուշադրութեամբ և վորոշալ չափով շունչ առնելու չե:

Նշանավոր և չուր լիճն, վոր ձմեռ ատեն կը գոյանա Թագախիճն²⁵¹) մինչև Ղալաթիո Սերալը: ²⁵²) Ընկերութիւն մը այդ լճին վրա նավակներ բանեցնելու արտոնութիւն խնդրեց, բայց չկրցաւ ստանալ:

Յեթե արտոնութիւն տրված ըլլար՝ այդ մարդը մեծ գումարներ կը շահեր. սակայն այս արտոնութեան հակառակեցան կիներն վոմանք, վորք բարեպատեհ առիթ կը համարեյին սուլն լիճն՝ իրենց խողոր սրունքներն արդո հասարակութեան ցուց տալու համար, վասնզի յերբ այդ լճակեն անցնեյին՝ մինչև ծունկերը վեր կառնեյին իրենց շրջադեման: Գալով այն կիներուն, վորք նիհար սրունքներ ունեյին՝ ասոնք բավական աշխատեցան, վոր շնորհիւ այդ արտոնութիւնն, վորպեսզի իրենք ալ ձմեռվան յեղանակին մեջ կարողանային դուրս յեկնելու ազատութիւնը վաչելի, վասնզի ասոնք կը զգուշանային իրենց տկար սրունքներն ուրիշներու ցցունելե, միանգամ ընդ միշտ հաստատելու համար այն ճշմարտութիւնն, թե կիներն իրենց տգեղ կողմերն ծածկելու համար միշտ մեծ զոհողութիւններ կընեն:

Այս թաղին աղագայիններուն վրա կատարչալ տեղեկութիւն տալու համար՝ պարտավոր ենք շատ մասերու բաժնել զանոնք:

Մաս մը կա, վոր բնիկ Բերացի չե, այլ կամ Հասգլուզի կամ Յենի Գաբուցի չե, վոր ժամանակաւ շատ հարուստ ըլլալուն պատճառով այս թաղն յեկած և և սնանկացած և, վորպես թե Հասգլուզի կամ Յենի Գաբուցի մեջ սնանկանալն մեծ դժվարութիւններ ունենար: Արդ, սնանկացած բոլոր ամիրաներն ²⁵³) գրեթե այս թաղին մեջ կը բնակին: Յեւ արգարե, այս թաղն շատ դյուրութիւններ կընծայե այն անձերուն, վորք հաստատապես վորոշած են դադրեցնել իրենց վճարումներն, և ասոր համար և, վոր շատ վաճառականներ հոն կերթան՝ չորս սնանկանալ փափաքին: Շատերն ալ սնանկանալե վերջը հոն կերթան՝ իրենց

ծանոթներէ հեռու մնալու համար. վասնզի սնանկութիւնն ժամանակաւ այնքան անպատիւ բան մը նկատված եր, վոր սնանկացող մը նորընծա քահանայի մը պես քառասուն որ ապաշխարանք կը քաշեր և տունն դուրս չեր յեկնէր: Հիմա, փառք լուսավորութեան, սնանկութիւնը թեպետև սովորական բան մը դարձած և, բայց դարձալ կը գտնվին խավարչալ մարդեր, վորոնք իրենց փոքրութիւն և ամոթ կը համարին ուրիշին իրավունքը կենելը: Ահա այս խավարչալներն են, վոր Բերա կը դաղթեն. լույս մաղթենք իրենց համար, վորպեսզի նախապաշարումն մեկդի թողլով՝ հանդարտ խզով սնանկանան և իրենց մեծ պատիւ համարին ուրիշներու ստակներն ուտելը: Արդեն հարստանալու համար ամենն կարճ ճամբան և աս, և այն բոլոր հարուստներն, զորս այսոր կը տեսնենք, բայց տեսել չենք ուղեր՝ այդ ճամբով հասած են իրենց նավահանգիստը: Ահա մարդ մը, վոր յուր կլանքին մեջ բնավ վաճառականութեամբ չե զբաղած և այսոր Վոսփորի չերկու ամբերուն վրա բարձրացած հոյակապ շէնքերու տեր և: Ի՞նչպես կառուցած և զանոնք, մի հարցունք, հափշտակութեամբ կառուցած և: Ասդին դարձիւ և կը տեսնես այնպիսի անձեր, վորք իրենց կլանքին մեջ հազիւ ապրելու համար դրամ վաստկած են. բայց այդ անձերն այսոր, չգիտեմ, վոր կղզիւն մեջ տեր են այնչափ գետիններու՝ վորոնցմէ Նոյ նահապետին որին ի վեր մաս-մաս կը ծախեն, և այդ գետինները չեն սպառիր: Վո՛չ թե միայն չեն սպառիր, այլ վորքան ծախվին՝ այնքան կը ընդարձակվին: Ի՞նչպես. մի հարցունք, վասնզի պատասխանը գողութիւն և, և այս գողերն մեծ հարգ ու պատիւ կը վաչեկեն հասարակութեան մեջ՝ վոր կըսեն անոնց համար:

— Շատ խելացի, շատ ճարպիկ մարդեր են. կանխավ պատրաստած են իրենց ապագան:

Յեթե ասոնք ուրիշ հողի մը վրա գտնվեյին, ցմահ բանտարկութեան կը դատապարտվեյին:

Դաս մ'ալ կա, վոր վո՛չ գործ ունի և վո՛չ յեկամուտ և վո՛չ ալ հոգ ապրելու համար: Այս մասին վրա յեթե ակնարկ մը ընես՝ կը զարմանաս, թե ինչպես կապրի և ինչո՞ւ անոթութենէ չմեռնիր. բայց յերբ իր ընթացքը քիչ մը քննես՝ կը զարմանաս, թե ինչո՞ւ միլիոնի տեր չըլլար: Այս մասին բոլոր դրամագլուխն և յուր կրած հագուստն, զոր կը շինե՛ բարեկամներէ նախ փոխ

առնելով և հետո չվճարելով: Բոլոր հարստութիւնն յուր վրա կը կրէ, Պիասի²⁵⁴) աշակերտներն եւ Այդ հաղուստին տիր ըլլալուն պէս՝ բարեկամ մը քանի մը դահեկան կը գտնեն և կերթաթաղին ամենէն նշանավոր սրճարանին մէջ կը նստին: Աչերը կը հառն սրճարանին դրանը, ուսկից անծանոթի մը մտնելուն կըստպասեն ճիշտ աչն ձկնորսին յետ, վոր կարթը կը ձգեն ջուրին մէջ և ձուկի մը գալուն կսպասեն: Ոտարական մը մտաւ՝ անոր հետ իսկույն բարեկամ կըլլա, քովը կերթա և կը սկսի խոսակցութեան:

— Յերբ յեկաք, կը հարցունեն անոր:

— Յերեկ գիշեր յեկա:

— Յես զձեզ տեղ մը տեսած եմ, զձեզ պիտի ճանաչեմ... բայց հիշողութիւնս քիչ մը տկար ե ու...

— Կարիլի յե:

— Մարտիրոս աղային քեռորդի՞ն եք դուք:

— Վո՞ր Մարտիրոս աղային:

— Մարտիրոս աղա մը կար... սա ինքքը... սա Մարտիրոս աղան, վոր վերջը... վերջը բան մը յեղավ:

— Վերջաբան մի յեղավ...

— Վերջաբան մը յեղավ, ըսին աչն ատենները:

— Մարտիրոս անունով մորյեղբայր չունիմ յես:

— Չունի՞ք մի:

— Չունիմ:

— Ո՞վ ե ան ուրեմն, վոր Մարտիրոս անունով մորյեղբայր մը ունի, վոր վերջը բան մը յեղավ... ներեցեք, ներեցեք, հիմա հիշեցի... դուք չեք: յես ձեզի ուրիշի մը նմանցուցի... Կարապետն եր աչն, վոր ձեզմէ աղեկ չըլլար, բարեկամս եր և վոր Մարտիրոս աղային քեռորդին եր. պատվական յերտասարդ մ'եր, բայց վից տարի կա, վոր զինքը տեսած չունիմ: Մարտիրոս աղան ալ բարի մարդ մ'եր, վոր վերջը... վերջը... տեր ողորմյա, ի՞նչ յեղավ աչ մարդը վերջը... հա, վերջը շատ աղքատ յեղավ. վասնզի իր բոլոր հարստութիւնը բոնստիսի մէջ թաղեց... խեղճ Մարտիրոս աղան: Բայց յիս զձեզ ալ անպատճառ տեղ մը տեսած եմ, և ձեր գիմքն ինձի ծանոթ ե:

— Հավական ե, վոր Յենի Գարու տեսած ըլլաք:

Ճիշտ Յենի Գարու, ճիշտ, ահ, յիղբայր, կաղաչեմ, վոր բոն-

ստիս չխաղաք, բոնստիսը կը սնանկացնեն մարդս, ինչպէս նաև քերքեմն մարդս կը սնանկացնեն բոնստիսը:

— Յես չեմ խաղար:

— Կեցցես. հիմա սիրեցի զքեզ... ներեցեք, խոսքի բռնվեցանք և մոռցա հարցնելու, թե ի՞նչ պիտի հրամանեք... խանվե՞ թե ողի:

— Բերանս չեմ դներ ողի:

— Դարձյալ կեցցես, դարձյալ սիրեցի զքեզ. քանի՞նհրու խրատ տված եմ, վոր սա անիծյալ ըմպելիքն յետ կենան, և խրատս լսելի չե յեղած: Խանվե մը բեր: Տունը ի՞նչպէս են, անդեկ են. մայրդ ի՞նչպէս ե:

Մայր չունիմ:

— Դուք վողջ չեղեք: Ներելի՞ յե հարցունել, թե ինչով կը զբաղիք:

— Պզտիկ վաճառականութեամբ մը... կտավի գործ:

— Շատ լավ. կտավի գործը ամենէն աղեկն ե: Հորյեղբոր վորդի մը ունիմ, գոր միշտ հորդորած եմ կտավի գործ ընել, բայց մտիկ չե ըրած իմ խոսքերս:

— Հրամանքնի՞դ ինչով կզբաղիք:

— Շատալը խոսելով՝ յես հիմակուհիմա գործ մը չունիմ. մեր հորն մնացած քանի մը տուններ կան, անոնց յեկամուտովը կապըինք. կուզեմ գործի մը ձեռն զարնել, բայց չգիտեմ թե ինչ գործ բռնեմ...

Այս պահուն տան սպասավորի կերպարանքով մեկը կը մտնէ և ատենաբանին խոսքը կընդմիջե՝ անոր ականջն բան մը փափսալով,

— Առաջ ինչո՞ւ իմաց չտվիք:

— Ինքն քսան վոսկի ուղած եր, մենք ալ ձեր մեծապատվութենէն աչքան ուղեցինք:

— Տեր ողորմյա... հիմա ի՞նչ ընելու յե... Ղալաթիւս գնա, անյակը բաց...

— Մարդը հիմա կուզէ, վասնզի վար չը պիտի իջնա և հոս մեկու մը պիտի տա յեղեր:

— Ճաթելու բան...

— Ի՞նչ կա, կը հարցունեն ոտարականը:

— Վոչինչ, քսան վոսկինոց հայելի մը ապսպրած եյի, մարդն

չերեսուն վոսկրանոցն բերած եւ ե հիմա տասն վոսկր ալ կուզե-
չսպասեր ալ, վոր սպասավորը Ղալաթիայն չերթա բերե... սա-
չեվրոպացիները զարմանալի մարդեր են...

— Յեթե կը ընդունիք՝ չես տամ եւ ժամե մը ինձի կուտաք:

— Ձե, չե, ի՞նչ ըսել ե, ամոթ բան ե. մանավանդ թե չե-
չեմ սիրեր փոխառությո՞ւն ընել:

— Ի՞նչ փութ ունի. ժամվան մը փոխառության խոսքը կըլ-
լիմ... չեկուր պարոն, առ...

— Աս մեծ ամոթ չեղավ շիտակը:

— Վնաս չունի:

— Մինաս, չուտ ըրե, Ղալաթիայն տասը վոսկրն բեր:

— Շատ աղեկ:

Սպասավորը կը թռի:

— Ներումն կը խնդրեմ, բարեկամ:

— Չարժեր:

— Ի՞նչ բանի վրա կը խոսեցինք:

— Գործ մը բռնելու վրա:

— Սպ, կուզեմ գործի մը սկսիլ. բայց կը վախճամ, վոր
դրամագլուխս կը կորսնցնեմ, վասնզի հիմակվան գործերն շատ
աղեկ չեն. իմ բռնած ընթացքս ավելի շահավոր ե:

— Իրավունք ունիք... գործ բռնելու ժամանակը չե:

Ժամ մը կը խոսակցին գործի վրա. սպասավորն, վոր տասը
վոսկրն բերելու գնացած եր՝ վազելով զբոսարանին առջևն ան-
ցած ատենը ներս կը կանչվի չուր տերեն:

— Ո՞ւր ե, կը հարցունե իրեն, ստակը:

— Բանալին սխալ առած եմ. փոխելու կերթամ:

— Ա՛յ ապուշ, չուտ ըրե... Մպուշ սպասավորներն ալ քաշ-
վելու բաներ չեն շիտակը. քառասուն սպասավոր փոխեցի. սա
քառասունը մեկերորդը պիտի ըլլա: Խելքը գլուխը սպասավոր
մը կը ճանաչե՞ք:

— Ձեմ գիտեր անանկ մեկը:

Այս խոսակցության միջոցին մեր բարեկամը մեկեն ի մեկ
զբոսարանն դուրս կը ցատկե եւ չերեսուն տարու մեկու մը վիզը
կը փաթթվի եւ կը սկսի անոր հետ պագտվիլ: Համբուլի արա-
բողությունն լմնալուն պես՝ չուր համբուլակիցին հետ զբոսա-
բանին դրան առջև կուգա եւ չուր բարեկամին կըսե.

Յեղբայրս ե, վոր Մարսիլիայն յեկած ե... հետը տուն չեր-
թամ ե քառորդե մը դառնամ. ներեցեք, հազար ներումն, միլիոն
ներողություն...

Մարդն մինչեւ այսոր կը սպասե այդ սրճարանին մեջ սպա-
սավորին՝ վոր մինչեւ այսոր բանալին չե կրցած գտնել, բարեկա-
մին՝ վոր յեղբորը հետ դեռ կը պագտվի, ե տասը վոսկրին՝ վոր
յետ դառնալու միտք չունի: Ահա այս դասին մեկ դործն, վորու
ականատես ըլլալու պատիվն ունիմ: Տարակույս չկա, թե այս տե-
սակ գործերն այսոր վաճառականութենն ավելի շահ կը բերեն
չեթե ամեն որ պատահին:

Ուրիշ մաս մը չուր բոլոր ժամերը խաղամոլությամբ կան-
ցունե. նալտ, թուղթ եւ կամ ուրիշ տեսակ խաղ մը չուր արհեստն
ե. ատով չուր ընտանիքը կը կերակրե կամ անոթութենե կը մեռ-
ցունե: Այս խաղամոլներն ալ չերկու կարգի կը բաժնվին, հարուստ-
ներն վոսկրով կը խաղան, աղքատներն արծաթով:

Մաս մ'ալ կա հոս, վոր միջնորդ ե կամ տան, կամ սիրո ե
կամ չերեմն չերկուքին մեկեն:

Չմոռնանք հիշել, վոր ընդհանուր կանոն մ'ե հոս՝ շաբաթ մը
անոթի մնալ ե դարձյալ հին հագուստներով չպտտիլ. քսան
վարա չունեցողն Ռոջիլտի ²⁵⁵) տղուն պես կը հագվի, ե ասկից
ե, վոր Բերան ուրիշ թաղերեն ավելի հարուստ կը կարծվի:

Այս թաղին մեջ կը բնակին ազգին ամենն նշանավոր հա-
րուստ ազգայիններն, վորք վերջին տարիներս իրենց քսակը բացած
են բարենպատակ գործերու համար... միայն այն տեսակ բարենպա-
տակ գործերու համար կուտան, վորոնց շնորհիվ իրենց անունները
լրագիրներու մեջ կը հրատարակվին ե իրենք ալ կը փառավոր-
վին. իսկ լուծա մը չեն տար այն բարենպատակ գործերու հա-
մար, վորք ազգին պատիվն ու փառքը կը կաղմեն. վասնզի այդ
լուծան լրագիրներու մեջ պիտի չհրատարակվի, ե մեծ անխելքու-
թյուն ե, վոր մեկն ազգին չերկու դահեկան տա ե անունը լրա-
գիրներու մեջ չհրատարակվի: Բացառությունները մոռնալու չե:

Կա յերիտասարդություն մը, վոր հինգ տարին անգամ մը
կսթափի ե մտքն կանցունե կաղմել ընկերություն մը՝ յ' թե չկա,
իսկ կործանել՝ չեթե կա: Ատենոք հաւաքամ ընկերություն մը
կար, այժմ չիք. կաղմված եր նաե Ուոնդալ ընկերություն մը,
վորու նպատակն եր աղքատ հիվանդներու ձրիաբար բժշկել զը-

Վեղ և դեղ տալ: Այս ընկերութունն բավական զբաղ հավաքեց. բայց յիտքը անոր քանի մը անդամներն, վոր ազգատ ելին, հիվանդացան, և իրենց հիվանդութունն ալ ծանր ըլլալով՝ ընկերութեան դրամով ինքզինքնին դարմանեցին, վորով ընկերութունն ալ յուր նպատակին հասած համարվեցաւ:

Հոս կը բնակին ազգին ամենեն չերեկի բժիշկներն: Հոս կը գտնուին ընդհանրապէս ազգին ամենեն նշանավոր հիվանդութուններն, ինչպէս են կալվածոց հոգաբարձութեան խնդիրը, Հասունեան խնդիրը ²⁵⁶) և այլն:

Քարակոյտն յիդրոյաներուն շինելիք վարժարանը այս թաղին գերհզմանատան մէջ պիտի բարձրանա, յեթե... ԲՈՆՈՒՄԻՏԵՐԸ բարեհաճին բարձրանալ:

Հոս ալ թաղեցին յուր թաղականն գոհ չըլլար յերեք և այս պատճառով թաղականի կռիւները պակաս չեն:

Թաղային վարժարանը, Նաբեկլան անուն, ուրիշ թաղային վարժարաններու հետ բաղդատելով՝ շատ խեղճ ե, հարբուխ բռնըված ե աս, մինչդեռ մուսները տենդե կը տանջվին:

Թաղին մէջ չորս յեկեղեցի կա-Ս. ՅԵՐՈՐԴՈՒՅՈՒՆ, ԽՈՐ ՎԻՐԱՊ, ՎՈՍԿԵՐԵՐԱՆ յեւ Ս. ՀԱՐՈՒՅՈՒՆ, և այս չորս յեկեղեցիներու մէջ չորս բարկաշտ քրիստոնյա չկա:

Թաղեցին շատ զրոստներ հ. ամառվան լեղանակին մէջ հասարակաց պարտեզը կամ ամանավորաց պարտեզները կերթան և ձմեռն ալ թատրոններ, պարահանդեսներ և ուրիշ զրոսարաններ կը հաճախեն:

Իգական սեռն ինքզինքը ընդունելին հայելիներուն տված ե. ժամերով, որերով, շաբաթներով, ամիսներով, տարիներով և դարերով հաշիւներու առջև կը կանգնի և ինքզինքը կը գեղեցկացունէ: Բացառութիւնը խիստ քիչ ե այս մասին: Կիներեն շատերն աչն ատեն միայն կը հագվին, յերբ դուրս յիշնել կամ հոգը ընդունիլ հարկ ըլլա. իսկ յեթե այս հարկը չենրկալանա՝ տան մէջ գիշերազգեստով կը պտըտին. արդյոք ցերեկազգեստով կը մտնեն անկողին:

Կիներուն բամբասանքը հոս քիչ ե. յեթե յերեմն բամբասանք մը ընել պետք ըլլա՝ խիստ քաղաքավարութեամբ կը վարվին:

— Տիկին Ք... իմացա՞վոր Փ... ին կինը Զ... ին երեկը կը սիրէ չեղեր. բայց կը խնդրեմ, վոր այս խոսքս գաղտնի մնա քովդ:

— Վստահ յեղիր, վոր մեկու մը չեմ ըսեր:

Լուր տվող տիկինը կը մեկնի, և Տիկին Ք... յուր դրացույն տունը կը դարնէ: Սպասավորը դուռը կը բանա:

— Տիկինդ վար կանչե, Մինաս:

— Տիկինը չորս ժամ ե, վոր հագվելու համար սենյակը մտավ և տակավին չեկաւ:

— Շուտ գնա, ըսե իրեն, վոր Տիկին Ք... յեկած ե և կաքոր խոսք մը ունի ըսելու:

Սպասավորը վեր կը վազե, իմաց կուտա տիկնոջն, վոր հագված ըլլալով՝ վար կիջնա:

— Վեր հրամայեցք, տիկին Ք...

— Չեմ կրնար, տիկին Շ... խոսք մը ընեմ և յերթամ պիտի վասնդի գործ ունիմ տունը:

— Խեղ ե:

— Ի՞նչպէս խեր... Փ... ին կինը Զ... ին երեկը կը սիրէ չեղեր. բայց վտաքդ պագնեմ, ուրիշ մի ըսեր, գաղտնի պահե. մնաք բարով:

— Ասանկ բան ուրիշին կըսվի... անհոգ յեղիր:

Տիկին Ք... կը մեկնի, և տիկին Շ... սպասավորին կըսե.

— Սա հովանոցս ինձի բեր:

Հովանոցը կը բերվի, և տիկին Շ... ձախ թևի փողոցը կը մտնէ և տան մը դուռը կը դարնէ: Դուռը կը բացվի, վեր կենն և կը դիմավորվի խոշոր կնիկե մը:

— Հրամայեցք, տիկին Շ... կըսե տան տիկինը, հրամանքնիդ ալ հոս կուգաք չեղեր, վոր հովը փչեց ասանկ:

— Սանկ... Ի՞նչպէս եք, աղէկ եք. Ի՞նչպէս ե ձեր ամուսինը... Փ... ին կինը Զ... ին երեկը կը սիրէ չեղեր. հիմա իմացա և շատ ցավեցա: Վտաքդ պագնեմ, չըլլա վոր ուրիշի զրուցես. վասնդի ինձի ըսողն պատվիրեց, վոր մեկու մը չըսեմ:

— Անհոգ յեղիր, կըսե, և տիկին Շ... ին մեկնելին անմիջապէս յիտքը փողոց կը վազե՝ յուր ծանոթներուն ավետիս տալու:

Բայց իրաւի ե, վոր Փ... ին կինը Զ... ին երեկը կը սիրէ. քով լիցի... մեծ սուտ մ'ի... արդեն Փ... ին կինն յուր երեկն անգամ չսիրեր: Փ... ին կինն որ մը այս լուրը ստեղծող տիկինն շրջազգեստն դիպվածով կոխած եր յեկեղեցվուն մէջ և զայն քիչ

մը պատռած էր. աչք տիկինն ալ փ... ին կիննն վրեժ լուծելու համար ասանկ արատ մը քսելու ելած էր անոր վրա:

Բերայի գեղեցիկ սեռին վրա ավելի խոսիլն ավելորդ էր համարինք. քանի վոր ըսինք, թե հայելին առջև միայն կյանք կանցունե. այսչափը բավական է, այսչափը շատ խել է:

Ամառվան յիզանակին մեջ այս թաղին մեջ ջուր չգտնվիր, և թաղեցին կը ստիպվի առանց ջուրի անցունել... ջուր ողին:

Ոգն աղիկ է, բայց կերի վոր ամառն ող ալ չգտնվիր. վասն զի հարուստները գեղերը կերթան ող առնելու:

Բերայի մեջ հայու վերջափ տուն կա, այս հարցման աչն ատեն կրնանք գոհացուցիչ պատասխան տալ՝ յերբ որինավոր վիճակագրութուն մը ըլլա: Առանց այս վիճակագրութեան սպասելու ինչ վոր ըսենք՝ վավերական չպիտի համարվի, մանավանդ թե այս մասին կարծիքները համաձայն չեն: Վոմանք կը կարծեն, թե Բերայի մեջ չիբկու հազար հինգհարյուր տուն կա. ըսողներ ալ կան, հազար հինգհարյուր է Բերայի տուններուն թիվը... Չափազանցութուն, չափազանցութուն... չափազանցութուն... Իմ կարծիքովս հաղիվ յերեք տուն հայ կա Բերայի մեջ...

Վ.Ն.

Պ Ա Լ Ա Տ

Մարաքաղաքիս թաղերուն առաջինը կը համարվի, չերբ ատան գնով բանջարեղեն կամ պտուղ ծախու առնելու վրա չե խնդիրը. փառք հրեա ազգին. բուսային ուտելիքն շատ վար գնով կը վաճառվի հոս: Բայց միայն Պալատցին ոգուտ կը քաղե այս ատանութեն. վորովհետեւ Բերացին կամ Իսկիւտարցին կաղամբ կամ խնձոր գնելու համար Պալատ չկրնար յիրթալ, ինչպես վոր չես ալ Ամիրիկա չեմ յերթար սնտուկ մը կազ գնելու համար:

Այս թաղին մեջ կա քար ու կիր մեծ չեկեղեցի մը: Այդ քարուկիր շէնքին անունն է Հրեցակապետ, վոր ինչպես հայտնի չե՝ մահկանացուներուս հոգիները կառնե և վոր, ինչպես հայտնի չե՝ բժիշկներու վերատեսուչը կը համարվի: Այսուհետեւ ալ մի զարմանար, թե ինչո՞ւ ընդհանրապես շատ համբավ կատանան այն բժիշկներն, վորք ընդհանրապես շատ մարդ կը մեռցունեն. վասնզի անոնք Հրեցակապետիս պաշտպանութունը կը վայելն:

Հրեշտակապետն էր, վոր հոգին առավ Ռոտոսթոյի առաջնորդ Թադեոս չեպիսկոպոսին, վորու մարմինն հիշյալ չեկեղեցվուն մեջ թաղված է: Յեթե գիտնալինք, վոր Հրեշտակապետն մամու աղա-տութիւնն կը հարգե, կիմացունեյինք իրեն, վոր աչս ընտրութեան մեջ սխալած է. վասնզի Թադեոս չեպիսկոպոսն ազգին շատ վնասակար — վորովհետեւ բնավ վնասակար չեղողը չկա — կրոնավոր մը չեր, և չեթե Հրեշտակապետն անպատճառ վորոշած էր կրոնավորի մը հոգին առնել՝ մենք կրնալինք իրեն ներկայացնել քառասուն ընտրելիներ, վորոնցմէ ջուր ուղածն կարող էր անդիլի աշխարհ զրկել:

Այս չեկեղեցվուն մեջ ատենոք տասնեութ քահանա կապրեր, իսկ հիմա միայն հինգ քահանա անոթութենէ կը մեռնին... ձեզի կը թողում թաղեցվուն ջերմեռանդութեան հաշիվն ընել:

Պալատ ունի մանչերու թաղային վարժարան, ուր հարյուր

ութսուն աշակերտ կերթա: Կա նաև ազդիկներու թաղային վարժարան մը, վոր ութսուն աշակերտ ունի: Յերկու վարժուհի, ինը դասատու, մեկ տեսուչ և քառասուն վոսկի ոսմանյան՝ կը կառավարեն այս յերկու վարժարանները: Այս քառասուն վոսկիին քսանը չեկեղեցիներ կը վճարվի, տասնչերկուքը աշակերտներու թոշակներ և ֆնացած ութը վոսկին հոգաբարձութենե, վոր բնավ չդադրի վիճակ հանելի և նվիրատուս տպել տալե հոգուտ այս վարժարանին:

Հոս թաղական կընտրվին միշտ այն անձերն, վորոնց մազն ու մորուքը ճերմկցած են. իսկ յերբ սե մազերով ու պեխերով մարդեր թաղական կընտրվին՝ ընտրությունն ապորինավոր կը համարվի: Այս սովորությունն յեթե յուր վնասն ունի՝ սա ոգուտն ալ ունի, վոր շատերը, թաղական կընտրվելու փափաքով, իրենց մազերն ու պեխերը չեն ներկեր:

Պալատու մեջ կար ժամանակավ ժողովրդասեր անվամբ ընկերություն մը, վորուն անունը վերջին Շահասեր — ի փոխվեցավ և վորուն քանի մը հարյուր վոսկիներն քանի մը ազգասեր ստամոքսներու մեջ հալեցան: Հիմա Աղփաստեր անվամբ բնկերություն մը կա, վոր ս. Ծնունդին և Զատիկին որերը թաղին աղքատներուն կը բաժնե տարվան մեջ հավաքված գումարը և տարին չորիկու որ կը խնդացնե թաղին աղքատները:

Վեցհարյուր քսանհնորս տուն հայ կա թաղիս մեջ:

Թաղեցվույն մեծ մասը արհեստավոր ե, վորուն սովորությունն և ամեն կիրակի առավոտ բաղնիք չերթալ և բաղնիքեն չետքը չեկեղեցի և չեկեղեցիեն վերջը գինեատուն: Աղոթքն, ինչպես կը տեսնվի՝ չոր առջին ունի մաքրություն և չետեն ողի: Ըստ մեզ՝ թաղեցին ավելի տրամաբանորեն վարված կլար՝ չեթե նախ գինեատուն չերթար, չետքը բաղնիք և ամենն վերջը չեկեղեցի մտնար: Թեպետ և թաղիս մեջ տասը գինետուն կա՝ բայց թաղեցին հազար հինգհարյուր գինետուն ապրեցնելու կարո ե, վասն զի գինետուն պահեն վարժարան պահելու պես դժվարություններ չունի, վասն զի ամեն մարդ ամեն յերեկո ազգասիրաբար առնվազն քառասուն փարա կուտա գինետան:

Պալատին վորչափ քիչ դպրոցասեր՝ այնչափ շատ հյուրասել ե. չոր հյուրասիրութենե ծնունդ առած ե հետևեալ առածը.

«Պալատ գնացողը վերադարձած ե, իսկ Պալատ գնացողը վերադարձած չե»:

Յեթե թաղիս մեջ գիշեր մը հյուր գտնվիս՝ զքեզ կատարեալապես կը գինեովցնեն:

Մեր ազգայիններն հոս գրեթե մեծ մասամբ դուրահավան են: Գաղտնյաց գտող, գուշակություններ ընող՝ կիներուն մեծ պատիվ և հավատք կընծայեն. ամենն չերեկի կախարհուններն այս թաղին մեջ կը բնակին: Առանձնասեր են. նախապատիվ կը համարին ամիսներով առանձին նստիլ՝ քան թե ժամ մը մեկ չերկու բարեկամներու հետ խոսակցել: Չը մոռնանք ըսել, թե շատակեր են, և չեթե այս դարուս մեջ մեկը Պալատցի սպասավոր մը ունենա՝ հացավաճառին հետ ամեն որ կուի ընելու կստիպվի, կարծիով թե հացավաճառը մեկ հացի տեղ չորս հաց անցուցած ե հաշվույն մեջ:

Սովորականն ավելի անգործ շատախոսներ կան, վորք կույր են մտքը և դեղ ալ առնելու տրամադիր չեն, իրենց միտքը բանալու համար:

Թաղիս մեջ սովորություն մը կա, վորով մեկն չուր բարեկամներուն բարե տալը կը դադրեցունե, յեթե չերկու — յերեք հարյուր վոսկի մեկն վաստկի:

Շատ ուշ կամուսնանան հոս. հիսունեն առաջ կարգվին անխոհմության նշան կը համարվի, և չեր մեկն հիսունեն առաջ կարգվի՝ ամենուն չերեսն կիլնա և իբր շուք վոք կը նկատվի թաղեցիցն:

Յերիտասարդություն մը կա սակայն, վոր ամեն ճիգ կը թափե թաղի լուսավորելու համար — կազով չհասկնաք: Այս յերիտասարդությունն ավելի թատրոն կը շինե քան թե դպրոց, և չեթե իշխանություն տրվի իրեն՝ թաղային վարժարանը թատրոնի կը փոխե. չեկեղեցի մեջ ալ ներկայացում տալու համար պատրիարքարանն արտոնություն խնդրելու կերթա:

Պալատին կիները նշանավոր են իրենց պարկեշտությամբն և փառաբանությամբ: Ասոնք շաքաթը չերեք անգամ տախտակ կը սրեն և չերեք անգամ լաթ կը լվան: Նորաձև հագուստներ հագնելու համար իրենց քունը չեն խռովեր. պարզությունը կը պիտի և նորաձևությունն միշտ պարզության մեջ կը գտնեն:

Թաղիս ողբ աղեկ չե. բայց ինչ աղգեցություն ունի աղեկ ողն, չեր մարդ չուր քսակին մեջ ողն ուրիշ բան չունենար:

ԺԵ.

Ի Ճ Ա Տ Ի Յ Ե

Բնակութիւնն հաստատելու համար պատմական թաղ մ'ե, յիթե մարդս նապաստակ ըլլա... լեռներն վեր չենելու դյուրութիւն ունենալու համար:

Յերանխ անոնց, վորք նապաստակ չեն, բայց չերկար շունչ ունին. վասնզի անոնց համար ե այս թաղն. Վալ անոնց, վորոնց շունչը կարճ ե. վասնզի անոնք արժանի չեն այս թաղին մեջ բարձրանալու. անոնց շունչը կես ճամբան չհասած կսպառի, մանավանդ չերք Գուգլիունճուքեն վեր չենել ուղին:

Հոս բնակելու համար լայնածավալ սիրտ մ'ալ ունենալու չի, վոր չճաթի մարդ՝ թաղեցիւնն ընթացքը քննելով:

Յեկո՛ւր մտնենք նախ և առաջ թաղիս ծովահայաց դռասաբանն, ուր տասնի չափ աղղալիններ որվան խնդրներուն վրա կը խոսին: Ասոնց ամենն ալ ստույգ աղբյուրներն լուրեր կը հաւաքեն և իրարու կը հաղորդեն: Կը փափաքէս այս որվան լուրերն իմանալ:

— Շատ հետաքրքիր եմ նոր լուրեր իմանալու:

— Յեկո՛ւր, իրենցմե քանի մը քաջ հեռու նստինք և նոր լուրեր իմանանք: Ահա սկսան խոսիլ:

— «Իքը հրաժարական տված ե այստոր:

— Այո, տված ե, բայց Մեկալը չե ընդունած:

— Մուշտակը կը պնդե չեղեր այս կետին վրա:

— Յես չեմ կարծիր, վոր համաձայնութիւն գոյանա, վորովհետեւ Իքը Բան ընելուն պես՝ մշուս կողմեն ալ Բանը Իք պիտի ընե:

— Իքին տեղը չես ալ ըլլամ՝ այնպես կը վարվիմ:

— Դուն Մեկալը գիտես, թնչ համառ ե:

— Բայց Իքը թնչ իրավունք ունի Բանին յերեսն աղղակն:

պոռալու:

— Բանն ալ իրավունք չունի Իքը վար զարնելու:
— Յես չեմ կարծիր, վոր միաձայնութիւն գոյանա, վասնզի Մուշտակն Իքին կողմն ե, Մեծավորն ալ Բանը կը սիրե.
— Վերջին լուրն իմացածք. Մեծը բան մը պիտի խոսի յեղեր:
— Պղտիկը չերեկ գացիր ե:
— Յեթե ասանկ յերթա՝ իմ կարծիքովս Բանը տարիչե մը Իք կ'ըլլա:

— Իքն ալ Բան կ'ըլլա:

— Բայց Մուշտակն ալ պիտի ըսե. «Ինձի նայեցեք. յեթե Բանը Իք ըլլա՝ չես ալ Իք պիտի ընեմ, ապա թե վոչ Իք չեմ ընեք»:

— Իրավունք ունիս, շատ վարպետորդի չի. Մինչև վոր Իքը Բան չընե՝ չպիտի ընդունի: Ամիրային կարծիքն թնչ ե այս մասին:

— Ամիրան առաջին որը լուր առած եր ներսեն, վոր Իքը պիտի շարունակե յեղեր մինչև վոր Բանը գա:

— Կարծեմ բավական տեղեկութիւն առիք այս որվան դեպքերուն վրա. ալ լրագիր կարդալու հարկ չմնաց: Ո՛ն, չենենք և քիչ մալ թաղային վարժարանը չերթանք:

— Իքը ո՞վ ե. Բանն թնչ ե. Մեկալը կը ճանչնաս...

— Յեկ վոչ մին կը ճանաչեմ... ահա թաղային վարժարանը:

— Ատոր վրա Ներսեսյան գրված ե:

— Ներսեսյանին մի նայիր դուն, ազգին ստակովը շինված ե ան:

— Ինչո՞ւ ուրեմն Ներսեսյանը յուր անունը դրած ե վրան:

— Վասնզի Ներսեսյան արքունի շինութիւններու մեջ աշխատող գործավորներուն շարքաթականներն գեղջ ընելով՝ գումար մը գոյացուց և այդ գումարը գումարելով այն գումարին հետ, զոր թաղեցին տված եր՝ շինեց այդ քարուկիր վարժարանն, վոր կանոնավոր...

— Ինչ անիրավութիւն ե աս... յեթե քսակեն գումար մ'ալ տված ըլլար՝ այսպես գրելու չեր, ալ, ինչպես սովորութիւն ե՝ գրելու չեր. «Ներսեսյան նվիրեց այս չափ վոսկի դպրոցիս շինութիւնը համար»: Այս թաղին մեջ մարդ չկամ, չեղաւ:

— Ըլլալու չե... շինեց այս քարուկիր վարժարանն, վոր քանի մը դասարան և քանի մը ճեմիշ ունի. ճեմիշները դասարաններն

ավելի կանոնավոր չեղած են միշտ: Այս վարժարանին մեջ ժամանակավ զաստուռ մը գանկոծված է. կարծեմ մոտերս ալ կարգը պիտի գա հոգաբարձությունը ծեծելու:

— Շուտ ընենք. չեղենք սա թաղեն, չըլլա վեր մեզի ալ ծեծեն:

— Թաղեցին պաղած է վարժարանեն. վասնզի անոր շինությանը համար իր կողմե տրված գումարն վոչինչ համարվեցավ և վարժարանին անունը Ներսեսյան դրվեցավ:

— Աղջիկներու վարժարանն ի՞նչպես է:

— Շատ աղեկ է, քարուկիր է: Հոս աղջիկներու վարժարան մ'ալ կա, դոր Մեղսուրյան բացած է և դոր թաղեցին գոցել կուզեն: Այս վարժարանն որ ըստ որե հառաջ կերթա:

— Թաղեցին ի՞նչ կընեն:

— Նարտ, թուղթ և ի՛ի յուզ կը խաղա և ընդհանրապես լայնածավալ սիրտ մ'ունենալով՝ կարևորությունն չտար վարժարաններուն փակվելուն. միայն յուր քսակը լեցնելու կաշխատի և միայն հացի պարկ կը կրեն, ուրիշ առթի թողլով աղգալին զգացում կրելը: Թեպետև բացառություններ կան, բայց շահը կը պահանջեն, վոր անոնք ալ ձայն չհանեն:

— Աս ի՞նչ զարմանալի թաղ է, չեղբայր:

— Ընկերություն մ'ալ կա հոս, բայց չը գիտեմ թե ինչ կընեն. կարծեմ մոտերս ուրիշ ընկերություն մ'ալ պիտի կազմվի՝ այս ընկերությունը առաջ տանելու համար:

— Աս ի՞նչ անտարբեր թաղ է:

— Արդեն այս թաղն հին չէ, քանի մը տարվան թաղ է. ուրիշ թաղերն ձանձրացողները հոս չեկած են. ուստի այս թաղը Պոլսո մյուս բոլոր թաղերուն թերություններն մեյմեկ քիչ ունի:

— Ընթերցասիրությունն ի՞նչպես է գոհ:

— Հայերեն լրագիր կարդալն արգիլված է. և այս արգելքին դեմ վարվողը կամ չերեք վոսկի տուգանք կը վճարեն, կամ տասնընչինգ որեն մինչև ամիս մը բանտարկության կը դատապարտվի: Հոս կը կարդացվին ընդհանրապես թերեմամբ հախքալ, վախք յեվ ձեռքեի հավասիս լրագիրները:

— Յերիտասարդություն չկա հոս:

— Ձկա: «Այս թաղին կլիման, կըսեր մեկ բարեկամս, յերի-

տասարդի մաղերն շուտով կը ճերմկեցունեն. բայց ճերմկեցնելն վերջն ալ դեռ շատ կապրեցունեն. ասոր համար յերիտասարդք դեռ մաղերնին չճերմկեցուցած՝ յեթե ուրիշ թաղ մը յերթան, և ուրիշ թաղերու մեջ մաղերնին ճերմկեցուցած անձինք հոս գան՝ շատ լավ և ոգտակար կըլլա:

— Անհասկնալի թաղ մը:

— Մեծագույն մասն առանց ողի խմելու չկրնար հանգիստ ընել. հոս ընդհանրապես շատ կը ծխեն և քիչ կուտեն:

— Քիչ կուտելու համար շատ կը ծխեն, թե շատ ծխելուն համար քիչ կուտեն:

— Առաջինը հավանական է, վասնզի կեսարացիներ կան հոս: Քիչ կուտեն՝ բայց գեղեցիկ ողով կը սնանին: Թաղեցին ընդհանրապես նիհար է: Թաղս ջերմեռանդ քիչ ըլլալուն պատճառով չեկեղեցի շինված չէ հոս՝ իրրև ավելորդ ծախք. Թաղեցիներն մեկ քանին չերբեմն Սելամսղի չեկեղեցին կերթան, չերբեմն ալ Գուզկունճուք:

— Իգական սեռն ի՞նչպես է:

— Կիները գեղեցիկ են, բարեձև, կրթության հակամետ: Կիներն իրենց մայրենի լեզուն Սելամսղի կիներեն շատ աղեկ կը խոսին: Այս թաղի կիներուն տանտիկնությունը Իսկիւտարի թաղերուն և վնչ մեկուն մեջ տեսնված է: Յերեսի ներկը միայն քիչ մը չափեն ավելի հառաջ չերթալու վրա չէ հոս. ծեր աչրերն ալ չերբեմն այս ներկեն կը գործածեն: Նորաձեւության մասին Գատըգեղցիներուն չափ հառաջ գնացած չեն: Հոս կիները գեղեցկաձայն են և միշտ տաճկական յիրգեր կերգեն, ինչպես վոր իրենց ամուսիններն ալ տաճկական սերբի կը հագնին: Թաղիս մեջ մեծ ֆեսը շատ հարգի չէ. չերբեմն իրենց գլուխը կընեն այնչափ մեծ ֆեսեր, վորոնց յուրաքանչյուրին մեջ չորս ոխա խաղող կը դրվի:

Ողբ խիստ է. քաջառողջներուն չդաշիր, վատառողջներն անդիի աշխարհ կը դրկեն:

Հայերն բնակված տուններուն թիվը հինգ հարյուրի մոտենալու վրա չէ, ի՛ի յուզ խաղացողներուն թիվն ալ վեց հարյուրի:

— Շնորհակալ եմք:

— *Uzu ruu...*

Ս Ա Մ Ա Թ Ի Ա

Ողի չխմողները դատվին... անոնք իրավունք չունին այս թաղը մտնելու:

Բաժնավին մեղմե նաև անոնք, վորք սորված են Ծառա լեմ —ի. հոս ամեն մարդ տե և, վասնզի ամենքն ալ իրենց աշխատությամբն և արհեստովը կապրին և, հետևաբար, պեյ—երու, եֆեցիսի—ներու վտանները լցելու պարտավոր չեն:

Մեզի հետ չգան նաև այն անձերն, վորք արձակ հայհոյել գիտեն. անոնք հոս կը ծաղրվին, վասնզի սամաթիացիներուն հայհոյութունն զրեթե միշտ վտանաւոր ե:

Բնավ հոս պտըտելու չեն այն որիորդներն կամ տիկիներն, վորոնց չերեսներուն վրա կարմիրը անպակաս ե. սամաթիացին կարմիրն միշտ հավկթներու վրա տեսնել կուզի:

Ամենեկին գործ չունին հոս այն կիներն, վորք ամեն քալլափոխին կես մեջքեն կը կտորտվին թղթյա կիներուն պես, զորս հեյալը կը ներկայացնե. վասնզի սամաթիացին այնպիսիներու վրա կը խնդա:

Այս թաղին մոտենալու չեն նաև այն չերիտասարդները, վորք կամ շատ թեթև են և կամ շատ ծանր:

— Մարդ չերթալու չի ուրեմն հոս:

— Ինչո՞ւ: ամեն մարդ ստիպված ե այդ թերութիւններն ունենալու: Յեկնուր քեզի հետ չերթանք. բայց այնպիսի փողոցն մը մտնենք, վոր մեկն մը չտեսնվինք. վասնզի տեսնվելուս պես մեր ոձիքեն կը քաշեն ու զինետուն կը տանին: Տեսնվեցանք... ահա քանի մը չերիտասարդներ սա փողոցն յեւան և խնդալով մեզի կը մոտենան... մոտեցան:

— Ո՞ր ո՞ր, բարի չեք յեկեր:

— Շնորհակալ ենք:

— Յեկեր նայինք, չեկեր, Հայկական ընկերութիւնը չերթանք և քանի մը հատ տընկենք:

— Հայկական ընկերութիւնը ողի խմելու համար հաստատված ընկերութիւն մ'ե:

— Նպատակն այն չի... բայց վոր ընկերութիւնն ե, վոր նպատակին ծառայած ըլլա:

— Գոնե անունը փոխեն:

— Ինչո՞ւ... աղէկ գիտես, վոր Հայկ ողի չեր խմիր:

— Պետք, Հայկական ընկերութեան ողին թե աղեկ չե և թե սուղ ե. Որմանողին տանինք մեր բարեկամները:

— Որմանողին ալ չերեսուն աստիճան ե, չեղբայր. անցյալ շաբթու յիս մը տուգ խմեցի հոն և դաւալ ինծի:

— Յեթե ինծ հարցվեր՝ չես Կյումիս հոլալը-ին կը տանելի բարեկամներս:

— Յեղբայր, ան ալ ողիի հետ, կտոր մը պանիր միայն կուտա:

— Այլքն ոլուֆ-ին չերթանք:

— Յեղբայրներ, մենք թաղին մեջ քիչ մը պիտի պտըտինք:

— Թաղին մեջ մարդ չկա: ամենն ալ զինետուններու մեջ են այսոր:

— Մահտեսին չերթանք. մարդը հայ ե և պատվական ողի ալ ունի:

— Շատ աղեկ, Մահտեսին չերթանք:

— Լավ... չերթանք...

Քանի մը փողոց դառնալով՝ մտանք Մահտեսին գինետունն, վորու գինի սեղանին առջև կայնած կը խմելին տասնի չափ հաստաբազուկ ձկնորս ազգայիններ:

— Տա՛մ ա՛ման, ա՛ման եֆեցիսի, ա՛ման:

— Թարալալա թարի լալա, թիրալալա թարիլալալա:

— Պիճի վառ...

— Թարալալա թարիլալամ...

— Թիրալալա թարիլալամ...

— Սեցիճ կիպի մտնիճիլե տեֆերիսե... պիճի վառ:

— Այս բարիկ...

— Թարալալա թարիլալալալա .. թիրալալալալալալալա .. ո

ո ո ո ո

— Այս բար...

Ս Ա Մ Ա Յ Ի Ա

Ողի չխմողները դատվին... անոնք իրավունք չունին այս թաղը մտնելու:

Բաժնավին մեղմե նաև անոնք, վորք սորված են Ծառա յեմ —ի. հոս ամեն մարդ տե՛ր է, վասնզի ամենքն ալ իրենց աշխատությամբն և արհեստովը կապրին և, հետևաբար, պեյ—երու, եֆենսի—ներու վտանները լզելու պարտավոր չեն:

Սեզի հետ չգան նաև այն անձերն, վորք արձակ հայհոյել գիտեն. անոնք հոս կը ծաղրվին, վասնզի սամաթիացիներուն հայհոյությունն զրեթե միշտ վտանաւոր է:

Բնավ հոս պտըտելու չեն այն որրորդներն կամ տիկիններն, վորոնց յերեսներուն վրա կարմիրը անպակաս է. սամաթիացիներ կարմիրն միշտ հավկթներու վրա տեսնել կուզի:

Ամենեկին գործ չունին հոս այն կիներն, վորք ամեն քալլափոխին կես մեջքեն կը կոտորվին թղթյա կիներուն պես, զորս հեյալը կը ներկայացնեն. վասնզի սամաթիացին ա՛յնպիսիներու վրա կը խնդա:

Այս թաղին մոտենալու չեն նաև այն յերիտասարդները, վորք կամ շատ թեթե են և կամ շատ ծանր:

— Մարդ չերթալու չի ուրեմն հոս:

— Ինչո՞ւ: ամեն մարդ ստիպված է ալք թերություններն ունենալու: Յեկուր քեզի հետ յերթանք. բայց այնպիսի փողոցե մը մտնենք, վոր մեկե մը չտեսնվինք. վասնզի տեսնվելուս պես մեր ոձիքեն կը քաշեն ու զինետուն կը տանին: Տեսնվեցանք... ահա քանի մը յերիտասարդներ սա փողոցեն յեկան և խնդալով մեզի կը մոտենան... մոտեցան:

— Ո՛ր ո՛ր, բարի չեք յեկեր:

— Շնորհակալ ենք:

— Յեկեք նայինք, յեկեք, Հայկական ընկերությունը յերթանք և քանի մը հատ տընկենք:

— Հայկական ընկերությունը ողի խմելու համար հաստատված ընկերություն մ'է:

— Նպատակն այն չէ... բայց վոր ընկերությունն է, վոր նպատակին ծառայած ըլլա:

— Գոնե անունը փոխեն:

— Ինչո՞ւ... աղէկ գիտես, վոր Հայի ողի չեր խմիր:

— Պետք, Հայկական ընկերության ողին թե՛ աղեկ չե և թե սուղ է. Որմանողին տանինք մեր բարեկամները:

— Որմանողին ալ յերեսուն աստիճան է, չեղբայր. անցյալ շաբթու ոխա մը տուց խմեցի հոն և դաւով ինծի:

— Յեթե ինծ հարցվեր՝ յես Կյումիս հովալը—ին կը տանելի բարեկամներս:

— Յեղբայր, ան ալ ողիի հետ, կտոր մը պանիր միայն կուտա:

— Այրբն ոլուֆ—ին յերթանք:

— Յեղբայրներ, մենք թաղին մեջ քիչ մը պիտի պտըտինք:

— Թաղին մեջ մարդ չկա: ամենն ալ գինետուններու մեջ են այստե՛ր:

— Մահտեսիին յերթանք. մարդը հայ է և պատվական ողի ալ ունի:

— Շատ աղեկ, Մահտեսիին յերթանք:

— Լավ... յերթանք...

Քանի մը փողոց դառնալով՝ մտանք Մահտեսիին գինետունն, վորու գինով սեղանին առջև կայնած կը խմելին տասնի չափ հաստաբազուկ ձկնորս ազգայիններ:

— Տա՛մ ա՛ման, ա՛ման եֆենսի՛մ, ա՛ման:

— Թարալա թարի լալա, թիրալալա թարիլլալալա:

— Պինի վառ...

— Թարալալա թարիլլալամ...

— Թիրալալա թարիլլալամ...

— Սեհին կիպի մոնիմիլե տեթերիսե... պինի վառ:

— Այս բարեկ...

— Թարալալա թարիլալալալա... թիրալալալալալալամ... ո՛

ո ո ո ո ո

— Այս բար...

— Տամ աման, աման յետք պե՛նի...

— Ա՛ռ նախինք, տա՛յր, և տնկե՛, — ըսավ ասոնց մին իր քո՛վինին՝ անոր կուրծքին հարված մը տալով յուր ափով։

Այս հարվածն, վոր անոնց քով մտերմության նշան կը հա՛մարվի, յեթե մեզ տրվի՝ գերեզմանի նշան կը...

— Պի՛ր կյուզեյի մայիլ ոյսում յետպենի...

— Թաղալալա թարիլլալալամ...

— Յետպենի... իչերիմե պի՛ր ֆուրս օյուլումյուլե կենե կյուն-օյուլ...

— Ա՛մանան... թարալալալալալամ։

— Հոս նայեցեք, տալի՛ներ, մանի՛ն ձգեցեք ու ցնծացեք... վարժարանին դանձանակն է։

— Ծո տղաք, դալրոցին քապախն է. տփեք նայինք... խմենք, բալց դալրոցնիս ալ չմոռնանք։

— Ա՛ռ վարպետ։

— Բռնե վարպետ։

— Ա՛ռ։

— Շեն կեցեք։

— Տամ աման... ալա՛մ։

— Պի՛զ վերեյիմ բառալար յետսին քաղական։

— Ծո տղա, ինչո՞ւ անանկ բաներ կը խառնես։

— Գեզի ի՞նչ պե, վայ կեռմի՛թի ֆրնալը։

— Հիմա մեռելներուդ պառկած տեղեն կը սկսիմ, հա։

— Յերթանք... աֆ կընեք, աղաներ. ձեզի ձանձրություն տվինք։

— Չե, չի։

— Ջրուցեցեք նայինք, բարեկամներ. քիչ մը ձեր թաղին վրա խոսինք։

— Բարեկամ, մեր թաղին ժողովրդյան մեկ մասին պատգա՛մավորությունը տեսաք ահա. ասոնք ձկնորսներն են, վոր իրենց որականը հանելուն պես գինետուն կուգան և կը խմեն. այսու ամենայնիվ, ինչպես տեսաք՝ դալրոցին համար միշտ ստակ կուտան. մասնավոր սեր ունին թաղին վարժարաններուն համար։ Մյուս մասին ալ ներկայացուցիչները կընանք համարվիլ մենք, արհեստավորներս։ Հոս ազնվապետություն չկա. մեր դրոշակն է—ազատություն, հավասարություն, յեղբայրություն։ Յեթե դը՝

դրոշակին վրա պարապ տեղ մնացած ըլլար՝ օյուլ բառն ալ պիտի տվեցնեյինք հոն։ Հոս բնիկ եֆենցի չկա. իբրև արտաքին բերք՝ քանի մը եֆենցիներ կը գտնվին յերբեմն։

— Թաղական խորհուրդ ունի՞ք կանոնավոր։

— Թաղական ըլլալն շատ դժվար է հոս, իսկ ըլլալեն վերջն յեթե առաջին շրջանն առանց կռիւ անցունե՛ք արվեստահան-դես դրկվելու հափ հազվագյուտ բան մը յեղած կըլլա. իսկ յեթե վերկորդ շրջանին դարձյալ թաղական ընտրվի՝ անպատճառ կարտաքսվի։ Հոս ամեն թաղեն ավելի շարժում կա. Ասկե չերկու—չերեք ամիս առաջ քսան—չերեսուն յերիտասարդներ թաղական խորհրդարանը մտան և թաղական խորհրդին թեհն բռնե-լով դուրս հրամցուցին դայն։

— Ինչո՞ւ։

— Վասնզի դալրոցն աղեկ չեյին նայեր։ Պատրիարքարանն ալ առժամանակյա թաղական մը տվավ մեզի։

— Նոր թաղականն չէրք պիտի ընտրվի։

— Յերբ վոր հին թաղականը դուրս հրամցնող չերիտասարդներն մեղա ըսին։

— Յեթե չըսե՛ն։

— Գվեարկության չպիտի մասնակցին։

— Վարժարաններն ի՞նչպես են։

— Յերկու տարի յե, վոր շտկելու կաշխատին. ընդհանուր կարծիքն այն է, թե տաս տարեյն կարելի պիտի ըլլա դանոնք բարեկարգելը։ Հոս ծնած է Մինեճի Անդրանիկն, վոր ժամանա-կով շատ աշխատած է այդ վարժարաններուն համար. անգղիե-րեն խոսող հայն առաջին անգամ Սամաթիայեն յեղած է. ջրհան-կիրներու մեջ ալ այսոր անգղիերեն կարդացողներ կը գտնվին։

— Հիմա ո՞վ կը հսկե դալրոցներու վրա։

— Այսինքն ո՞վ չհսկեր, ըսել կուգես։

— Հիմա ո՞վ է, վոր չհսկեր դալրոցներուն վրա։

— Յերբեմն հոգաբարձուներու և հոգաբարձուհիներու մեջ կարծիքներու անհամաձայնություն ծագած ըլլալով՝ հիմա վո-րոշված է, վոր ամուսնացած թաղականներն իրենց կիներովը չհսկեն վարժարաններու վրա։ Հիմակվան թաղականներն այն-չափ որինապահ են, Ընդհանուր Դատախազի դրությունն կա-ռավարութեն ընդունվելն ի վեր՝ թաղական խորհրդո մեջ ալ

— Տամ աման, աման յետ պեճի...

— Ա՛ռ նայինք, տա՛լը, և տնկե՛ք,— ըսավ ասոնց մին իր քա-
վինին՝ անոր կուրծքին հարված մը տալով յուր ասիով։

Այս հարվածն, վոր անոնց քով մտերմության նշան կը հա-
մարվի, յեթե մեզ տրվի՝ գերեզմանի նշան կը...

— Պիտի կյուզելի մայիլ ոյսում յետպեճի...

— Թարալալա թարիլլալալամ...

— Յետպեճի... իչերիմե պիտի բուրս օյուլում կենե կյուն-
օյուլ...

— Ա՛մանան... Թարալալալալալալամ։

— Հոս նայեցեք, տալի՛ներ, մանիկ ձեզեք ու ցնծացեք...
վարժարանին դանձանակն է։

— Ծո տղաք, դպրոցին քապախն է. տիեք նայինք... խմենք,
բաց դպրոցնիս ալ չմոռնանք։

— Ա՛ռ վարպետ։

— Բռնե վարպետ։

— Ա՛ռ։

— Շեն կեցեք։

— Տամ աման... ախա՛ն։

— Պիզ վերելիմ բարալար յետիկ քաղական։

— Ծո տղա, ինչո՞ւ անանկ բաներ կը խառնես։

— Բեզի ի՞նչ պե, վայ կեցիքի քնալը։

— Հիմա մեռելներուդ պառկած տեղեն կը սկսիմ, հա։

— Յերթանք... աֆ կընեք, աղաներ. ձեզի ձանձրություն
տվինք։

— Չե, չի։

— Զրուցեցեք նայինք, բարեկամներ. քիչ մը ձեր թաղին
վրա խոսինք։

— Բարեկամ, ձեր թաղին ժողովրդյան մեկ մասին պատգա-
մավորությունը տեսաք ահա. ասոնք ձկնորսներն են, վոր իրենց
որականը հանելուն պես գինետուն կուգան և կը խմեն. ախու
ամենայնիվ, ինչպես տեսաք՝ դպրոցին համար միշտ ստակ կու-
տան. մասնավոր սեր ունին թաղին վարժարաններուն համար։
Մյուս մասին ալ ներկայացուցիչները կընանք համարվել մենք,
արհեստավորներս։ Հոս ազնվապետություն չկա. մեր դրոշակն
է— ազատություն, հավասարություն, յեղբայրություն։ Յեթե դը-

րոշակին վրա պարապ տեղ մնացած ըլլար՝ օյուլ բառն ալ պիտի
ալիցնելինք հոն։ Հոս բնիկ եֆենեօի չկա. իբրև արտաքին բերք՝
քանի մը եֆենեօներ կը գտնվին յերբեմն։

— Թաղական խորհուրդ ունի՞ք կանոնալոր։

— Թաղական ըլլալն շատ դժվար է հոս, իսկ ըլլալն վերջն
յեթե առաջին շրջանն առանց կռիւ անցունե՛ք արվեստահան-
դես զրկվելու չափ հազվագյուտ բան մը յեղած կըլլա. իսկ յեթե
չերկրորդ շրջանին դարձյալ թաղական ընտրվի՝ անպատճառ
կարտաքսվի։ Հոս ամեն թաղեն ավելի շարժում կա. Ասկե յեր-
կու— յերեք ամիս առաջ քսան— յերեսուն յերիտասարդներ թա-
ղական խորհրդարանը մտան և թաղական խորհրդին թեհն բռնե-
լով դուրս հրամցուցին զայն։

— Ինչո՞ւ։

— Վասնզի դպրոցն աղեկ չէին նայեր։ Պատրիարքարանն
ալ առժամանակա թաղական մը տվավ մեզի։

— Նոր թաղականն չէր պիտի ընտրվի։

— Յերբ վոր հին թաղականը դուրս հրամցնող յերիտասարդ-
ներն մեղա ըսին։

— Յեթե չըսե՛ն։

— Քվեարկության չափի մասնակցին։

— Վարժարաններն ի՞նչպես են։

— Յերկու տարի յե, վոր շտկելու կաշխատին. ընդհանուր
կարծիքն այն է, թե տաս տարիչեն կարելի պիտի ըլլա զանոնք
բարեկարգելը։ Հոս ծնած է Մինեճի Անդրանիկն, վոր ժամանա-
կավ շատ աշխատած է այդ վարժարաններուն համար. անգղիե-
րեն խոսող հայն առաջինն անգամ Սամաթիայն յեղած է. ջրհան-
կիրներու մեջ ալ այսոր անգղիերեն կարդացողներ կը գտնվին։

— Հիմա թվ կը հսկե դպրոցներու վրա։

— Այսինքն թվ չհսկեր, ըսել կուզես։

— Հիմա թվ է, վոր չհսկեր դպրոցներուն վրա։

— Յերբեմն հոգաբարձուներու և հոգաբարձուհիներու մեջ
կարծիքներու անհամաձայնություն ծագած ըլլալով՝ հիմա վո-
րոշված է, վոր ամուսնացած թաղականներն իրենց կիներովը
չհսկեն վարժարաններու վրա։ Հիմակվան թաղականներն այն-
չափ որինապահ են, Ընդհանուր Դատախազի դրությունն կա-
ռավարութեան ընդունվելն ի վեր՝ թաղական խորհրդո մեջ ալ

ամեն որ հարյուրեն ավելի մասնավոր դատախազներ կը գտնու-
վին:

— Հայկականն զատ ընկերություն չկո՞հոս:

— Շատ մը ընկերություններ կային ատենոք, բայց հիմա
չկա: Պարզապէս ընկերություն²⁵⁷ մը կա միայն, վոր կինե-
րուն պարզ հագնիլ պիտի սորվեցնեն. կարծեմ ասոր ալ անուշը
կա միայն:

— Յեկեղեցասիրություն կո՞հոս:

— Այո, բոլոր թաղերն ալ կ'ըլլի. թաղեցին հավասարապես
կը սիրեն ազգն և յեկեղեցին. բայց ասկի հետեցնելու չե, թե նվագ
կը սիրեն ողին, գոր կը խմե յերեկոյան ժամը մինչև մեկ ու կի-
սին: Գինետան մեջ մեկուկիսեն ավելի նստողներն կը բամբաս-
վին, իսկ մինչև մեկ ու կիս նստելով ճաթելու. չափ ողի խմող-
ներն մեծ համակրություն կը վայելեն՝ իբրև որինավոր մարդեր:
Յեկեղեցւոյն գորգերն այնչափ շատ կը համբուրվին վոր ամիսն
անգամ մը կը պատուին. թաղականը այս կետը նկատողության
առնելով տեսաւ, վոր այս համբուրներուն գորգ չալիտի դիմա-
նա, ուստի վորոշեց գորգերը վերցնել: Ժողովուրդը հիմա հողի
վրա կը կայնի և հողը կը համբուրեն. թող վոր յեկեղեցւո հողն
ալ հինցած ե այդ համբուրներն:

Սամաթիացին ցած ձայնով խոսիլ չգիտեր. թեպետև չի-
բեմն գաղտնիք մը հաղորդելու համար ականջի ի վայր կը խոսի,
բայց դարձաւ այդ խոսքը Յենի Գաբուլեն կը լսվի:

Ինչպես վերը հիշեցինք՝ քծնիլ չսիրեր, շողոքորթութենի
կը փախչի, բայց չեբը աղգային կռիվ մը յենե՝ հողվով մարմ-
նով կը նետվի. իսկ յեթե աղգային վեճ մը չըլլա՝ կաշխատի վեճ
մը հանելու: Առանց վեճի կարելի չե իրեն ապրիլ:

Սամաթիացիներուն մեկ մասն վոսկերիչ ե, և այս հերիք ե
հասկցնելու համար, թե կերակուրի մասին վորքան բծախնդիր
ե: Ամենն ալ միսն, ձուկն, կարագն, պանիրն, ապուխտն և
պտուղն սամաթիացիին կերթան: Մեծ կարևորություն կը տրվի
հոս փորին, գոր գոհացնելու համար րան մը չխնայվիր: Հոս փո-
րը պճնասեր ե:

Սամաթիացին թաղին մեջ հայերն, իսկ շուկան տաճկերն
կը խոսի:

Դառնանք գեյիցիկ սեփին, վոր իրոր դեղիցիկ ե, պարզասեր:

և աշխատասեր: Սամաթիո տիկիները դաստիարակության պետքը
դգացած են և կաշխատին, վոր իրենց աղջիկներն ալ
ուսում և կրթություն առնեն, մինչդեռ ուրիշ թաղի մը
տիկիներն կը փափաքին, որ իրենց աղջիկները բընձի փոշի և
կարմիր ներկ առնեն: Թաղիս տիկիներն շատ մը թաղերու աչ-
րերն ավելի աղգասեր են: Առաջին անգամ Սահմանադրության
տարեդարձը պատվող կինը սամաթիացի չեր:

Յեթե Պոլսո մշուս թաղերն Սամաթիո հետևող ըլլան՝ Պոլսո
ժողովուրդն քիչ ատենի մեջ զգալի փոփոխություն կը կրե,
բայց ողիին գինն ալ շատ կը բարձրանա:

Թաղիս ողը շատ աղեկ չե. ուստի զայն բարեխառնելու հա-
մար ե, վոր թաղեցին ողին շատ կը խմե:

Գ Ո Ւ Զ Կ Ո Ւ Ն Ճ Ո Ւ Ք

Վոսփորի մեկ հոսանքը կը պահանջէ, վոր Գուգկունճուքի նավամատուցին մերձենալու համար՝ նավավարն յուր նավակն միշտ դեպի Պելլերպեյ ուղղէ և դեպի հոն թի քաշէ. վասնզի յեթե դեպի Գուգկունճուք ուղղվի՝ Իսկիւտարի առջև կը գտնենք զինքը: Գուգկունճուքին միշտ այս ճամբով յերթևեկելուն համար սովորութիւնն ըրած է իրեն՝ յեկեղեցի յերթալու համար դեպի Պելլերպեյի նավամատուցին զըոսարանն ուղղել յուր գնացքը, վասն զի յեթե դեպի յեկեղեցին առնէ. յուր քայլերն՝ ինքզինքը գինեատուններու մեջ կը գտնէ: Յամաքն ալ ունի յուր հոսանքները:

Այս թաղն թեպետև պաշտոնապես Իճատիեյի հետ միացած է, բայց վրչ պաշտոնապես չէ միացած և վրչ մեկ թաղին հետ:

Որհնյալ է աստված. հոս բնավ կռիվ չպատահիր թաղին վարժարանին վրա...

— Փնօք քեզ աստված. վերջապես տեսանք թաղ մը, ուր կռիվ չըլլար յեղեր վարժարանին վրա: Կեցցե Գուգկունճուքին... Գուգկունճուքիին ողի մը տար ինձմե...

Այո, Գուգկունճուքին մեջ բնավ կռիվ չեն հարուցաներ թաղին վարժարանին վրա. և ասոր պատճառն ալ կրնաք գուշակել, յեթե ըսեմ ձեզ, վոր Գուգկունճուքի մեջ ազգային վարժարան չկա...

— Հիմա հասկցովեցավ, վոր թաղին վարժարաններն են յեղեր կռիւ պատճառները:

Արդարև կա պղտիկ շենք մը, ուր պղտիկ տղաներ կերթան քնանալու համար: Թաղեցիին անգամ մը սրդողած ըլլալով վարժարանին դեմ՝ ուխտ ըրած է լուծմա մը չտալ անոր համար, և

հիմա ուխտադրուժ չսեպվելու համար՝ ստիպված է քսակին բերանը չբանալ յուր վարժարանին համար:

Մինչև այսոր հոս թաղային կռիվ ալ տեսնված չէ, և ասոր ալ պատճառն սա չէ, թե այս թաղին մեջ...

— Թաղ չկա, այնպես չէ:

Այս թաղին մեջ յեթե մեկը սխալի և սեին ճերմակ ըսե՝ յուր դեմը չգտներ ուրիշ մեկն՝ վոր յեղն ըսե. վրչ, այդ սե է և վրչ ճերմակ: Ահա ասանկով վիճարանութիւնն բնավ չըլլար, գըլուխներն առաջվան պես անփոփոխ կը փնտնէ և միայն Ֆեսերը կը փոխվին, և այն ալ յերկու տարին անգամ մը:

Հոս տարին յերկու հարյուր հիսուն որ կը տոնեն և կը հանգչին: Վրչ վրք կը փափաքի հարստութիւնն դիզելու, փառք վաստկելու և համբավ հանելու. ամեն մարդ կը փափաքի ձուկ դիզելու, ձուկ վաստկելու և ձուկ հանելու. տկար ստամոքս ունենալով՝ վրչխարի կամ կովու միսը կը դաչի իրենց: Յեթե իրենց սիրտերուն մեջ քիչ մը դարոցասիրութեան յեռանդ ունին՝ ան ալ կը մարի այն գինիչին, զոր կը խմեն ձուկին վրա և վոր կը թափվի իրենց յեռանդին վրա: Յեթե ողի խմելին՝ թերևս յեռանդն բորբոքեր. բայց ասոնք ուրիշ թաղերու ազգայիններուն պես յերեկոները գինեատուններու մեջ շատ չեն անցուներ, այլ քանի մը զավաթ խմելով՝ իրենց տունները կերթան:

Ասոնց սովորութիւնն է՝ ամեն գիշեր կամ ամեն կիրակի կամ տոնի որերն մեյմեկ տուն հավաքվի և զըոսուել: Ասոնց խոսակցութիւնն ընդհանրապես կը կազմվի նարտե կամ խաղի թուղթի Շատ անգամ ալ նավամատուցի զըոսարանին մեջ նարտ կը խաղան հրեաներու հետ, վորոնցմէ զվարճախոսութեան դաս ալ կառնեն Աճի²⁵⁸ վրճով: Նարտ կամ թուղթ խաղալու ատեն կորսնցնողը իրավունք կունենա ուզածին և կրցածին չափ հայոցութիւնն ընելու. վաստկողը կատարչալ լուութիւն պիտի պահէ և յերբեմն քթին տակին պիտի խնդա, ընկերն ալ ավելի բարկացնելու համար: Հայոցութեան մասին՝ այս թաղն պահապանողական կուսակցութեան կը վերաբերի:

Այս թաղը կը բնակեր վսեմափալ և բարձրապատիվ Ստեփան փառա Ասլանյան, վոր, ինչպես հայտնի չէ՝ Յերուսաղեմի հաշիվները անձնանվիրաբար քննելու համար յերկու հարյուր վոսկի ոսմանչան առավ վեհանձնաբար:

Կոկիկ յեկեղեցի մը կա հոս, վոր կոկիկ և գեղեցկաճայն քահանաներ ունի, բայց կոկիկ ջերմեռանդներ չունի:

Իգական սեռն ալ գրեթե արականին պիս կյանք կանցունեն. ուսումնասիրութ, ան վրա գաղափար ունենալու պատրաստություն չունի դեռ: Որվան կեսը կանցունեն տապիկելով այն ձուկերն, վորք արականն կուղղվին: Ինչպիս Բերականության, նույնպես ալ Գուղկունճուքի մեջ արականն նախապատիվ ե իգականն. հոս կինն չուր երկանը յիտեն կերթա, մինչդեռ Բերայի մեջ ասոր հակառակն ե և երկն կնոջը յիտեն յերթալու ստիպված ե, ըստ սովետարանին, թե «թողցե այր զհայր և զմայր չուր և յերթիցե զհետ կնոջ չուր»:

Գուղկունճուքի կիները աշխատասեր են: Նորաձևության մասին Իճատիեյեն կառնեն իրենց դասերը:

Բամբասանք ընելու տրամադրություն չունին շատ. իսկ հագուստի մասին բամբասովելու րավական հարմարություն ունին:

Գուղկունճուքի ողջ հոտած ձուկ կը հոտի և կը ստիպե հոն դացողն չուր քիթը բերանը ծամածոելու: Ողին պատճառափն ե, վոր ընդհանրապես Գուղկունճուքիները ծամածոած չերես ունին:

ԺԸ.

Ա Ր Տ Ա Ք Ի Ն Ք Ո Ւ Մ Ք Ա Բ Ո Ւ

Արտաքին Քում Քարուն բոլորովին տարբեր ե ՚հերքին Քում Քարույեն, ինչպիս վոր ամեն մարդու ներքինն տարբեր ե արտաքինն: Քում Քարույի ներքինն ոճ ե, իսկ արտաքինն աղափի:

Քում Քարույի ներքինն ոտարեն կը փախչի, իսկ արտաքինն անոր կը փակչի. որինակի համար, չեր տեղվուլս նավամատուցին վրա գտնվիս՝ բոլոր նավավարներն շուրջդ կը պատեն և զգեստներեդ կսկսին քաշել ու քաշքշել ըսելով:

— Սամաթիս պիտի յերթաս, աղա, չեկու տանիմ

— Յեկուր յերթանք, պարոն:

— (Ականջդ ի վար) Ո՛ւր պիտի յերթաս, բարեկամ:

— Դուն անոր ահանջ մի կախիր. անոր նավակը ծակ ե տակին ջուր կառնի:

— Մտիր, աղա, մտիր. մեկ հոգի կուզեմ, չեկուր շուտ մը յերթանք:

Փառք տուր աստուծո, յեթե առանց զգեստդ պատառվելու կամ մեկ կողմդ կոտրվելու՝ կարողացար նավակի մը մեջ նետել ինքզինքդ. իսկ ընդհակառակն, յեթե նավակ չմտար և յետ դառնալ վորոշեցիր՝ ահանջներդ բաց և մտիկ ըրե հետևյալ ուղերձներն, վորք յետևեդ կուղղվին:

— Թող տուր, պե, նավակ մտնելու դրամ չունի:

— Ինչո՞ւ չունենա... տնտեսագիտության դար ե հիմա. տապալակ ուխտի-ով²⁵⁹ (քախելով) ավելի շուտ կերթա:

— Աղա, կոշիկներդ թեիդ տակն առ, վոր չպատռին:

— Վոտներդ ալ կռնակիդ վրա դիր, վոր չհոգնին

Թաղիս աղգալիններն գրեթե ընդհանրապես կամ ձկնորս են,

կամ նավավար, կամ ջրհանկիր և յերբեմն ալ յերեքն միանգամայն են:

Ասոնք ուրիշ թաղերու ազգայիններու պես չեն, վոր կարծեն թե քաղաքական խնդիրները լուծվելուն պես՝ Պիսմարք իշխանը պիտի գա և իրենց հացագործին ստակը պիտի տա. ուստի քաղաքական գործերու վրա խոսելով չեն անցուններ իրենց ժամերը: Ասոնց նրբին կացութիւնը այն ատեն կը խանգարվի, յերբ տանը տիկինը հիվանդանա, և արտաքին գործերն ալ այն ատեն կը վաթարանան, յերբ Ամբակում յեղբայրն տկարութիւն ունենա և չկարենա գործի չերթալ: Յիրք նավակին թին կը կոտրվի՝ Ամբակում չեղբոր համար նավային ցույցի նշան ե, իսկ յերբ նավակը խորտակվի՝ արտաքին միջամտության նշան ե. այլ յերբ անառակին մեկն յուր կնկանը սիրտը գրավել փորձե՝ պատերազմ կը հրատարակե և թող չտար, վոր ուրիշ մը իր յերկրեն մաս մը գրավե առանց արշուճահեղութիւն:

Թաղիս ազգայինները քաջ են. յետեւեդ չեն ըներ այն խոսքը, զոր չին համարձակիր յերեսդ ի վեր զրուցելու: Հավատաբար են իրենց խոստմանը. չեթե խոստանան քեզ ապտակ մ'իջեցնելու՝ անմիջապես կը գործադրեն զայն:

Ասոնք դպրոցասեր և չեկեղեցասեր են. առանց ուսումնական ըլլալու՝ ուսման հարգը կը ճանաչին և իրենց զավակներու կրթութիւնը համար կուտան իրենցմե պահանջված գումարը, ինչպես նաև չեկեղեցվուն պաշտօնութեանը համար չեն զլանար իրենց լուծման:

Վնչ նարտ կը խաղան և վնչ թուղթ. գիշերները զրոսանքի կամ մարտարգելութեան համար յերբեմն իրենց կիները կը ծեծեն:

Խմելով կը խմեն ողին:

Կիներն ալ ճիշտ ալրերու պես են— աշխատասեր և անկեղծ: Ասոնց ներքինն շատ պարկեշտ ե, իսկ արտաքինն, վոր ալլանդակ հագուստներով կը ներկայանա՝ ներքինին հակապատկերն ե: Թեև իրենց թևերը, կուրծքերը և սրունքները բացած փողոցի մեջ լաթ կը փռեն, սակայն դարձյալ վերադասելի են այն շատ մը կիներին, վորք գոց թևերով, կուրծքով և սրունքներով տան մեջ լաթ կը փռեն: Այս կիները շատ անգամ իրարու հետ կը ծեծվին և կը հաշտվին:

Ասոնք ուրիշ կիներու վրա սա առավելութիւնն ալ ունին, վոր ազգը շատցնելու համար մեծ զոհողութիւն, անձնանվութիւն կընեն. յուրաքանչյուր կինն առ նվազն տասնվեց աղաներէ մայր կոչվելու պատիվն ունի:

Յերկու հարյուրի մօտ տուն կա: Այս գումարը տասնևութով բազմապատկելով՝ կունենանք յերեք հազար վեց հարյուր հոգի: Տեր աստված աճեցուցե և բազմացուցե:

Ներքին բերքն ե ընտիր հայնութիւն:

ԱՍԳՅՈՒՂ

Այս գլուղն իրավունք ունի պարծենալու այն մեծ տուններովն, վորոնց մեջ ամիրաներ կը բնակելին ժամանակավ և վորք այժմ զորանոց չեղած են մուկերու: Հարկ չի, կարծենք, կրկնել, թե ամիրաներու հաջորդեցին մուկերն, և հետևապես, մուկերը կը գործեն այժմ՝ ինչ վոր կը գործեյին չերքեմն ամիրաները:

Կենդանութեան նշան տված ըլլալու համար միայն այս թաղը միշտ շարժման մեջ է. շարժում՝ վոր կը կայանա թաղական փոխելու, հոգաբարձութիւնն ընտրելու, դասատու փոխելու և չերքեմն ալ պատրիարք փոխելու մեջ:

Թաղեցին միապետութեամբ կը կառավարվեր՝ չերք Բարմաք Քարուլի²⁶⁰) բնակիչները թաղականի պաշտոն կը վարեյին: Ուրիշ փողոցներու բնակիչները չեյին կարող թաղական ընտրվիլ. վորովհետև Բարմաք Քարուլի աղաներն, վեց տարի թաղականութիւնն ընելէն չեղքը, յերբ որինաւորապէս հրաժարեյին՝ իրենց գահաժառանգ զավակները կը բազմեցունէին այն աթոռին վրա, վոր թաղական կը կոչվի և վորուն վրանստիւշտները կը փափաքին: Իսկ չերք Պողոս պատրիարքին որով մեծ հեղափոխութիւն տեղի ունեցավ՝ միապետական կառավարութիւնն փոխվեցավ հանրապետականի: Այս թվականն ի վեր կոչկարներն և ջրհանկիրներն են, վոր մեծ ազդեցութիւն կը բանեցունեն թաղականի ընտրութեան վրա: Միապետական կառավարութեան ատեն թաղականը վեց տարի պաշտոն կը վարեր և չեր գործեր վոչինչ. իսկ հանրապետութեան ատեն թաղական մը հինգ որեն ավելի չե կարող պաշտոն վարել:

Թաղեցին արգարև կը շարժի՝ բաց չերք զայն շարժող գտնվի. յեթե ինք իր գլխուն ձգելու ըլլա՝ տարիներով կը քնանա: Թաղիս մեջ շարժող չերիտասարդներ շատ կը գտնվին, չերք խնդիրն այնպիսի բանի մը վրա ըլլա՝ վորու մեջ անձնական կիրք շատ գտնվի և գպրոց բնավ չգտնվի: Յերքեմն Ներսեսյան վարժարանն

ընկերներուն նախանձը կը հուզեր, իսկ այսոր ընկերներուն վրա նախանձիւ տրամադիր է: Ժամանակավ գեղին հրահանքին և տաճիկներին աշակերտ կընդունեն, իսկ այսոր անոնց վարժարաններուն աշակերտ կուտա: Այն ատեն թաղեցին ուրիշ սիրտ ունեն: Շատ հավանական է:

Գլուղիս ազգայինները մեծ ջանք ցույց կուտան առաջն առնելու համար այն վնասին՝ վոր նշուլական է. իսկ մեծ անհոգութիւն կը ներկայացնեն այն վնասին՝ վոր բարոյական է, չգիտնալով անշուշտ վոր բարոյական վնասն ալ կը ծագի նշուլական վնաս, ինչպես վոր բարոյական շահն ալ կը ծագի նշուլական շահ — կաղաչեմ, մի բարկանաք, տեր յերեսփոխաններ: — Այսպես, չերք թաղին մեջ հրդեհ պատահի՝ ամբողջ թաղիցին տունն դուրս կը վազեն և կրակը մարելու համար կարողութենն վեր կաշխատի. իսկ չերք վարժարանն բարոյապես մոխիր դառնա՝ վոչ մեկ թաղեցին գլուխը պատուհանն դուրս չհաներ: Թաղեցիւն ուղղութիւնն վարժարանին վրա հրավիրելու ամենն գլուխն և կտրուկ ձամբան. — վարժարանը նախ կազով թրջելու յի և լուցկիով մը բռնկենելու չի գալն. ամբողջ թաղեցին գիշերազգեստով կը վազեն վարժարան և կրակը մարելու կաշխատի: Մոռնալու չե սակայն, վոր Հասգյուղցին լուցկիի պես մեկն ի մեկ հայրենասիրութեամբ կը վառի, կը բորբոքի չերքեմն. յեթե այս բորբոքումն անմիջապես ոգուտ քաղես՝ կրնաս իրմե ստակ հավաքել, մանրերկրորդ մը անցնելուն պես՝ Հասգյուղցին կը մօրի: Վրեննայի ամենն գեղ լուցկիներուն տեսակեն է Հասգյուղցին, բռնկիլն ու մարիլը մեկ է. մինչև իսկ չերքեմն սիկառ մը վառելու համար անոնց քսան հատը մեկն բռնկեցնելու չե:

Այսոր հինգ վարժարան կա գլուղիս մեջ .. մըցումն վորպես թե հառաջադիմութիւնն պիտի արտադրեր... հինգ վարժարանն աշակերտ մը չեյնէր տարին:

Հասգյուղցին ինքնիրմե բանի մը ձեռնարկելու հանդգնութիւն չունի, իսկ չերք զրգուող մը ըլլա՝ այն ատեն ծայրահեղութեան կը դիմէ:

Լուսավորյալ յերիտասարդներ կան հոս, վորք իրարու հետ չերկար ատեն բարեկամ չեն կրնար մնալ:

Ասոնց բարեկամութիւնն շարաթ մը միայն կը տես և այս պայմանաժամը լրանալուն պես իրարմէ կը բաժնվին: Յիս ասոնց

բարեկամութիւնն քեզ չուխալե շինված Բաճրալոնի կը նմանցնեն՝
շարաթե մը կը մաշի և որ մ'ալ քիչ մը ուժով նստելուդ պես՝
յերկուքի կը բաժնվի և շապիկդ յեակեդ կերևա: Բաճրալոնին
ալս կերպ բաժնվելուն ընդհանրապես կըսեն. «Բաճրալոնս բաց-
ված է»։ Հասցյուղցին ալ լիբր իր մեկ բարեկամե բաժանվի՝ կրսե-
մանք բացված ենք»։ Իսկ Հասցյուղի մեջ մտերիմ բարեկամ կը
ճանչցվի աչն մարդն՝ վոր յուր ընկերին ուրիշէ մը դանակոծումը
կը տեսնե և չտեսնելու համար ճամբան կը փոխե: Յերբ ալս մարդուն
հանդիմանես յուր կամավոր կուրութիւնն՝ քեզի կը պատասխանե.
— Իմ սիրտս փափուկ է. լիբր կը տեսնեմ վոր բարեկամներես
մին ցալ ունի՝ սիրտս գեշ կըլլա:

Յեթե ալս պատասխանով դո՛հ չըլլաս՝ ուրիշ մ'ալ կուտա քեզ:

— Յեղբայր, լես աղատամիտ մարդ եմ. կարծիքներու աղա-
տութիւնը կը հարգեմ:

Հասցյուղցին վո՛չ շողոքորթ է, վո՛չ կեղծավոր և վո՛չ աղա-
տախոս. բարեխառն բարք մ'ունի:

Հարատեութիւնը հոս միմիայն վեճ հարուցանելու մեջ
կը գտնվի:

Ասոնք չերբ շոգենալ նստին՝ նախ կխոսին սոխի վրա, լետքը
խնդիր կը հարուցանեն փայտի վրա և վերջը հարցապնդումներ
կընեն ածուխի վրա. մինչդեռ հրեան դրամիւրու գիներուն վրա
կը խորհրդակցի և հոնչը վաճառականութիւնն վրա:

Գեղիս կիներն ընդհանրապես գեղեցիկ են, պարկեշտ և
միտնգամայն ազատ: Ասոնք կաշխատին կամ մետաքս քաշելով
կամ գինվորականի ճերմակեղեն կարելով: Պտույտը շատ կը
սիրեն: Հոս միայն ապորինավոր ամուսնութիւններ տեղի ունենան,
որինավոր ամուսնութիւնն արդիւլիւս է, և գլուղը լի լի ամու-
րիներով: Ամեն անոնք, վոր աղչիկ կը փախցունեն՝ հոս կուգան
ապաստանելու:

Հաղարի չափ տուն կա հայու, յեթե յուրաքանչյուր տունեն
ամեն ուր մեյմեկ հոգի թաղային խնդիր հարուցանե՝ ամեն ուր
2,77 խնդիր կունենա թաղը:

Ներքին բերքն է մայրապետներ և հայրապետներ:

Բժիշկները շատ կը գովեն գեղիս ողջ. բժիշկներու վկայու-
թենեն կընաք մակարերել անշուշտ, վոր գյուղս առատ հիվանդ-
ներ կը մատակարարե Ասիղեպիոսի աշակերտներուն:

Ի.

ԳՆԱԼԸ ԿՂԶԻ

Նախ և առաջ խոսինք այս կղզվույն մեկ հրաշագործութեանը
վրա, վորուն՝ ալանատես յեղած են շատերը: Այս հրաշագործու-
թեան վրա խոսելով՝ մեր նպատակն է ծառայութիւն մը մա-
տուցանել ամեն անոնց, վորք կը փափաքին կղզվույն մեջ գե-
տին ծախու առնել:

Գիտնալու յեք, վոր կղզվույն մեջ գետինները շարժուն են
և կը քալեն:

— Մենք այդ հրաշքին չենք հավատար:

— Թերահավատ եք ուրեմն:

— Թերահավատութիւնն չենք ընդունիր:

— Շատախոսութիւն ընելու մամանակ չունիմ. բաժն ա-
ղացուցցներով և կենդանի վկաներով կարող եմ հաստատելու:
Այո, գետինները կը քալեն: Ուստի անոնք վոր կղզվույն հարա-
վային կողմը գետին ունենալ կուզեն՝ պարտավոր են հյուսիսա-
յին կողմեն գետին ծախու առնել: Քանի մը որվան մեջ այդ գե-
տինը գեպ լի հարաւ. ճամբա կիսնե: Անոնք վոր ծովեզերքին
վրա գետնի տեր ըլլալ կուզեն, ծովու մեջ քանի մը հազար կան-
գուն գետին առնելու յին: շարժվան մը մեջ այդ գետինը ծովեզեր-
քին վրա կուգա կը հաստատվի: Սա՛ ալ մտքե հանելու չէ, վոր
յեթե գետին մը ծախու առնելու ըլլաս՝ չորս կողմը պատ քա-
շկու լես, վասն զի յեթե պատով չըրջափակես դո՛ւ, ա՛յնչափ
կը քալե, վոր ծովեն անցնելով՝ Բարթալ²⁶¹ կերթա և յերբեմն
ալ ա՛յնչափ կերթա, վոր բոլորովին անտեսանելի կըլլա:

— Բայց լճնչպես կը քալեն այս գետինները. ընավ հալա-
աալիքս չգար:

— Յեթե չես հավատար՝ փորձի համար քանի մը հարյուր
կանգուն տեղ առ և կը հավատաս:

— Ուրիշն այդ գետինները քաղցնե՞ղ մը կա:

— Չգիտեմ, բայց բարեկեցութեան մի կը սեր, թե կղզիւուն գետիններն անիւլի վրա դրված են: Կրնաս զանոնք տանիլ՝ ուր վոր ուզես:

— Այդ անիւլը դարձնե՞ղ մը կա արդե՞ք:

— Հարկավ:

— Այդ դարձնողը կրնամ ինձի ներկայացնել:

— Ի՞նչ պիտի ընես:

— Պեչուք տերե ²⁶²) տուն մը ունիմ անպիտի թաղի մը մեջ, վոր բնավ հարգ չունի. չիթե ալդ մարդն իմ տունս Պեչուք տերեյի ծովեզերքն քաղցունե՞հ հազար վոսկի կուտամ իրեն: Կը քալե՞ արդե՞ք:

— Կղզիւուն մեջ վոչ միայն կը քալե, ալ կը վազե. բայց չը գիտեմ թե Պեչուք տերեյի մեջ ալ կը քալե:

— Շատ բան, շատ բան, գետինին ալ քալելը բնավ լսած չունեյի. ըսել է թե ալդ կղզիւուն բնակիչներն չեն շարժիր, կը պառկին և կը քնանան:

— Ինչո՞ւ:

— Վասնդի ալդ չիրկրին մեջ, ուր գետինը կը շարժվի՝ մարդերը պարտավոր են շարժվիլ:

Թողունք ալ այս շարժման խնդիրն և դառնանք կղզիւուն: Այս կղզիւուն վրա կատարյալ ծանոթութիւն մը տալու համար՝ կը հիշեմ քեզ բժշկի մը պատասխանը, զոր տված է շոգենավի մեջ յուր մեկ բարեկամին, վոր Գնալը կիրթար: «Կը զարմանամ թե Գնալը ինչո՞ւ աչքափ կարեւորութիւն կը տրվի, ըսավ բժիշկը. հոն ուրիշ բան չկա՝ չիթե վոչ չընա՞ր մը և Ասապա եֆենտի մը»: Ասապա եֆենտին, վոր ազգային չրեւսութեան ալ է՝ կղզիւուն վրայ պետն է: Ով վոր ցավ կամ դատ ունի՝ անոր կը զիմե, վոր խրատելով և հաշտեցունելով չեա կը դարձունե զանոնք: Կղզիւուն մեջ ամենին կը հարգվի իրեն չիրեցազուն բնակիչ և հշուրասեր մարդ մը, վոր Թաղական խորհրդո ալ անդամ է:

— Ասապա եֆենտին ալ գետինները կը քալեն:

— Չէ, անոր գետինները ծուլ են, բնավ չեն շարժիր և կը մնան ուր վոր են:

— Կիրակի առավոտները չընա՞րք տակը կերթան կղզիւուն

բնակիչները, վորք ձմեռը քառասուն տունե և ամառը վաթսուն յոթանասուն տունե կը բաղկանան: Հոս ձմեռը չրեստունի չափ տուն կա հայու: Անցյալները կղզիւուն և թաղականին մեջ վեճ մը ծագեցավ, վոր հաշտութեամբ վերջացավ: Յերեսուն աշակերտի համար չիրկու վարժարան կա, մին թաղային և մյուսը մասնաւոր: Թաղային վարժարանը կը կառավարվի բարի քահանայե մը, վոր չիկեղեցիւն ալ քահանան է, և աշխատող դասատու յե մը, վոր չիկեղեցիւն ձայնավորն է: Այս վարժարանին մեջ Յեղիշեն ²⁶³) թարգմանող աշակերտներ կան, ինչպես նաև ավետարանը հասկցող աշակերտներն են: Մասնավոր վարժարանին ալ դասատու տնօրէններն են չիրկու պարկեշտ յիդրայրներ, վորք կը մըրցին թաղային վարժարանին հետ: Յերեսուն աշակերտի համար չիրկու վարժարան... հառաջագիմութեան նշան չէ այս...

Կղզիւուն բնակիչներն չիկեղեցի չեն յիրթար. անոնց միայն մտմտութիւն է, թե ինչպես կարելի յի տասը փարա արժեք ունեցող մեկ բանը քառասուն փարայի ծախել: Ամառվան յեղանակն անցունելու համար կղզի գնացողներուն ալ միայն մտմտութիւն է, թե ինչպես ընեն, վոր կղզիւուն բնակիչներուն հետ առեւտուր չընեն: Ասոր համար է, վոր անոնք իրենց միսը, չեղը, պանիրը, հացն ու ջուրը Պոսեն կը տանին իրենց հետը:

Հոս բնավ շուկ չկա. փողոցներու մեջ կատունները կը պըտըտին և տուններու մեջ ալ մուկերը: Կղզիւուն մեջ առատ կով կա. բավական եղ ալ կը գտնվի, ինչպես նաև աքեր: Այս կովերն, եղերն և աքերն կանանչ խոտ և ծառ չեն թողուր կղզիւուն մեջ: Յեթ լուսին չիղած գիշեր մը կղզիւուն մեջ պտըտիլու յինեա՝ կովերը մազերդ կը փրցունեն, մարգագետին կարծելով գուլիդ. մեկ կողմե դուն կը քալես մյուս կողմն ալ կովը մազերդ կը կտրե:

— Կովը չհասկնար, թե մարդ էս:

— Գիշերը ինչպես պիտի հասկնա:

— Դալիկեդ չհասկնար:

— Կարծեմ հիշողութեանդ շատ տկար է. քիչ մը առաջ չըսինք, վոր գետիններն ալ կը քալեն հոս:

Բնիկ կիները գեղջկական կյանք կը վարեն. վոչ պճնասիրութիւն գիտեն, վոչ բամբասանք և վոչ արտասանման յատուկ:

Ողբափոխութեան համար ուրիշ թաղերէն լեկողներն ալ ծովե-
զերքին վրա պտըտելին և կոշիկ հինցունելին զատ՝ գործ տեսած
չունին: Ծովեզերքին վրա շաբաթ և կիրակի իրիկունները շատ
բազմութիւն կըլլաւ: Այս հրապարակն բոլոր մշուս գեղերու հրա-
պարակներէն ամենէն պարկեշտն է:

Կղզվույն ողն աջնչափ մաքուր և առողջարար է, վոր լեթե
բժշիկ մը գա հոն՝ յիւրկու որվան մեջ կը մեռնի... անոթութենէն:

ԽԱ.

Պ Ո Յ Ա Ճ Ի Գ Յ Ո Ւ Ղ

Այս գյուղին ազգայինները ժամանակաւ աջնչափ կը քնա-
նային, վոր շատ մը բժշիկներ իրենց չքանացող հիվանդները հոս
կը դրկեյին: Վոմանք ալ կը պնդեյին, թե Յեպիմենիդեսը ²⁶³ հոս
ծնած ըլլաւ: Չհավատալու բան չկ'ս. իրենց շատ քնանալուն ա-
մենահզոր մեկ փաստն ալ այս էր, վոր հոն բնավ թաղականի
կոիւ լսված չեր. յեթե չքնանային՝ կարիւր չեր սիթե, վոր կոիւ
չհանելին և իրենց աղաղակներովն լրացիրներու եջերը չլցնեյին:

Բացք քանի մը ժամանակե ի վեր այս գյուղն արթնացած և
շնորհիւ յերիտասարդութեան, վոր ընկերութիւն մը հաստատած է՝
գյուղին վարժարանը հառաջ տանելու համար, և վոր վերջեր
յուր հաշիւեցուցակն ալ հրատարակած է:

Գյուղիս հայերը շատ ուժեղ ստամոքս ունին. անոնց յու-
րաքանքչաւուն վոյխար մը կարող և ուտել լեթե ուրիշի մը տունը
ճաշի հրավիրվի: Համեղ կերակուրներն ալելի կախորժին քան
թե խոսարաններն և լսարաններն:

Պոլաճի գյուղիցն շատ կը սիրե յուր անունը փոխել: Կա-
լապետը Քարլո և Մկրտիչը Պարիսը կըլլան հոն: Շաբաթե մը լետքը
նորեն կը փոխվին անոնք և ժամ կամ Բոլ կըլլան, և մարդս կը
ստիպվի ամեն շաբթու առաջին որն յուր բարեկամն հարցունել:

— Այսորվան անունդ ի՞նչ է:

— Ժովեմ: Քուկի՛նդ:

— Մարքեմ:

Չվարճութիւնը շատ կը սիրեն, ամիս մը շարունակ կրնան
ուտել, խմել և յերգել, առանց ամենափոքր անհանգստութիւն
մը զգալու:

Հոս սա աղեկութիւնը կա, վոր իրարու միս չեն ուտեր և
իրարու հետ շատ սիրով են: Յեթե յերբեմն պատահի իրարու

հետ վիճի բռնվիլ՝ քառորդի մը կը հաշտվին և զրոյսն բնաւ միջա-
մառություն չեն ընդունիր, իրենց անկախությունը պաշտպանե-
լու համար։ Ասոնք ընդհանրապէս այնչափ իրարու քիթ մտնե-
լով կը խոսակցին, վոր հեռւանց տեսնողն կը կարծես, թե իրենց
խոսակցությունը քթի վրա չե։

Կրնանք վոմանք թեպէտեւ իրենց անունները չեն փոխեր,
բայց այնչափ կը փոխեն կերպարանքն, վոր ցերեկին չես ճանչ-
նար այն կինն, զոր առավոտուն տեսած ես, վոչ ալ ցերեկոյին
կը ճանաչես այն աղջիկն, զոր ցերեկին տեսած ես։ Միորինա-
կությունն այս գոյովին մեջ շատ ձանձրություն կը պատճառե,
և մենք կը զարմանանք, վոր Պոյաճի գոլղցին ինչպէս կը համ-
բերե և շարաթը անգամ մը տուն չփոխեր։ Խնդրենք աստուծմե,
վոր այս մոլությունն թաղականներուն և վարժարանը կառավա-
րող անձներուն վրա չգործադրվի։

Իգական սեռն շատ կը սիրե ճաշակով հագվիլը և ճաշակով
բամբասիլը։

Ամառվան չեղանակին մեջ շատ տեղերե կուգան հոս ողա-
փոխութեան համար։ Ժամանակաւ ուխտի կերթային, հիմա մի-
այն ողափոխութեան կերթան։

Գլուղիս հաջ տուներուն թիւը ճիշտ չը գիտցվի, բայց
վաթսունի և յոթանասունի մեջ տեղը կը կարծվի։

Ողը խիստ ե, այսինքն միապետական ե, իսկ բնակիչները՝
մեղմ են։

Գլուղիս անունն վոմանք կը յենթադրեն, թե ատենոք կի-
նիքը հոս պոյանեւ. կը շինեն և իրենց չեղանակներուն, մաղերուն և
աչիւրուն կը քսեն չեղեր։ Յես չենթադրութեամբ ուրիշներուն
մեղքն առնելու կը վախնամ։

ԻՅ.

Ղ Ա Լ Ա Յ Ի Ա

Ղալաթիո սահմանն ե—հարավն քսակահատներ, արևելքն
գլինովներ, հյուսիսն վոճրագործներ և արևմուտքն չերգիչ աղ-
ջիկներ։

Դրաճի կողմն սահման չունի. մոլություններու մասին ան-
սահման ե։

Դաշտի վրա շինված ըլլալով՝ ամառը գրեթե միշտ ցամաք
ե. իսկ ձմեռը՝ թաղիս չերեք քառորդը ծով կը դառնա և մեկ
քառորդը ցամաք կը մնա։ Այս թաղը չերկու տեղագրություն
ունի, մին ամառվան իսկ մյուսը ձմեռվան. ամառվան տեղագը-
րությունն առաջնորդ բռնելով յեթե ձմեռն այս թաղին մեջ
պտըտիլ ուզես՝ ջուրերու մեջ կը խլղվիս. իսկ յեթե ձմեռվա-
նոյն ամառ ատեն հոս շրջադայիս՝ նավդ ցամաքը կը նստի։
Արդ, մեծ զգուշութեամբ քալելու չես այս թաղին մեջ, վորպէսզէ
վտանգի մը մեջ չիչնաս։

Գլխավոր լինն ե Ղալաթիո աշտարակը, վոր բարեւոյնի աշ-
տարակ ալ կրնա կոչվիլ՝ չերեք քաղաքական տեսակետով նայվի
հոն։ Հրդեհի նշանը կը տրվի միշտ այս լիննն, վորուն զաղա-
թը ձյուն չգտնվիլ բնավ, այլ միայն կրակ, և ասոր համար
հրաբուխ լիւ ալ կը կոչվի։

Ջերմուկներն են գլինետուններն, վորոնց մեջ մարդ չափեն
ափիլի կը քրտնի։ Հանքային ջուրերն են. ապսենթ, մասսիֆա,
ֆոնլաֆ և ալլն։ Գլխավոր ջերմուկն ե Բոմիսիոն խանը, ուր ֆոն-
սոլիսի վրա գործ կը լինի։ Ամենն ափիլի քրտնցնող ջերմուկն
ե այս, վորուն մեջ շատերը կը մտնեն ուժ առնելու համար, և
ուժաթափ դուրս կիչնեն անկե։

Թաղիս ամենն մեծ ճամբան այն ե, վոր ուղղակի մինչև Մի-
ջագուղ կը տանի, չեթե քրանվեյի կառքերուն մեկուն տակը չմնա
մարդ։

Կրոնքը շատ ե. գործածականը հայտնի չե։

հետ վիճի բռնվիլ՝ քառորդե մը կը հաշտվին և զրոսեն ընտով միջա-
մաություն չեն բնդունիր, իրենց անկախութունը պաշտպանե-
լու համար։ Ասոնք ընդհանրապես այնչափ իրարու քիթ մտնե-
լով կը խոսակցին, վոր հեռվանց տեսնողն կը կարծե, թե իրենց
խոսակցութունը քիթի վրա չե։

Կիներեն վոմանք թեպետև իրենց անունները չեն փոխեր,
բայց այնչափ կը փոխեն կերպորանքն, վոր ցերեկին չես ճանչ-
նար այն կինն, զոր առավոտուն տեսած ես, վոչ աչ ցերեկուն
կը ճանաչես այն աղջկին, զոր ցերեկին տեսած ես։ Միորինա-
կը ճանաչես այս գյուղին մեջ շատ ձանձրութուն կը պատճառե,
կռթումն այս գյուղին մեջ շատ Պոյաճի գյուղցին լինչպես կը համ-
և մենք կը դարմանանք, վոր Պոյաճի գյուղցին լինչպես կը համ-
բերե և շաբաթը անգամ մը տուն չփոխեր։ Խնդրենք աստուծմե,
վոր այս մոլութունն թաղականներուն և վարժաբանը կառավա-
րող անձներուն վրա չգործագրվի։

Իգական սեռն շատ կը սիրե ճաշակով հագվիլը և ճաշակով
բամբասիլը։

Ամառվան չեղանակին մեջ շատ տեղերե կուգան հոս ողա-
փոխութեան համար։ Ժամանակավ ուխտի կերթային, հիմա մի-
այն ողափոխութեան կերթան։

Գյուղիս հալ տուններուն թիվը ճիշտ չը գիտցվի, բայց
վաթսունի և յոթանասունի մեջ տեղը կը կարծվի։

Ողբ խիստ ե, այսինքն միապետական ե, իսկ ընակիչները
մեղմ են։

Գյուղիս անունեն վոմանք կը լենթադրեն, թե աստենոք կի-
ները հոս պոյանե. կը շինեն և իրենց չեքսներուն, մազերուն և
աչիւրուն կը քսեն չեղիր։ Յես լենթադրութեամբ ուրիշներուն
մեղքն առնելու կը վախնամ,

ԻՌ.

Ղ Ա Լ Ա Յ Ի Ա

Ղալաթիո սահմանն ե—հարավեն քսակահատնիր, արևելքեն
գինովներ, հյուսիսեն վոճրագործներ և արևմուտքեն չերգիչ աղ-
ջիկներ։

Դրաճի կողմեն սահման չունի. մոլութուններու մասին ան-
սահման ե։

Դաշտի վրա շինված ըլլալով՝ ամառը գրեթե միշտ ցամաք
ե. իսկ ձմեռը՝ թաղիս չերեք քառորդը ծով կը դառնա և մեկ
քառորդը ցամաք կը մնա։ Այս թաղը չերկու տեղագրութուն
ունի, մին ամառվան իսկ մյուսը ձմեռվան. ամառվան տեղագր-
ութունն առաջնորդ բռնելով յեթե ձմեռն այս թաղին մեջ
պտըտիլ ուզես՝ ջուրերու մեջ կը խլդվիս. իսկ յեթե ձմեռվա-
նոցն ամառ ատեն հոս շրջագայիս՝ նազի ցամաքը կը նստի
Արդ, մեծ գոլշութեամբ քալելու չես այս թաղին մեջ, վորպեսզի
վտանգի մը մեջ չիչնաս։

Գլխավոր լինն ե Ղալաթիո աշտարակը, վոր բարելոնի աշ-
տարակ ալ կրնա կոչվիլ՝ չերեք քաղաքական տեսակետով նազի
հոն։ Հրդեհի նշանը կը տրվի միշտ այս լիննն, վորուն զազա-
թը ձյուն չգտնվի ընտով, այլ միայն կրակ, և ասոր համար
հրաբուխ լեռ ալ կը կոչվի։

Ջերմուկներն են գինետուններն, վորնց մեջ մարդ չափեն
ափիլի կը քրտնի։ Հանքային ջուրերն են. ապսենք, մասսիֆա,
ֆոնյաֆ և այլն։ Գլխավոր ջերմուկն ե Բոմբախոն խանը, ուր ֆոն-
սոլիսի վրա գործ կը լինի։ Ամենն ափիլի քրտնցող ջերմուկն
ե այս, վորուն մեջ շատերը կը մտնեն ուժ առնելու համար, և
ուժաթափ դուրս կինեն անկե։

Թաղիս ամենեն մեծ ճամբան այն ե, վոր ուղղակի մինչև Մի-
ջագյուղ կը տանի, չեթե քրաւիլի կառքերուն մեկուն տակը չմնա
մարդ։

Կրոնքը շատ ե. գործածականը հայտնի չե։

Բնակիչն Ե Լեռնամուկութուն. Թիֆլիս վարոյ չգիտցվիր:

Թաղիս ողբ բնավ կարեւորութուն չունի. ամենքը կը հարգեն Քաթիսիոն խանին ողբ, վոր շատերուն կը քննեն և սակայն ամենուն ալ սիրելի չի:

Թաղիս մեջ բնիկ հազիվ քսանըհինգ կամ յերեսուն տուն կա Հայու: Պանդուխտ յեղբայրներն, վորք ստորիերկրյա տիղեր կը բնակին հոս՝ ամեն կիրակի որերը Թաղին յեկեղեցին կերթան և զանձանակներուն ստակ կը ձգեն: Յեթե Թաղեցիներուն մնար՝ շատուց ծախված եր յեկեղեցին, վոր այսոր շատ յեկամուտներ ունի:

Այս յեկեղեցվուն Թաղական խորհրդարանին մեջն եր ժամանակավ Ղալաթիո ոճախը: Այս յեկեղեցվուն մեջ կրլլան ազգային Յերեսիոխանական Ժողովո նիստերն, վորք ամեն արժանիք ունին Ղալաթիո աշտարակին մեջ տեղի ունենալու:

Հոս բարձրացած և կեդրոնական վարժարանն, վոր դեռ բացված չի:

Ղալաթիացին տասներկու տարիներն ի վիր կը վափաքիր վար առնելու յուր Թաղականն, վոր ազգային շահերուն ջերմ պաշտպան ըլլալով՝ չեր թողուր, վոր քիչ մ'ատեն ալ ուրիշները Թաղականութուն ընեն և խնդան: Իսկ այս տարին Թաղեցին հաջողեցավ հրաժարեցնել իր Թաղականն, վոր լալով հեռացավ խորհրդարանէն: Լնտրվեցավ ուրիշ Թաղական խորհուրդ մը, վորուն անդամներուն մեջ անշահասիր մարդիկ կը գտնվին, սակայն ասոնք ալ դասատուներու փոփոխութունը շատ կը սիրեն և գրեթե շաբաթ չանցնիր, վոր առանց պատճառի դասատու չը փոխեն:

Հոս և կեդրոնական Թանգարանն, վոր ըստ ծանուցման՝ շաբաթը յերեք որ բաց և և ըստ իրողության՝ շաբաթը ժամ մը միայն բաց է՝ սիկառա խմել ուզողներուն:

Այս Թաղն և Միացյալ րնկերութեանց — գրասենյակն, վոր յերկու ամսվան մեջ յերկու գործադիր ժողով տեսնելու պատիմն ունեցավ: Աստված չիրորդեն պահե:

Վերջապես այս Թաղն կեդրոնական ըլլալով՝ շատ դուրսութուններ կուտա մեզի՝ հոն յերթալու և շաբաթը քանի մը անգամ ազգային խնդիրներու վրա կռիվներ հարուցանելու:

Ի՞նչ.

Գ Ո Ւ Ր Ո Ւ Չ Ե Շ Մ Ե

Այս գլուղին Գուրուչեշմե կոչվելուն պատճառն են գեղին աղբյուրներն, վոր բնավ չեն վազեր:

Գեղացին աղբյուրը կը շինե, բայց անոր ջուր բերելու հոգ չընեն:

Միայն աղբյուրներուն հետ չե, վոր այսպես կը վարվի, յուր վարժարանին և յեկեղեցվուն հետ ալ նույն ընթացքն ունի:

Այս գլուղին ազգայիներն ալ՝ քան կախատին յեկեղեցվուն պաշտաութանը, վոր անցյալները յեկեղեցվուն մեջ շաբաթ մը կաթիլ մը չեղ չկար: Յերե քահանան իմացուց իրենց, թե յեղը հատեր է՝ ասոնք սրճարանի մը մեջ հավաքվեցան՝ խորհրդակցելու համար:

— Ի՞նչ, կըսեք, յիղբայրներ, յեկեղեցվո յեղը հատեր է:

— Ի՞նչ կըլլա յեղեր, թող առանց յեղի կատարվին արարողութունները:

— Յես ալ համակարծիք եմ. արարողութունն առանց յեղի ալ կըլլա:

— Յերեկ ատեն կանթեղ վառելն ի՞նչ նշանակութուն ունի:

— Շուսլութունն է, շուսլություն:

— Մեր քահանան ալ աշխատակ մարդ մ'է, Դիոգինեսի պես ցերեկ ատեն կանթեղ կը վառե:

— Առավոտները մութուն կը սկսի յեկեղեցին, և անպատճառ լույս պետք է:

— Լուսնի լուսովը թող կարդա:

Յեվ վերջապես վորչում կը տրվի, վոր քահանան քիչ մը անտեսապիտական որենքներով վարվի:

Վարժարանին գալով՝ Գուրուչեշմեցին դասատու կը բերե, բայց ամսական չտար: Շատ դասատուներ մինչև այսօր թաղական խորհրդարանը կերթան իրենց մնացած ամսականներն ու՝ զեւրու համար և չառնելու համար:

Կիրքն ալս գեղացիներուն մեջ չափազանց ըլլալու չե, վոր իրենց մեջ համաձայնութիւն գոյացնելն միշտ անկարելի չեղած ե:

Հոս յերեսուն—քառասուն տուն կա Հալու. չեթե ութսուն տուն ըլլար՝ ամեն ոք նոր կոթիւներ պիտի ծագեցին:

Կիւներն ալրերեն ավելի դպրոցասեր և յեկեղեցասեր են. բայց իրենք իշխանութիւն չունենալով՝ լուծիւն պահելու ստիպւած են:

Կիւներն շատ չեն սիրեր պտույտն. այն պատճառով, վոր պտուտելու տեղ չկա:

Ողջ շատ աղեկ ե գեղին բարձունքին վրա, իսկ ծովեզերքի հին աղեկ չեն: Ոգին ազդեցութեան շնորհիւն ե, վոր վերի կողմին աղգալիներն ավելի աղեկ են քան վարիններն, և չեթե վերիններն վար իջնան կամ վարիններն վեր չենն՝ ողափոխութեամբ իրենց բնավորութիւնն ալ կը փոխեն:

ԻՊ

Ե Յ Ո Ի Պ Ս Ա Ս Տ Վ Ա Ծ Ա Ծ Ն Ա

Ս. Յեղիալի Եյուպը պտուտած ենք, քիչ մ'ալ Աստվածածնա՝ Եյուպը շրջինք:

Այս թաղն ձեռներն աշխարհես քաշած ե. քալլ մը հառաջ չերթալու կամք չունի, և չեթե չենք սխալիր՝ աշխարհ չեկած ըլլալուն վրա ալ զղջացած ե: Յեթե կարելի ըլլար՝ չերկնից դիմ բողոք կը բառնային ասոնք, թե ինչո՞ւ զիրենք աշխարհ ղրկած ե:

Այս թաղեցին վերջին ծալը բարեպաշտ և ջերմեռանդ ե. քիչ կուտե, շատ կաղոթե:

Դաստիարակութիւնը չսիրեր, ուստի կարևորութիւն չտար վարժարանին. թեպետև չերիտասարդներին վոմանք կը ջանան թաղին մեջ ուսման սեր տարածելու:

Այրերն և կիւներն հուսահատ վիճակ մ'ունին. ընդհանրապես իրենց գլուխներն միշտ ի խոնարհ կը բռնեն, վորպես թե մեկե մը հանդիմանված ըլլային:

Պետք ե գիտնալ, թե ասոնք ծուլ չեն, կաշխատին, բայց մեքենաբար և միշտ կը մնան հոն՝ ուր վոր են:

Աստուծո մոտ և սատանայ հետի չեն և այնչափ յերկուցած են, վոր չեթե Ս. Յեղիա անդիլի թաղին մեջ յերկաթի տախտակն քիչ մը ուժով շարժե՝ ամենքն ծակե ծակ կը փախչին մուկի պես:

Ասոնց մեջ գիրութիւն չկա. ընդհանրապես նիւար են, բայց քաջառողջ:

Արեւցութիւն չունին, ջուր կը խմեն միայն:

Լավ չերազ կը մեկնեն. այս թաղին մեջ մարդ չկա, վոր ա-

մեն գիշեր քանի մը հարյուր յերազ չտեսնե: Որ մը ծերերեն մեկը կըսեր:

— Այս գիշեր մինչև լույս աչքերս չգոցեցի. բայց վորչափ ալ յերազ տեսա:

Կերևի թե ասոնք իրենց արթուն յեղած ատենն ալ յերազ կը տեսնեն: Յեվ յես չպիտի դարձանամ աչտուհետե, թե ինչո՞ւ յիրքեմն քանի մը ամիսներ յերազ չեմ տեսներ. վասնզի Եւուպ-ցիները կը տեսնեն իմ տեսնելիք յերազներն, և կամ այնչափ շատ յերազ կը տեսնեն, վոր մեզի յերազ չմտար տեսնելու:

Շատ տուներու մեջ Պլնձե քաղաք,²⁶⁵) Յերազհան²⁶⁶) և վիճակահանութեան գրքեր կը գտնվին, բայց Համպուրկի վիճա-կահանութեան չեն գտնվիր:

Հագուստի մասին ալ բնավ փոփոխութեան չե կրած այս-թաղն լուսահոգի Հակոբ Պատրիարքի որեն ի վեր:

Այսու ամենայնիվ կիներն, թեպետև աշխատասեր և հավա-տարիմ՝ զիրար բամբասելու մասին ալ ծուլ չեն,

Ողբ շատ թեթև է, և այս թեթևութեանն ալ այդ միլիոնա-վոր յերազներեն առաջ չեկած է:

ԻՆՏ.

ՊՈՅՈՒՔՏԵՐԵ

Գիշուդ մի, ուր ողափոխութեան համար կերթան ընդհանրա-պես, բայց երկ փոխելու համար գացողներ ալ չեն պակսիր: Գրեթե ամենեն հարուստներն են, վոր այս գլուղը կերթան ամառներն և շալաութեամբ կյանք կանցուցեն. շատերն ալ հարուստ կոչվելու համար կերթան հոն:

Շատ գեղեցիկ տուներ կան ծովեզերքի հրապարակին վրա: Կիներն այն տուներուն գոները կը բանան և այն զիրքով կը նստին գավթի մեջ, վոր անցնողները կը տեսնեն անոնց ամուսին-ներուն նշուխական և մարմնական հարստութեանը:

Գիշերները շատ բազմութեան կըլլա այդ հրապարակին վրա, բազմութեան սիրահարութեաններու: Այդ հրապարակին վրա նոր սերեր կստեղծվին. հոն կըլլան խոսկապներ, նշանտուքներ և հարսնիքներ. և ինչո՞ւ չըլլան. ամեն մարդ հոն աղեկ ժամ անցունելու համար կերթա. անանկ չե, Մարթա տուտու:

Բնիկ ազգաւորներն քիչ են հոս և ունին ախոռի պես տեղ մը, վորուն անունը վարժարան դրած են և ուր կերթան գեղին տղաները՝ ապականյալ ոգ ծծելու համար: Վարժարանն վողոր-մեղի վիճակի մեջ է.

Գեղացին ալ յուր վարժարանեն նվազ խղճալի չե, վոր աչիւր ունի և չտեսներ, ականջ ունի և չլսեր, իսկ բերան ունի և կուտե: Անիրավութեան չնենք. այս վարժարանին վրա այն ատեն հար-ձակինք՝ յերբ թաղային կանոնավոր վարժարանի մը հանդիպինք մեր պտույտներուն մեջ:

Բնիկն չեկեղեցի ալ չերթար. ողափոխութեան համար գեղը գնացող ազգայիններն են, վոր կիրակիցե կերակի չեկեղեցի կեր-թան և քիչ մը ստակ կը ձգեն:

Գեղիս ազգայններուն մեծագոյն մասին գործն եւ սրճարաններու մեջ քաշվիլ եւ նարտ կամ թուղթ խաղալ: Պզտիկ մասն ալ ձուկ բռնելով կզբաղի:

Գլուզիս մեջ ազգային տեսակետով չեթե նշանաւոր եւ մեծ բան մը կա՝ ան ալ հարուստ ազգայնո մը պարտեզն եւ, վորուն դռները հասարակութեան յերբեմն կը բացվին եւ յերբեմն կը գոցվին:

Այս գլուզն շատ հարմար եւ ամեն անոնց, վորք միայն զվարճանալու համար չեկած են աշխարհ. ամեն տեսակ զվարճութուն կա հոն:

Այս գլուզը թեպետեւ խոնավ եւ, բայց գեղացիներուն զլուխները միշտ չոր են. չը գիտեմ, թե արեւու մեջ կտաքցունեն, թե փուռի մեջ:

ԻՁ.

Յ Ե Ն Ի Գ Ա Բ Ո Ւ

Սքանչելի ող ունի...

Յենի Գարուցին առաւիտտուն արթննալուն պես կզգա, թե յուր գլուխն վրան եւ եւ թե գողերը չին կտրած զայն. սակայն յերբ գլուխն վերցունել ուզե՝ հուսահատութուն կուգա յուր վրա, վասն զի գլուխն այնքան ծանր եւ, վոր չկրնար վերցունել զայն:

Արդյոք այս գլուխներն շատ մեծ են եւ ատիճ համար չեն կրնար վեր առնել զանոնք: Չեմ կարծեր: Արդյոք այդ գլուխները շատ լիցուն են եւ անդ պատճառով եւ վոր ծանրակշիռ են: Միթե չգիտեմ, վոր Յենի Գարուցի մեջ պարապ գլուխներն ալ, վոր թեթեւ ըլլալու ելին՝ ծանր կը կշռեն: — Թեթեւ յերիտասարդներու համար ինչ պատվական թաղ: — Արդ, Յենի Գարուցին յերբ անկողինեն յելնել ուզե՝ ուրիշ մեկը պիտի գա իրեն ոգնելու, գլուխն վերցնելու, վորպեսզի կարողանա կանգնիլ — հաշկական հատկանիշ — ապա թե վոչ շարաթներով կը պառկի: Յենի Գարուցիին գլխուն ծանրութունը ապացուցված եւ գողութեան դեպքով մը, վոր հետեւալն եւ. Յենի Գարուցի յերիտասարդ մը իր նշանածեն համբույր մը գողնալու համար՝ գիշեր մը անոր տունը կերթաւ: Աղջկան հալըն, վոր խավարչալ եր եւ չի ուզեր յուր ապագա փեսան հարսանիքեն առաջ տանը մեջ տեսնել՝ կիմանա, վոր փեսան դռնէն կամացուկ մը ներս մտած եւ, ուստի կերթա զայն հանդիմանելու: Փեսան յուր ապագա աները տեսնելուն պես՝ պատուհանէն վար կը ցատկեւ, գլխիվաչք գետին կիցնա եւ քանի մը բոպե ալ այնպես կմնա: Ահա ասիկ փորձված եւ, վոր Յենի Գարուցիին գլուխն ամբողջ մարմինէն ծանր եւ:

Սուչն թաղն յերկու վարժարան ունի, մին մանչերու եւ մյուսն աղջիկներու համար:

Այս վարժարաններն այժմ միացված են Գում — Գարուշի վարժարաններուն հետ և մեծ հույս կուտան, վոր ապագային մեջ ալ Հայտի կրնան լավագույն վիճակ մ'ունենալ՝ յեթե հոգաբարձութեան ուսումնական անդամներն իրենց դերը կատարելու վախճան:

Յերբ ազգային մեծ խնդիրներ յերկան կուգան՝ այս թաղն պատերազմի դաշտ կորոշվի: Սահմանադրութեան վրայոք վեճերուն և ուրիշ կարևոր խնդիրներուն համար կարևոր կոխներ տեղի ունեցած են հոս. անգամ մը կոխին այնքան ծանր կերպարանք առաւ, վոր Յենի Գարուշի մը գլխին ավելի ծանրացաւ և թաղին չեկեղեցվուն մեջ քսանեն ավելի անձեր վիրավորվեցան:

Նախորդ թաղական խորհուրդն, վոր վարժարանները բարեկարգելու պաշտոնով ընտրված եր՝ չեկեղեցվուն կից փողոցն բարեկարգեց և հասարակաց զվարճութեան համար չխնայեց և վոչինչ: Անոր շնորհիմն ե, վոր չեկեղեցվուն կից հրապարակը ծառերով զարդարվեցաւ և այժմ պատիւ ունի տեսնել չուր վրա պարոններ և որիորդներ, վորք ամառվան դիշերները հոս կը խմբվին և անմեղ զըռսանքներով ժամանակ կանցունեն: Նախորդ թաղական խորհուրդն չուր աշխատութեան պտուղն տեսնելով՝ բերնին ջուրերը կը վազցունե. թաղականն ե, վոր կը տեսնե պտուղն, սակայն յերիտասարդներն են, վոր կը քաղեն զայն:

Թաղիս ազգայիները չերկու կարգի կը բաժնվին. արհեստավոր և դուրակյաց:

Արհեստավոր մասն յուր պարապո ժամերն թաղին սրճարաններուն մեջ նարտով և թուղթով կը սպաննե: Հոս ընդհանրապես ի՛նչ յուզ կը խաղան և այս խաղին մեջ այնքան համբավ հանած են, վոր չեթե ուրիշ գեղերու մեջ ի՛նչ յուզի վրայոք վեճ մը ծագի՝ հոս կուգան վճիռ ընդունելու:

Արեւցութեան կողմէն նշանավոր չեն — կես ուրի խմելն յետքը կը դգան, թե գավաթ մը ողի խմած են — և բնավ չեն կարող մրցիլ իրենց սահմանակից տերութուններուն հետ... Թաղեցիներուն հետ պիտի ըսեյի...

Դուրակյաց մասը դրսեն հանդարտ կերեւա, բայց յերբ թաղային խնդիր մը ծագի՝ անմիջապես ասպարեզ կը նետվի:

Թաղիս կիներն պարկեշտ են և աշխատասեր: Ահա իրենց ծրագիրն. «Յերկուշաբթի՝ լաթ լվալ և չերեկոյին ձեռներն իրենց ամուսիններուն ցույց տալ:

«Յերեքշաբթի՝ տախտակ սրբել:

«Զորեքշաբթի՝ պատուհան մաքրել:

«Հինգշաբթի՝ կարկտել և քի տակեն մոմաւ:

«Ուրբաթ՝ ձերմակեղենները հարթել:

«Շաբաթ՝ խոհարանի վերաբերված գործերը տեսնել և բաշտիք չերթալ:

«Կիրակի՝ չեկեղեցի չերթալ և վերջը դիրար բամբասել»:

Թաղիս մեջ չերկու հարյուր վաթսունի չափ տուն կա հայու:

Հոս պարոնի տեղ տեղ կը գործածեն, բայց տեղ տեղ դեռ բան մը չեն գտած:

Ք Ա Ր Թ Ա Լ

Քանի մը որ առաջ Քարթալ գնացինք տեղվույն ազգային-ներուն վրայոք տեղեկություններ հավաքելու համար. բայց բարեբախտաբար թաղին մեջ մարդ մը չկրցինք գտնել բացի գինեպանների, վորք գինի կուտային մեզ ամեն անգամ, վոր իրենցմե տեղեկություն կուգեյինք: Բարեբախտաբար ըսինք, և իրավունք ունինք. վասնզի իմացանք, վոր թաղիս հայերն այգեգործ ըլլալով իրենց այգիները գնացած ելին աշխատելու: Յերանի թե բոլոր թաղերու հայերն այգեգործ ըլլային և սրճարաններու մեջ խաղերով չանցուցնէին իրենց թանկագին ժամերը: Ուստի չետ դառնալով՝ Պոլիս անցանք և հետևյալ տեղեկությունները քաղեցինք այնպիսի անձե մը, վոր լավ կը ճանաչէ Քարթալցիին և մանավանդ անոր գինին:

Քարթալցիին—ըսավ այս անձը,—ընավ հոգ չընեք, թե ազգային վարչություն կա, թե յերեսփոխանական ժողովն չընեք, ինչ վոր ընել պարտավոր ե, թե ազգային վարժարանները կիրքերու վառարան դարձած են և այլն. վասնզի ազգային վարչություն, յերեսփոխանական ժողով, ազգային վարժարան բառերն իրեն համար ոտարական են, և Քարթալցիին այն ատեն կը սիրե ոտարական՝ յեր վոր ութը դահեկանի ծախս անոր գինին՝ վոր դահեկան արժեք ունի. և վորովհետև Ազգային վարչությունն, յերեսփոխանական ժողովն և ազգային վարժարանները Քարթալ գնացած չեն գինի առնելու համար, այս պատճառով Քարթալցիին անծանոթ մնացած են:

Ոտարական մը Քարթալ մտնելուն պես՝ կը շրջապատվի գինեպաններեն, վորոնց չուրաքանչյուրն յուր գինին կը գովի և զրացվուցը կը պարսավի:

Հիվանդի համար հին գինի ունիմ պատվական—կըսե մին, և առողջի անգամ վնասակար գինի մը կուտա քեզի:

Սեղանի գինի ունիմ,—կը պոռա ուրիշ մը, ցույց տալով

գինի մը, վոր վոչ թե սեղանի, այլ աթուռի գինի չկրնար ըլլալ: Այսպես իրենց խոսակցությունն կամ ալգիի վրա կը դառնա և կամ գինիի վրա:

Քարթալցիին չեկեղեցասեր ե. ժամկոչը փառ ի ձեռին ամեն առավոտ դռները կը զարնե և կարթնցնե բարեպաշտ ժողովուրդն, վոր աղոթքին չերթա: Հայտնի չե, վոր փառեն թե աստուծոյ վախնալուն համար յեկեղեցի կերթան: Ինչ վոր ալ ըլլա՝ սա հայտնի չե, վոր կը սիրեն իրենց չեկեղեցին. թող մյուս թաղականներն ալ իրենց ժողովուրդներն վստիկաններու միջոցով չեկեղեցի բերել տան:

Թաղային վարժարանն, վոր շատ տարիներե ի վեր խեղճ եր, դասատու չունենալուն պատճառով՝ այժմ ալիլի խեղճ ե՝ դասատու մը ունենալուն համար: Վասնզի դասատու մը վարժարանն ներս մտնելուն պես՝ վեճն ալ քանի մը շաբաթեն կը մտնե թաղեցիին մեջ: Աս ընդհանուր որենք մի:

Կա հոս բարի քահանա մը, վոր շատ տարիներե ի վեր կարածե այս հոտն և շատ տարիներե ի վեր գինի կը ծախս —կաթողիկոսն չեթե Քարթալ գա՝ շաբաթվան մը մեջ գինի վաճառականութիւն կը սկսի.—պանդուխտ քահանա մի ալ կա, վոր գլուղին քահանային ոգնականն ե թե չեկեղեցի մասին և թե գինի:

Կիներն ալ ալբերուն պես այգիները կերթան գործելու: Ասոնք Պոլսո մյուս թաղերուն թերություններն դերժ են անոր համար, վոր ալգի մշակելն ժամանակ չեն կարող գտնել, թերություն մշակելու: Պարզասեր, աշխատասեր, հավատարիմ և բարի քրիստոնէիներ ըլլալու ստիպված են այս գեղին մեջ:

Հոս կը գտնվի այնպիսի հյուր մը, վոր իրեն զավակներն անոթի թողով՝ ուրիշներուն կիներուն և քուլերուն համար հանգանակություն կընե:

Թաղիս մեջ իբր հարչուր քսան տուն կա հայու: Ողափոխության համար ալկալ թաղերե հոս կուգան ամառներն և տենդ առնելով հետ կը դառնան:

Գլուղիս տենդը շատ գլխացավ կուտա. յերեք որը անգամ մը կը բռնե, իմ Պօլսիս պես, վոր յերեք որը անգամ մը կը հրատարակվի...

Շատերն ալ գինի առնելու համար կուգան և առանց գինովնալու չեն վերադառնար:

ԻԲ.

Գ Ա Ն Տ Ի Լ Լ Ի

Ահա գեղ մը, ուր լոյ՜ քոյեքա մտած եւ վոչ նորաձեւութիւն։
Հայու քսան եւ հինգ տուն կա։

Պ. Աբրահամ Այվազյան ²⁶⁷) քանի մը տարիներ առաջ հան-
գանակութիւն ընելով՝ հաջողած եւ կանգնել վարժարան մը, վո-
րուն մեջ թաղին տղաները միշտ կը կարդան այն բաները, զորս
կալանդեն մանկավարժներն նախնական դպրոցներու մեջ։
Ավելորդ եւ ըսել, թե կամ թաղին տղաները բնավ չեն մեծնար եւ
կամ թաղեցին աղքատ լինելով՝ դասատու յի մը ամսական վճարելու
կարողութիւնն չունի։ Գիտենք Վոր այս դպրոցին մեջ տարին
քանի մը անգամ պետքեկ կուտեն աշակերտները, բայց չգիտենք,
թե տարին քանի անգամ ծեծ կուտեն։

Գեղիս ազգայիններն մեծ մասամբ նաւավար են. չեկեղե-
ցին կը հաճախեն եւ գինետուն բնավ չեն յերթար։ Դիտողութեան
արժանի չե, Վոր հոգուտ Հայաստանի սովյալներու չերեսուն
վոսկի գոյացաւ այն նվերներեն, Վորք հավաքվեցան այս գյու-
ղին մեջ։

Կիներն յազմա կը բանին եւ ստակ շահելով յերբեմն իրենց
ամուսիններուն պարտքերն ալ կը վճարեն։ Կիներն եյին, Վոր
անցյալ տարի կովեցան գերեզմանատան մեջ գերեզմանի խնդրուցն
համար։

Ասոնք պարզասեր, աշխատասեր եւ հավատարիմ ըլլալով հան-
դերձ՝ ազգային զգացում ալ կը կրեն, իրենց աղջիկները միշտ
ազգային յերգեր կերգեն։

Ծեր քահանա մը ծեր ժամանակե մ'ի վեր քահանայութիւն
կը գործեւ եւ վեճի մը առիթ տված չե բնավ։

Գյուղիս բարձունքին կը մեկնին թնդանոթին այն լոթը

ձախներն, զորս չերը լսենք՝ մեր անկողիններեն կը ցատկենք եւ
փողոցը կը վազենք հասկնալու համար՝ թե հրդեհն ուր ե։

Նաւավարներն յերբեմն գյուղիս մեջ անանկ կտակներ կընեն
ազգին, Վոր կարծես թե կատակ կընեն. նաւավարի մը ըրած
կտակն մեր ամենէն հարուստներն իսկ չեն ըներ, ուսկից կը հե-
տելի թե գյուղիս մեջ ազգասիրութեան կրակը վառ ե միշտ։

Գյուղիս ոգն ե ջուրն այնքան առողջարար են, Վոր չեթե
մեկը շարաթ մը մնա հոս՝ հետեյալ շաբթուն կը պարտավորվի
թիկնաթոռն փոխելու ե ավելի ընդարձակն գնելու։

ՅԵՆԻ ՄԱՀԱԼԵ ՍԱՄԱԹԻՈ

Այս թաղը Սամաթիո ձագն ե և ամեն նկատմամբ չուր հորը
կը նմանի:

Հոս ալ թաղականի կռիւնէրը պակաս չեն, բայց հրաշագործ
Մկրտիչ յեպիսկոպոսի ²⁶⁸) շնորհիւ ալ ժամ կռիւները առաջվան
պես մշտնջենական չեն, ալ առժամանակյա: Վարժարանին դա-
լով՝ հայտնի չե, վոր թաղային վեճերու մատնված թաղի մը վար-
ժարանն գոհացուցիչ չկրնար ըլլալ:

Թաղիս այլերն և կիներն ազգային զգացում ունին, միջին
դասին ըլլալով՝ շողոքորթութուն չեն գիտեր և ճշմարտու-
թյունը բարձրաձայն կը խոստովանին:

Այրերն ողին կը սիրեն, ինչպես նաև գինին. ասոր համար
շատերն իրենց հետը լապտեր կառնեն, վոր չեթե ուշանան գինե-
տան մեջ՝ մութուն չստիպվին յերթալ իրենց տուները:

Հրաշագործը հոս հրաշքներ կընե և հիվանդներ կը բժշկե:
Ողը լավ ե, բայց թաղեցին ոգեն ավելի դրամը կը սիրե:

ՆԱՐԼԸ ՔԱՐՈՒ

Աղքատ թաղ մ'ե:

Ժամանակավ քանի մը հարուստ վաճառականներ իրենց մեջ
հոգաբարձութուն մը կազմելով՝ թաղին վարժարանը կը կառա-
վարեին. իսկ մեկ-յերկու տարի չե ի վեր ալ դե հոգաբարձութունը
լուծված ե. և թաղեցին ինք իր գլխուն կը կսռավարն չուր վար-
ժարանն, վոր ինչպես հայտնի չե՝ նախանձիկի վիճակ մը
չկրնար ունենալ. թաղային վարժարան մ'ըլլալուն պատճառով:

Այս թաղին յեկեղեցվուն ժամկոչներն այնքան արթուն ան-
ձեր են, վոր ուրիշ թաղերու գողերուն չեթե յեկեղեցական անոթ
պետք ըլլա՝ թաղիս յեկեղեցի չեն կառնեն կը տանին:

Թաղիս մեջ դրամով հարուստ ազգային չկա, բայց սրտով
ամենն ալ հարուստ են: Իրենց պարտավորութունը կը ճանա-
չեն՝ չեթե իրենց ներկայացուցիչն զայն, և ազգոգուտ ձեռնարկու-
թյուններու համար իրենց լուծան չեն մերժեր:

Թաղս ծովեղերցա ըլլալով՝ թաղեցին լավ լողալ գիտե... ո-
ղի մեջ:

Կիները աշխատասեր են, և չեթե պատուհաններուն նալիս
հոս ամեն ոք լաթ կը լվան. վասնդի իրենց տանը պատուհան-
ներին ամեն ոք ճերմակեղեն կախված են:

Ողը մեղմ ե, թաղեցվուն բնավորութեանը պես. իսկ չերբ
հարավը փչե և ծովն ալեկոծե՝ թաղեցին ալ ծովուն հետ կը կո-
րուսնե չուր հանդարտ բնավորութունը և ալիքներուն պես կը
կատաղի:

Այս միջոցին Նարլը քարուցիի մը առջևն մի քալեր փո-
ղոցի մեջ. դքեղ կը տապալե և կանցնի կերթա ալիքի պես:

ԼԱ.

Պ Ե Յ Ք Ո Ձ

Կեցցե՛ն Սահմանադրութիւնը...

— «Արի՛ք Հայկազունք հառաջ ընթանանք, սահմանադրութեան նոր բարե մ'ալ տանք»²⁶⁹);

Առաջին անգամ Պեյքողի մեջ արտասանվեցան վերոհիշյալ խոսքերն, բայց չորս հինգ տարի կա, վոր բարիք կտրեցինք Պեյքողին և ազգային հիմարանոցին առջև կուտանք Սահմանադրութեան մեր բարեքը:

Շատ նշանավոր յեղած ե Պեյքող Սահմանադրութեան տարեդարձային աչն հանդեսներով, վորք տեղի կունենային յուր դաշտավայրին վրա, ուր կը նավաքվին ազգասեր հայերն և իրարու բերենն կը հափշտակելին ճառերը, գինիի գավաթներն և Սահմանադրութիւնը:

Բնավ նշանավոր յեղած չե յուր վարժարանովն, վոր հեռի չե աշակերտները գոհացնել:

Թաղային կռիւներն յերբեմն չերևան կուգան և քանի մը շաբաթներ պտըտելն լետքը աներևույթ կըլլան, վերստին չերևնալու համար:

Թաղեցվուչն մեծ մասն անհոգ ե լեկեղեցվո և վարժարանի մասին. չերիտասարդութիւնն յերբեմն կաշխատի, վոր բարեկարգութիւն մտցունե վարժարանին և թաղականին մեջ. սակայն բարեկարգութիւնն առանց դրամի չըլլար, և մեր չերիտասարդութիւնն ալ դժբախտաբար առանց դրամի կըլլա:

Նավավարներ և ձկնորսներ առատ են: Ասորք սքանչելի գինի կը խմեն և պատվական ալ ձուկ կուտեն գինով վրա: Նախանձ և ատելութիւն չկա իրարու մեջ. ամենքը սիրով կը վարվին միմյանց հետ, և միշտ աչսպես սիրով մնալու համար ուխտ

ըրած են, վոր չխոսին թաղային խնդիրներու վրա, վորոնցմե, կըսեն, միշտ փնտրված ե իրենց բարեկամութիւնը:

Կիները տան գործերով կը զբաղին. քիչով գոհ կըլլան և մեծ պահանջումներ չեն ընեն: Պարկեշտ և հավատարիմ են, բայց կը գտնվին հարկավ այնպիսունինք ալ, վորք իրենց ամուսիններեն չերբեմն ապտակ կուտեն՝ ընդգիմախոս գտնվելուն համար:

Պեյքողին ողն ալ միշտ գովեստներով կը հիշվի... Ընդհանրապես ամեն թաղին ողը, վորչափ ալ գեշ ըլլա՝ միշտ այն թաղին վարժարանն լավ ե:

Մ Ա Ք Ր Ի Գ Յ Ո Ւ Ղ

Այս գլուղին մեջ միշտ փափաք մը կը տեսնվի հառաջադիմութեան, բայց հառաջադիմութեան բնաւ չտեսնվիր:

Տասը տարիէ հետեւ ամեն ջանք ի գործ կը դնեն իրենց վարժարանը բարեկարգելու համար, սակայն վարժարանը բարեկարգութեան չերես չտեսներ: Այս որերս վարժարանի հոգաբարձութեանը հրաժարական տվաւ յուր պաշտօնին, զոր ուրիշներն ստանձնել կուզեն և չեն հաջողիր: Վարժարանը բարեկարգելեն առաջ թաղեցվուցն սիրտը բարեկարգելու պետք կա:

Յեկեղեցատեղութեան հազվագիշտ ե թաղիս մեջ. ժամկոչը ուրիշ թաղերին մարդ կը կանչե յեկեղեցվուցն:

Բնիկ գեղացին արհեստավոր ե և վարժարանի վերաբերյալ խոսքերուն մեջ բնաւ չը խառնվիր: Կը գտնվին հոս վաճառականներ, վորք ուրիշ թաղերէ չեկած են հոս, կամ ողբափոխութեան համար կամ իրենց պարտատերերուն չերևալու համար:

Գեղիս զլխավոր զբոսավայրն ե Սաբրգ աղանքի կոչված զբոսավայրն, ուր սիրահարութեան դեպքեր շատ կը պատահին:

Գեղիս մեջ ջուր չկա, ուստի հոս կրնան չերթալ այն ծնողներն, վորք կը վախնան. թե իրենց տղաները ջուրի մեջ կիյնան և կը խղճվին, վասնզի խմելու խակ ջուր չգտնվիր. չերբեմն ծովուն ջուրը կը խմեն... լողալ սորվելու համար ծովը մտնողները:

Գլուղիս հայ տուններուն թիւը վորոշ չգիտցվիր. վասնզի որե որ ավելնալու վրա չե, ինչպես նաեւ աղգասերներու թիւն, վոր վալրկյանե վալրկյան պակսելու վրա չե:

Ֆ Ե Ր Ի Գ Յ Ո Ւ Ղ

Այս գեղին մեջ պատմական գարեջուր կը շինվի. ազգային գործերու վերաբերութեամբ գլուղացիին թմրութեան հառաջ չեկած ե այս ըմպելիքն, զոր շատ կը խմեն:

Քահանա մը կա, վոր կը կարդա այս յեկեղեցիին մեջ և կարդացած ժամանակը չերբեմն հետեւ կը նայի և յեկեղեցվուցն մեջ մարդ մը տեսնելուն պես գանձանակը կառնե և կարդալով կը սկսի պարտեցունել գանձանակն: Յեկեղեցվուցն մեջ այս քահանայն զատ մարդ տեսնելը հրաշքի կարգ անցած ե:

Հաղիվ հիսուն—վաթսուն տուն կա հայու: Վարժարանին մեջ աշակերտները կը կարդան Քերական, Սաղմոս և Նարեկ:

Բերայն հոս կերթան կենդանիները գարեջուր խմելու, և մեռյալներն ալ թաղվելու. վասնզի հոս փոխադրված ե Բերայի գերեզմանատունը:

Ողն այնքան աղեկ ե, վոր ամեն կիրակի մեծ բաղմութեամբ ամեն թաղերէ հոս կը դիմեն, քիչ մը ող և շատ գարեջուր առնելու համար:

Յ Ե Ն Ի Գ Յ Ո Ւ Ղ

Կամաց—կամաց ազնվականներու բնակարան կը դառնա ալս գյուղն և ազգատներու քավարան:

Գեղացին կաշխատի չուր վարժարանն և չեկեղեցին կանոնավորութեան սեջ պահելու, և կը հուսացվի, վոր իրեն նպատակին հասնի:

Պճնասիրութեան հոս մեծ դեր կը խաղա: Կինները Պեչուք Տերեյի կիններուն հետ մրցելու համար ամեն զոհողութեան կը նեն, և ալրերն ալ իրենց քսակները միշտ բաց կը պահեն՝ դոհացնելու համար իրենց կիններուն պահանջումները: Կինները որը չորս անգամ հազուստ կը փոխեն, վասնզի նորաձևութեանն ալս գյուղիս մեջ ամսե ամիս չփոխվիր, այլ չերեք ժամը մի անգամ:

Բամբասանքն հոս ֆրանսերեն տեղի կունենա:

Չեն պակսիր հոս ազգասեր և ուսյալ տիկիններ, վորք կը խորհին ազգին վրա... բրնձի փոշիյնց չետքը:

Ալրերն չերեկները տուն մը կը հավաքվին և վիսրով կը զբաղին: Կիններն ալ պարելով, կամ պտուղտ ընելով, կամ դաշնակ զարնելով, կամ չերգելով, կամ վիպասանութեան կարգալով կը զրոհուն: Տնական գործերն աղտխիններուն հանձնված են:

Ողբ մաքուր եւ Թերեմանը Եֆյաթի Տնորեն Պ. Ճիվելեկյան Բերային հոս կուգա չերեմն մաքուր ող առնելու Թերեմանը Հափաթիմ լեզվին փչելու համար:

Գյուղիս մեջ քառասուն տուն կա հայու, չորս հարյուր գլխարկ կնկան և չերկու հազար դույգ կոշիկ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ ԲՆԱՎ ՄԻ ԽՈՍԻՐ ՈՒ ՇԱՐՈՒՆԱԿ ՄՏԻԿ ԸՐԵ. — Ակնարկութեան և Պարոնյանի հրատարակած զավեշտական ամսագիրը «Թատրոն»-ի խափանման 1877թ:

² ՄԱՍԻՍԻ ՍՏՈՐՈՏԸ ԿԻՋՆԱՄ. — Պատկերավոր ձևով արտահայտում և իր աշխատակցութեանը «Մասիս» լրագրում:

³ ԿՆՔՎԱԾ ԶԻՆԱԴԱՆԱՐ. — Ակնարկութեան 1878 թ. ուսումնական զինադարի կնքման:

⁴ ԲՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԵՆ ԶԻՆՎՈՐ ԱՌՆԵԼ. — Տաճիկ կառավարութեանը իր քրիստոնյա հպատակներից զինվոր չեր վերցնում. դրա փոխարեն զանձում Եր զինվորական տուրք: 1908 թ. միայն, յեր հաստատվեց տաճիկական սահմանադրութեանը, վորոշեցավ և քրիստոնյաների զինվորադրութեանը:

⁵ Բ. ԴՈՒՌ. — Բարձրագույն դուռ Եր կոչվում տաճիկական կենտրոնական կառավարութեանը:

⁶ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ. — Կամ ազգային պատրիարքարան, անունն և այն պաշտոնական հիմնարկի, ուր նստում և Կ. Պոլսո հայոց պատրիարքը (Ձ 26) և ուր կարգադրվում են տաճիկահայոց կրոնական, ազգային և քաղաքական կյանքին վերաբերող խնդիրները:

⁷ ՄԱՍԻՍԻ ԾԱՆ ԶԱԿԱՌԱԿ. — Այս ամբողջ նկարագրութեանը 1877 թ. ուսումնական պատերազմի հետ կապված զեպքերին և վերաբերում: Պարոնյանն ուղում և ասել, վոր սլավոն ուսանիլը պալքաների կողմից հառաջանալով փախչող թուրքերը թալանել են քրիստոնյաների չեկեղեցիները և չեկեղեցական սպանները Պոլսո վոսկերչատունը վաճառքի յեն հանել:

⁸ ՍԻՐԲԵՃԻ. — Պոլսո մի թաղը, ուր գտնվում և Յելլուպա մեկնող յերկաթուղու կայարանը:

⁹ ԲՍԱՆՆՈՅ ԹՈՒՂԹ. — Քսան զուրուհոց թղթադրամ. (Ձ 32):

¹⁰ ԵՇԸ. — ԱՅՆՁԱՓ ԱՆՈԹԻ ՅԵ ԽԵՂՃԸ — Սիբեիկ կայարանում (Ձ 8) հավաքված կենդանիների պարադան բավական մութ և հավանորեն Պարոնյան այսպես և վորակում փախստականներին. վորոնք փոխանակ մնալու ուս տիրապետութեան ներքո՝ հավաքվել են այստեղ և անթութեան ու սովի յեն մատնվել:

¹¹ ՆԻԿՈՂՈՍ ՄԱՐԳԱՐԵ. — Այս անունով Մարգարե գոյութեան չունի. ակնարկութեան և, անշուշտ, Պարոնյանի շրջանակին հայտնի, այժմ մեզ անհայտ մի անձնավորութեան:

¹² ԲՍԱՆ ՏԱՐԻՆ ԱՆԳԱՄ ՄԸ. — Այս արտահայտութեանն ակնարկ և 19-րդ դարում Ոսմ. կառավարութեան վարած պատերազմների, վորոնք կատարվել

են մոտ 20 տարվա ընդմիջումներով՝ այսպես—հունական անկախության պատերազմ (1815 թ.): Յեղիպտոսի փոխարքա Մահմադ-Ալի փաշայի կողմը (1832—39), իսկ իսկ պատերազմը (1855—56), ռուս տաճկական պատերազմը (1877—78):

13 ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽՆԴԻՐ. — Այս միջազգային խնդրի հնուցից հասնում է մինչև 1453 թ. յերբ թուրքերը զբաղեցին Կ. Պոլիսը՝ Նա տարբեր ժամանակներում ստացել է տարբեր ձև. բայց եսպես նշանակել է թուրքերի և նրա բնակիչների վերաբերող խնդիր:

14 ԻՆՔՆՈՐԻՆՈՒԹՅՈՒՆ, ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ. — Անարկուսիտն է Պալքանյան ազատագրված ժողովուրդներին (Հունաստան, Ռումանիա, Սերբիա, Պուլխարիա և Գարատաղ):

15 ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ ՅԵԿԱՎ. ՉՈՐԼՈՒՅՆ. — 1879 թ. ռուս-տաճկական պատերազմի հաջողության ռուս բանազնացների մասին և խոսքը՝ վորոնք Չորլուից (Պոլսի շրջ.) դարձավ պատերազմական տուգանք պիտի պահանջին թուրքերից:

16 ԹԱՅՄԶ. — Անգլիական քաղաքական թերթ, հիմնված 1785 թվին:

17 ԼՈՐՏ ԲԻԿՈՆՍՏԻՆՆԱՆ. — Այս տիտղոսն ստացավ Անգլիո թագուհուց Բենյամին Դիդլայից (1804—1881). Անգլիո պահպանողականների առաջնորդը՝ Նա միջամտեց 1878 թ. ռուս տաճկական բանակցություններին և խանդավորեց Ս. Ստեփանոյի դաժնագրության դործադրությունը:

18 ԹԵՐՄՅԱՆ. — Տաճկաց նավաշինարանը վոսկեղջյուրի վրա:

19 ԽՈՐԵՆ ՅԵՊԻՍԿՈՊՈՍ. — Գալիսիայի, Նաբալյի, Լուսինյան, հայտնի հռոմեացի, բանաստեղծ, թատերագիր (1841—1892):

20 ՆԱԽԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՅԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՅԱԿԱՆ. — Խորեն յեպիսկոպոս (Նաբ-Պիյ) այս վերնագրով դպրոցների զանազան աստիճանների համար հրատարակեց կրոնական դասագրքեր:

21 ՆԵՂՈՒՅ. — Գարտանելի կամ Չանաք Գալեյի նեղուցը, վորը միացնում է Մարմարա և Հոնիական ծովերը:

22 ԼՈՐՏ ՏԵՐՊԻ. — Ետվարդ-Հենրի Սմիթ, ծովային մինիստր Անգլիայի (1826—1893):

23 ՄԱՆՏԱ. — Միջերկրական ծովում կղզի՝ 220000 բնակիչներով, անգլիական սեփականություն և նրա միջերկրական նավատորմի կայան:

24 ՉԵՐՔԵՉՆԵՐ. — Ռուս-տաճկական պատերազմի ժամանակ Կովկասից տաճկաստան դաղթող բազմաթիվ չերքեզների մասին և խոսքը:

25 ՈՍՄ. ՅԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ. — 1877 թ. Սուլթան Համիտը ցրեց այս կարճատև յերեսփոխանական (ազգային) ժողովը և յերկրորդ կառավարեց միահեծան կերպով մինչև 1908 թ. յերբ Սելանիկի «ազատարար» բանակի ճնշման տակ յերկրին տվեց Բ. անգամ սահմանադրական իրավունք:

26 ՊԱՏՐԻԱՐԻ. — Պատրիարքը նախագահն է ազգ. բոլոր ժողովուրդի և ներկայացուցիչը նրանց գործադիր իշխանության, նա ընտրվում է ազգ. յերեսփոխանական ժողովի կողմից:

27 ԱՆԱՃԱՅՅԱՆ. — Համբարձում Ալաճաճյան, «Փունջ» լրագրի խմբագիր. (Ն 38):

28 ՍԵՐՎԻՍ. — Սերբիան լիակատար անկախություն ստացավ 1878 թ. Բերլինի վեհաժողովի վորոշումով: Այժմ ավելի ընդարձակ սահմաններով կոչվում է Յուգոսլավիա:

29 ՍԵՎ ԼԵՆ. — Կամ Մոնտենեկրո, կամ Գարատաղ, Չերնոգորիա. Բեռլինի վեհաժողովի վորոշմամբ հայտարարվեց անկախ. 1919 թվից ի վեր մտնում է Յուգոսլավիայի մեջ:

30 ՊՈՂԱՉԻՉԻ ՇՈՐԵՆԱՎ. — Այսինքն նեղուցամիջյան չորենավ, վոսկեղջյուրի մեջ սպասարկող չորենավերը. (Ն 33):

31 ՍԱՀՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ. — (Ն 25):

32 ԳՐԱՄԱՆԻՇ. — Թղթադրամ, կամ թուրք (Ն 9) անարկուսիտն է թղթադրամներին անկման, վոր պատճառ դարձավ բազմաթիվ անանկուսիտների:

33 ՇԻՐԲԵԹ. — Անունն է նավային այն ընկերության, վորի նավերն յերթեկում են վոսկեղջյուրի նեղուցին մեջ (Ն 30):

34 ԱՌԱՔՅԱՆ. — Պոլսո առաքյալի մասին և խոսքը:

35 Այս հատվածով Պարոնյանը անարկուսիտ է բուլղարներին յնքնորինություն ստանալը, վորով բուլղարները ուրախ են, իսկ թուրքերը՝ տրտում:

36 ԿԶՋԻՆԵՐ. — Իշխանաց կղզիները, Մարմարա ծովի մեջ՝ սակական ավելի դիմաց:

37 ՉԱՄՈՐԻՇՅԱՆ. — Հովհաննես Տերոյենց, կամ Հովհաննես պատվիկ, կամ Պրուսացի Հովհաննես Տեր-Կարապետյան, մատինագիր, ուսուցիչ, հասարակական գործիչ, Պարոնյանի «Ազգային ջոջեր»-ի հերոսներից մեկը. (տես Պ. III հ. 40):

38 ՓՈՒՆՉ. — Շաբաթաթերթ, հրատարակվել է Կ. Պոլսում, 1866—1906 թ. խմբ. Համբարձում Ալաճաճյան (Ն 27):

39 ԵՄԻՆ ԵՈՆԻՒ. — Պոլսո մի թաղամասը, Մարմարա ծովի յեվրոպական ափին:

40 ԼՐԱԿԻՐ. — Որաթերթ, հրատարակվել է Կ. Պոլսում 1875—1880. խմբ. Ո. Խոճառարյան և Ն. Թյուկալեյան:

41 ՂԱԼԱԹԻՍ. — Պոլսո մի թաղամասը, Մարմարա ծովի յեվրոպական ափին, վոսկեղջյուրի մուտքի մոտ:

42 ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՄՈՒՆ. — Ամսագիր, Չմյուռնիա, 1871—1921, հիմն. խմբ. Մատ. Մամուրյան և վորդի:

43 ԿԱՍՏՐՈՆ. — Վիլիամ Գլադստոն, անգլ. քաղաքական գործիչ, լիբերալ կուսակցության պարագլուխը, Լորդ Բիքոնսթիլի (Ն 17) ակոյանը. (1809—1898):

44 ՊԵՅՈՂԻ. — Կոչվում է և Բերա: Պոլսո յեվրոպական ցամաքամասի վրա այն թաղամասը, ուր գտնվում էին յեվրոպական դեսպանատները:

45 ԱՄՊԵՐ. — Անունն է Արիստոֆանի (IV դարուն մեր թվ. առաջ) մեկ կատակերգության, վոր յերգեծանք է Սոկրատի (Ն 47) դեմ:

46 ՍՏՐԵՍՏԻՍ. — «Ամպեր» կատակերգության մեկ հերոսը:

47 ՍՈՒՐԱՍ. — Հույն նշանավոր փիլիսոփա (468—400 մեր թվակ. առաջ):

48 ՄԱԼԻՅԵ. — Ոսմ. ֆինանսների նախարարություն:

49 ԴԵՍՊԱՆԱՅՈՐՆՈՒՐԴ. — Խոսքը այն վեհաժողովի (kongress) մասին
է՛ր Վոր 1878 թ. գումարվեցավ Բեռլինում:

50 ԴՄՐՏԱՆԵՂ. — Կամ Չանաք գալելի նեղուց. (№ 21):

51 ԳԻՍՄԱՐԿ. — Իսլան Ոտտո Բիսմարկ, Գերմանացի պետական հռչակա-
վոր կանցլեր. Գերմանական միության և կայսրության հիմնադրվածներից մեկը
(1815—1898):

52 ԱՅ-ՍՏԵՖԱՆՈ. — Կամ Սան Ստեֆանո. Մարմարա ծովի յեղրուպական ափին
մի ամառանոց, 1878 թ. այդտեղ կնքվեց ռուս-տաճկական զաջնադրությունը:

53 ՔԱՐԹԱՆ. — Մարմարա ծովի ասիական ափին Կ. Պոլսո հեռավոր մի
թաղը:

54 ՍՔԱՆԱՐԵՂ. — Մոլիեռի կատակերգության մի անձնավորություն, «Ա-
կամա բժիշկ»-ի մեջ:

55 ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ. — Յերեսսիսանական ժողովի կողմից ընտրված 14
կրոնականների ժողովն է, Վորին հանձնված էր տաճկահայերի կրոնական-յեկե-
ղեցական հարցերի վերին հսկողությունը:

56 ՓԱՐԻՋԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ. — Տեղի ունեցավ 1856 թ. Վորի գլխա-
վոր զբաղմունքներից մեկն էր բալքանյան հարցերը:

57 ՎՍՐԴՈՎՅԱՆ. — Հակոբ Վարդույան, արեմտահայ թատրոնի հիմնադրի-
ներից մեկը՝ Պոլսում:

58 ՈՐԹԱ ԳՅՈՒՂ. — Կոչվում է և Միջադուղ. Պոլսո մի թաղամասը Վոս-
փորի յեղրուպական ափին. այստեղ Մկ. Պեղիկթաղյանի և Հովհան Վանանդեցու
նախաձեռնությամբ հիմնված է «Միջադուղի թատ. Բարեսիրաց Ընկ.» այստեղ
են իրենց դերասանական առաջին մարդանքն ստացել Աղամյան, Սիրանուշ,
Հրաչի:

59 ՔԱՐԹԻՆ ՀՈՒՍՐԻ. — Ալեքսանդր Դյուլմա հոր մեկ թատերգությունը-
թրգ. Մ. Մամուրյան, Չմյուսնիս:

60 ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ. — Թաղեցիները կողմից ընտրված 7 անձերի
խորհուրդը, Վորի պարտականությունն էր կարգադրել տեղական դպրոցների և
աղքատների նյութական խնդիրները և հարթել վեճերը:

61 ՀԵՐԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՐԱԿԱՆ, հին հունական դիցաբանական
հերոս, հայտնի էր 12 քաջագործություններով: Պարոնյանն այստեղ ակնարկում
է Հերակլեսի հետեյալ վողբերգական վախճանը, նա էր վրեժխնդիր կնոջից դա-
վադրությամբ ուղարկված թունավոր շապիկը հագավ և ֆիզիկական անասելի
տառապանքներ կրեց և ինքն իրեն այրեց նախ լեռան վրա:

62 ՉՈՒԽԱՅԱՆ. — Տիգրան Չուխաճյան, արեմտահայ անվանի յերաժիշտ.
հայտնի էր Լեպլեպլիճի Հորհոր և այլ ոպերներով (1837—92):

63 ԱՐԱՐԱՏՅԱՆ ԸՆԿ. — Կրթական նպատակները համար Պոլսում (1878 թ.)
հիմնված ընկերություն:

64 ԴՊՐՈՅԱՍԻՐԱՅ ԱՐԵՎԵԼՅԱՆ. — Կրթություն տարածելու ընկերություն:

65 ԿԻԼԻԿԱՆ. — Կիլիկիո մեջ գտնվող հաստատելու համար կազմ
ված Ընկ:

66 ՄԻԱՅՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ. — Այս ընկերությունը իր գոյությունը պա-

հեց մինչև համալսարնային պատերազմը, արևելյան հայաբնակ բոլոր վայրերը
պատեց դպրոցական ցանցով և կատարեց խոշոր կուլտուրական գեր:

67 ԳԵՂՈՐԳ ԱՊՏՈՒԼԼԱՆ. — Այս Ապտուլաչյանն է, Վոր Մորթմանի «Պալտ-
յան բեկեռադիր արձանագրությունների ուսումնասիրությունը» խմբագրեց ու
վերածեց հայերենի, Կ. Պոլս 1872 թ.: Ապտուլաչյանը յերապրների անունով Կ. Պոլ-
սում կար հայտնի լուսանկարչատուն:

68 ՔՐԻՍՏՈՆԵՅԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԶԵ. — Քրիստոնյաների
վկայությունը տաճիկ դատարաններում ընդունելի դարձավ 1854 թվից է վեր.
Սուլթանի մասնավոր հրովարտակով:

69 ԼՐԱԳԻՐ. — Որադիր, Կ. Պոլս 1875—1880 թ. խմբ. Նիկ. Թուլպենյան:

70 ՔԱՐԱՏԱՆ. — (Գաղաղ) Մե լեռ (№ 29):

71 ԹԵՐՃԵՄԱՆԸ ԵՖՔՅԱՐ. — Հայաստան թուրքերեն որադիր, Կ. Պոլս 1878—
1884 թ. խմբ. Տ. Ճիլկեկյանի:

72 ԳԵՂՈՒՆԻ ԴԵՍՊԱՆԱՅՈՐՆՈՒՐԴ. — Բեռլինի վեհաժողովը, գումարված
1878 թ. ռուս տաճկական պատերազմի առթիվ:

73 ՄԵՂԱՎՈՐՅԱՆ. — Հակոբ. ապագային Հնչակյան դործիչ:

74 ՍՊԱՆԴԱՐՅԱՆ. — Կ. Պոլսում հայտնի ուսուցիչ. Թիֆլ. «Նոր-դար» թիթի
խմբ. Սպ. Սպանդարյանի յերապրը:

75 ԱՊՏՈՒԼԼԱՆ ՅԵՂԱՅՐԵՆԻ. — (№ 67):

76 ԱՐՇԱՆ. — Արաղի II անունով վողբերգություններ գրել են մի քանի
հեղինակներ. Թովմաս Թերգյան, Խորեն Նար-Պեյ, Սրապիոն Թղյան, Սեպուհ
լազ Մինաս, Մկ. Պեղիկթաղյան:

77 ՀԱՅԿ. — Հայկ Դյուլցազն անունով յերկու վողբերգություն գրվել են.
մեկը Գալուստ լճեցի Շարպետյանի, մյուսը՝ Ռոմանոս Սեանֆճյանի կողմից:

78 ՍԱՆԴՈՒՆՏ. — «Սանդ. կույս, վողբերգություն» հեղինակություն Թովմաս
Թերգյանի:

79 ՅԱՆԻՍ. — Կամ Յանինա, քաղաք՝ Մակեդոնիայում, այժմ պատկանում է
Հունաստանի:

80 ՄԵՂՈՒ. — Մեղու հայաստանի, ղարաթաթերթ, Թիֆլ. 1858—1886 թ.
խմբ. Պետ. Սիմեոնյան:

81 ՄՇԱԿ. — Որադիր. Թիֆլիս, 1872—1918 թ. հիմն. և խմբ. Գր. Արծրունի:

82 ՓՈՐՁ. — Յեռամայ հանդես, ապա ամսաթերթ. Թիֆլ. 1876—1881. խմբ.
Արգ. Հովհաննիսյան: «Փորձ»-ի մեջ առաջին անգամ տպված է Պարոնյանի «Հոս
Հոսի ձեռագիրը»:

83 ԽՏԻՎԻ ՀԱՐԵՄ. — «Խտիվ» կոչվում էին Յեղիպտոսի փոխաբանները,
վորոնք վերջին լամպերալիստական պատերազմից հետո՝ ստացան «Սուլթան» անուն-
դասը:

84 ՆԱԲՈՒՆ. — Իտալիո Նիաբոլ քաղաքը:

85 ԱՆԱՏՈՒՆ. — Այս անունն են տալիս փոքր Ասիային:

86 ԽՈՐԵՆ ՅԵՂԻՍԿՈՊՈՍ. — Խորեն յեպիսկոպոսը Նարպեյ, Գալֆայան և
Լուսինյան կոչվելու պատճառով՝ Պարոնյանն հեղինակը համար մի քանի անուն
էլ ինքն է ավելացնում:

87 ՔՍԵՐՔՍԵՍ. — Պարսից թագավոր (485—465 մեր թվականությունից

առաջ). նա հարձակվեց Հունաստանի վրա, առաջատակեց Ատտիկեն, բայց հետո պարտություն կրելով՝ փախուստի դիմեց: Յերբ նա պատգամավորներին միջոցով Աթենքի բանալիները պահանջեց, նրան պատասխանեցին. «Յեկ, ինքդ առ»:

88 ԻՆՍԻԴԻՏԱՐ.—Պոլսո հայաշատ մի թաղը. Վոսվորի ասիական ափին:

89 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.—Կամ ուսումնական հոգաբարձություն, ընտրվում էր քաղաքական ժողովից, զբաղվում էր դպրոցների ուսումնական խնդիրներով:

90 ՄՈՒՀԱՆՈՒՐ.—Գաղթական, Զերբեղ գաղթականների մասին և խոսքը:

91 ԱՎԵՐԱԿԻ.—Ֆրանսացի դերանական Վոլնեյի (1757—1820) աշխատությունը:

92 ԹՈՎՄ. ԹԵՐԶՅԱՆ.—Բանաստեղծ, արեւմտահայ թատրոնի հիմնադիրներից մեկը, հեղինակը Արազի Լ., Սանդուխտ կույս, Հովսեփի գեղեցիկ վոդեկեր-դուկաններին,

93 ԱՊՈՂՈՆ.—(Ապոլոն) ըստ հունական դիցաբանության՝ բանաստեղծության և արվեստների հայրը:

94 ԱՐՀԵՍՏ ՅԵՐԿԱՅՆԱԿԵՅՈՒԹՅԱՆ.—«Առողջ, յերկայն ու յերջանիկ ապրելու ուսումը», հեղինակություն Անտրեսո Փոփովիչ Սուչավացի բժշկի. Կ.Պոլիս. 1850 թ:

95 ՍԱՔՉԼՅԱՆ.—Հովհաննես Սարգսի. Կ. Պոլսո տաճկական համալսարանի յերբեմնի քաղաքատնտեսության դասախոս:

96 ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ.—Կրոնական և քաղաքական ժողովները միասին կոչվում էլին ազգային վարչություն:

97 ԴԻՈԴԻՆԵՍ.—Շնական, (կյունիկ, ցինիկ) փիլիսոփա, վոր արհամարհելով բոլոր վայելքները՝ մասն էր դալիս բոլորն և բնակվում էր տափառի մեջ:

98 ԱՆՏԻՍՓԵՆԵՍ.—Հուլյն փիլիսոփա, Սոկրատի (Ն47) աշակերտը, ճանական, դպրոցի գլխավորը, Դիոգենեսի (Ն 97) ուսուցիչը, (444—365 մեր թվականությունից առաջ):

99 ՍՊԱՐՏԱՅԻ ՈՐԵՆՍԴԻՐԸ.—Լիկուրգոս, վոր ապրել է IX դարուն, մեր թվականությունից առաջ:

100 ՄԱՂԱՔԻԱ ՎՐԴ. ՈՐՄԱՆՅԱՆ.—Մաղաքիա յեպիսկոպոս Որմանյան Կարեն առաջնորդը, իսկ 1896—1908 Կ. Պոլսո Հայոց պատրիարք. յեկեղեցական պատմաբան, (1842—1918):

101 ԱՐԵՎԷԼՅԱՆ ԲՈՒՄԵԼԻ.—Տաճկաստանի նախկին մի նահանգը, Բալքանյան թերակղզու վրա. Մարեցա և Տունջա գետերի հովիտների միջև, այժմ պատկանում է Բուլղարիային:

102 ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՍՍՐՈՒԹՅՈՒՆ, ՅԵՂԱՅՐՈՒԹՅՈՒՆ.—Ֆրանսական մեծ հեղափոխության նշանաբաններ:

103 ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒԶԱՆԴԱՅԻ.—Բանասեր. հեղինակը հայ-Ֆրանսերեն բառարանի, Կ. Պոլիս 1884 թ. մեռավ 1914 թ:

104 ՍՈՒՐԻԱ.—Ասորիք, (Սիրիա), գտնվում է Յեփրատի, Արաբիի և Միջերկրականի միջև, համախաղաղային պատերազմից հետո գտնվում է Ֆրանսիայի հովանու տակ:

105 ՄԻՏՅԱՏ ԲԱՇԱ.—Ոսմանյան նախարարապետ, առաջին սահմանադրության հեղինակը: Սպանված է Սուլթան Համիտի հրամանով 1883 թվին:

106 ԲՈՒՐՍՈՆՅԱՆ.—Մոլեբուի մեկ կատակերգությունը, գրված 1669 թ:

107 ՏՈՒԼԱՅԻՆ.—Ատրիական ծովի վրա նավահանգիստ, վոր 1878 թ. առհիկներըց անցավ Գարատաղին:

108 ԿՈՇԵՆ.—Կ. Պոլսո անդլիական դեսպանը:

109 ՅԼԼՏԸԶԻ ՊԱՆԱՏ.—(Աստղ պալատ). այսպես կոչվում էր Սուլթան Համիտի բնակած պալատը Կ. Պոլսում:

110 ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ.—(Ն 55):

111 ՈՍՄԱՆ ԲԱՇԱ.—Տաճիկ նշանավոր հրամանատար, Պիկիան (Ն 112) պաշտպանողը:

112 ՊԼԷՎԵԱ.—Պլեվնա կամ Պլիվա, 1877 թ. ուսաները պատմական նշանակություն ունեցող մեծ ճակատամարտերից հետո գրավեցին տաճիկներից այժմ բուլղարական քաղաք:

113 ԹԵՐԱՅԻՆ ՀԱՔԻՔԱՆ.—70-ական թվականների թուրք կիսապաշտոնական թեոթ:

114 ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԿՈ.—Ֆրանսայի մեծ բանաստեղծը, ոսմանիկ դպրոցի առաջնորդը. հեղինակը «Թշվառներ», «Փարիզի Նոտր Դամ» վեպերի, ինչպես «Հերմանի» «Կրոմիլ» «Մարիոն տըլոմ» և այլ հրամանների, (1802—1885):

115 ԱՆԱՔՍՏԱԿՈՐԱՅ.—Հուլյն փիլիսոփա, հոնիական դպրոցից, Պերիկլես և Սոկրատ համարվում էլին նրա հետեորդները:

116 ՅԵՐԵՄՓՈՒՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ.—Այսպես էր կոչվում տաճկահայերի ներքին խնդիրները վերաբերյալ այն որենսդրական ժողովը, վորը կազմված էր 140 ներկայացուցիչներից: Սրանցից 20-ը կրոնականներ էլին, մնացյալ 120-ը աշխարհականներ. 80-ը ներկայացուցիչ Պոլսո զանազան թաղերի, իսկ 40-ը՝ դավառներին հայություն:

117 ՄԵՐՆ ՎԱՐԴԱՆ.—Այս անունով վոդեկերգություններ գրված են հետեյալ հեղինակներից—Գարեգին Զափրաստյան, Ռորեն արք. Նար պեյ, Ռոմանոս Սեփեճյան, Տիգրան Ամիրճանյան, Տիգրան Մանուկյան:

118 ՄԱՍԻՍ.—1852 թ. Կ. Պոլսում Կ. Իսթիճյանի խմբագրությամբ հրատարակվող շաբաթաթերթ, վորը հետո իբր ամսաթերթ և իբր որաթերթ շաբաթականից մինչև 1900-ական թվականները:

119 ՊԱՍԿ.—Շաբաթաթերթ, Յերեսն, 1880—84 թ. խմբ. հր. Վասակ Բաջանյան:

120 ԲԵՌԼԻՆԻ 61-ՐԴ ՀՈՂՎԱՐԸ.—Տես Պեռլինի դեսպանախոսը (Ն 72):

121 ԱՐԱ ԳԵՂԵՅԻ.—Ըստ Մ. Ռորենացու առասպելների՝ անունն է հայոց մի նահապետի, վորի գեղեցկության սիրահարված է Ասորեստանի Շամիրամ թագուհին, Պարոնյան այստեղ կատակաբանում է:

122 ՌՈՉԻԼԻ.—18-րդ դարու կեսերից Յեփրոսյանում հայտնի դարձած դրամատեր մի ընտանիք:

123 ԺԵՂՎԻԹՆԵՐ.—Կամ Հիսուսյաններ. անունն է կաթոլիկ կրոնական մի կարգի, վորը հիմնված է 16-րդ դարում: Սրանք պապականության դրածիքներ են, ցրված աշխարհի ամեն կողմ, քարոզում են քրիստոնեություն և պապին հնազանդություն:

124 ՀԻՍՈՒՍՅԱՆՆԵՐ.—Տես Ժեղվիթներ (Ն 123)

- 125 ՌՈՒՄ-ԹՈՒՐԲԱՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ.—1877—78 թվի ռուս-տաճկական պատերազմը, վորի հետեանքով սուլթանական լուծից ազատագրվեցին պալքանյան փոքր ազգութիւնները:
- 126 ԱԶԳԱՅԻՆ ՅԵՐԵՄՓՈՒՍԱՆԱՆ ԺՈՂՈՎ.—Տես յերես Էջանական ժողով (№ 116):
- 127 ԻԶՄԻՐԼՅԱՆ.—Մատթեոս Իզմիրլյան, Սուլթան Համիտի որով պատրիարք Կ. Պոլսո, ապա արքայական, իսկ 1908 թվից կաթողիկոս ամենայն Հայոց (+ 1910):
- 128 ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ.—Վանեցի. խրիմյանի (№ 129) հակառակորդը: Այս յերկուսի հակառակութեան պատճառով Վանում առաջ յեկան «Պողոսյան» և «Ապողոսյան» կուսակցութիւնները:
- 129 ԽՐԻՄՅԱՆ.—Միտիլ խրիմյան. Վանեցի, «Հայրիկ» անվանյալ պատրիարք Կ. Պոլսո, Սուլթան Համիտի որով արքայական, ապա կաթողիկոս ամենայն Հայոց, հեղինակ մի շարք յերկերի, (1820—1907):
- 130 ՄԵՔԿԵ.—Մահմադականների սրբազան քաղաքը. Մահմետի ծննդավայրը:
- 131 ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՐՈՍՅԱՆ.—Իրավագետ. Բ. դրան պաշտոնյա, կենդրոնական վարժարանի խնամակալ:
- 132 ՊՈՍՆԱ.—ՀԵՐՍԵԲ.—Բոսնիա-Հերցեգովինայի տաճկաստանի նախկին հողամաս Բալկաններում, վորը 1878 թ. Բեռլինի վեհաժողովի վորոշմամբ մտավ Ավստրիո իտալական իմպերիալիստական միացումը: 1919 թվից միացավ Յուգոսլավիային:
- 133 ՄՈՒԻԵՌ.—Ֆրանսուայի հանձարեղ կատակերգու. հեղինակը «Տարդուֆ» «Միզանթրոպ» «Բոն Ժուան» «Յերեակայական հիվանդ» «Ակամա բժիշկ» «Ազա հը» և այլ կատակերգութիւնները. (1622—1673):
- 134 ԱԳԱՀԸ.—Տես Մոլիեր (№ 133):
- 135 ԱՍՏՈՆՆԱ.—Վերալի Ռիկոլետտո ոպերայի հայտնի մեներգի սկզբնավորութիւնը:
- 136 ՖՈՐՇՄԱՆ.—Ռուսական մի քաղաք:
- 137 ԿԱԼՍԱ.—Ռուսական նախահանգիստ Դանուբ գետի վրա:
- 138 ՎԱՐԴՈՎՅԱՆ.—Հակոբ Վարդովյան, (№ 57):
- 139 ՊԱՅԱՉԻՏԻ ՀՐԱՊԵՍԱԿ.—Կ. Պոլսո հին բյուզանդական մասում, Սուլթան Բայազետ անուն մզկիթի շրջապատում բնաբնակ հրապարակը:
- 140 ԿԱՍՏՐՍՈՒԼ.—(№ 43):
- 141 ԹԱՆԸՐ.—Այս մարդը ծոմապահութիւնից հետո յերբ սկսավ ուսել անմիջապէս մեռավ:
- 142 ՉԱՐԱՆՆԱՅԻ ԱՄՐՈՒԹՅՈՒՆ.—Այս ամբողջութիւնները պաշտպանում են Պոլսո յեկրոպական ցամաքամասից: Պարոնյան ծագում և տաճկաց զորքի անխնամ վիճակը:
- 143 ԲԱՄԱՍԱՆ.—Մահմադականների լուսնային տարվա իններորդ ամիսը, վորը հատկացված է ծոմապահութեան և աղոթքի:
- 144 ՀԻՊՈԿՐԱՏ.—Հին դարերի ամենամեծ հույն բժիշկը. ծնված է 460 թ. մեր թվականութիւնից առաջ:
- 145 ՇԻՇՄԱՆՅԱՆ.—Բժիշկ Հովսեփ Շիշմանյան. մեր գրականութեան մեծ

- հայտնի Ժերենց անվամբ. հեղինակը «Յերկունք 9-րդ դարում» «Թորոս Լեվոնի» և «Թեոդորոս Ռաշտուհի» պատմական վեպերի. (1822—1888):
- 146 ԱՍԿԱՆՊԻՍ.—Հույն նշանավոր բժիշկ. 124—96 թ. մեր թվականութիւնից առաջ:
- 147 ՓՐԿԻՉ.—Պոլսո հայոց հիվանդանոցը, վոր կոչվում է նաև ազգային հիվանդանոց. կամ փրկչի հիվանդանոց, հիմնվ. 1834 թ.:
- 148 ՀԻՍՍԻ.—Պոլսում Վոսփորի ասիական և յեկրոպական ափերին գեմառդեմ յերկու թաղամասեր:
- 149 ԴԱՐԴԱՆԵԼ.—Մարմարա և Հոնիական ծովերը միացնող նեղուցը:
- 150 ՍԵՎ ԾՈՎՈՒՆ ԵՆՂՈՒՅ.—Վոսփորի նեղուցը, վոր միացնում է Սև և Մարմարա ծովերը:
- 151 ԹՐԻՓԸՐ.—Անգլիացի հաղարար, վոր Տաճկաստանի հայաբնակ նահանգների վիճակն ուսումնասիրեց և կազմեց բնակչութեան վիճակագրութիւնը:
- 152 ԴԱՆՏԻՆԻ.—Պոլսո մի թաղամասը Վոսփորի ասիական ափին:
- 153 ՓԱՆԵՐՄՈ.—Իտալական քաղաք Սիլիւիա կղզու վրա:
- 154 ՌԱԿՈՒՅԱ.—Աղբիական ծովը վրա նավահանգիստ, այժմ պատկանում է Յուգոսլավիային:
- 155 ԼԵՂՈՒՆԵՐԸ ՉԱՆԱՎԻՆ.—Ըստ աստվածաշնչի առասպելի՝ Նոյի հաջորդները Բաբելոնում ձեռնարկեցին կառուցել մի բարձր աշտարակ յերկնք հասնելու համար: Աստուծո անհաճո թվեցավ այս ամբարտաւան միտքն, նա մարդկանց լեզուները խառնակեց, նրանք միմյանց հասկացան և աշտարակի շինութիւնն էլ դուրս չեկավ:
- 156 ԹՈՎՄԱՍ ԱՌԱՐՅԱՆ.—Ըստ ավետարանական ավանդութեան յերբ Քրիստոս հարութիւն առնելուց հետո հայտնվեց Թովմաս առաքյալին՝ սա նախ ձեռքով շոշափեց նրա նիզակով ծակած կողը և ապա միայն հալատաց թե նա իրապէս Քրիստոսն է:
- 157 ՉԱՐԱՆՆԱՅԻ ՏԻՐ.—Անգլիացի հրապարակագիր և քաղաքական գործիչ. (1843—1911):
- 158 ԴԻՄԻՏՐԻ ՓՈՒՆԵԼ.—Այս հատվածով Պարոնյանն ուղղում է հասկացնել, վոր տաճիկ կաթողիկոսութիւնն իր վարած քաղաքականութեան հետեանքով դեռ պիտի կորսնցնի յերկրները, ինչպէս նա կորցրեց Բուլկարիան:
- 159 ՄԱՆՉՈՒՄԵ.—Մանգոլմէյի եֆէյար, որագիւր, հայատառ տաճկերեն, հետո հայերեն, Կ. Պոլսի 1860—1900 թվականները, իմբ. Կարապետ Փանոսյան:
- 160 ՉԱՐԱՆՆԱՅԻ.—Անարկիւթիւն ավետարանական այն գրույցին՝ թե Քրիստոս Ղազարոսին գերեզմանից դուրս կոչեց, հարութիւն տվեց:
- 161 ՔԱՐԱՐԱՆՅԱՆ.—Անտոն, Մատթիւ Գարաբաշյան. բանասեր, պատմաբան, հեղինակը «Քննական պատմութիւն հայոց» քառահատոր աշխատութեան. (1818—1908):
- 162 ՄԵՏԵՆՈՐԱ.—Հանդես, Չմյուռնիա. 1880—1881 թ. իմբ. Գ. Մանյան:
- 163 ՇԵՅՄՍ ՊՐԱՅԱ.—Անգլիացի հայտնի քաղաքական գործիչ, հայկական դատի պաշտպան: Ճանապարհորդել է Հայաստան, բարձրացել է Մասիսի գագաթը, հեղինակը «Վերկի հարարատ», Transcaucasia and Armenia գրքերի (+ 1922):

- 164 ԲԻՍՄԱՐԿ.—(№ 51):
- 165 ԳՐԱՍԵՐ ԱՏՈՄ.—Յեղիա Տեմիրճիպաշյան, բանաստեղծ-փիլիսոփա, սուլեյչ, լամբադիւր «Յերկրագործ» «Ճանաչ» «Գրական և իմաստասիրական շարժում» հանդեսների († 1908):
- 166 ԼԻԹԵ.—Եմիլ Լիթրե, ֆրանսացի բանասեր և պոզիտիվիստ փիլիսոփա (1801—1881):
- 167 ՎՈՒԹԵՐ.—Ֆրանսացի բանաստեղծ և արձակագիր, վոր մեծ ազդեցութիւն դրածն էր 18-րդ դարու մտքի վրա և հանդիսացավ ֆր. մեծ հեղափոխութիւնը պատրաստողներից մեկը (1694—1778):
- 168 ԼԱՄԱՐԹԻՆ.—Ալֆոնս ար Լամարտին, ֆրանսացի բանաստեղծ և քաղաքական գործիչ. (1790—1869):
- 169 ՎԱՐԴԱՄԱՏՆ.—Հին հունական դիցաբանութիւնը «Վարդամատն» մակերևին եր տալիս արջալուսի աստվածուհուն, վորն պարտականութիւնն եր արեւելքի դռները բանալ արեւի համար:
- 170 Ժ. Ժ. ԲՈՒՍՈ.—Ֆրանսացի գրող և փիլիսոփա. (1712—1778):
- 171 ԱԶԳԱՆՎԵՐ ՀԱՅՈՒՆՅԱՆ ԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.—Այս ընկերութիւնը հասարակութեան նպատակներով աղջկանց վարժարաններ եր պահում գաղանկներով, վերջին ջրջաններում նրա գլխավոր գործիչն եր բանաստեղծուհի Սիպիլ:
- 172 ԴՊՐՈՅՍՍԵՐ ՀԱՅՈՒՆՅԱՆ ԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.—Կամ դպրոցասեր տիկնանց ընկ. վոր ժողովրդյան նվերներով Կ. Պոլսում պահում եր աղջկանց վարժարան: Այս ընկերութիւնը ցայժմ պահում ե իր գոյութիւնը. փոխադրված և Փարիզ, վորտեղ ունի յուր վարժարանը:
- 173 ՎԵՆԵՏԻԱԿԻ ՅԵՎ ՎԻԵՆԱՅԻ ՄԻՆԲԱՆՈՒԹՅՈՒՆ.—Վենետիկի միաբանութիւնը հիմնված ե Միսիթար սերաստացու միջոցով Վենետիկի Ս. Ղազար կղզու վրա՝ 1718 թ. իսկ Վիեննայինը՝ բաժանված ե Վենետիկից և 1828 թ. ի վեր հաստատված ե Վիեննա: Յերկու միաբանութիւններն ել պահպանում են հայկական հին կյանքի և լեզվի ուսումնասիրութեամբ:
- 174 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ.—Ազգային սահմանադրութիւն կոչվում ե ժողովածուն այն կանոնադրութիւնները, վորոնք հրատարակվեցին 1862 թ. Կ. Պոլսում, և վորոնք վերաբերում են տաճկահայոց կրօնական, յեկեղեցական և քաղաքական կյանքը վարող մարմինների կազմութեան և նրանց պարտականութիւնների վորոշման:
- 175 ԳՈՐԴՅԱՆ, ՀԱՆԳՈՒՅՅ.—Փոքր Ասիայի Գորդիում քաղաքում այն խորհրդավոր հանգույցը, վորը կապում եր մի սալի ղեկը լուծի հետ և անքակտելի յեր. ըստ աստվածների պատգամի այդ հանգույցը լուծողը պիտի լիներ Ասիայի թագավորը: Այդքանաչը Մակեդոնացին հանգույցը սրով կտրեց՝ առանց այն լուծելու հնարքների մասին մտածելու: Գրականութեան մեջ «Գորդի հանգ.» անունը հոմանիշ ե կնճառ հարցի:
- 176 ԼՈՒՍԻՆՅԱՆ.—Անունն ե ֆրանսական մի ազնվական տոհմի, վորն մի հյուղը թագավորեց հայոց Կիլիկիայում 1342 թվից, վերջին թագավորը Լուսն VI մեռավ 1375 թվին:
- 177 ԽՈՐԵՆ ՅԵՊԻՍԿՈՊՈՍ.—Նար-պեյ, վոր կոչվում ե նաև Լուսինյան, Գալֆայան, բանաստեղծ, թատերգիկ և անվանի հետոր:

- 178 ՎԱՅԵԼԻ.—Ամասիերթ. Կ. Պոլս, 1880 թ. խմբ. Մ. Գալենտերյան:
- 179 ՅԵՂԻՇԵՎ. Դ. ԴՈՒՅՍԱՆ.—Յեղբայրը Պետրոս Դուրյանի, հայտնի գրաբարգետ, բանաստեղծ, Պատրիարք Կ. Պոլս և ապա Յերուսաղեմի. († 1930):
- 180 ՍՏ. ՓԱՇՍԱՆԱՆ.—Ազգ. սահմանադրութեան հեղինակներից մեկը և յերեսփոխանական ժողովի գործունյա և ճարտասան անդամը. Պարոնյանի ջոխից մեկը:
- 181 ՍՍՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ.—Կիլիկիո Սիս քաղաքում հաստատված կաթողիկոսութիւնն ե, վոր շարունակվում ե 1441 թվից ի վեր: Համաշխարհային պատերազմից հետո կաթողիկոսը Սիս քաղաքից փոխադրված ե Սիրիա և բնակվում ե Բեյրութ քաղաքի շրջակայքում:
- 182 ԽՈՒՐՊԱՆ ՊԱՅՐԱՄ.—Մահմեդականների զոհաբերութեան պոնակատարութիւնը, վոր աեղի յի ունենում ծոմապահութեան տոնակատարութիւններից 70 օր հետո:
- 183 ՏԻԿԻՆ ՀՐԱԶԻԱ.—Պոլսո հայկական թատրոնի սկզբնական ջրջանից գործունյա, տաղանդավոր դերասանուհի, վոր անվանի դարձավ և Թիֆլիսի ու Բաքուի հայ բեմերի վրա:
- 184 ՆԵԼԻ ԱՇՏԱՐԱԿ.—Ալեք. Տյումա հոր մի թատերգութիւնը, թրգ. Ստեփան Ալթունայուրի:
- 185 ՔԱՐԱՅԱՆՅԱՆ ԳՈՒՅՐԵՐ.—Վերդինե և Յերանուհի Գալապաշյան: Առաջինն իբրեւ գրամատիկ դերասանուհի և ոպերետի յերգուհի գործել և Պոլսում և Ջմյուռնիայի հայկական բեմերի վրա: Իսկ յերկրորդ գործունեութիւնը իբրեւ գրամատիկ դերասանուհի յեղել և Կովկասում:
- 186 ՄԻՋԳՅՈՒՂ.—Պոլսո մի թագամասը Վոսփորի յեկրոպական ափին, այստեղ հիմնվեց Բարեսիրաց թատ. ընկերութիւնը, վոր մեծ դարկ տվեց արեւմտահայ թատրոնի զարգացման:
- 187 ՀԱՅԴԵՆԻՔ.—Որաթերթ Կ. Պոլս. 1870—96 թ. առաջին խմբ. Մկրտիչ Մեղիքյան հայտնի դարձավ Արփիար Սրբիարյանի լամբագրութեամբ:
- 188 ՄԱՏԹԵՆՈՍ ՅԵՊ.—(№ 127).
- 189 ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ.—Յերեսփոխանական ժողով (տես № 116):
- 190 ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ.—Ազգային վարչութիւն. (№ 96):
- 191 ՊՐՈՊԱՆԻՅԵ.—Ըստ ավետարանական գրույցի այն ավագանը, ուր մտնող բոլոր անգամալուծները բուժված ելին դուրս դալիս:
- 192 ՊԵՇԻԿԵՆ.—Պոլսո մի թաղը յեկրոպական ցամաքամասի վրա:
- 193 ԱՎԵՐԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ.—Հայաստանի ավերակների ալբոմ:
- 194 ՀԱՅԿ.—Ըստ Մովսես Պորենացու հայոց պատմութեան՝ Հայկը համարվում ե հայբի նախահայրը:
- 195 ՎԱՐԴԱՆ.—Վարդան Մամիկոնյան, 451 թ. Ավարայրի դաշտում պարսից ղեմ մղած պատերազմի ժամանակ հայկական բանակի հրամանատարը: Նրա անունով պատերազմը կոչվեցավ «Վարդանանց պատերազմ»:
- 196 ԽՐԻՍՏԱՆ ՍՐԱՋԱՆ.—(№ 129)
- 197 ԱՔԻԼԵՍ.—Հոմերոսի իլիականի գլխավոր հերոսը, միլամիտոնների թագավորը, Աքիլիս խորհրդանիշն ե քաջութեան:
- 198 ԻՆՍԿՐԻՏԱՐ.—Պոլսո մի թաղը ասիական ցամաքամասի վրա:

- 199 ԱՂԹԱՄԱՐ.—Վանա լճի մեջ Աղթամար կղզին, ուր կար վանք, աթոռանիստը Աղթամար կաթողիկոսությունը:
- 200 ՇԱՀՆՈՒՐ.—Մատթեոս Մամուրյանի (Ն 42) ծածկանունը:
- 201 ՍՐԵՎԼՅԱՆ ԽՆԴԻՐ.—(Ն 13):
- 202 ԳՈՒՐԳԵՆ.—Գրաբարադեա, Երևանի շրջանի վոյսկային զորքի ղեկավար, 1886—88. († 1922):
- 203 ԲԱՐԵՍԻՐԱՅ ԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.—(Ն 186):
- 104 ՊԵՇԻԿՅԱՆ.—Արևմտահայ հայտնի բանաստեղծ, թատերագիր, արևմտահայ թատրոնի հիմնադիրներից մեկը. (1828—1868):
- 205 ՀԵՔԻՄՅԱՆ.—Արապյան Հեքիմյան, թատերագիր, (զրաբառ զրված). տաճկահայ թատրոնի հիմնադիրներից մեկը, (1832—1892):
- 206 ԿԱՊԻԿԻՆ ԱՌԱՅԻԼ.—Ըստ այս առակի տարբեր փոփոխակների՝ կապիկը կարծում է, թե կոշիկ կարելու, կամ թերթ կարդալու համարությունը արդյունք է կարողի և կարգացողի գործածած ակնոցների: Կոշիկար կամ ընթերցող կուղի լինել, այդ պատճառով գործածում է ակնոցներ, սակայն՝ հաջողություն չի գտնում:
- 207 ՀԻՇՎԻ ԶՀԻՇՎԻ.—Այսպիսի բացառանջություններ չկեղեցու մեջ ժողովրդյան կողմից հաճախ լինում էին, յերբ պատարագի ժամանակ վոմանց համար հաճելի և վոմանց անհաճ պատրիարքի անվան հիշատակության կարգը դար:
- 208 ԲՈՒՄ—ԲԱՐՈՒ.—Պոլսո մի թաղը յեվրոպական ցամաքամասի վրա, Մարմարա ծովի ափին. (այստեղ է գտնվում հայոց պատրիարքարանը):
- 209 ՄԱՀՄՈՒՄԻՅԵ ՇՈՒՆՆԱՎ.—Շոգենավային ընկերության անուն է:
- 210 ԿԱՄՈՒՐԻ.—Վոսկեղյուրի վրա ձգվող կամուրջը, վորը Ղալաթիա թաղամասը միացնում է Մատապուլի բյուզանդական մասին հետ: Այս կամուրջից են մեկնում և այնտեղ վերադառնում Պոլսո բոլոր շոգենավերը:
- 211 ԲԱՅՄԱՐԱՄ.—Քայմաքամները շրջանային առավարիչներ էին. Պարոնյանն այդ անունը նույնացնում է գրպանահատության հետ:
- 212 ՍԱՐԱՅ ՊՈՒՐՆՈՒ.—Յեվրոպական ցամաքամասից Մարմարա ծովը յերկարող հրվանդանը, ուր ժամանակին կառուցված են բյուզանդական ամրությունները:
- 213 ԿԵՏԻԿ ՓԱՇԱ.—Պոլսո հայաշատ մի թաղը յեվրոպական ցամաքամասի վրա:
- 214 ՏԱՏՅԱՆ ՊՈԼՈՍ ԱՄԻՐԱ.—Ուսմանյան արքունի վառարանատեղ, վոր հաջորդեց իր հորը՝ նույն պաշտոնի մեջ:
- 215 ՊԵՋՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.—Փողերանոցի (զրամահատություն) տեսուչ. հիմնադիր Պոլսո ազգային հիվանդանոցի և մի շարք վարժարանների, (ծն. 1771):
- 216 ՍՊԻՐԻՏՈՒՄԱՆՍ.—Փլիսոփայական տերմին է: Այստեղ սակայն բառապատկեր է կատարվում լատիներեն սպիրիտոս (սպիրտ) բառից և ակնարկում է սպիրտ գործածող արեւոյնները:
- 217 ՈՄԵՆՈՒՄ.—Հոմերոս, բժշկական այն դրությունը, վոր բուժում է հիվանդությունը այնպիսի միջոցներով, վորոնք նման են հիվանդությունն առաջացնող պատճառներին:

- 218 ԱՆՈՒՄ.—Բժշկական այն դրությունը, վորով հիվանդությունը առաջացնող պատճառներին հակառակ միջոցներով են բուժում (այլաբուժություն):
- 219 ԼՈՒԻ-ՖԻԼԻՔ.—Ֆրանսայի թագավոր, վոր 1848 թ. հեղափոխության ժամանակ փախավ Անգլիա, ուր և մեռավ 1850 թ:
- 220 ԼՈՒՅՍ.—Շաբաթաթերթ. Կ. Պոլսո 1874—85, խմբ. Մինաս Բաբա-մանյան:
- 221 ՀԱՅՐԵՆԻՔ.—(Ն 187):
- 222 ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏ.—Ըստ հրեական առասպելի՝ ջրհեղեղի ժամանակ Նոյ իր ընտանիքով մտավ տապան (նավ) և ջրհեղեղից ազատվեց:
- 223 Ս. ՄԵՍՐՈՊ.—Մեսրոպ Մաշտոց: Հայկական տառերը գտնողը՝ 412 թվին: Նա բաց է արել բազմաթիվ գաղտնիքներ, ուր տարածել է գրագիտություն:
- 224 ՐԱԳՈՍ.—Հոմայեցիների զինու խառնվածք, վորին հույները Դիոնիս անունն էին տալիս:
- 225 ՓԱՓԱՋՅԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.—Կարապետ Փափաջյանի Հայոց պատմության դասագիրք. տպ. Կ. Պոլսո, 1860 թ:
- 226 ՇԻՐԲԵԹԻ ԽԱՅՐԻՔ.—Այսպես է կոչվում մի նավային ընկերություն, վորին նավերը յերթեկույց են Վոսկոբի մեջ:
- 227 ՍԱՄԱԹԻՍ.—Կ. Պոլսո մի թաղամասը՝ Մարմարա ծովի յեվրոպական ափին:
- 228 ԼԱ ՊԵՆ ԵՆԵՆԻ.—(Դեղեցիկն Հեղինե), յերաժշտագետ Ռֆենբախի ուղերեսը:
- 229 ԱՅԱՔԱ.—Յերկու Սյաքսներ հանգես են դալիս Հոմերոսի Իլիականի և «Դեղեցիկն Հեղինեի» (Ն 228) մեջ. նրանց անունն հոմանիշ է կովի, քաջու-թյան, ամենության:
- 230 ԽԱՍ ԳՅՈՒՂ.—Պոլսո մի թաղը, յեվրոպական ցամաքամասի վրա, վոսկեղյուրի ափին:
- 231 ՊԱՆԱՍ.—Պոլսո մի թաղը, յեվրոպական ցամաքամասի վրա, Վոսկեղյուրի ափին:
- 232 ԳԻՈՒԿԵՆԱՍ.—Իրոգիկն մի ուր ցերեկով Աթենքում վառած լապտերը բռնած փողոցում ման էր գալիս, յերբ պատճառ հարցուցին պատասխանեց. «Մարդ եմ փնտրում», արտահայտելով իր արհամարհանքը դեպի իր շրջապատի մարդկությունը:
- 233 ՇԱՆԼ ՊՈԶԼ ԿՏԻՆ.—Արևելադարձ, Սոկրատի աշակերտը, հունական հրամանատար և քաղաքական գործիչ հասարակությունը իր անձով զբաղեցնելու համար կտրեց Աթենացոց հիացմունքի առարկա իր գեղեցիկ շան պոչը:
- 234 ԵՅՈՒՊ.—Պոլսո մի թաղամասը, յեվրոպական ցամաքամասի վրա, Վոսկեղյուրի ափին:
- 235 ՊԵՐՊԵՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ.—Ռեթեոս Պերպերյան, հայտնի մանկավարժ, թարգմանիչ, գրականագետ, ճարտասան, հիմնեց իր անունով վարժարանը, վոր արդյունավետ գործունեությունը հարատևեց մինչև 1922 թ:
- 236 ԻՃԱՏԻՔ.—Իսկիւտարի մի թաղամասը:
- 237 ՌՈՊԵՐԹՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ.—Ռոպերտ Կոլեճ, Ամերիկյան կրթական մի հիմնարկ, ուր հաճախում են աշակերտներ բոլոր ազգերից:

238 **ԹԱՐԱՊԻԱ.**—Պոլսո մի թաղը, Վոսփորի յեվրոպական ափին, հայտնի է մամարանոց։

239 **ԱՐԱՄՅԱՆ ԶԱՎԱԿ.**—Արամ Նահապետի անունով հայերը բանաստեղծություններ կոչում են և՛ Արամյան ազգ։

240 **ԼԵՊԼԵՊԻՃԻ ՀՈՌՀՈՐ.**—Տիգրան Զուլաճյանի ոսկերեք։

241 **ԿՐԱՆՎԻԼ.**—Ուկրաինայի Կրոմլիկ, անգլիական հեղափոխության առաջնորդը, վոր հաջորդի վրա զլխատել տվեց անգլիական Կարլ Թադավորին։ (1599—1658)։

242 **ԱՇՏԱՐԱԿԻ ՇԻՆՈՂՆԵՐ.**—(ԱՇ 155)։

243 **ՍԱՂՄՈՍ.**—Աստվածաշունչի մեջ հին հրեական կրոնական բանաստեղծություններ են, վորոնք վերադրվում են Դավիթ Թագավորին։

244 **ՆԱՐԵԿ.**—Միջնադարյան հայ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու «Մատյան վողբերգություն» բանաստեղծական զբվածքը, հորինված 11-րդ դարու սկզբին։

245 **ՊԱՆԲԱՆԻ.**—Պոլսո յեվրոպական մասի վրա, Բյուզանդական պարիսպներից դուրս այն վայրը, ուր դառնվում է հայոց ամենահին դերեզմանատունը։

246 **ՃԵՄԱՐԱՆ.**—Յերուսաղեմատյան ճեմարան, վոր 1838 թվին հիմնվում է Իսահակաբուն, իսկ 1849 թ. փոխադրվում է Յետի-Պուլե Թաղը և ամփոփվում է ազգային հիվանդանոցի շրջափակի մեջ։ Այս դպրոցի աշակերտ է Պետրոս Դուրյանը, իսկ ուսուցիչներից է Հ. Պարոնյանը։

247 **ՈՂԻՄՊՈՍ.**—Վողիմպոս, Հունաստանում այն լեռը, վորի վրա ըստ հունական դիցաբանության բնակվում էին աստվածները։

248 **ԽԱՉԱՏՈՒՐ ՄԻՍԱՐՅԱՆ.**—Պետ Կոչեցյալ բանաստեղծ, ուսուցիչ, յեվրեափոխական ժողովի անդամ, «Ազգային ջոջեր»-ի մի հերոսը։

249 **ՂԱԼԱԹԻՈ ՈՅԱՆԸ.**—Հայկական մի կուսակցություն Կ. Պոլսում, այսպես կոչվում էր իր ժողովները Ղալաթիո յեկեղեցու բակում գումարելու պատճառով։

250 **ԾԱՌ ԳԻՏՈՒԹՅԱՆ.**—Ըստ աստվածաշնչական առասպելի՝ այսպես էլին կոչվում զբախտի միջին այն յերկու ծառերը, վորոնց պտուղները արգելված էր Ադամին և Յեվային ուտելու։

251 **ԹԱՔՍԻՄ.**—Բերայի մի մասը այս անունն ունի։

252 **ՂԱԼԱԹԻՈ ՍԵՐԱՅ.**—Պոլսո թուրքերի միջնակարգ հայտնի մի վարժարանը Բերայում։

253 **ԱՄԻՐԱ.**—Ամիրա նշանակում է իշխան, այս տիտղոսն էլին կրում այն հայերը, վորոնք ժողովրդյան տուրքերը կանխավ վճարում էին կառավարության և ապա ժողովրդից դանձում, սրանք պետական մատակարարներ էին, կառավարության հետ ունեցած անձնական կապերի և իրենց հարստության շնորհիվ մեծ ազդեցություն ունեին տաճկահայության իրավանդության վրա։

254 **ՊԻԱՍ.**—Բիաս, հույն 7 իմաստուններից մեկը, VI դարում՝ մեր թվականությունից առաջ։ Յերբ Կյուրոսի դուրքը նրա հայրենի քաղաքն էր պաշարում և ժողովուրդը վերցնելով իր թանկագին ստացվածքը փախչելու պատրաստություն էր տեսնում և զարմանում էր փլիլսոփայի անտարբերության վրա, նա պատասխանեց. «Յես ամեն ինչ իմ վրա եմ կրում», ակնարկելով իր իմաստությունը և միտքը, իբր իր ամենաթանկագին սեփականություններ։

255 **ՌՈԶԻԼՏ.**—(ԱՇ 122)։

256 **ՀԱՍՈՒՆՅԱՆ ԽՆԴԻՐ.**—Կաթոլիկ հայերի պատրիարք Հասունյան յեպիսկոպոսի շուրջը ծագած խնդիրները։

257 **ՊԱՐԶԱՍԻՐԱՅ ԸՆԿ.**—Մի բնկերություն, վորի նպատակն էր կռվել աշնասիրության դեմ։

258 **ԱՆ-Ի ՎՈՃ.**—Ahn-ը (Ան) Յրանաացի հեղինակ, վոր մշակել է լեզուն սորվեցնելու մի պարզ մեթոդ, վոր կոչվում է Ան-ի վոճ։

259 **ՏԱՊԱՆԱԿ ՈՒՆՏԻ.**—Այն նվիրական արկղն էր, ուր հրեաները, ըստ աստվածաշունչի, պահում էին մովսինական որենքի տախտակները։ Տաճկահայերի մեջ այս անունը հոմանիշ է վոտքով գնալուն. տաճկերեն տապան (նրբան) և տապան կամ տապանակ (արկղ) խոսքերի բառախաղություններ։

260 **ԲԱՐՄԱՐ ԳԱՐՈՒ.**—Բերայի մի մասը։

261 **ԲԱՐԹԱԼ.**—Պոլսո մի թաղը Մարմարա ծովի ափական ափին։

262 **ՊՈՅՈՒՔ ՏԵՐԵ.**—Պոլսո մի թաղը Վոսփորի յեվրոպական ափին։

263 **ՅԵՂԻՇԵ.**—Պատմադիր V դարի վերջին և VI-ի սկզբին, նա գրել է Վարդանանց պատերազմի պատմությունը։

264 **ՅԵՓԻՄԵՆԻՏԻՍ.**—Կրեաացի փիլիսոփա, VII դարում, մեր թվականությունից առաջ, կես պատմական և կես լեկենտական անձնավորություն, նա մի հավերժահարսի զավակն էր և մի քաղաքի մեջ քնավ 55 տարի։

265 **ՊՂԵՁԵ ԲԱՂԱՔ.**—Միջնադարյան առասպելական վեպ, վորի նյութը առնված է Շահնամեյից։

266 **ՅԵՐԱԶԱՀԱՆ.**—Յերազներ մեկնող դիրք։

267 **ԱՐԱՅԱՍ ԱՅՎԱԶՅԱՆ.**—Հեղինակը «Շար հայ կենսագրություն» գրքի, Կ. Պոլսո 1893 Նա առաջին թարգմանիչն է Մարտկոչի։

268 **ՄԿՐՏԻՉ ՅԵՊԻՍԿՈՊՈՍ.**—Տիգրանյան Մկրտիչ յեպիսկոպոս (տես III հտ. էջ 58)։

269 **ԱՐԻՔ ՀԱՅԱՋՈՒՆԲ.**—Սահմանագրություն տոնին նվիրված քայլերդ։

Ա.

Աձալե.—աճելի, շտապ:
 Անկաժրման.—հանձնառում:
 Արապաձի.—կառապան:
 Արարոյ.—հետադարձ:
 Ապսեմ.—վողելից խմելքի տեսակ:
 Ափսոս.—բաժնեթուղթ (աքցիա):

Բ

Բանքալոն.—շալվար:
 Բաշա.—խաչ:
 Բոլիքիֆա.—քաղաքականություն:
 Բուժքո.—տալարանական տառերի մե-
 ծության չափ, պունկտ:
 Բուրա.—պուլերի:
 Բրեճա.—թղթախաղի տեսակ:

Ե

Ենթարի.—արեկյալ յերկար վերարկու:
 Եմեմձի.—հացադործ, հացթուխ:
 Եճեմեթ.—պարոն, տիր:

Թ

Թեպիլեպիզ.—անկերթ:
 Թումարես.—պամխտոր:
 Թույսյուզ.—անմազ, լերկ:

Ճ

Ճանաւմըրի.—հեծյալ վոստիկանու-
 թյուն:

Ի

Իֆիյուզ.—յերկու հարյուր (խաղի տե-
 սակ):
 Իչեթմես.—լիմ ներսումը (սրտումս):

Լ

Լալընձի.—փայտյա հողաթափ, սանդալ-
 պատրաստող:
 Լամպիֆա.—ողի քաշելու գործիք, թո-
 րակ:
 Լիֆթասինոն.—լուսարք, լիկվիդացիա:

Լ

Լոսկապ.—նախքան նշանդրեք համա-
 ձայնութիւն:
 Լոսթիլիֆեյ.—վոսկեթել աղնիվ քող-
 հարսի:

Ն

Նամամձի պաւի.—բաղնիկանների
 պետ:
 Նամարո.—յեղանակի հանկերդ:
 Նամիֆձի.—կեղծ ակննդէն, ծախող:
 Նեյալ.—չինական ստվեր, տիկնիկներով
 ներկայացում (խարակյող):
 Նոսապ.—քաղցր ջուր, կոմբոտ:

Ղ

Ղումաւ.—քամաշ, կերպասեղեն:

Ճ

Ճարեյ.—ճաքել:
 Ճեմիւ.—արտաքնոց:

Մաշխալ.—անձրեանոց, պլաշ:

Մազիլ.—ավելորդ մազերը պոկելու գործիք:

Մահալեպիձի.—բլինձի ալյուրով թանձր կաթնեղեն պատրաստող:

Մարյա.—եղ վոչխար:

Մեղե.—աղանդեր:

Մեծիթի.—Սուլթան Մեծիթի անունով արծաթ դրամ (1ս. 60 կ.):

Մաքիբա.—ողրի տեսակ:

Միսաձի.—հյուր:

Մուսաձի.—տուժելիի դաղթական:

Մյուսուլմե.—մահմետական:

Ն

Նազմա.—գլուխը կապելու կամ ծածկելու գործվածք:

Նազլը մյուսուլմե.—հաճախ հաճախորդ:

Ներ պեճի.—ուսում և ինձ:

Ն

Նարա.—նարդի:

Նահիյե.—դավառակ:

Նուսնու.—նշանդրեր:

Նոքա.—ծանոցագիր, հայտագիր, նոսա:

Շ

Շապխա.—գլխարկ:

Շարֆ.—արևելյան, թրքական յեղանակ:

Ո

Որերա.—ողերա:

Ոգգապազ.—աճապար, ֆոկլունիկ:

Ոխա.—ծանրության չափ:

Ուաձի.—պաշտոնատների սենյակները մաքրող, սենեկապահ:

Ուիս.—թղթախաղի տեսակ վիսա:

Չ

Չամառձիպաշի.—լվացաբարակա:

Չընար.—բարե:

Չուխա.—ապի, կերպաս:

Պ

Պալա.—ողապարիկ:

Պամախան.—չիթ պատրաստելու գործարան:

Պաթը պոզու.—անկանոն գործ:

Պալադի.—հասարակ, դոնձիկ:

Պեղիբա.—թղթախաղի մի տեսակ:

Պիլի.—տոմսակ, թղթադրամ:

Պյուսձի.—բյուսձի:

Պոզաձի.—կորեկից բմակիք պատրաստող:

Պոզա.—կորեկից պատրաստված բմակիք:

Պիճի վար.—հազարներ կան:

Պիլ կյուզիլե մայիլ ոլու.—մի գեղունու սքանչացա:

Պիճիբ.—բլիթակ:

Պյոռեկ.—խմորեղենի տեսակ (բերածկի):

Պրիձ.—թղթախաղի մի տեսակ:

Ս

Սոկե.—այստեղից:

Սեհից կիպի.—քեզ նման:

Սրաբոզ.—խեցեղեն:

Սերի.—վերարկու:

Սիմ.—կեղծ վոսկեթի:

Սիարա.—սիկարետ, դլանակ:

Սոճա քախը.—սեղանի սղաններ:

Սկեպիկու քյու.—կասկածամտություն:

Սֆամպիլ.—թղթախաղի մի տեսակ:

Վ

Վայ կեմիբի.—վայ անցյալիդ, (հայ-հայանքի ձև):

Վիզալի.—գեմադեմ կեցող, դեմացի:

Տ

Տավի.—հրավիր:

Տալի.—քեռի:

Տեսիլ պա.—հանդուհ:

Տեֆլի.—հոլանի, կիսաբաց:

Տյուզ.—ողրի ուժեղ տեսակ:

Տոնամա.—հրավառություն, նավատորմից:

Տոդամաձի պաշի.—ատաղձագործ արհեստագետ:

Տուսու.—հարդալից կոշուկ հայ կիներ:

Տեճերիմե.—տեղաբնակ:

Տիճա.—տիֆ:

Տու.—դուռ:

Բ

Բեկերան.—հարդանայ արտահայտություն, խոսքերից:

Բ

Բաթիլ.—յեղրդական պարի տեսակ:

Բալմալ.—զավառապետ:

Բալբա.—կամեղակա, կրոնավորի զբաղությամբ:

Բեհկան.—այլենարան:

Բեհալ.—ձկան տեսակ:

Բեհեսձիպաշի.—տախտակ քաշող արհեստագետ:

Բոնկի.—կոշիկ, վեհաժողով:

Բոթիլ.—ժապավեն:

Բոթ.—սեղմիքան, կորստ:

Բոթիլ.—խոլերա:

Բոմա.—կերպաս, բրդեղեն կտոր:

Բոյուն պաշի.—վոչխարի գլուխ:

Բոնալի.—պետական պարտաթուղթ:

Բուր.—վորդ:

Ֆ

Ֆե.—տաճկական գլխարկ, ֆաս:

Ֆեհան.—ֆաս պատրաստելու գործարան:

Ֆիճ.—հնրի տեսակ:

Ֆիսան.—կանացի շրջագրեա:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԵԶ
Յմբագրութեան կողմէց	5
Կամիքներ	7
Հոսնոսի ձեռագեցը	39
Պտույս մը Պոլսո քաղերու մեջ	141
Ծանոթութիւններ	271
Քառարան	287

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.
1911

11



original
d. 11/1/57

11/1/57
Sp



« Ազգային գրադարան



NL0356483

49981